

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՀԱՅ ԳԻՏԱԿԱՆ
ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ
100-ԱՄՅԱԿԻ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

(25 մայիսի 2014)



Արսեն Այտընյան



Հրաչյա Աճառյան



Արարատ Ղարիբյան



Գևորգ Զախուկյան

ԻԶԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2015

ՀՏԴ 811.19:06.053

ԳՄԴ 81.22

Հ 240

*Հրատարակվել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի
գիտական խորհրդի երաշխավորությամբ*

Կազմող, գիտաժողովի պատասխանատու քարտուղար՝

Բ. Գ. Թ. Գարիկ Մկրտչյան

Խմբագրական խորհուրդ՝

Ա. Աբաջյան

Բ. Գ. Դ., պրոֆեսոր

Վ. Ալեքսանյան

Ա. Գ. Թ., դոցենտ

Ս. Առաքելյան

Ա. Գ. Թ., դոցենտ

Վ. Ավագյան

Բ. Գ. Թ., դոցենտ

Յ. Ավետիսյան

Բ. Գ. Դ., պրոֆեսոր

Գ. Գևորգյան

Բ. Գ. Դ., դոցենտ

Ն. Դիրբարյան

Բ. Գ. Թ., դոցենտ

Է. Խենյան

Բ. Գ. Թ.

Վ. Կատվայան

Բ. Գ. Թ., դոցենտ

Վ. Համբարձումյան

Բ. Գ. Դ., պրոֆեսոր

Ս. Հարությունյան

Բ. Գ. Դ., պրոֆ., ԳԱԱ թղթակից անդամ

Լ. Հովհաննիսյան

Բ. Գ. Դ., պրոֆ., ԳԱԱ թղթակից անդամ

Լ. Հովսեփյան

Բ. Գ. Դ., պրոֆեսոր

Գ. Մկրտչյան

Բ. Գ. Թ., ասիստենտ

Ա. Սարգստյան

Բ. Գ. Թ., դոցենտ

Խ. Վարդանյան

Բ. Գ. Թ., դոցենտ

Հ 240 Հայ գիտական բարբառագիտության 100-ամյակի գիտաժողովի
նյութեր / ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ – Իջևան, 2015, - 280 էջ:

Ժողովածուն ներառում է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում 2014թ. մայիսի 25-ին
կայացած հանրապետական գիտական կոնֆերանսի զեկուցումների նյութերը՝
հոդվածների տեսքով:

ՀՏԴ 811.19:06.053

ԳՄԴ 81.22

ISBN 978-5-8084-1958-2

© ԵՊՀ հրատ., 2015

© Կազմողի համար, 2015

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Հարգելի՛ գործընկերներ:

Ողջունում եմ բարբառագիտական այս կոնֆերանսի մեկնարկը: Ակնկալում եմ Ձեր ակտիվ գործունեությունն ու ներդրումը սպասվելիք քննարկումներում և դրանցից բխող արդյունքներում: Բարբառները մեր լեզվի պատմությունն ուսումնասիրելիս կարևոր են, քանի որ բարբառների հետազոտմամբ ևս հնարավոր է բացահայտել մեր պատմության խորքերն ու առեղծվածային էջերը: Ինձ համար հստակ է մի հանգամանք, որ բարբառների միջոցով գնում ենք դեպի մեր արմատներն ու ազգային ակունքները: Տավուշի մարզը նույնպես հարուստ է բարբառներով, հետևաբար պատահական չէ, որ գիտական բարբառագիտության հիմնադրման 100-ամյակին նվիրված գիտաժողովը տեղի է ունենում Իջևան քաղաքում:

Ողջունելի է, որ գիտական նստաշրջանում իրենց մասնակցությունն են բերել ոչ միայն ԵՊՀ-ի ու ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի, այլև ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի, Ազգագրության և հնագիտության ինստիտուտի ու Մատենադարանի մասնագետները: Առավել գնահատելի է, որ գիտական նստաշրջանում ներգրավվել են ասպիրանտներ, հայցորդներ ու մագիստրոսներ: Դատելով գիտաժողովի ծրագրի հազեցվածությունից և նրանում արծածվող հիմնախնդիրներից, համոզում ունեմ, որ Ձեր քննարկումները կլինեն արդյունավետ: Մաղթում եմ բեղմնավոր աշխատանք:

*ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրեն՝
Ս.Ա.Առաքելյան*

Հարգելի՛ գործընկերներ:

Բարձր գնահատանքի է արժանի այն, որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում կազմակերպվել է նմանօրինակ հանրապետական գիտաժողով: Բարբառները մեր լեզվի հարստությունն են ու գանձերը: Դրանք մեր ժողովրդի տարբեր հատվածների բնական, ամենօրյա հաղորդակցումն են ապահովում: Մեր բարբառները լեզվական, պատմամշակութային արժեք ունեցող գոհարներ են, որոնց գիտական ուսումնասիրությունը հայագիտության կարևորագույն խնդիրներից է: Մենք կարևորում ենք նաև հայերենի բարբառային ատլաս ունենալու խնդիրը, որով տարատեսակ գիտական հարցադրումներ իրենց լուծումը կստանան: Բարբառների հետազոտության տարաբնույթ հարցերի՝ այս կարգի լայն ընդգրկում ունեցող գիտաժողովը կարևոր իրադարձություն է ոչ միայն ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում, այլև հայ բարբառագիտության ասպարեզում: Բարի երթ:

*ՀՀ ԳՍԱՀՀր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն՝
Վ.Լ. Կատվայան*

ՀԱՅ ԳԻՏԱԿԱՆ ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԿԴԱՐՅԱ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ

Հայ բարբառագիտությունը զարգացման երկարատև ուղի է անցել, որի ձևավորման սաղմերը տեսանելի են հայերենի զարգացման հիմնադրերենյան շրջանի ու միջնադարյան մեկնիչների քերականություններում: Երբ 19-րդ դարում ստեղծվում է պատմահամեմատական լեզվաբանությունը, լեզվաբանական ավանդական գիտաճյուղերին զուգընթաց հիմնադրվում է նաև տարածքային լեզվաբանությունը:

Հայերենի բարբառների բուն ուսումնասիրությունն սկսվել է 19-րդ դարի վերջերից: Առաջին հայ բարբառագետներն են Ա. Այտընյանը, Ք. Պատկանյանը, Լ. Մսերյանցը, լեհ Հանուշը, Գ. Ախվերդյանը և այլք: Նրանց կատարած ուսումնասիրությունները հայ բարբառագիտության զարգացման գործում արժեքավոր են և արտացոլում են հայերենի այս կամ այն բարբառի հնչյունական, քերականական կառուցվածքի նկարագիրը:

Հայ բարբառագիտության զարգացման համար շրջադարձային է 20-րդ դարը: Այդ հարցում անուրանալի է հայ մեծանուն լեզվաբան Հրաչյա Աճառյանի ծավալած գիտական գործունեությունը: 1911 թ. լույս է տեսնում նրա «Հայ բարբառագիտություն-Ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների» արժեքավոր ուսումնասիրությունը: Այս աշխատությամբ հիմնվում է հայ գիտական բարբառագիտությունը: Նախաաճառյանական բարբառագիտությունը որքան և ունի ձեռքբերումներ, սակայն արծարծված հիմնախնդիրներով ու ուսումնասիրության ծավալով չունի այն ընդգրկումը, ինչը տեսնում ենք Հր. Աճառյանի կատարած ուսումնասիրություններում: Աճառյան բարբառագետ-գիտնականի վաստակը մեծ է ոչ միայն շուրջ չորս տասնյակ բարբառների հավաքագրմամբ, դասդասմամբ, գիտական ուսումնասիրությամբ ու հայերենի բարբառների միահատկանիշ ձևաբանական դասա-

կարգմամբ, այլև բարբառագիտական դպրոցի ստեղծմամբ: Հր. Աճառյանն իր հետևորդներն է ունեցել ողջ 20-րդ դարում և ունի այսօր. նրա լեզվաբանական ժառանգությունը հիմք է դարձել տարաբնույթ գիտական ուսումնասիրությունների համար:

Հր. Աճառյանը հեղինակել է բազմաթիվ մենագրություններ՝ նվիրված հայերենի բարբառներին: Այդ մենագրությունների մի մասը նվիրված է արևմտյան բարբառներին, որոնցից շատերը եղեռնի պատճառով այլևս չեն գործառուում և իբրև լեզվական համակարգ այսօր մեզ ներկայանում են Աճառյանի աշխատությունների շնորհիվ: Համընդհանուր տեսակետ կա, որ Հր. Աճառյանի հավաքչական ու գիտական գործը հավասարազոր է մի ողջ ինստիտուտի կատարած գործունեության: Հետևապես, Հր. Աճառյանն իրավմամբ հայ գիտական բարբառագիտության հիմնադիրն է, ու հայերենի բարբառների գիտական ուսումնասիրությունը սկսվում է Հր. Աճառյանով:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում կազմակերպված հանրապետական գիտաժողովը և հրատարակված սույն ժողովածուն հարգանքի տուրքն են մեծանուն գիտնականին:

*ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ասիստենտ,
ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
գիտաշխատող, Բ.Գ.Թ.՝ Գարիկ Մկրտչյան*

ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԽՈՍՎԱԾՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՅԱԶԵՏԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ¹

ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ

(ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ)

Բայազետի բարբառով ներկայում խոսում են ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքում և շրջակա մոտ մեկ տասնյակ գյուղերում, որոնց բնակիչների նախնիները գաղթել են Բայազետ քաղաքից և հարակից բնակավայրերից, մասամբ նաև Վանից, Խոյից, Մուշից և այլ վայրերից: Վերջիններիս սերունդները այլ բարբառով խոսողների հոծ և կայուն միջավայրում ժամանակի ընթացքում բնականաբար կորցրել են իրենց մայրենի խոսվածքները, սակայն Բայազետի բարբառի տարբեր խոսվածքներում դեռևս պահպանվում են դրանց հետքերը: Թե՛ 19-րդ և թե՛ 20-րդ դարերի սկզբներին բայազետցիները, պատմական հայրենիքից գաղթելով, բնակություն են հաստատել Արևելյան Հայաստանի նաև այլ վայրերում, և այսօր նրանց սերունդները բնակվում են Արագածոտնի (Կարբի, Արուճ, Քուչակ, Վերին Բազմաբերդ, Վարդենիս գյուղեր), Արմավիրի (Փշատավան, Ալաշկերտ, Ջանֆիդա գյուղեր), Կոտայքի (Գողթ, Արագյուղ, Արզական, Բջնի, Կաթնաղբյուր, Ակունք գյուղեր) մարզերում և այլուր²: Բարբառախոս այլ միջավայրերում Բայազետի բարբառը թողել է իր հետքը, բայց և ինքն էլ ենթարկվել է այլ բարբառների ազդեցության: Այսպես, Արարատյան բարբառի խոսվածքների մասին խոսելով՝ Ս. Բաղդասարյանը նկատում է, որ «Բայազետի բարբառի ազդեցությունը կա Հոկտեմբերյան-Կոտայքի ենթաբարբառի վրա, բայց այդ ազդեցությունը անհամեմատ ուժեղ է դրսևորվում Կոտայքի

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № SCS 13-6B382 գիտական թեմայի շրջանակներում:

² «Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարան», Երևան, 2008, 211 էջ /http://www.cadastre.am/storage/files/pages/pg_8945925618_pg_907871769_H_H_bnak_bar.pdf/:

շրջանում տեղակայված խոսվածքներում»³: Մյուս կողմից՝ Բայազետի բարբառային խոսքը, հայտնվելով մեկ այլ, օրինակ՝ Դիադինի բարբառի միջավայրում, ժամանակի ընթացքում զգալիորեն ազդվել է այդ բարբառից: Մեր դիտարկումով՝ Վարդենիսի տարածաշրջանի Ակունք գյուղի խոսվածքը, որի բնակիչների նախնիները գաղթել են Բայազետից, զգալիորեն հեռացել է մայր բարբառից: Այստեղ, օրինակ, բացակայում է Բայազետի բարբառի ձայնավորական համակարգի ամենաբնորոշ հատկանիշը՝ շրթնայնացած ա-ն, և ընդհակառակը՝ լիարժեքորեն արտահայտվում է Դիադինի բարբառին խիստ բնորոշ մի հատկանիշ՝ ձայնավորների և բաղաձայնների ընդգծված քմայնացումը:

Այս աշխատանքում, այսպիսով, մեզ հետաքրքրում են Բայազետի բարբառի նախնական, բնօրրանում եղած վիճակին առավել մոտ խոսվածքները, որոնք պահպանել են բարբառի հիմնական հատկանիշներն ու ամբողջականությունը, նոր հայրենիքում չեն հայտնվել բարբառախոս այլ միջավայրում ու չեն ենթարկվել այլ բարբառների գերիշխող ազդեցության: Ահա թե ինչու ուսումնասիրության ոլորտում բուն Բայազետի բարբառը ներկայացնող Գավառ քաղաքի, Հացառատ և Արծվաքար թաղամասերի, Սարուխան, Նորատուս, Գանձակ, Կարմիրգյուղ, Ծաղկաշեն, Լանջաղբյուր, Գեղարքունիք, Հայրավանք համայնքների խոսվածքներն են, որոնցում Բայազետի բարբառը ներկայանում է անխառն վիճակով, իր բնականոն գործառության ու զարգացման ընթացքում:

Ինչպես որևէ լեզու միատարր չէ իր բոլոր դրսևորումներում, այնպես էլ ցանկացած բարբառ իր տարածման վայրերում հանդես է բերում զանազանություններ, որոնք պայմանավորված են թե՛ լեզվական, թե՛ արտալեզվական գործոններով: Լեզվի հասարակական բնույթը, նրա գործառական յուրահատկությունները պայմանավորում են տարբերակված դրսևորումներ տարածության ու ժամանակի մեջ: Իրողությունը այսպես է մեկնաբանում Հ.Աճառյանը. «...մարդկային հաղորդակցության միությունը բա-

³ *Մ.Հ. Բաղդասարյան - Թափալցյան*, Արարատյան բարբառի խոսվածքները Հոկտեմբերյանի շրջանում, Եր., 1973, էջ 21:

ցարձակ չէ. ամեն մի համայնք իր ուրույն կյանքն ունի, և այս ուրույն կյանքը, միացած կլիմայական տարբեր պայմանների և ձայնական գործարանների տարբեր տիպի գործունեության հետ, առաջ է բերում մարդկային լեզվի մեջ տարբերություններ»⁴: Մեկ այլ առիթով էլ գրում է. «Լեզուն ներկայացնում է անթիվ անհամար զանազանությունների մի շարք, որոնք մի կետից սկսելով քանի հեռանում, աստիճանաբար ու ավելի են շեշտվում: Ամեն մի վայրում կան մի խումբ երևույթներ, որոնք նույն կամ նման են այս հարևանի հետ, ուրիշ երևույթներ, որոնք նույն կամ նման են այն հարևանի հետ. այսպես շարունակաբար: Բայց չկա մի վայր, որի լեզուն ամբողջությամբ նույնը լիներ մի ուրիշ վայրի կամ ուրիշ վայրերի լեզվի հետ...»⁵: Ուստի և բնական է, որ Բայազետի բարբառը դրսևորման յուրահատկություններ է հանդես բերում հիշյալ բոլոր համայնքներում էլ, առանձին դեպքերում՝ նույնիսկ նույն համայնքի ներսում՝ պայմանավորված բնակիչների նախնիների ծագմամբ (հատկապես նման պատկեր են ներկայացնում Սարուխան և Նորատուս համայնքները):

Բարբառագիտական հետազոտության համար բարբառի խոսվածքների ընդհանրություններից բացի կարևոր են նաև դրանց յուրահատկությունները, որոնց դիտարկումը ոչ միայն էական է բարբառային պատկանելությունը որոշելու հարցում, այլ նաև թույլ է տալիս ավելի ամբողջական պատկերացում կազմելու բարբառի, նրա զարգացման ընթացքի, այլ բարբառների հետ շփումների վերաբերյալ:

Խոսվածքային յուրահատկություններ հանդես են գալիս հնչյունական ու ձևաբանական համակարգերում, նաև բառապաշարում:

Հնչյունական համակարգում զանազանություններ կան ինչպես իրողության դրսևորման աստիճանի, ընդգրկման առումներով, այնպես էլ հնչյունափոխական երևույթների արտահայտության, բառերի հնչյունական ձևավորման տեսանկյուններից: Կան նաև միայն այս կամ այն խոսվածքում նկատվող երևույթներ: Այս-

⁴ **Հ. Աճառյան**, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Եր., 1951, էջ 114:

⁵ Նշվ. աշխ., էջ 324-325:

պէս, **ա**-ի շրթնայնացման աստիճանները տարբեր են Գավառ քաղաքում և Սարուխանում (վերջինում շրթնայնացումն ավելի ընդգծված է)⁶, քմայնացած **ա**-ն ավելի տարածված է Գանձակում և Նորատուտում, քան այլ վայրերում: Գավառում, Ծաղկաշենում, Հացառատում, Նորատուտում **գալ** բայի հրամայականն է **հարի**, իսկ Սարուխանում, Լանջաղբյուրում, Գեղարքունիքում՝ **արի** (**ա**-ն շրթնայնացած է): Հնչյունափոխական իրողությունները առանձին յուրահաստկություններ ունեն խոսվածքների մեծ մասում: Այսպէս, հետնալեզվային բաղաձայնների քմայնացում նկատվում է միայն Գանձակում և Նորատուտում: Միայն Նորատուտում և Հայրավանքում **է, ե, ի** և քմայնացած **ա** ձայնավորներից առաջ **գ,կ,ք** հետնալեզվայինների դիմաց առկա են **ջ,ճ,ջ** հպաշփականներ, միայն Գավառում և Կարմիրգյուղում փոխառյալ բառերում **ու**-ի դիմաց կա **ի**՝ քիֆտա, մինաթ, շիշա: Հնչյունական տարբեր ձևավորվածությունների այլ օրինակներ. **գ**՝ ըլօխկօնձի /Սարուխան/, **գը**լիսկօնձի /Ծաղկաշեն/, **գը**խակօնձի /Հացառատ/. **գը**լխըկօնձի /Գանձակ/. **օղոռթ** /Սարուխան/, **օղառթ** /Գավառ, Ծաղկաշեն/, **կօլթուղ** /Սարուխան/-**կօլթօղ** /Հայրավանք/. **խօնթխընթալ** /Սարուխան/ - **խօտխըտալ** /Հայրավանք/, **Նորատուտ** և **Հայրավանք** բա – մյուսները **բա**. **վեղրօ** կամ **վէրօ** /Սարուխան/ - **վեղըր** /Արծվաքար/:

Զգալի են տարբերությունները ձևաբանական համակարգում: Այդպիսիք վերաբերում են և՛ անվանական (հոգնակերտ մասնիկներ, սեռականի ձևավորում, դերանվան կարճ ու երկար ձևեր), և՛ բայական (բայի կազմություն, խոնարհիչներ) համակարգերին: Այս դեպքում գերակշռում են երևույթի առանձնակի

⁶ Բայագետի բարբառում **ա** շրթնայնացած ձայնավորի դրսևորումների մասին տե՛ս՝ **Վ. Կատվայան**, «Ա» ձայնավորի դրսևորումները Բայագետի բարբառում և «Աճառյանի օրենքը», Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն, 2012, 2, էջ 48 – 64: Տպագրության դյուրության համար շրթնայնացած **ա**-ի համար համապատասխան գրանշանը չենք օգտագործում: Նշենք, որ Բայագետի բարբառում միշտ այդպիսի **ա** է հանդես գալիս բացարձակ բառակազմում, նաև բառակազմի խուլ բաղաձայններին /բացի **հ** և **խ** շփականների/, մն ձայնորդներին հաջորդող դիրքում:

դրսևորումները: Օրինակ, Գավառում **աֆսո** բառի հոգնակին է **աֆսոք**, մյուս համայնքներում՝ **աֆսոներ**, **տիք** հոգնակերտը հատուկ է միայն Նորատուսին, բոլոր խոսվածքներում **քեզ** ձևի դիմաց կա նաև **քե**, միայն Սարուխանում՝ նաև **մեզ**, **ձեզ** ձևերի դիմաց՝ **մե**, **ձե**, Գավառում և Հացառատում **ով**-ի դիմաց ունենք **վոն**, իսկ մյուսներում՝ **վորը**, **կօ** հաստատական մասնիկ գիտեն միայն Սարուխանը, Լանջաղբյուրը և Գեղարքունիքը, ներկայի հիմքում **ն** ածանցի անկումը հատուկ է հիմնականում Լանջաղբյուրին /հըլեմ, գըթեմ, խաքեմ, հիչեմ/, մասամբ՝ Սարուխանին /հընգեմ, մըտեմ/. մյուս խոսվածքների **հիշկալ**, **կըռվել** բայերի դիմաց Գավառում գործառում են **հիշկել**, **կըռվալ** ձևերը. այդպես նաև՝ խօտխըտալ /Հայրավանք/ - խօտխըտել /Արծվաքար/. ձայնավորով ավարտվող բառերի սեռական հոլովը **յ**-ով են կազմում խոսվածքների մի մասը /Սարուխան, Գեղարքունիք, Լանջաղբյուր, Հացառատ, Նորատուս՝ Կարօյ, Աննայ, իսկ Գավառում՝ ի հոլովիչով՝ Կարօյի, Աննայի, և այլն/: Յուրահատուկ կազմություն է հանդիպում Նորատուսում և Հայրավանքում հոգնակի ստացականության իմաստով՝ **վոտը մե**, **ձեռը մե** /մեր ոտքերը, մեր ձեռքերը/: Նորատուսում երբեմն որոշիչ հոդը բառիմաստի տարբերակման դեր է ստացել **Դոր ես էթում /Ուր ես գնում/ - Դորն ես էթում /Ինչպես ես գնում/**:

Առավել ցայտուն են բառապաշարային տարբերությունները: Կան բառեր, որոնք հատուկ են առանձին խոսվածքների (օրինակ՝ Սարուխան. **օցմօղօղիկ** /մոդես/, **կավառ**, Գավառ. **էրկումատ** /եղան/, **կըվաս** /կաղամբով և գազարով թթու/, Նորատուս. **խընոցի**, **գօվըկ** /մեծ ձագար/, **ադմասօրիկ** /ատամահատիկ/, **կըլմբօստիկ** /գլուխկոնծի/, Ծաղկաշեն. **կէսավուր** /կեսօր/, Գանձակ. **կունարկ** /բասմա/, Հացառատ. **պըտավոր** /զատիկ/, Հայրավանք. **անան** /տատիկ/, Արծվաքար. **աղընջուկ** /եղինջ/, կան բառեր էլ, որ հանդես են գալիս երկու և ավելի խոսվածքներում (օրինակ՝ Գավառ, Արծվաքար. **տաքոց-դոդոց** /տենդ/, **կըտուր**, Հացառատ, Ծաղկաշեն. **ըոցկապ** /խուրձ/, Սարուխան, Ծաղկաշեն. **տանիս** /տանիք/, Գավառ, Հացառատ. **ախայ**, Սարուխան, Հացառատ, Նորատուս. **յեղըռճիկ** /եղինջ/): Կան նաև բառիմաստի տարբե-

րություններ: Օրինակ՝ Գավառ քաղաքում **մուտքուղա** բառը նշանակում է ճաշի խյուս, մյուսներում՝ խորիզ. Նորատուսում և Հայրավանքում **հողա** բառը նշանակում է գոմ, այլ խոսվածքներում՝ գոմում առանձնացված տեղ՝ նստելու համար. խոսվածքների մեծ մասում **հախալուր**-ը բնական աղբյուրն է, իսկ Հացառատում, Ծաղկաշենում՝ նաև ծորակը: Կան նաև բառակազմական յուրահատկություններ: Օրինակ՝ խոսվածքների մեծ մասում բաղիյուսական բարդությունները կազմվում են **ու** շաղկապով՝ **տուն ու տեղ, դուռ ու դուս, խաց ու պանիր**, մինչդեռ Գավառում շաղկապի փոխարեն հնչում է **ը** /**տունըտեղ, դուռըդուս, խացըպանիր**/:

Խոսվածքային առանձնահատկությունները տարածքի բնակիչներին թույլ են տալիս հեշտությամբ որոշելու խոսողի՝ որ համայնքից լինելը: Սակայն, հասկանալի է, բոլոր խոսվածքները միավորվում են Բայազետի բարբառի համար ընդհանուր հատկանիշներով ու բառապաշարով, և առաջին հայացքից բոլոր համայնքներում գործառում է բարբառային նույն խոսքը: Իրենց առանձնահատկություններով հանդերձ՝ խոսվածքները բարբառի ներսում որոշակի ընդհանրություններով կազմում են խմբեր. ա/Գավառ, Հացառատ, Կարմիրգյուղ և Արծվաքար, բ/Սարուխան, Լանջաղբյուր և Գեղարքունիք, գ/Նորատուս և Հայրավանք, դ/Գանձակ և Ծաղկաշեն: Հետաքրքրական է, որ այս խմբավորումը պայմանավորված է համայնքների բնակիչների ծագումնաբանությամբ: Այսպես, առաջին խմբի խոսվածքների կրողների նախնիները եկել են Բայազետ քաղաքից և հարակից գյուղերից, երկրորդ խմբինը՝ հիմնականում Բայազետի գավառի Զանգիզոր և Սուրբ Օհան գյուղերից, երրորդ խմբինը՝ Արծափի Քորուն և Մոսուն գյուղերից, չորրորդ խմբինը՝ Խոյից, Սալմաստից և Բայազետից⁷: Ուշագրավ է, որ երրորդ և չորրորդ խմբերի խոսվածքներում իրենց զգացնել են տալիս ենթաշերտային իրողություններ (հատկապես հնչյունական համակարգում /քմայնացում/ և բառապաշարում, երբեմն նաև քերականական համակարգում): Նշենք նաև, որ երբեմն այս կամ այն խոսվածքում նկատելի է

⁷ Տե՛ս նաև **Ռ.Բաղդամյան**, Հայերեն բարբառներ. Սևանա լճի ավազանի խոսվածքները, Եր., 1972թ., էջ 7-9:

բարբառային այլ միավորի ազդեցություն: Այսպես, Սարուխանի խոսվածքում հանդիպում են կապերի նախադաս գործածությամբ քարացած ձևեր /Բայագետի բարբառին հատուկ է համապատասխան կապերի հետադաս գործածությունը/, ինչպես՝ **վըր վըզի, դուռ վըր դըռան, խըտ գ՛ալը** /գալուն պես/, որոնք ակնհայտորեն Մշո բարբառի ազդեցության հետևանք են:

Նկատելի է, որ խոսվածքները ավելի հաճախ միմյանցից տարբերվում են բարբառային ընդհանուր հատկանիշների դրսևվորման յուրահատկություններով և բառապաշարային իրողություններով: Բարբառի շրջանակներում խոսվածքները միմյանցից տարբերակվում են նաև մեկ տասնյակի չհասնող բարբառային հատկանիշներով, ընդ որում՝ որևէ խոսվածքի առավելագույնը հատուկ են նման հատկանիշներից չորսը կամ հինգը:

Ուսումնասիրության արդյունքում հանգում ենք այն եզրակացության, որ հարկավոր է տարբերակել և ներմուծել **խոսվածքային հատկանիշ** հասկացությունը: Եթե բարբառային հատկանիշները բնութագրվում են առկայություն/բացակայություն հակադրությամբ և ունեն համակարգային բնույթ ու բարբառները միմյանցից տարբերող դեր, ապա խոսվածքային հատկանիշները կբնութագրվեն բարբառային հատկանիշների դրսևորումների որակական և քանակական տատանումներով, մասնավոր բնույթով: Օրինակ՝ ա-ի շրթնայնացման տարբեր աստիճանների առկայությունը հատկանիշի դրսևորման որակական յուրահատկություն է, քմայնացած ա-ի, հավելական հ-ի դրսևորումների յուրահատկությունները ունեն քանակական բնույթ, հնչյունափոխական, բառերի ձևավորման, քերականական, բառապաշարային շատ իրողություններ ևս ունեն մասնավոր բնույթ: Իհարկե, խոսվածքները ևս միմյանցից կարող են տարբերվել **բարբառային հատկանիշներով** /ձայնավորահանգ բառերի սեռականի կազմություն, քմայնացման երևույթ, գ,կ,ք-ի դիմաց ջ,ճ,չ, դերանունների տարբեր ձևեր/, սակայն այդպիսիք որակ չեն կազմում և բարբառի ներսում խոսվածքային հատկանիշի դեր ունեն: Պետք է կարծել, որ խոսվածքում հանդես եկող բարբառային հատկանիշները հիմնականում այլ բարբառների ազդեցության կամ ենթա-

շերտային իրողությունների հետևանք են, բայց հնարավոր է, որ այդպիսիք լինեն նաև մարող կամ նոր ձևավորվող իրողություններ:

Виктор Катвалян – Языковые особенности диалекта Баязета. – В статье рассматриваются языковые особенности диалекта Баязета. Исследование приводит к выводу, что диалекты в основном отличаются особенностями диалектальных проявлений присущих им общих характеристик. А диалектальные свойства, отличающие один диалект от другого, обычно являются результатом влияния других диалектов или подслонными реалиями. Автор не исключает, что они могут также быть исчезающими или новыми реалиями.

Viktor Katvalyan – Speech peculiarities in Bayazet dialect. – The author has touched upon the speech peculiarities of Bayazet in the article and came to the conclusion that speeches differ mainly with the common characteristic features of speech expression typical to the dialect. And the dialect features which make the speeches differ from each other are principally the result of the influence of other dialects or they are substrate realias. The author doesn't exclude that they can also be extinguishing or newly-forming realias.

Բանալի բառեր: Բայազետ, տիպական, բարբառային հատկանիշ, բարբառ, խոսվածքային առանձնահատկություններ, բարբառային, լեզու:

Ключевые слова: Баязет, диалектальные свойства, характеристика, диалект, языковые особенности, диалектальные, язык.

Key words: Bayazet, the features of dialect, typical, dialect, speech peculiarities, idiomatic, language.

**ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՏՈՒՆ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ
ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏՆ ԱՐՏԱՅՈՂՈՂ
ԲԱՌԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՁ**

ՀԱՍՄԻԿ ԽԱԶԱՏՐՅԱՆ

(ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ)

Հնագույն հայերենը չէր կարող չունենալ բառային նշանակալից քանակությամբ տարբերակներ, և դրանք պիտի արտահայտվեին ինչպես միևնույն կամ մերձավոր իմաստների համար՝ տարբեր բառերի առկայությամբ, այնպես էլ միևնույն բառի իմաստային տարբեր զարգացումների մեջ:

Ինչպես գիտենք, հին հայերենը լավ է պահպանել բնակության, տան և վերջինիս մասերի վերաբերյալ բնիկ հնդեվրոպական անվանումները՝ **տուն, աւթ, խուղ, դուռն, անդ, որմն, ձեղուն, առաստաղ, ցիւ, քիւ** և այլն:

Քննվող նյութի իմաստային դաշտն արտացոլող բառանվանումների ցանկում ներառել ենք **շեմ, որմնախորշ (պատրիան), առաստաղ, երդիկ, տանիք, թոնրի օղանցք, ջրհորդան** հասկացությունների՝ հայերենում առկա բարբառային դրսևորումները: Վերոնշյալ հասկացությունների բառանունները դիտարկելիս դրանք տարանջատել ենք հետևյալ խմբերի.

1. բնիկ հայերեն՝ հնդեվրոպական ծագման բառեր.
2. գրաբարում չվկայված հնդեվրոպական արմատներ.
3. բնաձայն բառեր.
4. իմաստափոխված բառեր.
5. փոխառյալ բառեր:

Շեմ հասկացությունը հայերենի բարբառներում արտացոլված է հիմնականում **սեմ (շեմ), անդ (դրընդի), մղակ, էշիկ, աստանա, շփանա** բառային սկզբնաձևերով: Ըստ Հայերենի բարբառագիտական ատլասի ծրագրի հավաքած նյութերի՝ առկա են նաև սակավադեպ հանդիպող բառաձևեր՝ **ախոռ, ճխան**:

Գրաբարյան **անդ** բառաձևը Հր. Աճառյանը համարում է բնիկ հայերեն բառ՝ հնդեվրոպական ծագումով, որի ցեղակիցներ են

սանս. **ata** (դռան շրջանակը), լտ. **antae** (դռան երկու կողմերի սյուները): **Անդ** «սեամ, շեմք» առանձին անգործածական է, այն պահված է միայն **դրանդ, դրանդք, դրանդի** բառաձևերում: Իմաստն է նախադուռ, **դռան գավիթ, մուտք կամ շեմք**: Կազմված է **դր-դուռ** (հմմտ. դրացի) և հիշյալ **անդ** բառերից¹:

Հայերենի բարբառներում պահպանված է հնդեվրոպական **անդ** արմատից կազմված **դրանդի** բառաձևը, բայց արդեն ոչ հասկացության լիարժեք իմաստով. այստեղ բառիմաստի որոշակի փոփոխություն է տեղի ունեցել: Օրինակ՝ Մուշում **դ ըրընդի** բառաձևն ունի դռան վերին շեմ նշանակությունը, իսկ Համշենի բարբառում **դերընդի**-ն «պատշգամբի երկարությամբ ձգվող գերանն է»²:

Շեմ հասկացության դիմաց հայ բարբառներում գործառնող զուգաբանությունների հաջորդ բառախմբի առանցքը **սեմ** բառանունն է:

Ըստ Գ.Ջահուկյանի՝ արխագ-աղըղեական լեզուները, հատկապես արխագերենը, հայերենի հետ շփման մեջ են եղել հին ժամանակներից սկսած: Հայ-արխագ-աղըղեական զուգադիպումների առաջին շերտը կազմում են այն բառերը, որոնք արդյունք են հեռավոր ցեղակցության և հնդեվրոպա-արխագ-աղըղեական հնագույն շփումների և «տարրական ցեղակցության» (մանկական բառեր, բնաձայնություններ, ձայնարկություններ):

Գ. Ջահուկյանը հնարավոր է համարում **սեամ** (**սեմ, շեամ, շեմ**) բառի արևմտակովկասյան ծագումը, թեև կարծում է՝ նմանությունը կարող է և պատահական լինել³: **Մեմ** (**շեմ**) բառանունը գրեթե համահայերենյան կիրառություն ունի: Հայերենի բարբառներում այն հանդես է գալիս և՛ **սեմ** (գրաբարյան **սեամ**-ից), և՛ **ս>շ** անցումով համեմետաբար ուշ առաջացած **շեմ**, ինչպես նաև **շեմք** տարբերակներով:

¹ **Հ. Աճառյան**, Հայերեն Արմատական բառարան, հտ. 1, Ե., 1971, էջ 186:

² **Հ. Աճառյան**, Համշենի բարբառ, Ե. 1947, էջ 226:

³ **Գ. Ջահուկյան**, Հայոց լեզվի պատմություն, Նախագրային ժամանաշրջան, Ե., 1987, էջ 602:

Մեմ բառագուգաբանությունը փաստված է սահմանափակ բարբառային տարածքում: Օրինակ՝ այն կղզիացած է Երզնկայում (**շեմ//սեմ**), Սասունում առկա են **սիմ** (Իշխանաձոր գ.) և **սեմ** արմատից բառաբարդմամբ առաջացած **սեմակալ** բառի բարբառային տարբերակները՝ **սիմգալ** (Սասունի Շաղախի շրջ. Գյարմալ գ.), **սեմգալ** (Հազգոյի Իրիցանք գ.):

Շեմ հասկացության բառանուն է դիտարկվել **մղակ** բառաձևը: **Մղակ** բառի ծագման հավաստիությունն անորոշ է, չնայած Հր. Աճառյանը գրում է. «Գավառական բառեր անունը կուտանք բոլոր այն բառերուն, որոնք օտար լեզվէ մը փոխ առնված չեն, հայերեն են, բայց միևնույն ժամանակ հին մատենագրության մեջ ավանդված չեն, ինչպես դարաբաղոցոց **մղակ «դուռ»** բառը»⁴: Սակայն մեկ այլ տեղում գիտնականը, ներկայացնելով արաբական փոխառությունները, շինության և շենքի մասեր իմաստային-թեմատիկ խմբում փաստում է նաև **մղլակ**-ը՝ որպես դռան փակ⁵: Ղարաբաղի բարբառում առ այսօր էլ **մղլակ** բառը գործածվում է **դռան օղակ** իմաստով: Չի բացառվում **մղակ** բառի արաբերենից փոխառյալ լինելը: Մեր կարծիքով՝ ժամանակի ընթացքում **մղակ** բառը **դռան փակ** իմաստից՝ բառիմաստի ճյուղավորմամբ, ձեռք է բերել նախ **դուռ** իմաստը, ապա ժամանակի ընթացքում **դուռը** և **շեմը** իմաստային համանիշություն են ձեռք բերել, և բառը ստացել է **շեմ** իմաստը:

Սրա վառ ապացույցն է նաև այն, որ Գորիսի որոշ խոսվածքներում (Խնձորեսկ, Վերիշեն գ.-եր) **մղակ** բառին զուգահեռ որպես **շեմ** հասկացության նշանակելի **տոնունը** բառաձևն է գործածվում: **Մղակ** բառանունը առկա է միայն Ղարաբաղ-Շամախիի միջբարբառախմբի խոսվածքներում:

Շեմ հասկացության դիմաց յուրահատուկ բառաձև ունի Եվդոկիայի բարբառը՝ **ախտո**, որը համարվում է իրանական փոխառություն: Ըստ Հր. Աճառյանի՝ **ախտո**-ը առաջացել է **ուտել-խմել** արմատից, ըստ այսմ՝ **ախտո** բառի բուն նշանակությունն է **ու-**

⁴ Հ. Աճառյան, «Հայերեն գավառական բառարան», Թիֆլիս, 1913, էջ 4:

⁵ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս 2, Ե., 1951, էջ 199:

տել-խմելու տեղ⁶: Տեղական թուրքերենի ազդեցությամբ բառի-մաստի փոքր փոփոխությամբ բառը ձեռք է բերել **մսուր** իմաստը: Մեր կարծիքով՝ **ախտո**-ը թերևս փոխաբերացման հիմքի վրա առաջացած բառանուն է: Այս դեպքում փոխաբերացման հիմք է դարձել կատարած դերի նույնությունը կամ նմանությունը: Հայկական բնակելի տան մուտքի մոտ է եղել **ախտո**, **գոմը**, որին հաջորդել է մարդու բուն ապրելու տեղը, որից էլ **ախտո** բառը բառի-մաստի նեղացումով ստացել է **շեմ** նշանակությունը:

Հայ բարբառներում **շեմ** նշանակությամբ գործածվում է նաև **ճխան** բառանունը: **Ճխան**-ը **ծխնի** բառի բարբառային տարբերակն է: Այն գրանցված է Մանագլերտի Ռստամ Գեդուկ, Սևանի շրջ. Գեղամավան և Արարատի շրջանի Արարատ գ.-երում: **Ծխնի** բառի առաջնային իմաստն է՝ հնատիպ դռների ներքևում և վերևում հատուկ ելուստ, որ ներքևից հագնում է շեմի փոսիկին, իսկ վերևից՝ դրանդիին: Քանի որ այդ ելուստը եղել է շեմի վրա, հավանաբար այստեղից էլ հայերենի որոշ բարբառներում **ծխնի**-ն իր **ճխան** բարբառային տարբերակով իմաստային բնեռացումով ձեռք է բերել շեմ նշանակությունը: Ըստ Ջահուկյանի՝ անհնար չէ **ծ(դ)խնի** բառի ուրարտական ծագումը⁷:

Որմնախորշ: Որմնախորշի, այսինքն՝ սենյակում պատի մեջ թողած՝ **երեսը բաց պահարան** հասկացության ներկայանակը հայ բարբառներում բավականին խայտաբղետ է: Հիշյալ հասկացության բառանուններ են բնիկ հայերեն **ականատ**, **դոնակ**, **աճկոճ**, **աչկունք** բառաձևերը: **Ականատ**-ը բնիկ հայերեն բառ է, որն առաջացել է **ակն(աչք)** և **հատ(ել)** բաղադրիչների բառաբարդումից: Հր. Աճառյանը վկայակոչում է **ականատ** բառի գավառական ձևերը՝ **ակնատ**, **հականատ**, որոնք բարբառներում հանդես են գալիս թոշուն որսալու ցանց, ինչպես նաև **ականատ**՝ պատի մեջ բացված դարան կամ սենյակից սենյակ բացված փոքր պահարան

⁶ **Հ. Աճառյան**, Հայոց լեզվի պատմություն, մաս 1, Ե., 1940, էջ 99:

⁷ **Գ. Ջահուկյան**, ՀԼՊ, ՆԺ, Ե., 1987, էջ 439:

նշանակությամբ⁸: Նույն բացատրությունն է տալիս Հայկազեան բառարանը⁹:

Ականատ բառը իր հնչյունական տարբերակներով առկա է Վանի, Մուշի, Խոյի բարբառների խոսվածքներում:

Որմնախորշ հասկացության բառանվանում է նաև **ակն** արմատից սերված **աչկունք** բառաձևը: Ինչպես հայտնի է, բազմիմաստ **աչք** բառն ունի նաև **դարակ** նշանակությունը, և բարբառներում **աչկունք** բառանունը (**աչ+իկ+ունք**) բառիմաստային ճյուղավորմամբ առաջացող բառաձև է (սենյակում պատի մեջ թողած, երեսը բաց պահարան՝ դարակ իմաստով): **Աչկունքը**՝ իբրև **որմնախորշ**, գործածական է Մուշ-Տիգրանակերտի բարբառախմբի որոշ խոսվածքներում (Բուլանուխի Միքբար, Կոպ գ-եր):

Որմնախորշ հասկացության բառանուն է դիտարկվել նաև **դոնակ** բառաձևը, որը կողյակի ձևով գործառում է Ջուղայի բարբառում (Նախիջևանի Փարադաշտ՝ **տոնակ**//**պըտըրհան**, Փառակա՝ **տըռնօկ**//**ականատ**, Հին Ջուղա՝ **տըռնակ**):

Գ. Ջահուկյանը «բնակարան, տուն, կահկարասի» իմաստային-թեմատիկ խմբում ընդգրկում է նաև **դուռն** բառը՝ որպես հնդեվրոպական բառանուն¹⁰:

Հայերենի բարբառների մի սովոր մասում **որմնախորշ** իմաստով գործածվել է **պատրիհան** բառանունը: Հր. Աճառյանը **պատուհանի** համար ներկայացնում է երկու իմաստ՝ 1. լուսամուտ, 2. պատի մեջ պահարան:

Ըստ Ջահուկյանի՝ **պատուհան** բառի հին ձևը **պատուրիհան**-ն է՝ առաջացած իրանական **paturhānā (pati-frāna)** ձևից¹¹: Լ. Հովհաննիսյանը նշում է, որ **պատուհան** բառի իրանական ծագման փաստարկումներ կան որոշ իրանագետների մոտ: Գիտնականը ավելի հավանական է համարում Բենվենիստի բացատրությունը. «Միջին իրանական **pātrfās**-ի համաբանությամբ՝ հյ. **պատուհան**, տեսնում է միջ. իրանական ***pātrfān<*pāti.pāna.*frāna**, սնս. **prāna**,

⁸ **Հր. Աճառյան**, ՀԱԲ, հտ. 1, Ե., 1971, էջ 109:

⁹ Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հտ. 1, Ե., 1979, էջ 22:

¹⁰ **Գ. Ջահուկյան**, ՀԼՊ, ՆԺ, Ե., 1987, էջ 264:

¹¹ Նույն տեղում, էջ 540:

«փչել» ***patifrana** կազմության մեջ տեսնելով **«օդանցք, լուսամուտ»** իմաստը (BSL, 1963,63), մանավանդ որ ***patifrana**-ի համապատասխանությունը ակնհայտ է հատկապես **պատուհան**-ի **պատրհան** տարբերակի հետ, որն ավելի հին ձև է և պահպանված է նաև արդի որոշ բարբառներում»¹²:

Պատրհան-ը և **պատուհան**-ը հայերենի բարբառներում փաստված են մի շարք հնչյունական տարբերակներով: **Պըտըրհան** հնչյունական տարբերակն է առկա Ղարաբաղի բարբառում, **պըտըրհոս**-ը՝ Ագուլիսում: **Պատուհան** կամ **պատուխան** հնչյունական տարբերակներն են առկա Վանի, Մուշի բարբառներում: Առավել «աղավաղված» հնչյունական տարբերակներով հանդես են գալիս Սվեդիայում՝ **բադիհուն**, Չմշկաձագում՝ **բադիհոս**, **բադիֆոս**, Քեսաբում՝ **բետիհուն**, Խարբերդում՝ **բադֆոս**: Որքան էլ տարօրինակ թվա, պարզվում է՝ այս «աղավաղված» ձևերը հնագույն տարբերակներ են:

Կարձնանի բարբառում արձանագրված է **խլվակ** բառանունը՝ որպես **որմնախորշ**: Կարծում ենք՝ բարբառային **խլվակ** բառը սերտ առնչություն ունի **խողովակ** բառի հետ: **Լ**-ի և **դ**-ի՝ որպես ինքնուրույն հնչյույթներ գիտակցվելու և հնդեվրոպական **Լ**-ի տարատեսակները լինելու օգտին են խոսում հայ բարբառներում պահպանված այն բառաձևերը, որոնք մերթ **դ**-ով, մերթ **լ**-ով են հանդես գալիս: Ինչպես **խլվակ**-ում, ըստ մեզ, **խողովակ** բառի մի տարբերակն է՝ **խողովակ** > **խըղըվակ** > **խըլվակ**: Ի հաստատումն այս ամենի՝ բերենք **խողովակ** բառի մեկնությունը ըստ Աճառյանի. «**Խողովակ** - (**խուղակ**), **փողրակ**, ջրի կամ ուրիշ մի հեղուկի անցք... գվռ. նույն բառերն են **խովակ**՝ Սվեդիա - պատերի ստորոտը բացված ջրի շատ նեղ անցք, **խլվակ**՝ Հին Ջուղա - պատի ստորոտը բացված ծակ, որից ջուրը ներս է հոսում»¹³:

Այս ամենից կարելի է եզրակացնել, որ **պատի մեջ ծակ, որով ջուրը ներս է հոսում** իմաստից, բառիմաստային ճյուղավորմամբ, **խլվակ** բառը ձևորեն է բերել **որմնախորշ** իմաստը:

¹² Լ. Հովհաննիսյան, Հայերենի իրանական փոխառությունները, Ե., 1990, էջ 257:

¹³ Հ.Աճառյան, ՀԱԲ, հտ. 2, 1973, էջ 389:

Լոռու տարածքում կղզյակի ձևով առկա է **գյանջինա** բառանունը՝ որպես **որմնախորշ** հասկացության բառաձև: **Գյանջինա** բառը սերտորեն առնչվում է **գանձանակ** բառի հետ: Գ. Ջահուկյանը **գանձ**-ը և նրանից ածանցված **գանձանակ**-ը համարում է պարսկական փոխառություն: Մեր կարծիքով՝ **գանձանակ** բառը պարսկերենից անցել է վրացերենին, իսկ վրացերենից՝ **գանջինա** տարբերակով, Լոռու խոսվածքին: Այսինքն՝ **գանջինա**-ն **գանձանակ** բառի այլափոխված տարբերակն է (հմմտ. **Գանձակ** - **Գյանջա**):

Հր. Աճառյանը ևս փաստում է **գանջինա** բառաձևը. վրացական **գանձանակի**-ն՝ «եկեղեցու պնակ» իմաստով, համարում է հայերենից փոխառյալ՝ նշանակությունից ելնելով, իսկ **գյանջինա**-ն՝ **գանձանակ**, **դարակ**, պարսկերենից փոխառյալ՝ ձևի պատճառով¹⁴:

Պատի մեջ պահարան հասկացության դիմաց բարբառնեցում փաստված են պարսկերենից փոխառյալ **փանջարա** (Կարին, Օրդու), **դուլաբ** (Հաջըն, Վան, Խարբերդ), **թախչա** (Փերիա), արաբերենից՝ **շրաք** (Սասուն), **կղուբալա** (Եդեսիա), թուրքերենից փոխառյալ **յուք** (Մեբաստիա, Ակն, Ասլանբեկ), **ռաֆթ** (Երևան, Նորք) բառաձևերը:

Թոնրի օղանցք: Այս հասկացության բարբառային տարբերակ է դիտվել հնդեվրոպական ծագման **ակ** բառանունը, որը գործածվում է առանձին **ակ** (Կարին, Վան, Մուշ, Սասուն), ինչպես նաև բառակապակցային **թոնրի ակ** (**թունդրա ակ**, **թօրվան ակ**՝ Վան, Շատախ, Բերկրի, **թընդրի ակ**՝ Բայազետ, **թընդրա հ'ազ**՝ Ջավախք) ձևով:

Յուրահատուկ՝ հոլովված բառաձևով է փաստված Արցախի Մարաղա գ.-ի խոսվածքում՝ **ական** (**ակ** բառի սեռական հոլով):

Նախիջևանի Ազնաբերդ գյուղում **թոնրի օղանցք**-ը փաստված է և՛ **ազ**, և՛ **սնդու**, և՛ **աշկ** բառաձևերով:

Մնդու բառանունը՝ որպես **թոնրի օղանցք**, Գ.Ջահուկյանը համարում է բարբառային հնաբանություն՝ այն կապելով հայերեն ընթացք, ընթանալ- հ.վ. գերմաներեն **sind** «ընթացք, ուղի,

¹⁴ Հ. Աճառյան, ՀԱԲ, հտ 1, էջ 517-518:

Ճանապարհ» և հնդեվրոպական **sent** - ուղղվել, գնալ, ընթացք, ուղի, ճանապարհ բառերի հետ¹⁵:

Մնդու բառանվան տարածական շառավիղը հայերենի բարբառներում ընդգրկում է Արարատյան, Ջուղայի, Ղարաբաղի, Մեղրու բարբառների խոսվածքները:

Սուն բնիկ հայերեն բառից (հնիս. **psen, pson, psn**) և **-վածք** վերջածանցի համադրությամբ առաջացած բառանուն է **սնվածք** բառաձևը, որը դարձյալ հայերենի բարբառներում գործառուում է **թոնրի օղանցք** իմաստով և վկայված է Ջավախքի խոսվածքներում:

Երդիկ: Դեռևս 5-րդ դարի մատենագիրներ Եղիշեի, Եզնիկի, Ագանթագեղոսի երկերում գործածվել է այս բառը: Երդիկ-ը, ըստ Հր. Աճառյանի, «գյուղական տոներու տանիքին վրա բացուած ծակ կամ պատուհան, որմէ լույսը կը թափանցէ ներս և թոնրին ճիշտ ու ճիշտ դեմը գտնուելով՝ ծուխը անկէ դուրս կ'ելայ: Ասկէ առնելով լայնաբար կընշանակէ նաև «ծխնելոյզ»¹⁶: Բառի ստուգաբանությունը հստակ չէ:

Բարբառների արևելյան խմբակցության Ղարաբաղ-Շամախիի, Ագուլիս-Մեղրիի, երբեմն նաև Արարատյան բարբառախմբի խոսվածքներում հանդես է գալիս բառի արմատական **երդ** բառաձևը՝ հնչյունական բազմաթիվ տարբերակներով՝ **հոփրթ** (Արցախ), **հոփդ** (Ագուլիս), **հերթ** (Նախիջևանի Փարադաշտ, Բիստ), **հիրթ** (Նախիջևանի Փառակա), **հըրթ** (Գորիս):

Հաջորդը **երդ** բառային սկզբնաձևից **-իկ** վերջածանցի համադրությամբ ձևավորված **երդիկ** բառանունն է, որը տարածական ամենալայն ընդգրկումն ունի (Կարին, Եվդոկիա, Պոլիս, Խարբերդ, Մուշ, Տիգրանակերտ, Վան, Ջուղա, Խոյ-Մարաղա և այլն): Բառանվան հնչյունական տարբերակներն են՝ **երտիկ** (Մասուն), **հ'երտիկ** (Մուշ), **երթիս** (Նախիջևան), **հոփրտոն** (Շատախ), **յէշտիք** (Կարին), **արտէ՛զ** (Քեսաբ):

¹⁵ Զ. Զահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 327:

¹⁶ Հ. Աճառյան, Գաւառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 299:

Որպես **երդիկ** հասկացության զուգաբանություններ փաստված են որոշ փոխառյալ բառեր: Օրինակ՝ **բուխերիկ** (արաբերենից՝ *Բեսաբ, Բելլան, Խարբերդ*) և **բաջա** (թուրքերենից *Համշեն, Նիկոմեդիայի Ադաբազար, Արաբկիր*):

Առաստաղ: Այս հասկացության բարբառային զուգաբանությունների պատկերը հետևյալն է. **առաստաղ, առիք, օջորք, լամփա, կրճրգեքան, կօճ, օրթի, թավան, պատալօկ**:

Տարածական ընդգրկումով ամենագործածականն են **առիք**-ը և **օջորք**-ը:

Հր. Աճառյանը **առիք**-ը համարում է բնիկ հայերեն բառ՝ հնիս. **stel** - *դնել, գետեղել, բարձրացնել, կանգնեցնել, ցից, սյուն, յենաբան* արմատից՝ **առ** մասնիկով¹⁷: Գ.Ջահուկյանը **առիք** (**առաստաղ**) բառի ստուգաբանությունը կասկածելի է համարում իմաստային զգալի տարբերության պատճառով. ***reik** «լայն բանալ, ձող» նախաձևը համարվում է ***rei** - հենել նեցուկ դնել արմատի ածականով ձևը՝ սրան համիմաստ ***reid** նախաձևի հետ միասին. իմաստի զարգացման համար հմմտ. **ձեղուն** և **ձող, առիք**-ի **ք**-ն հոգնակերտ է, բայց այն կարող է այդպիսին դառնալ ուշ իմաստավորմամբ ***rik** > **առիք** > **առի-ք**, թեև հնարավոր է ենթադրել նաև առանց ածականի ձև (***rei-k, ri**)¹⁸:

Առիք բառանունը իր հնչյունական տարբերակներով (**առիք, առիկ, առինք, հառիք, հ առիք, արիք, առեք, հմռիք**) գործածվում է հիմնականում արևմտյան, մասամբ նաև արևելյան խմբակցության բարբառներում (Մալաթիա, Մեքաստիա, Եդեսիա, Սասուն, Վան, Մուշ, Ջավախք, Կարին, Հաջըն, Խոյ, Նախիջևան):

Օջորք: Հր.Աճառյանի կարծիքով՝ **օջորք** բառը սերտ աղերսներ ունի **աճառ** արմատի հետ, որը, ըստ նրա, արաբական փոխառություն է՝ **iġġār** «տանիք»: Գիտնականը, վկայակոչելով Նարեկացուն, տալիս է **աճառ** բառի «**առաստաղ, առիք, ոճոռք**», կամ՝ ըստ ՆՀԲ-ի, «**առաստաղի մանր գերաններ**» բացատրությունը: Ելնելով բառի միակ վկայությունից՝ Աճառյանը եզրակացնում է, որ

¹⁷ Հր. Աճառյան, ՀԱԲ, հտ. 1, էջ 254:

¹⁸ Գ. Ջահուկյան, ՀԼՊ, էջ 188-189:

աճառք-ը առաստաղ չէ, այլ նրանից վերև եղած մի բան, որ է «տանիք»¹⁹:

Միջին հայերենում արդեն գործածվում է **ռճոռք** բառը՝ իբրև առաստաղ:

Առաստաղ հասկացության **օջօրք** բառանունը հայերենի բարբառներում ունի **արճունք, օջօլք, ճօլք, հօճօրք, ուրճանք, ուրճունք, օռճօնք, ուճուրք, ըռճօնք** հնչյունական տարբերակները, որոնց տարածական շառավիղն ընդգրկում է Արարատյան, Ղարաբաղ-Շամախիի, Ագուլիս-Մեղրիի բարբառախմբերի խոսվածքային միավորները:

Կիլիկիայի, Փոքր Ասիայի որոշ խոսվածքներում, որպես **առաստաղ** հասկացության բառանուն, փաստված է նույն **առաստաղ** գրական բառածևը՝ հետևյալ հնչյունական տարբերակներով. Քեսաբ՝ **առըստող**, Բեյլան՝ **արըստոլ** // **հ'արստօլ**, Մեբաստիա՝ **առըստախ**, Եվդոկիա՝ **առըստաղ**, Ջեյթուն՝ **այըստոլ**, Սվեդիա (Խտրբեկ)՝ **առըստուղ, առըստօղ**:

Գ.Ջահուկյանը առաստաղ բառը բնիկ հայերեն բառ է համարում՝ կազմված առ նախածանցից՝ բնիկ հնդեվրոպական ծագման (**ա**)ստաղ ***stl-no-** ձևից՝ ***stel** «փռել» արմատից (հմմտ. հ.սլավ. **stelja** «ծածկ, տանիք»²⁰:

Լամփա: «Հայ բարբառագիտության ներածությունում» Գ.Ջահուկյանը, ներկայացնելով գրաբարում չվկայված հնդեվրոպական արմատները, համարում է, որ դրանց մեջ կան այնպիսիները, որոնք գալիս են հայերենի հիմնական շերտի միջոցով և ենթարկվում են հայերենի ընդհանուր օրինաչափություններին: Եվ այս շարքում առանձնացնում է նաև **լամփա**-ն (***lmpH-**)՝ «առաստաղի տախտակ» իմաստով²¹:

Լամփա-ն մեկուսացված գործածվում է Ղարաբաղ-Շամախիի խոսվածքներում (ի դեպ, բարբառներում այն հանդես է գալիս հիմնականում այլ բառածներին գուգահեռ՝ **օջօրք, հրճօրկ, օ-**

¹⁹ Հ. Աճառյան, ՀԱԲ, հտ. 1, էջ 140:

²⁰ Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010, էջ 73:

²¹ Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 283-294:

րինակ՝ Շուշի, Մարտակերտի Առաջաձոր, Մեծ Շեն գ-եր, Հավարիկ):

Առաստաղ հասկացության բառանունների մեջ հիշատակված են նաև **թավան**, (պարսկերեն՝ Մեքաստիա, Ակն, Համշեն), **օրթի** (թուրքերեն՝ Տիգրանակերտ), **պատալօկ** (ռուսերեն՝ Հադրուր, Կապան) փոխառյալ բառերը:

Ջրհորդան: Բառանունը կազմված է **ջուր+հորդ** (կամ **որդ**) արմատներից **-ան** ածանցից: Ըստ Գ.Ջահուկյանի՝ բառի բաղադրիչները բնիկ հնդեվրոպական արմատներ են՝ **ջուր *j** նախահավելվածով. ***juro-** նախաձևը վերականգնված է ըստ բայթյան ձևերի (լիտվ. **jura**, լատվ. **jura**), **հորդ+ան** (հորդ բացված, տրորված ուղիղ ճանապարհ)²²:

Ջրորդան հասկացությունը հայերենի բարբառներում ներկայացված է մի շարք բառանուններով՝ **ջրորդան**, **չրոիկ**, **վաք**, **նավդան**, **սրորնդան**, **խեծիգ**, **բօրչօն**, **կուռճրիվան**, **կրկրլ** և այլն:

Ջրհորդան հասկացության ջրորդան բառանունը բարբառային մեծ տարածք է ընդգրկում: Ըստ ՀԲԱ ատլասի ծրագրի հավաքած 500 բարբառային միավորների՝ բառաձևն արձանագրված է ավելի քան 60 բարբառային բառակազմական և հնչյունական տարբերակներով, որոնք երբեմն այնքան են այլափոխվել, որ դժվար է նույնիսկ գտնել դրանց ծագումնաբանական առնչակցությունը:

Ջրհորդան բառի բառագուգաբանություններ ենք դիտարկել **ձոնօթան**, **ձոնաթան** (Վան), **ձոնթան** (Շատախ), **չրոութկան**, **չրոթկան** (Արցախ), **ձոնըկաթ** (Վան), **չրորնդան** (Նախիջևանի Տանակերտ), **ճըլօրտան** (Մասունի Հազգո), **ճըրտօնակ** (Մասունի Գոմք), **ճըրթօն** (Համշեն, Եդեսիա, Խարբերդ), **ձորտուն** (Սևերեկ), **չօթուն** (Բալուի Նաջարան), **ջուրտուն** (Սվեդիայի Խտրբեկ), **ձուրթուն** (Քեսաբ) և այլն:

Ջր.Աճառյանը, անդրադառնալով հիշյալ բառային գուգաբանություններին, եզրակացնում է, որ սրանց մեջ մեծ դեր ունի ժողովրդական ստուգաբանությունը:

²² Գ. Ջահուկյան, ՀԼՊ, ՆԺ, էջ 159, 214:

Որոշ վերապահությամբ՝ մենք հիշյալ բառաձևերը համարում ենք բաղադրություններ՝ մի կողմից հիմք ընդունելով **ջորդան** բառանունը, մյուս կողմից բնաձայնությունները՝ **շոռալ**, **չոռալ** և այլն: Ասել կուզի՝ **չոռթան**, **շրոութկան** և նման այլ բառազուգաբանությունները երկու տարբեր բառանունների գործառության, թերևս նաև համադրության արդյունք են:

Հայերենի բարբառներում **ջրհորդան** հասկացության բառաձև են դիտվել նաև **ջրիզ** (Կարին, Ալաշկերտ, Մուշ, Մասուն), **շրոիկ** (Խիզան), **շրոռան** (Նախիջևան), **շրոշրոռան** (Մարտակերտ), **կրկրլ** (Ջավախք) բառաձևերը, որոնք, կարծում ենք, բնաձայնական ծագում ունեն:

Ջրհորդան հասկացության՝ հայերենի բարբառներում առկա **նավդան** (Արարատյան բարբառ, Խոյ-Մարաղա) բառանունը իրանական ծագում ունի, իսկ **օլուխ**-ը (Բեյլան, Մարաշ, Մեքաստիա, Արաբկիր, նաև **օլուդ**-ը՝ Համշենի Օրդու) թուրքերենից փոխառյալ բառ է, որի բուն իմաստն է **խողովակ**: Ավելի ուշ շրջանի փոխառություն է ռուսերեն **долюг**-ը, որը տարածում ունի տարբեր վայրերի խոսվածքներում:

Այսպիսով՝ **տուն** և **տնտեսություն** իմաստային դաշտն արտացոլող հասկացությունների բարբառային դրսևորումներն ուսումնասիրելիս բացահայտվում են պատմական, ազգագրական հետաքրքիր շերտեր, բառանունը գործածած տվյալ տարածքի բնակչության լեզվամտածողությանը բնորոշ առանձնահատկություններ: Մեկ անգամ ևս ակնհայտ է դառնում, որ հայերենի բարբառներն իրենց խորքում պարունակում են իմաստաբանական, բառագիտական, ծագումնաբանական այնպիսի հարուստ տեղեկություններ, որոնց շնորհիվ ժամանակի ընթացքում շատ կնճռոտ հարցեր են լուծվելու:

Асмик Хачатрян – Исследование лексем, отражающих смысловое поле "дом и домашнее хозяйство". – Древнеармянский хорошо сохранил исконно индоевропейские наименования для "дома", "жилья" и различных их цоцтавляющих: tun (տուն), awt' (աւթ), "дом", xul (խւլ), "хижина", (դուռն) "дверь" and (անդ) "участок пахотной земли", jelun (ձէղուն) "чердак", arastagh (առաստաղ) "потолок", c'iv (ցիւ) "кровля", kiv (քիւ) "карниз" и т.д.

При изучении диалектных слов, отражающих семантическое поле “дом и домашнее хозяйство”, которые и составляют предмет нашего исследования, обнаруживаются интересные исторические и этнографические слои, характеризующие языковое мышление населения на той территории, где употребляются лексема.

В список лексем, отражающих исследуемое семантическое поле, мы включили такие понятия, как *shem* (շեմ) “порог”, *vormnakhorsh* “ниша”, *erdik* (երդիկ) “дымоход”, *tanik* (տանիք) “крыша”, *tonri odancq* (թոնրի օղանցք) “отверстие тонира”, *jrhordan* (ջրհորդան) “желоб для водостока” и др.

Hasmik Khachatryan – *Comments on the Words Reflecting the Semantic Field “House and Household”*. – Ancient Armenian has preserved the native Indo-European names for *shelter*, *house* and its parts, such as *house/unnin*, [*avt*]/*uip*, *hut/junin*, *door/ηուն*, [*and*]/ *uñ*, *floor/juunul*, *wall/ηpuñ*, *attic/Δετηուն*, *ceiling/unuunuuñ*, [*tsiv*]/*ghl*, *cornice/pñl*, etc.

Study of the dialectal manifestations of the concepts reflecting the subject matter semantic field “*house and household*” reveals interesting historic and ethnographic layers, as well as characteristic features of the verbal thinking of the population of the territory that used the given word.

We have included in the list of the words reflecting the semantic field of the subject matter the dialectal manifestations of the following words and other concepts in the Armenian language: *threshold/շեմ*, *niche/ηpuñuñjunp2* (*պստոնք*), *ceiling/unuunuuñ*, *chimney /երդիկ*, *roof/տանիք*, *airhole of tandoor/թոնրի օղանցք*, *rainwater pipe/ջրհորդան*, *corner/անկյուն*, *wall/ηpuñ*. The report includes both the phonetic and the word-formative variants of the abovementioned words recorded in the dialects of the Armenian language. The dialectal versions found in the dialects of the Armenian language are studied, and their territorial characteristics are given.

Բանալի բառեր: խորհրդանիշ, տուն, սնտեսություն, հին հայերեն, հնդեվրոպական անուններ, տարածք, իմաստաբանական:

Ключевые слова: лексем, дом, домашнее хозяйство, древнеармянский, индоевропейские наименования, территория, семантический.

Key words: symbol, house, household, Ancient Armenian, Indo-European names, territory, semantic.

**ԱՐԱՐԱՏՅԱՆ ԲԱՐԲԱՌԻ ԼՈՌՈՒ
ԽՈՍՎԱԾՔՈՒՄ ԳՈՐԾԱՌՈՂ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ
(իմաստագործատական քննություն)**

ՋԵՄՄԱ ԲԱՌՆԱՍՅԱՆ

(ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ)

Կարծիք կա, որ հայերենի դերանունները հայ լեզվաբանության մեջ կարելի է հանգամանորեն ուսումնասիրված համարել: Մակայն թեման առավել ամբողջական կարելի է համարել հայ բարբառներում առկա իրողությունների քննությունը այդ ուսումնասիրություններին հավելելու պարագայում:

Բարբառների ձևաբանության մեջ ամենահետաքրքիրը դերանուններն են: Իր «Հայ բարբառագիտություն» (Ե.1953թ) աշխատության մեջ նշանավոր բարբառագետ Ա. Ղարիբյանն իրավացիորեն գտնում է, որ հայերենի բարբառներից ոչ մեկը դերանվանական նոր արմատ չի գործածում. բոլորն օգտագործում են համաժողովրդական լեզվի միևնույն արմատական ձևերը՝ տարբեր արտասանությամբ, այսինքն՝ բարբառներից յուրաքանչյուրին հատուկ հնչյունական օրենքներին համապատասխան, և շատ հաճախ դերանուններն են բարբառների հարևան լինելու հանգամանքը պարզելու հայտանիշը¹:

Բարբառների բառապաշարում գործառում են դերանվանական բազմաթիվ ձևեր, որոնց քննությունը փաստում է դրանց ծագումը բնիկհայերենյան արմատական ձևերից: Արդի հայերենի բոլոր դերանուններն էլ առկա են հայ բարբառներում, թեև դերանվանական որոշ ձևեր կարող են բացակայել տարբեր խոսվածքներում:

Քննության առարկա դարձնելով Արարատյան բարբառի Լոռու խոսվածքում գործառող դերանունները՝ նյութեր ենք քաղել այդ խոսվածքին նվիրված բարբառագիտական մենագրությունից (Մ.Ասատրյան), Ռ.Մարկոսյանի Արարատյան բարբառի խոս-

¹ Տե՛ս **Ա. Ղարիբյան**, Հայ բարբառագիտություն, Ե.,1953, էջ144:

վածքներն ընդգրկող ուսումնասիրությունից և ազգագրական այդ գոտին ներկայացնող բանահյուսական նմուշներից, ազգագրական հանդեսներից, հայ ժողովրդական հեքիաթների ընծեռած հարուստ նյութերից, Մեծ լոռեցու՝ Հ.Թումանյանի բառաշխարհից:

Ներկայացնենք Արարատյան բարբառի Լոռու խոսվածքում առկա դերանունները՝ անձնական, ցուցական, անորոշ, որոշյալ, ժխտական, հարցահարաբերական և փոխադարձ:

* Անձնական դերանուններ.

Մեծանուն լեզվաբան Հ.Աճառյանի «Լիակատար քերականություն հայոց լեզվի» աշխատության երկրորդ հատորն ամբողջությամբ նվիրված է դերանուն խոսքի մասին: Այստեղ գիտնականը, հարազատ մնալով իր ընդունած սկզբունքին, նախ քննության է առնում տվյալ երևույթն ընդհանուր լեզվաբանական մոտեցմամբ և հնդեվրոպական լեզուների համեմատական քերականության տվյալներով, ապա ներկայացնում է նույն երևույթը հայերենում՝ պատմական զարգացման մեջ:

Իր ուսումնասիրած հայ բարբառների մատուցած նյութերի հենքի վրա լեզվաբանը փաստում է, որ հայոց լեզվի բոլոր փուլերում մշտապես գործառած անձնական դերանուններն առկա են հայերենի բոլոր բարբառներում ու խոսվածքներում: Այլ խոսքով՝ անձնական դերանունները բառապաշարի համահայերենյան շերտին են պատկանում: Լոռու խոսվածքի անձնական դերանուններն են՝ յէս, դու, նա, մենք, դուք, նրանք կամ նրհանք, 3-րդ դեմքի համար նաև՝ ինքը, իրանք: Հետաքրքիր են բացառականի ինձանի, քեզանի, նրանի, իրանի, մեզանի, ձեզանի, նրհանցի, իրանցի ձևերը:

* Ցուցական դերանունները, որոնք մատնացույց են անում առարկան կամ նրա հատկությունը, թիվը, ինչպես նաև գործողության հատկանիշը՝ ձևը, չափն ու քանակը, հայերենի բարբառներում ներկայանում են բառակազմական, ձևակազմական բազմազանությամբ՝ գրեթե միշտ պահպանելով եռադիմայնությունը: Մեծանուն գիտնական Ա. Մեյեն զարմանքով է նշում հայերենի ցուցական դերանունների կանոնավորության մասին՝ ավելաց-

նելով, թե «վերին աստիճանի համաչափ այս համակարգը հայերենի ստեղծագործությունն է. հնդեվրոպական ոչ մի ուրիշ լեզու չունի դրա համագորը, և միայն հատուկենտ լեզուներից կարելի է համեմատելի ձևեր ներկայացնել»²: Այդ կանոնավորության խնդրին հաճախ է անդրադառնում նաև Հ. Աճառյանը հայ բարբառներում գործառող դերանունների, մասնավորապես ցուցականների հարցը քննելիս:

Օրինաչափորեն հնչյունափոխված էս, էտ, էն ցուցականներից բացի Լոռու խոսվածքում լայնորեն գործառում են, հավանաբար, այս+հանց կաղապարով առաջացած ըսէնց-սէնց, սըհէ, ըթէ, ինչպես, ասենք, ըթէ բանէր, սըհէ ախչիկ և այլն:

Իհարկե, էսթավուր կամ ըթավուր, էնդայդի բառաբարդումների առաջին բաղադրիչը օրինաչափ հնչյունափոխություն կրած էս, էդ, էն ցուցականներն են, իսկ երկրորդ բաղադրիչը փոխառյալ է: Բերենք օրինակ՝ Մէր վօխտը ըթավուր բանէրը մէնձ ամօթ էր³:

Մակբայներին հարաբերակից ցուցականների իմաստով գործառող ձևեր են դէս, դէն (ընդ+այս, այն) էստի (էս+դէհ) ընքամ (այնքան), ընդար (այնչափ), էնդըղամ ցուցական դերանունները: Վերջին բառաձևերի երկրորդ բաղադրիչը, հավանաբար, փոխառյալ դաղար (չափ) բառն է, որն առկա է հայերենի շատ բարբառներում: Լոռու բանահյուսությունից բերենք օրինակներ.

Շօրը էնդըղամ բաց էք անըմ, վօր լեռթ ու

թօքնէրուտ ըրէվըմ ա:

Էն օրվանի դէսը ինչդար քընըմ էմ, քունըս

կարըմ չէմ առնէմ⁴:

* Արարատյան բարբառի Լոռու խոսվածքի որոշյալ դերանունների մասին նշենք հետևյալը. խոսվածքում հաճախադեպ կիրառություն են դրսևորում ամէն, ամէքը, ամէն մինը, չիմ, բիրադի, սաղ որոշյալ դերանունները: Այս ձևերից յուրաքանչյուրին

² Տե՛ս **Ա. Մէլե**, Հայագիտական ուսումնասիրություններ, Ե., 1978, էջ 293:

³ Տե՛ս **Մ. Ասատրյան**, Լոռու խոսվածքը, Ե. 1968, էջ 168:

⁴ Տե՛ս **Մ. Ասատրյան**, Լոռու խոսվածքը, Ե. 1968, էջ 155:

հատուկ տարբերակված իմաստով էլ պայմանավորված է կիրառությունը խոսքում:

* Խոսվածքի անորոշ դերանուններն են՝ մինը, օքմին, ուրիշ, էսինչ, էնինչ, մի քա՛նի: Ի դեպ, օքմին ձևը, որն ակնեղնաբար ոք մի դերանունն է, ձեռք է բերել մարդ, էակ իմաստները և արտաբերվելով մեկ շեշտով՝ օ՛քմին (վերջընթեր վանկի շեշտումն օրինաչափ է), կարող է ստանալ անորոշ հոդին համարժեք մի բառը, որից՝ մի օքմին, այսինքն՝ ինչ-որ մարդ: Արկներն է կրկնաբանություն լինելը: Հայերենի բարբառներում համատարած է մարդ բառին անորոշ դերանվան իմաստ վերագրելը, օրինակ՝ Մարթ էկավ, շու՛տ արա: Սա բնորոշ է նաև Արևմտյան խմբակցության բարբառներին:

* Ինչ վերաբերում է ժխտական դերանունների գործածությանը, նշենք, որ հետաքրքիր իրողություն է խոսքի շղթայում շարահյուսական հատուկ կառուցվածքով ժխտական իմաստ արտահայտելը, ինչպես, ասենք, Արարատյան բարբառի Լոռու խոսվածքում ոչ ոք ժխտական դերանվան արժեքով գործածվում է մինն էլ ա, իսկ ոչ մի դերանվան իմաստով՝ մի բան էլա, բան էլա կապակցությունները: Ինչպես՝ Միննէլա յէկավ վօշ (ոչ ոք չէկավ), կամ, ասենք, բանէլա չըկա (ոչինչ չկա):

Խսվածքի ուսումնասիրությանը նվիրված մենագրության մեջ նշվում է, թե խոսվածքը փաստորեն ժխտական դերանուններ չունի⁵:

* Փոխադարձ դերանունները, բնականաբար, չունեն ուղղական հոլով, իսկ սեռական, տրական և հայցական հոլովներում համընկնում են: Փոխադարձ դերանուններն անեզական են. ենթադրելով գործողությամբ միմյանց կապվող առարկաներ՝ ունեն միայն հոգնակիի իմաստ: Շարահյուսական դաշտում փոխադարձ դերանուններն ունեն լրացման արժեք, ստանձնում են գոյականին հատուկ պաշտոններ, բացի ենթակայից: Հայերենի բարբառներում համատարած գործառույթ է դրսևորում իրար

⁵ Տե՛ս Մ. Ասատրյան, Լոռու խոսվածքը, Ե.1968, էջ 113:

փոխադարձ դերանունը, իսկ շատ բարբառներում հոմանշությամբ կիրառվում են նաև մեկմեկու բառի կադապարով և բարբառներից յուրաքանչյուրի համար օրինաչափ հնչյունափոխությամբ առաջացած բառաձևեր: Արարատյան բարբառի Լոռու խոսվածքում գործառում են իրար, իրուր, մինըմընու (մինըմընուն) փոխադարձ դերանունները: Հինհայերենյան մի բառը, որը միջին հայերենում հանդես է գալիս մեկ ձևով, բարբառներում դրսևորում է մին, մեկ, մեզ համապատասխանություն: Հայերենի բարբառներում փոխադարձ դերանվան արժեքով գործառում են մեկ դերանվան կրկնությամբ կազմված բառաբաղադրություններ, ինչպես, ասենք, Արևելյան խմբակցության բարբառներում՝ մեզ-մեզի (Արարատյան բարբառի Երևանի, Աշտարակի, Էջմիածնի խոսվ.), մինը մընուն (Լոռու խոսվ.): Ներկայացնենք Լոռու խոսվածքում առկա իրար, իրուր, մինը մընու փոխադարձ դերանունների հոլովական հարացույցը.

Մեռ- տր. -	իրար, իրուր	մինը մընու (ն)
Հայց. -	իրար, իրուր	մինը մընու (ն)
Բաց. -	իրարի, իրուրի	մինը մընուց (ը)
Գործ. -	իրարով, իրուրով	մինը մընով (ը)
Ներգ. -	իրարըմ, իրուրըմ	մինը մընըմ(ը)

Ինչպես երևում է Լոռու խոսվածքին նվիրված ուսումնասիրության մեջ ներկայացվող այս օրինակից, փոխադարձ դերանուններն ունեն նաև ներգոյական հոլով⁶: Մակայն Արարատյան բարբառի ընդհանրական քննությանը նվիրված մենագրության մեջ ժխտվում է ներգոյական հոլովի առկայությունը դերանվանական համակարգում: Փոխադարձ իրար(ու) կամ հիրար(ու), մեկմեկու կամ մեկմեկի դերանունների մասին խոսելիս նշվում է, որ դրանք չունեն ուղղական և ներգոյական հոլովներ⁷:

Մեր կարծիքով, Արարատյան բարբառում փոխադարձ դերանունների հոլովական հարացույցում ներգոյական հոլովի առկայությունը կասկածելի է, մանավանդ որ Արևելյան խմբակցությո-

⁶ Տե՛ս **Մ. Ասատրյան**, Լոռու խոսվածքը, Ե.1968, էջ 113:

⁷ Տե՛ս **Ռ. Մարկոսյան**, Արարատյան բարբառ, Ե.1989, էջ 137:

յան այլ բարբառների ուսումնասիրություններում, նույնպես ժխտվում է փոխադարձ դերանունների՝ ներգոյական հոլովածեր ունենալու հնարավորությունը:

* Հարցահարաբերական դերանուններ.

Ըստ Հ.Աճառյանի՝ «Ո՞ւ և ո՞վ միննույն բառերն են. բուն ձևն է ո: Սկզբում բնականաբար ո՞ւրնդհանուր գործածություն ուներ, հետո՝ ձայնավորի մոտ պատահած ժամանակ, ներդաշնակության համար (հորանջից խուսափելու նպատակով) ավելացավ վ բաղաձայն, իսկ ո՞ւ մնաց բաղաձայնի մոտ⁸: Հ.Աճառյանը փաստում է, որ այս իրողությունն առկա էր գրաբարյան աղբյուրներում. բաղաձայնով սկսվող բառից առաջ՝ ո՞ւ գիտե, իսկ ձայնավորով սկսվողից առաջ՝ ո՞վ ասե, և որ այժմ հայերենի գրեթե բոլոր բարբառներում ո՞ւ հարցական դերանվան միակ ձևն է ո՞վ (վօ՞վ, վէ՞վ)⁹:

Բարբառագիտական ապագա ատլասի նյութերի հավաքման ծրագրի վերջում բերված է Հովհաննես Թումանյանի «Սուտասանը» հեքիաթը, որը պետք է թարգմանել գրառվող բարբառային խոսվածքով՝ պահպանելով գիտական տառադարձության կանոնները¹⁰: Հեքիաթի՝ «Ով էնպես սուտ ասի, որ ես ասեմ՝ սուտ է, իմ թագավորության կեսը կտամ նրան» նախադասության թարգմանությունը հայերենի 500-ից ավելի խոսվածքներով հնարավորություն է տալիս վստահաբար ասելու, որ ով դերանունը հանդիսանում է:

Լոռու խոսվածքում գործառող վօ՞ր կուռը բառակապակցությանը հարցում է արվում գործողության ուղղությունը ճշտելու համար, ինչպես՝ Վօ ր կըռան վըրա գընաց¹¹:

Համարժեքորեն գործողության կատարման ուղղության մասին հարցում է արտահայտում դըվօ՞րը (ընդ+որ) դերանունը, ինչպես՝ Դըվօ՞րը փախավ մօզին:

⁸ Տե՛ս **Հ. Աճառյան**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ.2, Ե., 1954, էջ 389:

⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 394:

¹⁰ Տե՛ս Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր, Ե., 1977, էջ 139:

¹¹ Տե՛ս **Մ. Ասատրյան**, Լոռու խոսվածքը, Ե., 1968, էջ 158, 112:

Ամփոփենք մեր խոսքը՝ եզրակացնելով, որ Արարատյան բարբառի Լոռու խոսվածքում դերանունները ներկայանում են գերազանցապես բնիկ արմատական ձևերով, երբեմն էլ՝ փոխառ-յալ ձևերով՝ իմաստային նրբերանգներ արտահայտելու համար:

Джемма Барнасян – Местоимения в говоре Лори Араратского диалекта. – Сопоставление исследуемого материала однозначно указывает на то, что ни один из диалектов армянского языка не использует новых корней местоимений, все диалекты используют одни и те же корневые формы единого народного языка, но только с различным произношением. Приэтом – каждый диалект в соответствии с присущими ему фонетическими закономерностями.

Jemma Barnasyan – Pronouns in the Dialect of Lori Ararat Dialect. – The comparison of the material under research definitely points to the fact that not a single dialect of the Armenian language use new roots of pronouns, all the dialects use one and the same root forms of single popular language, but only with different pronunciation. Therewith each dialect is used in accordance with proper phonetic consistency.

Բանալի բառեր: բարբառ, դերանուններ, Լոռի, Արարատյան բարբառ, հայերեն, առողանություն, նույն արմատական ձևերը:

Ключевые слова: говор, местоимения, Лори, Араратского диалект, армянского язык, произношение, корневые формы единого.

Key words: dialect, pronouns, Lori, Dialect of Ararat, Armenian language, pronunciation, the same root forms.

**ԱՌՕՐՅԱ ԽՈՍՔՈՒՄ ԳՈՐԾԱԾՎՈՂ ՕՏԱՐ
ԲԱՌԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՅԵՐԵՆ
ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ¹**

ԼՈՒՍԻՆԵ ՂԱՄՈՑԱՆ

(ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ)

Հայոց լեզուն աշխարհի հնագույն և հարուստ լեզուներից է, որն արտաքին և ներքին ազդեցությունների պայմաններում ենթարկվել է բազում փոփոխությունների, սակայն ինքնամաքվել ու միաժամանակ հարստացել է ոչ միայն իր սեփական բառարմատների հիման վրա ստեղծված նորակազմ բառերով, այլև տարբեր լեզուներից կատարած փոխառություններով: Իսկ բառապաշարը լեզվի բաղադրիչներից ամենազգայունն է, որն անմիջապես արտացոլում է հասարակական կյանքում տեղի ունեցող յուրաքանչյուր փոփոխություն, հետևաբար այն անընդհատ համալրվում է նորանոր բառերով, փոխառություններով: Փոխառությունը լեզուների բառային կազմի հարստացման արտաքին միջոցներից մեկն է:

Աշխարհի բոլոր լեզուներն էլ այս կամ այն չափով բառեր են վերցնում ցեղակից և ոչ ցեղակից լեզուներից, ինչն անխուսափելի երևույթ է լեզուների համար, և թերևս չի կարելի մատնանշել որևէ լեզու, որի բառապաշարի մեջ օտար բառեր չլինեն: Եվ դա ինքնըստինքյան հասկանալի է, քանի որ ժողովուրդները, գտնվելով զանազան կապերի ու փոխհարաբերությունների մեջ, անմիջաբար կամ միջնորդավորված ձևով նոր հասկացությունների ու երևույթների հետ հաճախ վերցնում են նաև դրանց անվանումները:

Բոլոր լեզուները, սակայն, հավասարաչափ չեն օգտվում այդ միջոցից: Կան լեզուներ, որոնց բառապաշարի մի զգալի մասը

¹ Հետազոտությունը իրականացվում է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ 13YR-6B006 «Երևանի խոսակցական լեզուն» գիտական թեմայի շրջանակներում:

փոխառություն է, իսկ որոշ լեզուներում փոխառյալ բառերը համեմատաբար քիչ են, որը չենք կարող ասել հայերենի դեպքում:

Սույն հոդվածում նպատակ ունենք հատուկ քննության նյութ դարձնելու մեր լեզվի բառապաշարում գործածվող փոխառությունները և օտարաբանությունները, անդրադառնալ դրանց՝ հայերեն համարժեքներով փոխարինելու խնդրին:

Քանի որ, ինչպես նշեցինք, լեզուն անտարբեր չէ հասարակական երևույթների նկատմամբ, հետևաբար լեզվի զարգացումը, նրա հասարակական գործառնությունը մեծապես պայմանավորվում են հասարակական այն պայմաններով, որոնցում ապրում է նրանով խոսող հասարակությունը: Իհարկե, լեզուն փոփոխվում է նաև մարդու լեզվամտածողության փոփոխության հետևանքով:

Ներկա փուլում, երբ տարբեր երկրների ու ժողովուրդների միջև ստեղծվել են մշակութային, գիտական, տնտեսական բազմաբնույթ կապեր, փոխադարձ այցելություններ ու շփումներ, միջազգային մասշտաբով ձեռնարկվող միջոցառումներ ու համագործակցություն, առևտրական ու քաղաքական կապեր և այլն, հայոց լեզվի բնականաբար ավելի մեծ չափերով են կատարվում բառապաշարային տեղաշարժերը: Յուրաքանչյուր հասարակական նոր հարաբերություն նոր ծիլեր է զգում մեր լեզվում, մանավանդ առօրյայում գործածվող խոսակցական հայերենը հասարակական այդ նոր հարաբերությունների պայմաններում օրեցօր հեռանում է գրական հայերենից: Օր օրի խորապես աղճատվում և խաթարվում է բանավոր հայերենը: Մեր առօրյա խոսքում օգտագործվում են բազմաթիվ ու բազմաբնույթ օտար բառեր:

Դեռևս խորհրդային շրջանում, որոշակի զարգացման պայմաններում, հայոց լեզուն համալրվել է բազմաթիվ նոր բառերով և փոխառություններով: Ռուսերենը շատ մեծ ազդեցություն է ունեցել հայերենի հարստացման գործում: Լինելով ազգամիջյան հաղորդակցման լեզու՝ ռուսերեն շատ բառեր ամրակայվել են հայերենի բառապաշարում, և շատ քչերն են կարողանում ազատվել դրանից: Այդ բառերը մեծ մասամբ կենցաղային են, կազմում են մեր բառապաշարի անբաժանելի մասը, որոնցից հնարա-

վորին չափ պետք է ազատվել, ինչպես՝ **գալստուկ, լիֆտ, մեշուկ, մերել, շոֆեռ, կռավաթ, պաժառ, պուլ, պատալոգ, սոկ, վեդոռ, վեշ, տապոռ** և այլն:

Այսօր առօրյա խոսքում, հայերենը և ռուսերենը շարունակ խառնելով, մեծ վարպետությամբ մի նախադասության մեջ մի քանի անգամ լեզվից լեզու են անցնում: Այստեղ դեր ունի սովորության ուժը, սեփական խոսքի նկատմամբ անփույթ լինելը, ինչպես նաև խոսքի ինքնահսկման բացակայությունը:

Այսօր շատ փոխառյալ բառեր արդեն ունեն իրենց հայերեն համարժեքները, որոնք նորակերտ բառեր են, սակայն շատերը կդժվարանան դրանք գործածել, ինչպես՝ **ալբոմ (1. նկարանի՝ լուսանկարներ պահելու համար, 2. ծաղկանի՝ նկարելու համար, 3. հնչանի, ձայնանի, մեղեդանի՝ երգերի և երաժշտության հավաքածու), արխիտոն (հոսնաջեռ), բամբանեռկա (անուշատուփ), բասկետբոլ (զամբյուղախաղ, զամբյուղագնդակ), բասկետբոլիստ (զամբյուղորդ), գառաժ (սալլատնակ), գոսպիտալ (զինհիվանդանոց) և այլն:** Այստեղ արդեն խոսքի արհեստականության հարցն է առաջանում: Ոմանց համար խոսքը դառնում է մի տեսակ անբնական: Երբեմն էլ շատերն ամաչում են օգտագործել հայերեն համարժեքը՝ կարծելով ծիծաղելի կթվան շրջապատի մարդկանց, հետևաբար նախընտրում են առօրյայում գործածել օտար բառը՝ սովորության համաձայն: Խոսքը այն մարդկանց մասին չէ, որոնք օգտագործում են օտարաբանություն, քանի որ չգիտեն դրա հայերեն համարժեքը: Պատճառն այն է, որ տարիներ շարունակ լսել են փոխառյալ բառը, երբևէ չեն լսել դրա հայերեն համարժեքը: Նման օտար բառերից են՝ **բասանոշկա (բոկոտիկ), բիգուձի (ծամկալ), բլոկնոտ (նոթատետր), բռա (որմնաջահ), բոխոկ (մանրագարդ, կախագարդ), գառշուկ (1. ծաղկաման, 2. միզաման, նստուկ), գրաֆինկա (ջրխմիկ, սափոր, ջրաման), գռելկա (ջեռակ), լամպուշկա (լուսակ), խաղունոկ (քայլասայլակ), կալոբիա (տերմուժ), գնդակի կամեռ (փչուկ), մոզաիկա (խճանկար), շամպուն (օճառաջուր), շլանգ (փողրակ), շպիկկա (1. հերակալ, ծամկալ, 2. լվացքակալ), շվաբբ (լվափայտ), մանեկենշիցա (ցուցորդուհի), պեդալ (ոտնակ), պերեդաշի (փոխանցուկ), պիժամո (զի-**

շերագգեստ, ննջագգեստ), **սավոկ** (աղբակալ, գոգաթիակ), **սոսկա** (ծծակ), թրաշի **ստանոկ** (սափրակ), **ստոռոշկա** (գծակար), **սուշիկա** (շորանոց), **տաբուրետկա** (աթոռակ), **տյոռկա** (քերիչ), **տում-բըշկա** (պահարանիկ) և այլն:

Այսպիսով՝ օտարաբանություններ օգտագործում են, առանց բացատրության, բոլոր բնագավառներում, տարբեր զբաղմունքի տեր մարդիկ: Բազմաթիվ օտարաբանություններ կան բժշկության ասպարեզում՝ **աբխոդ** (բուժայց), **պրիստուպ** (նոպա), **պրոֆիլակտիկա** (կանխարգելում), **պուլս** (զարկերակ), **ստացիոնար** (հիվանդանոցային, կացիկ), **տաբլետկա** (հաբ), **տամպոն** (վիրախձուծ) և այլն, երաժշտության ոլորտում՝ **բառաբան**, **բառաբանչիկ** (թմբուկ, թմբկահար), **գիտառա**, **գիտառիստ** (կիթառ, կիթառահար), **գասարոլ** (հյուրախաղ), **գենեալնի** (գլխավոր), **գվուկ** (ձայն), **ժյուրի** (հանձնախումբ), **կլիպ** (հոլովակ), և այլն, դպրոցներում, բուհերում՝ **դիրեկտոր**, **ավտոռեֆերատ** (սեղմագիր), **լիկվիդ** (վերաքննություն), **գաչոտ** (ստուգարք), **գաչոտնիկ** (ստուգման գրքույկ), **նեղաբոռ** (թերի, թերլրում) և այլն, տարբեր աշխատավայրերում՝ **դակումենտ** (փաստաթուղթ), **դեկրետ** (հռչակագիր), **կադաստր** (իրարժեք), **պապկա** (թղթապանակ), **պիտիմինուտկա** (թոուցքաժողով), **պտիչկա** (նշագիր), **սկրեպ** (ամրակ) և այլն: Անհարկի օտարաբանությունների մեծ քանակ հանդիպում ենք արհեստավորների խոսքում՝ **բոլտ** (հեղյուս), **գայկա** (մանեկ), **գակազ** (պատվեր), **գապչաստ** (պահեստամաս), **ժեշտ** (թիթեղ), **կռան** (կռունկ, ամբարձիչ), **կուսաչկա** (կտրիչ), **շիֆովկա** (հղկում), **շուռուպ** (պտուտակ, պողոսակ), **պալիբովկա** (փայլեցում), **պայալնիկ** (զոդիչ), **պլանկա**, **պլենդուզ** (շերտաձողիկ, շրիշակ), **պոռառաբ** (աշխղեկ), **ռեզբա** (պարուրակ), **սմասկա** (յուղում), **ստանոկ** (հաստոց), **քիրպիչ**, **քյարպիչ** (աղյուս) և այլն²:

Օտարաբանության դեմ պայքարը և լեզվի մաքրության հարցը միշտ էլ տարբեր ժամանակաշրջաններում եղել է քննարկման առարկա:

² Տե՛ս, **Լ. Ղամոյան**, Օտար բառերի գործածությունը խոսքի իրադրային արտահայտություններում, Երիտասարդ լեզվաբանների հանրապետական երկրորդ գիտաժողով, Երևան, 2012:

Բայց դա բոլորովին էլ չի նշանակում, թե հայոց լեզվի դոները պետք է ամուր փակել անհրաժեշտ փոխառությունների առաջ, բոլոր օտար ու փոխառյալ բառերը մերժել: Եվ երբեք չի կարելի նույնացնել օտարաբանությունը և փոխառությունները, դրանք տարբեր հասկացություններ են:

Եթե մինչև այսօր հիմնականում մեր առօրյայում գործածում էինք ռուսերեն բառեր, որոնք կամաց-կամաց դուրս են մղվում մեր բառապաշարից, ապա այժմ ավելի մեծ արագությամբ մեծ տարածում են գտնում անգլերեն կամ եվրոպական այլ լեզուներից վերցված բառերը, որոնց տեսակարար կշիռը օրեցօր ավելի է մեծանում: Ամենուր առնչվելով օտար երևույթներին՝ տեսնում և զգում ենք, թե ինչպես է խոսակցական ու առօրյա շփման լեզուն ողողվում օտարահունչ ու օտար ծագման բառերով: Մեր հասարակությունը չի կարողանում պահպանել հայերենն ու հայկականը, ընդհակառակը՝ հայ երիտասարդությունը, օրինակ, քննադատում է այն, ինչ հայկական է, սկսած երաժշտությունից մինչև մտածելակերպ: Այսօր «զարգացած» հայ երիտասարդի շուրթերից տեղի թե անտեղի անընդմեջ լսվում են հետևյալ բառերն ու արտահայտությունները՝ **ok, please, thanks, hy, bye, «FULL ա», «Մի հատ SILK արա տենամ», «BREND-ովի ա քոնը», «LIKE անել», «Լայքեք և տարածեք», «Ֆոփ քառ ենք անում», «Ֆլեշմոբ ենք անելու», «Քենալ արա», «Քոմենթել եմ», «Քոփի եմ արել», «Էսօր փարթի ա», «Անցկացվում է քաստինգ», «Սերը իրա մոտ պիկ ա տվել», «Ստատուսդ կբարձրանա» և այլն, ինչպես նաև՝ **աբիդնի, բումաժնիկ, գալուբոյ, գոուբի, դրայվ, էլեմենտարնի, կալենդար, կակոռագ, կամենտարիա, կատաստոֆա, կարիերա, կարիչնիվի, կաֆե, կլաս, կլասիկ, կոռեկտ, շոպինգ, պրինցիպի, ռոզովի, սեյվ, սիրենըվի, սուպեռ, ստոպ, վոլգար, ունիկալ, ույուտ** և այլն: Բայց ինչու՞, միթե մեր լեզուն չունի այդ բառերի համարժեքը, չէ՞ որ նման բառապաշար գործածող անհատը չի կարող ունենալ գրագետ բանավոր խոսք, առավել ևս երեխան, որը փորձելով ընդօրինակել՝ իր բառապաշարը հարստացնում է այս բառակույտերով: Որտեղի՞ց է գալիս այս երևույթը: Իհարկե, նախ համակարգչից,**

ԶԼՄ-ներից, հեռուստատեսության տարբեր նախագծերից ու սերիալներից, որոնց բառապաշարը կայծակնային արագությամբ դառնում է մեր երիտասարդության ու փոքրերի սեփականությունը: Շատ բառեր էլ մեր բառապաշար են մտնում խանութների ցուցափեղկերին կամ ճակատային մասերում գրված, ինչպես նաև՝ տաքսիների, սննդի և այլ տիպի սպասարկման կենտրոնների անվանումներից, ինչպես՝ ***Երևան սիթի, Երևան Մոլլ, Դալմա Գարդեն***, օտար անվանումներ ունեն բազմաթիվ ֆիրմաներ, միջոցառումներ, մարզառողջական կենտրոններ (**Oxigen**), խանութներ (**Avenue des Fleurs**) ու առևտրի բազմաթիվ սրահներ (**Klaik**), հաղորդումների վերնագրեր (**Vitamin, Tatoo art, Telemarket, Deluxe, Desktop**, ինչպես նաև՝ **Ֆուրոր, Բլեֆ, Էքսկլուզիվ, Քոփի ռայթ, Սեկտոր PRO**), մեքենաների սպասարկումների անվանումներ (**GLOBAL LIMO SERVICE**), հեռուստաալիքներ (**TV, ATV, TV 5, Լայմ, Արմենիա**) և այլն, երբեմնի հանրախանութների և սրճարանների փոխարեն հաճախ գործածվում են ***կաֆեներ***-ը, ***սուպերմարկետներ***-ն ու ***հիպերմարկետներ***-ը:

Այսօր բազմաթիվ տերմինների համար ստեղծվում են հայերեն համարժեքներ, դրանց մեջ կան հաջողվածները:

Պահպանելով ճիշտ և ընդունելի սկզբունքներ, առաջարկելով բազմաթիվ հաջող նորակազմություններ՝ պետք է ձգտել հասկանալիին, սակայն վերջին երկու տասնամյակում հիվանդագին մի մտայնություն առաջացավ՝ բոլոր փոխառյալ, այդ թվում վաղուց լայնորեն գործածվող մատչելի բառերը անպայման փոխարինել հայերեն տարբերակներով: Եվ սկսեցին արագ թարգմանել գեղեցիկ ու դյուրահնչյուն այնպիսի բառեր, որոնք ոչ միայն չեն հակասում մեր ազգային լեզվի օրինաչափություններին, այլև արտահայտում են տվյալ բառի կամ հասկացության իմաստը: Արդյունքում գրավոր ու բանավոր խոսքում տարածում գտան հնարովի, անճաշակ ու դժվարահունչ բառակերտումներ (ինչպես՝ **Ժավել**՝ ճերմակուք, սպիտակուք, **թունել**՝ մուրել, **լոգոպեդ**՝ խոսաբույժ, **կոտլետ**՝ աղուկ, **կոմիտե**՝ ղեկանի, ղեկախումբ), ո-

րոնք օտար բառերի լիակատար համարժեքը չեն: Ահա այդ լեզվական նորություններից մի քանիսը՝ **դաշնույթ** (սիմֆոնիա), **կերպարարություն** (դիզայն), **կերպարար, կերպիկ, կերպորդ** (դիզայներ), **եռանդուժ** (էներգիա), **երաժշտանոց** (կոնսերվատորիա), **երթոն** (տրանսպորտ), **թեքնաբանություն** (տեխնոլոգիա), **սպայակույտ** (շտաբ), **սոցիում** (կոլեկտիվ), **սրընթոն** (մոտոցիկլետ), **քարյուղ** (նավթ) և այլն: Կամ՝ **ախտարգել** (կարանտին), **այլագիր** (կող), **դերանդամ** (պրոթեզ), **դիտագննում** (մոնիտորինգ), **դիրքաթիվ** (կոորդինատ), **գրուցահանդես** (թոք շոու), **թաղքագրիչ** (ֆլումաստեր), **խափանարարություն** (դիվերսիա), **ծրիչ** (սկաներ), **մրցատյան** (ժյուրի), **ցնցաբուժություն** (շոկային թերապիա), **ցնցանկար** (թրիլեր), **գրոսահանգրվան** (տուր բազա) և այլն:

Կան բառեր էլ, որոնք շատ երկար ժամանակ օգտագործվել են, այժմ հասարակության կողմից անընդունելի են նման բառերի հայերեն համարժեքները, ինչպես՝ **դպրորդ** (ասպիրանտ), **դպրանոց** (ասպիրանտուրա), **դպրապետ** (գլխությունների ղոկտոր), **դպիր** (գլխությունների թեկնածու), **ավարտաճառ** կամ **վկայագիր** (դիպլոմ), **ավարտաճառային** (դիպլոմային), **ուսվար** (դեկան), **ուսվարանոց** (դեկանատ) և այլ նորակազմություններ: Անհաջող բառակերտումներ ենք համարում նաև **ճեպ** (արագ) բառից սերող նորակազմությունները, ինչպես՝ **ճեպատար, ճեպիկ, ճեպո** (տաքսի), **ճեպորդ** (տաքսու վարորդ), **ճպերթ** (մետրո):

Նոր բառերի ստեղծման և փոխառնված բառերի հայերենացման մեծ միտումը, անշուշտ, դրական քայլ է, քանի որ տեղի է ունենում նաև լեզվի բառապաշարի հարստացում: Բայց հարց է առաջանում. որքանո՞վ են այս նորաստեղծ բառերը իմաստով ու հնչեղությամբ համարժեք չթարգմանված տարբերակին:

Այսպիսով՝ եթե անհաջող թարգմանենք բոլոր փոխառությունները, ապա մեր լեզուն դրանից կտուժի և ոչ թե կհարստանա:

Կան շատ բառերի թարգմանություններ էլ, որ կարծես արվում են հասարակության կողմից. չես կարող ասել՝ ժարգոնա՞ծի՞ն են, գրական հայերենի՞ ց, թե՞ առօրյա խոսակցական լեզվից:

Այս բառերն հավանաբար գործածվում են միմիայն ծաղրի նպատակով: Օրինակ՝ **պռառեխ**՝ գրգռաճեղք, **ջենթլմեն**՝ օրիորդապնդիչ, **տրոլեյբուս**՝ պոզասայլակ, **շամպայն**՝ փրփրագմփիկ, **մոտոցիկլետ**՝ ուժանիվ, **մակարոն**՝ երկարակտրախմորածակ, **դագաղ**՝ ննջատուփ և այլն, որոնք ավելի են աղավաղում մեր լեզուն: Նման երևույթները կանխելու, հետևաբար և մեր լեզուն արհեստական ու անհաջող բառակերտումներով չխճողելու համար հարկավոր է լուրջ մոտեցում ցուցաբերել բառաստեղծման հարցերին, բազմակողմանիորեն քննության ենթարկել ամեն մի բառ, հետո գործածության մեջ դնել:

Ընդհանրապես, իբրև կանոն, բառերի գոյատևումը պայմանավորված է խոսքի մեջ նրանց կիրառությամբ, ուստի որքան հաճախադեպ են հանդես գալիս նրանք ու լայն ընդգրկում ստանում, այնքան անհրաժեշտ ու հարազատ են թվում՝ դառնալով սովորական գործածության բառեր, որից հետո դրանց կիրառությունը աստիճանաբար օրինականացվում է: Դժբախտաբար այդպիսի ճակատագիր են ունենում երբեմն նաև արհեստական, անձաշակ ու անհաջող կազմություններ, մի բան, որ հիմնականում պայմանավորվում է առանձին մարդկանց, իսկ երբեմն էլ նաև հասարակության անտարբերությամբ, որոնք լայնորեն գործածում են այդպիսիք՝ առանց հաշվի առնելու դրանց նպատակահարմարությունը:

Սխալ ենք համարում նաև օտարամոլությունը, երբ խրախուսվում է ամեն կարգի փոխառությունների մուտքը հայերեն՝ վերջինիս դոմները լայնորեն բացելով օտար բառերի առջև և ոտնահարելով մայրենի լեզվի մաքրության շահերը, նրա դարավոր ավանդույթներն ու բառաստեղծական հնարավորությունները:

Այստեղ հարցն այն է, թե արդյո՞ք բոլոր միջազգային բառերն ու տերմինները անվերապահորեն պետք է ընդունել, թե՞ պետք է օգտվել լեզվի սեփական ներքին հնարավորություններից, դիմել բառակազմությանը: Մեր կարծիքով պետք է հաշվի առնել բառի գործածության անհրաժեշտությունը, նպատակահարմարությունն ու չափը: Փոխառություններին պետք է դիմել միայն ան-

հրաժեշտության դեպքում, երբ լեզվի ներքին միջոցներով հնարավոր չէ արտահայտել փոխառյալ բառի իմաստն ու նշանակությունը: Սա միանգամայն իրավացի պահանջ է, բխում է մեր լեզվի մաքրության շահերից և հաշվի է առնում հայերենի ավանդույթներն ու բառակազմական առանձնահատկությունները:

Այսպիսով՝ լեզուն մեր ժողովրդի մեծագույն հարստությունն է և պետք է պաշտպանված լինի ունեցություններից:

Յուրաքանչյուր լեզու հարստանում է, եթե օգտվում է փոխառություններից, սակայն անհարկի օտար բառերի ներմուծումը աղավաղում է մեր լեզուն, և դրա դեմ պետք է շարունակական պայքար տարվի: Մեր ժողովուրդը միավորված խոսքի կարիք ունի: Պետք է անել ամեն ինչ՝ օտարաբանություններին քիչ դիմելու համար՝ պահպանելով մեր լեզվի գեղեցկությունը, ճոխությունն ու ճկունությունը: Եթե ազգային գիտակցության վրա հիմնված կարգախոսը գործի, ապա լեզվի վիճակը հետզհետե կկարգավորվի: Չմոռանանք նաև, որ անհարկի մաքրամոլությունը միայն վնասում է լեզվին:

Лусине Гамоян – Проблема замены варварства и заимствований используемые в ежедневной речи с армянскими эквивалентами. – Словарь более чувствителен из языковых компонентов, который отражает непременно каждое изменение в общественной жизни, поэтому он непрерывно обновляется новыми словами, а также заимствованиями и варварством. Хотя любой язык обогащается, если использует заимствования, но импортирование неуместных иностранных слов искажает наш язык, и необходимо непрерывная борьба против него. Мы не должны забывать также, что неуместный пуризм только вредит языку.

Lusine Gamoyan – The task of replacing barbarism and borrowings used in the daily speech with Armenian equivalents. – Vocabulary is more sensitive of the language components, which is reflecting immediately each alteration in a public life, therefore it is completed continuously with the new words, and also borrowings and barbarism. Though any language is becoming rich, if is making use of borrowings, but the importing of the inappropriate

foreign words is distorting our language, and it is necessary a continuous struggle against it. We must not forget also, that inappropriate purism is only harming the language.

Բանալի բառեր: Հայոց լեզու, փոխառություն, օտարաբանություն, նորաբանություն, համարժեք, տերմին, թարգմանություն:

Ключевые слова: Армянский язык заимствование, варваризм, неологизм, эквивалент, термин, перевод.

Key words: Armenian language, borrowing, barbarism, neologism, equivalent, term, translation.

**ՈՐՈՇ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՐԵՎԱՆԻ
ԽՈՍՍԱԿՑԱԿԱՆ ԼԵԶՎԻ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ
ՏԱՐԲԵՐԱԿԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ¹**

ՄԵՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ

(ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ)

Լեզվաբանության մեջ տարածված է համաժողովրդական լեզվի գաղափարը, որը հասկանալի, ընկալելի է տվյալ հանրության կողմից: Մակայն այդ համաժողովրդական լեզուն չի կարող բացարձակապես միասնական լինել, քանի որ կան գործոններ, որոնց հետևանքով այն դառնում է անհամասեռ: Լեզվի տարբերակայնությունը լեզվաբանական գրականության մեջ ընդունված է բաժանել երեք խմբի.

1. լեզվի տարածական տարբերակներ՝ բարբառներ,
2. լեզվի ժամանակային տարբերակներ՝ լեզվի պատմության փուլեր,
3. լեզվի հասարակական տարբերակներ:

Հայտնի է, որ լեզվի հասարակական տարբերակումը նկատել է դեռևս 17-րդ դարում Գոնսալո դե Կորեասը: Նա հստակ առանձնացնում էր լեզվի մի շարք հասարակական տարատեսակներ. «Պետք է նշել, որ լեզուն, բացի գավառներում գործառնվող բարբառներից, ունի որոշակի տարատեսակներ՝ կախված տվյալ տարածքի բնակիչների տարիքից, հասարակական դիրքից, ունեցվածքից. գոյություն ունեն գյուղացու, քաղաքացու, պաշտոնավոր մարդու, ծառայողի, գիտնականի, հոգևորականի, կանանց, տղամարդկանց, երեխայի և այլ տիպի լեզուներ»²: Մա բավականին ընդունելի տարբերակում է, ուստի ըստ այդմ կարելի է ասել, որ ընդհանրապես լեզվավիճակը կախված է տվյալ լեզվա-

¹ Հետազոտությունը իրականացվում է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ 13YR-6B006 «Երևանի խոսակցական լեզուն» գիտական թեմայի շրջանակներում:

² **Г. В. Степанов**, Типология языковых состояний и ситуаций в странах романской речи. М., 1976, с. 22.

կան հանրությանը բնորոշ հասարակական, քաղաքական, տնտեսական և մշակութային պայմանների ամբողջությունից, երևույթներ, որոնք գտնվում են անընդհատ շարժման և զարգացման մեջ, հետևաբար լեզուն նույնպես անընդհատ փոփոխվում է՝ այդ ընթացքում հանդես բերելով զարգացման որոշակի միտումներ և օրինաչափություններ:

Այսպես՝ կարող են լինել լեզվի տարիքային առանձնահատկություններ (երեխայի լեզուն միշտ տարբերվում է մեծահասակի լեզվից, ավագ սերնդի ներկայացուցիչների խոսքը երբեմն տարբերվում է կրտսեր սերնդի ներկայացուցիչների խոսքից): Այնուհետև, հայտնի են լեզուներ, որոնցում զգալի տարբերություններ կան կանանց և տղամարդկանց խոսքի միջև (օր.՝ Ամերիկայում կարաիբների, յուկագիրների, Բոլիվիայի չիկիտա լեզուներում³): Լեզվի տարբերակայնությունը կարող է կախված լինել նաև մարդու կրթական մակարդակից (հմտ. կրթված մարդու և անգրագետ մարդու խոսքը): Խոսքի բնույթը մեծապես պայմանավորված է նաև մարդկանց զբաղմունքով, հետաքրքրություններով և այլն: Մարդկանց տարբեր դասերի պատկանելը, հասարակական ծագումը, բնակավայրը, միջավայրը ևս նպաստում են լեզվական ուրոշ առանձնահատկությունների առաջացմանը:

Ըստ այդմ տվյալ դեպքում մեր խնդիրն է որոշել այն հասարակական պայմանները, որոնք ընկած են Երևանի խոսակցական լեզվի հիմքում, վեր հանել և ներակայացնել դրանցով պայմանավորված լեզվագործածության առանձնահատկությունները՝ 1) առօրյա խոսքի հնչյունական, բառային, շարահյուսական և ոճական յուրահատկությունները, 2) Երևանի տարբեր համայնքների բնակիչների բանավոր խոսքի ընդհանրություններն ու տարբերությունները, 3) փոխներթափանցումների և փոխազդեցությունների հետևանք հանդիսացող հատկանիշները:

Ուսումնասիրության իրականացման համար կազմակերպվել են հարցումներ՝ Երևանի տարբեր վարչական շրջաններում և առանձին վայրերում, կատարվել համեմատություններ և այլն:

³ Է. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 641:

Հասարակական հարցումները կազմակերպվել են երկու ուղղությամբ: Նախ՝ փորձել ենք պարզել բնակչության հասարակական առանձնահատկությունները, որոնք կարող են որոշիչ դեր ունենալ Երևանի խոսակցական լեզվի ուսումնասիրության համար: Որպես լեզվական հանրույթ ընտրել ենք Երևանի 12 վարչական շրջանների բնակչությանը: Հարցումները հնարավորություն են տալիս պարզելու լեզվակրի հետևյալ հասարակական առանձնահատկությունները.

1. Բնակչության վայրը՝ ըստ Երևանի 12 վարչական շրջանների. սրանով նպատակ ունենք պարզելու Երևանի խոսակցական լեզվի տարածական տարբերակվածությունը: Չնայած այսօր հասարակական տարբեր խավերի ներկայացուցիչներ կենտրոնացած չեն որևէ կոնկրետ համայնքում, ինչպես խորհրդային տարիներին (օր.՝ Երևանի ծայրամասերում կենտրոնացած էր աշխատավոր բնակչությունը, մշակութային գործիչները հիմնականում բնակվում էին կենտրոնական հատվածում են), բայց այնուամենայնիվ այսօր էլ կարելի է նկատել նախորդ տարիներին ձևավորված և ավանդույթով պահպանված սովորույթներ, խոսակցական լեզվում արմատացած առանձնահատուկ դրսևորումներ: Ճիշտ է՝ տարածական այդ տարբերությունները շատ չնչին են, բայց որոշակի պատկերացում են տալիս լեզվի արդի վիճակի մասին: Օրինակ՝ Երևանի որոշ համայնքներում կամ թաղամասերում ձևավորվել են որոշ պայմանական լեզուներ կամ ժարգոններ, որոնք ավանդույթով փոխանցվում են սերնդեսերունդ:

Կրթական մակարդակը՝ տարրական, միջնակարգ, բարձրագույն: Հարցումները ցույց են տալիս, որ այսօր, ի տարբերություն խորհրդային տարիների, բնակչության մեծ մասը բարձրագույն կրթություն ունի, սակայն դա ոչ մի կերպ չի նպաստում սեփական լեզվի նկատմամբ վերահսկողությանը կամ լեզվի տիրապետման բարձր մակարդակին: Թվում էր, թե կրթված մարդիկ քիչ թե շատ պատասխանատու են լինում լեզվական հարցերում և ենթագիտակցաբար վերահսկում են իրենց խոսքը: Նշենք, որ բարձրագույն կրթություն ունենալը դեռևս լեզվական նորմային հետևելու չափանիշ չէ:

2. Մասնագիտությունը. Ինչպես կրթական մակարդակի դեպքում, այստեղ ևս պետք է նշել, որ լեզվակիրների մեծ մասը մասնագիտություն ունի, սակայն տարբեր հանգամանքների բերումով այլ զբաղմունք է ունենում, չի տիրապետում մասնագիտական բառապաշարին: Ինչպես գիտենք, մարդ որքան հաճախ է առնչվում իրականության այս կամ այն բնագավառին, այնքան ավելի է այն առանձնանում տվյալ մարդու լեզվում: Ուստի, մասնագիտությամբ զբաղվելու հանգամանքը բավականին մեծ է լեզվակրի խոսքային առանձնահատկությունների ուսումնասիրության գործում: Բացի այդ՝ մասնագիտական ցանկացած բնագավառ ունի իրեն բնորոշ բառապաշարը, տերմինաբանությունը և այլն: Կան նաև պայմանական- մասնագիտական լեզուներ, որոնք բնորոշ են տարբեր հասարակական խմբերին:

3. Զբաղմունքը. Հարցումները ցույց են տալիս, որ չնչին տոկոս են կազմում մասնագիտությամբ զբաղվող լեզվակիրները. նրանց հիմնական մասի զբաղմունքը այլ ոլորտներում է: Այսպես, ինչ-որ չափով իրար առնչվող մարդկանց խմբերում կարող են առաջանալ խմբային (կամ կորպորատիվ) ժարգոններ: Կապի ձևերը կարող են շատ բազմազան լինել: Կարևոր է, որ այդ կապն ինչ-որ կերպ միավորի մարդկանց, ինչպես օրինակ՝ բանակի ծառայություն, դպրոցական կամ բուհական կրթություն, զբոսաշրջություն, սպորտ և այլն: Ժարգոնն առաջանում է նաև այն մարդկանց միջավայրում, որոնք տրվում են վատ սովորույթների, օրինակ՝ թղթախաղ, հարբեցողություն և այլն: Նման ժարգոններն ունեն ոչ այնքան գործառական անհրաժեշտություն, որքան արտահայտիչ լինելու ձգտում: Կան տարբեր խմբային ժարգոններ, որոնցից մեկն է ուսանողականը կամ, ինչպես ընդունված է ասել, ուսանողական պլենգը:

4. Տարիքը. Միշտ էլ խոսքում առկա են լեզվակրի տարիքային առանձնահատկություններով պայմանավորված դրսևորումներ: Մեծահասակի խոսքը բնականաբար տարբերվում է դեռահասի խոսքից: Տարիքային բաժանումը կատարել ենք հետևյալ

կերպ. 1) մինչև 16 տարեկան (մինչև ավագ դպրոցական տարիքը, երբ դեռահասը դեռ մասնագիտական ընտրություն չի կատարել), 2) 17-25 տարեկան (նկատի ենք ունեցել ավագ դպրոցականների և ուսանողների տարիքային մոտավոր շեմը), 3) 26-35 տարեկան (երիտասարդության՝ ՀՀ օրենսդրությամբ ընդունված շեմը), 4) 36-65 տարեկան (մեծահասակների՝ մինչև թոշակառու դառնալու տարիքային շեմը), 5) 66 և ավելի տարեկան (թոշակառու բնակչության տարիքային շեմը):

5. Մայրենի լեզու. Քանի որ խորհրդային տարիներից եկող ավանդույթով այսօր էլ բնակչության մեջ շատ կան ռուսախոսներ, մայրենի լեզուն որոշելու համար 3 ուղղությամբ ենք հարցում կազմակերպել. արդյոք մայրենին հայերենն է, ռուսերեն՝ ոչ, թե՞ այլ լեզու:

6. Ընտանիքում գործածվող հիմնական լեզուն. Միշտ չէ, երբ ընտանիքում գործածվող հիմնական լեզուն միայն մայրենի լեզուն է: Ընտանիքում կարող է գործածվել ոչ թե մեկ, այլ մի քանի լեզու: Ուստի շատ կարևոր է որոշել ընտանիքում գործածվող հիմնական լեզուն, դրանով պայմանավորված էլ պարզ կդառնան լեզվական փոխներթափանցումները, կընդգծվի լեզվական տվյալ հանրային բնորոշ տիրապետող լեզունվերջինիս տիրապետման աստիճանը և այլն:

7. Հեռուստահաղորդումների և մամուլի լեզուն. Այսօր մեր կյանքի անբաժանելի մասն են կազմում հեռուստատեսությունը և մամուլը՝ թե՛ թղթային, թե՛ էլեկտրոնային տարբերակով: Բնականաբար դրանցում գործածվող լեզուն իր դրոշմն է դնում լեզվակրի աշխարհայացքի, լեզվագործածության առանձնահատկությունների վրա: Դժվար չէ նկատել, որ հեռուստատեսությամբ և մամուլում տեղ գտած լեզվական շատ սխալներ արագ յուրացվում են լեզվակրի կողմից և դառնում նրա խոսքի անբաժանելի բաղադրիչ: Լեզվակրի խոսքի վրա իրենց որոշակի հետքն են թողնում նաև օտարալեզու հաղորդումներն ու մամուլը: Ճիշտ է՝ այսօր հեռուստատեսության և ռադիոյի մասին ՀՀ օրենքը⁴ արգե-

⁴ <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1464>, Օտար լեզուներով հեռուստառադիոհաղորդումները, գեղարվեստական, վավերագրական եւ մուլ-

լում է հանրային հեռուստաալիքներով օտարալեզու հաղորդումների և գովազդների հեռարձակումը, սակայն մեր օրերում թվային հեռուստաալիքները հնարավորություն են տալիս տարբեր լեզուներով հեռուստահաղորդումներ դիտելու: Ուստի՝ հեռուստադիտողն ինքն է որոշում՝ որ լեզվով դիտի տվյալ հաղորդումը կամ ընթերցի մամուլը: Այս դեպքում մեր խնդիրն է պարզել, թե լեզվակիրը ո՞ր լեզվով է նախընտրում հաղորդում դիտել, մամուլ կարդալ, և ամենակարևորը՝ ինչու: Այս հարցումը հնարավորություն է տալիս պարզելու ոչ միայն նախընտրելի լեզուն, այլև որոշելու վերջինիս առավելությունները, և եթե այն մայրենին չէ, ապա ինչո՞վ է զիջում մայրենին:

8. Երևանցի լինելու տիպը. այս հարցումը հնարավորություն է տալիս պարզելու Երևանում բնակվելու տիպը. լեզվակիրը բնի՞կ է, թե՞ ոչ: Իսկ եթե բնիկ չէ լեզվակիրը, ապա պետք է որոշել նրա բարբառային պատկանելությունը: Դա թույլ կտա տեսնելու բարբառային տարբեր ներթափանցումները, խոսակցական լեզվում արմատացած ձևերը:

Հավաքված տվյալները ներկայացրել ենք աղյուսակների ձևով և ենթարկել խմբավորման: Այնուհետև, մաթեմատիկական վիճակագրության մեթոդով կատարվել է հավաքված և խմբավորված նյութի գնահատումը, որի արդյունքում էլ պարզ է դառնում Երևանի խոսակցական լեզվի և լեզվակիրների հասարակական առանձնահատկությունների կապը և առնչությունները: Պետք է նշել, սակայն, որ այս տվյալները դեռևս բավարար չեն լեզվի մասին լիարժեք պատկերացում կազմելու համար, այս տվյալները հնարավորություն են տալիս պատկերացում կազմել արտալեզվական գործոնների վերաբերյալ: Սրանց արդյունքները պետք է համադրվեն գրավոր և տեխնիկական եղանակով գրանցված դիտարկման նյութերի արդյունքների հետ (հընթացս կատարվում են այդ աշխատանքները): Այդ ամենից հետո միայն հնարավոր կլինի լիարժեք պատկերացում կազմել Երևանի խոսակցական

տիպիկացիոն կինոնկարները, ինչպես նաև հայերեն հաղորդումների օտարալեզու դրվագները (հատվածները) հեռարձակվում են հայերեն համաժամանակյա թարգմանությամբ՝ ձայնային կամ լուսագրային եղանակով:

լեզվի արդի վիճակի, խնդիրների, զարգացման միտումների վերաբերյալ:

Мери Саргсян – *Некоторые наблюдения об общественной вариативности разговорного языка Еревана.* – Состояние языка в целом зависит от всего количества общественных, политических, экономических и культурных условий языкового сообщества, явления, которые находятся в непрерывном движении и развитии, поэтому язык также постоянно изменяется, и это приводит к развитию определенных тенденций и регулярности. Таким образом, наша задача определить, изучить те общественные явления, которые влияют на разговорный язык Еревана, и следовательно особенности состояния языка.

Meri Sargsyan – *Some observations about public variability of the colloquial language of Yerevan.* – The state of language in general depends on all quantity of public, political, economic and cultural conditions of language community, the phenomenon which are in continuous movement and development, therefore language also constantly changes, and it leads to development of certain tendencies and regularities. So we have a task to determine, to study the public phenomena influencing on the colloquial language of Yerevan and therefore the peculiarities of the state of the language.

Բանալի բաներ: Երևան, խոսակցական, լեզու, տարբերակվածություն, հասարակական, հարցում, հանրույթ:

Ключевые слова: Ереван, разговорный, язык, вариативность, общественный, опрос, сообщество.

Key words: Yerevan, colloquial, language, variability, public, query, community.

**ԼԵՀԱՀԱՅ ԲԱՐԲԱՌԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ՆՐԱ ՎԵՐԱՑՄԱՆ
ՊԱՏՃԱՌՆԵՐԸ**

ԳԱՐԻԿ ՄԿՐՏՁՅԱՆ

*(ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ,
ԳԱՄ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ)*

Լեհաստանի հայ գաղթօջախը, ըստ այնտեղ բնակություն հաստատելու ժամանակագրության, բաժանվում է երկու շերտի: Խոսքը «հին» և «նոր» արտագաղթերի մասին է: Փորձագետների տարբեր գնահատականներով՝ այս պահին Լեհաստանում բնակվում են 40-ից մինչև 80 հազար հայեր, որոնցից «հին արտագաղթին» պատկանում է միայն ութ հազարը, իսկ մնացյալ լեզվակիր հատվածն այնտեղ է հանգրվանել ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, և լեզվական առումով այդ շերտը միատարր լինել չի կարող, քանի որ նրանք ներկայացուցիչներ են ՀՀ-ի տարբեր մարզերից ու գյուղերից:

Լեհահայերի բարբառը պատկանում է հայերենի բարբառների **կը** ճյուղին և, ինչպես բնութագրել է Հր. Աճառյանը, մտնում է Առտիալի բարբառի տիրույթ ու, որպես առանձին միավոր, ուրույն տեղ գրավում Հունգարիայում, Սուչավայում, Ռումինիայում տեղակայված հայախոս վայրերի կողքին: Հր. Աճառյանի ներկայացմամբ՝ Առտիալի բարբառն ուներ չորս ճյուղ, և լեզվական համակարգերի ու ենթահամակարգերի օրինաչափություններով Լեհաստանում ու Հունգարիայում հանգրվանած հայ բարբառախոսները միավորվում են այնպես, ինչպես Սուչավայում ու Ռումինիայում¹:

Լեհահայ բարբառով գրականությունը և նմուշները, ցավոք, սահմանափակ են: Բարբառով նմուշներ է ավանդել Յան Հանուշը, որը ամբողջությամբ վերաներկայացրել է Հր. Աճառյանը: Լեհահայ բարբառով հարուստ լեզվական նմուշներ է հրատարակել

¹ Հր. Աճառյան, Քննություն Առտիալի բարբառի, Ե., 1953 թ., էջ 9:

մեկ այլ լեհահայ կաթոլիկ քահանա՝ Կազիմիշ Ռոշկան (Folia Orentalia, Vol. 1, Krakovie, 1959, Folia Orentalia, Vol. 4, Krakovie, 1962): Ռոշկայի՝ լեհահայերի կենսագործունեությունը, բառուբանքը վերարտադրող լեզվանյութը գնահատելի ներդրում է այդ տարածքի երբեմնի հայախոսների լեզվական համակարգերն ուսումնասիրելիս: Լեհահայ բարբառի մեր ունեցած լեզվական վերջին վկայություն-նմուշը Աննա Մովսեսովիչի ձայնագրություններն են, որոնք հայագետ Անջել Պիսովիչը գրանցել է 1982 թվականին լեհական Կատովիցե քաղաքում:

Լեզվապատմական առկա փաստերը ցույց են տալիս, որ այս տարածքում պատմականորեն տեղի է ունեցել հայախոսության ասիմիլացում (համաձուլում), իսկ եղած լեզվական մնացուկները՝ հատուկենտ լեզվական դրսևորումները, որոնք պահպանվել են այս երկարատև ժամանակահատվածում, քանակական վերլուծություններով որակ չեն կազմում: Այդուհանդերձ, արդեն իսկ որևէ տարածքում չգործող կամ, ավելի ստույգ, տվյալ տարածքում մեռած բարբառի մասին քննությունն արժեքավոր է բազմաթիվ առումներով: Նոր լույսի ներքո լեհահայ բարբառի ուսումնասիրությունն ունի հետևյալ լեզվապատմական արժեքը. **ա)** հնարավորին ներդրում է համաժամանակյա և տարաժամանակյա բարբառագիտության ձեռքբերումներում, **բ)** հնարավորություն է ընձեռում բացահայտելու տվյալ տարածքում գործած լեզվական համակարգերի ու ենթահամակարգերի առանձնահատկությունները և ցույց տալու դրանց որակային տարբեր կողմերը, **գ)** այս տարածքի բարբառախոսները գաղթել են միջնադարում կենտրոնական Հայաստանի տարբեր վայրերից, հետևաբար լեհահայ բարբառի ուսումնասիրությունը բազմանշանակ վերականգնողական արժեք ունի և կնպաստի միջին հայերենի բարբառային տարբերակվածության հարցն ուսումնասիրելիս և լեզվական բազմաթիվ բաց օղակների բացահայտմանը:

Լեհահաստանում երբեմնի եղած հայ հին գաղթօջախն ամենահինն է եվրոպական արեալում, և այդ գաղութի ամենամեծ և բազմամարդ լինելու մասին փաստերը գիտությանը հայտնի են վաղուց: Հր. Աճառյանն այս առումով ուշագրավ դիտարկումներ է

անում. «Այնքան ազդեցիկ եղան հոն հայերը, որ լեհերը Տերութեան մէջ տերութիւն մը կը կարծէին մեզ և անոր առջէն առնուլ կը մտածէին: Ապաշնորհ կաթոլիկութիւնը ոչնչացուց այս մեծ հայ գաղութը՝ իբր յաւիտենական խրատ տալով և հաստատելով այն ճշմարտութիւնը, թէ հայ գաղթականութեանց մեծագոյն ուժը անջատ եկեղեցի մը ունենալն է»²: Բնականաբար, Աճառյանի սույն ակնարկը տարատեսակ վկայություններով հիմնավորվում է, և այսօր Լեհաստանում հայկական համայնքի մարումը՝ թե՛ հայախոսության, թե՛ էթնոգոյի գիտակցման առումներով ունի իր պատմահասարակական հիմնապատճառները:

Լեհահայերի բարբառի մասին առաջին խոսքը պատկանում է լեհացի Յան Հանուշին, ով 19-րդ դարի վերջերին՝ 1886 թվականին, գրել է լեհահայերի բարբառի հնչյունական համակարգի մասին մի ինքնատիպ ուսումնասիրություն, և հետագա ուսումնասիրողների եզրակացություններում Հանուշի բերած տվյալները՝ որպէս սկզբնաղբյուր, առանցքային են և էտալոնային: Ընդ որում, Հանուշն իր հետազոտություններում լեհահայ բարբառի նկարագիրը տվել է՝ հիմնվելով Կուրթի քաղաքում ապրող մի հայախոս ընտանիքի պահպանած բարբառի առանձնահատկությունների վրա:

Լեհահայ բարբառի մասին մյուս ծանրակշիռ խոսքն ասել է Արսեն Այտընյանը³: Այտընյանը հայերենի բարբառների աշխարհագրական դասակարգման տրամաբանության շրջանակներում այն ներկայացնում է որպէս երրորդ գավառական՝ Լեհաստան, Առտիալ տարածքների ընդգրկմամբ:

Ուսումնասիրվող բարբառը գիտական պատշաճ մակարդակի չափանիշներով առաջին քննողը հայ գիտական բարբառագիտության հիմնադիրն է՝ Հրաչյա Աճառյանը՝ 1911 թվականին Մոսկվայում լույս տեսած «Հայ բարբառագիտություն-Ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների» աշխատության մէջ այն ներկայացնելով «Ավստրո-Հունգարիոյ բարբառ» խորագրի շրջա-

² **Հր. Աճառյան**, Հայ գաղթականության պատմություն, Ե., 2002թ., էջ 115:

³ **Ա. Այտընյան**, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Երևան, 1987, էջ 166:

նակներում, իսկ 1953 թվականին Հր. Աճառյանը հրատարակում է «Քննություն Առտիալի բարբառի» ուսումնասիրությունը: Սույն ուսումնասիրությունը, ըստ ամենայնի, առանցքային խոսքն է լեհահայերի բարբառի վերաբերյալ, որով էլ երիցս արժևորվում է այն:

Անցյալ դարի վերջին տասնամյակներից սկսած՝ քննարկվող բարբառի հիմնախնդիրներին անդրադարձել է նաև հայագետ-արևելագետ Անջեյ Պիսովիչը: Ա. Պիսովիչի ուսումնասիրություններից մեկում վերլուծվել են լեհահայերի բարբառի հնչյունական համակարգի առանձնահատկությունները (Phonetic characteristics of the dialect of Polish Armenians, *Studia Indo-Iranica* (1983), ISSN 0079-3310, ISBN 83-04-00617-0, Krakowie), իսկ մեկ այլ հրապարակման մեջ հետազոտողն անդրադարձել է Լեհաստանում հայերի ինքնանվանման տարբերակներից մեկի՝ «կաբզան» բառի իմաստաձագումնաբանական քննությանը (Polish names of Armenians (Ormianczyk...Kabzan), *Studia Etymologica Cracoviensia*, vol. 5, Krakowie, 2000): Որպես ազգանվանում՝ «կաբզան» նշանակում է «հայ», որով լեհերը անվանել են լեհահայերին: Յան Հանուշն այս բառի ծագումը բխեցնում է արաբերենից ու թուրքերենից՝ «դրամապանակ, փողի քսակ» նշանակությամբ, որը լեհերենից միջնորդավորմամբ անցել է լեհահայ բարբառին: Ա. Պիսովիչը բացառում է «կաբզան» բառի հանուշյան ծագումնաբանությունը՝ նշելով, որ լեհերենն ունի kabza բառը, որն ամեննին էլ արաբաթուրքական փոխառություն չէ, այլ լատինական փոխառություն է և ունի «capsa» («պահարան, հարմարավետ կացարան, չիրկիզվող պահարան») նշանակությունը: Ա. Պիսովիչը «կաբզան» բառի ծագումը միանգամայն այլ հիմքից է բխեցնում՝ փորձելով հիմնավորել նրա՝ դասական հայերենի շրջանում գործածության դրված «գաւազան» բառից ծագած լինելը⁴, որը, ինչպես գիտենք, իրանյան փոխառություն է: Թեև Պիսովիչը նշել է, որ «դրամապանակ, քսակ» իմաստն արտահայտող **kabza** բառը հումորային նշանա-

⁴ *A. Pisowicz*, Polish names of Armenians. Ormianczyk...Kabzan, *Studia Etymologica Cracoviensia*, vol. 5, Krakowie, 2000, p. 92:

կույթամբ կարող էր տրվել հայերին, որով լեհերենում փոխաբերաբար կոչվում էին ազահ մարդիկ, սակայն բառի ծագումը տեսնելով «գաւազան» բառի հետ ունեցած առնչություններում՝ նրա բովանդակությունն ավելի խորիմաստ բովանդակություն է ստանում:

Պետք է կարևորել, որ լեհահայերն օտարազգիներից տարբերվել են իրենց՝ **-իչ** և **-կի** ազգանվանակերտ ածանցներով ավարտվող ազգանուններով: Հայկական ծագումով ունեցող լեհական նշանավոր տոհմերի ներկայացուցիչներ են՝ **Մալովսկիները**, **Պիրամովիչները**, **Բերնատովիչները**, **Յախովիչները**, **Սրոժանովսկիները**, **Գրիգորովիչները**, **Բարովիչները**, **Թեոդորովիչները** և այլք: Հայկական ծագումով ունեցող նշանավոր լեհերն են՝ գրող **Յան Յուզեֆ Իգնացի Լուկաշևիչ Կալեթան Աբգարովիչը** (1856-1909), կաթոլիկական քահանա, բանաստեղծ **Կարոլ Անտոնիվիչը** (1807-1852), նկարիչ **Թեոդոր Աքսենթովիչ** (1853-1938), դերասանուհի **Աննա Դիմնան** (1951), բանաստեղծ, էսսեագիր **Զրիգնև Հերբերտը** (1924-1998), կաթոլիկական քահանա, Լեհաստանում Հայ կաթոլիկական եկեղեցու թեմի առաջնորդ, պատմաբան, բարեգործ **Թադեուշ Իսակովիչ-Ջալեսկին** (1956-), ռեժիսոր **Եժի Կավալերովիչը** (1922-2007), դեղագործ, Լեհաստանի նավթային արդյունաբերության հիմնադիր, նավթի լամպի գյուտարար և բարեգործ **Իգնասի Լուկաշևիչը** (1822-1882), լրագրող **Ռոբերտ Մակլովիչը** (1963-), կոմպոզիտոր **Կշիշթոֆ Պենդերեցկիը** (1933-), կաթոլիկական քահանա, մանկավարժ և փիլիսոփա **Գժեգոժ Փիրամովիչը** (1753-1801), բանաստեղծ **Յուլիուշ Սլովացկին** (1809-1849), բանաստեղծ **Շիմոն Շիմոնովիչը** (1558-1629), Լվովի հայ կաթոլիկական եկեղեցու արքեպիսկոս՝ հայտնի իր վառ կրոնական և հասարակական գործունեությամբ **Յուզեֆ Թեոդորովիչը** (1864-1938)⁵:

Դեպի Լեհաստան հայերի ներհոսքն ընթացել է երեք ժամանակային փուլերով: Առաջին գաղթը տեղի է ունեցել պատմական

⁵ <http://poland.mfa.am/hy/community-overview/>

Հայաստանում Բագրատունների թագավորության անկմանը զուգընթաց, երկրորդը՝ Անի քաղաքի կործանման ժամանակ և հետո, իսկ երրորդ մեծ ներգաղթը՝ 1475 թվականին: Եթե առաջին և երկրորդ գաղթերի ժամանակ հայերը Լեհաստան հանգրվանել են ուղղակիորեն պատմական Հայաստանից, ապա երրորդ գաղթը Լեհաստանում տեղի է ունենում Օսմանյան կայսրության տիրապետության ներքո անցած Դրիմից, ուր հայերը տեղափոխվել էին ավելի վաղ:

Լեհաստանում հայ գաղթականության բնակավայրերն են եղել՝ Լիվովը/Իլվովը, Լեմպերկը/Լեապոլիսը/այսօր Ուկրաինային մաս կազմող Լվովը/, որտեղ հայերը նախ 1120 տուն էին, իսկ 14-րդ դարում Լեմպերկում ապրում էին 7000 երդ հայ: Երրորդ մեծ գաղթականությունից հետո, ըստ Հր. Աճառյանի մատուցած տվյալների, լեհահայերի ընդհանուր թիվը կազմում է 40.000 ընտանիք, այսինքն՝ 200. 000 անձ, որոնք բնակվում էին երկրի բոլոր երևելի քաղաքներում: Ըստ Նիկողայոս Ադոնցի՝ 1600-ին՝ այնտեղ եղել է 700 տուն⁶, իսկ 1802 թվականին՝ 126 տուն:

1670 թվականին է հիմնվել Ռումինիայից և Հունգարիայից ներգաղթած և Լեմպերկից հարավ-արևելքում գտնվող Ստանիսլավի հայկական գաղութը: Լեհախոս հայ հասարակությունը ուներ շուրջ 300-400 երդ, որոնք համարվում էին տեղի առաջին բնակիչները: Հայերը գաղութներ են ունեցել նաև Սնեաթինում, Հոռոտինքա, Գոլումեա, Օթաք, Զլոչով, Պրոտի, Յարոսլավ, Կուրի բնակավայրերում:

Ռուսական Լեհաստանի կարևոր նշանակություն ունեցող լեհահայ գաղութներ են՝ Կամենց-Պոդոլսկ, մեծ գյուղեր Արմեանե և Արմեանքի, Մոյիլև, Մոյլով քաղաքները, Վարշավա, Լուբլին, Զամոսցա, Վլադիմիր, Լուցկա, Պերրճան, Լիսցա, Դիսմենից, Եազլովցա, Նովինա, Զուանչա, Ռաշքով բնակավայրերը:

Հայերի ձուլումը լեհերին և լեհահայ բարբառի ասիմիլացումը օրինաչափորեն հիմնավորվում է: Լեզվական յուրաքանչյուր

⁶ Ն. Ադոնց, «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի», 1802-6, Եվրոպա, 4 հտ., էջ 82-168, Վենետիկ, Ասիա, հատ. 1 և 4, 1802 թ./այս հղումը տրվում է ըստ Աճառյանի գրքի/:

հանրույթ գտնվում է հարատև պատմական փոփոխությունների մեջ, կրում է տնտեսական, քաղաքական, մշակութային և գաղափարական անընդհատ նորացման գործընթաց⁷: Լեհահայերի դեպքում այդ գործընթացը որոշակի փուլերով է ընթացել ու ունի իր սոցիալ-պատմական նախադրյալները, և այդ գործընթացում մեծ դերակատարություն է ունեցել հայերի՝ քրիստոնյաների շրջանում ապրած լինելու հանգամանքը, ուր բոլոր պայմանները կան ձուլման համար:

Ինչպես պատմական փաստերն են ցույց տալիս, լեհահայերը հիմնականում բնակվել են քաղաքներում՝ մեծ և փոքր՝ ստանձնելով լեհ բուրժուաների կարգավիճակը, որոնց շատ արագ է հաջողվել յուրացնել լեհերենը, խորանալ թարգմանական արվեստի մեջ, բարձր պաշտոններ զբաղեցնել կյանքի գրեթե բոլոր բնագավառներում, ի մասնավորի՝ առևտրաշրջանառության, զինվորական ու քաղաքական գործունեության ասպարազներում: Հայերի հոգևոր և նյութական առաջընթացն այնքան է խորանում, որ նրանք ստանում են ազնվականի աստիճան, անգամ արժանանում թագավորի երկրորդը լինելու պատվին, կառուցում սեփական եկեղեցիները: Լեհ թագավորները, գնահատելով հայերի ընդունակությունը և քաջությունը, կրոնական կատարյալ ազատություն և քաղաքական արտոնություններ են տալիս նրանց, որոնք գրավում են նաև արևելքի վաճառականության գլխավոր դիրքերը⁸: 1344 թվականին հայերը ստանում են ինքնավարություն, որ շնորհում է նրանց լեհ թագավոր Կազիմիր Երրորդը՝ թույլ տալով Կամենեց-Պոդոլսկի և Լվովի հայ բնակչությանն ունենալ ազգային խորհուրդ. այդ խորհրդի անդամները կոչվում էին «Վոյթ» (ավագ, ղեկավար): Այս փաստերի արձարծումը պատահական չէ, քանի որ լեհահայերի նոր կենսամիջավայրից բխած պահանջները զգալի դեր են կատարում լեզվի կազմում տեղի ունեցող փոփոխություններում: Ըստ ամենայնի՝ լեհահայ

⁷ **Գ. Ջահուկյան**, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987թ., էջ 11:

⁸ **Հր. Աճառյան**, Հայ գաղթականության պատմություն, Ե., 2002թ., էջ 118:

բարբառի աստիճանական վերացումը կարելի է պատճառաբանել այդ բարբառով հասարակության հաղորդակցման կարիքները չբավարարելու հիմունքով, որովհետև լեզվակրությունը միջոց է կենսագործունեությունը կազմակերպելու համար: Եթե հայերենով դա հնարավոր չի եղել կազմակերպել, ապա լեհերենի յուրացմամբ հնարավոր է եղել այն կյանքի կոչել:

Հայերի արտոնյալ կարգավիճակը տևում է մինչև 16-րդ դարը: Լեհ թագավորների հովանավորությունն ու համակրանքը վայելող հայերի ազգային կյանքն անկում է ապրում, որն իր բացասական դրոշմն է թողնում նախևառաջ հայերենի գործածության սահմանափակման վրա: Մինչ այս հայերը կյանքի բոլոր ոլորտներում՝ ընտանիքում, պաշտոնական շրջանակներում, «Ռատուշա» անվանումը ստացած դատական համակարգում, տիրապետող էր Անիի բարբառի և նրա տարբեր խոսվածքների գործածությունը, բարբառներ ու խոսվածքներ, որոնք մինչ օրս գործածական են Հունգարիայի, Ռումինիայի, Սուչավայի, Դրիմի և Նոր Նախիջևանի հայերի շրջանում⁹: Իրավիճակը կտրուկ փոխվում է, երբ այդ ժամանակահատվածում Թաթարստանի տարբեր քաղաքներից հայկական մեծ գաղթականություն է գալիս Լեհաստան, տարածվում երկրով մեկ և թվաքանակի առավելության պատճառով բազմատեսակ առավելությունների հասնում տեղացի հայախոսների նկատմամբ: Հր. Աճառյանը գրում է. «Աստիճ, հայերենը արդեն մոռցած ու թաթարախոս լինելով, թաթարերեն լեզուի գործածութիւնը մոցուցին լեհահայոց մէջ»¹⁰:

Թաթարերենը շատ կարճ ժամանակահատվածում ընդհանրանում է հայկական միջավայրում՝ տիրապետող դառնալով հայերենով ներկայանալի բոլոր բնագավառներում: Այն դառնում է ոչ միայն ընտանիքների, հասարակ կյանքի, այլև դատարանների ու եկեղեցու պաշտոնական լեզուն: Հայկական կրոնական բոլոր գրքերը, աղոթագրքերը թարգմանվում են թաթարերենով և դրվում գործածության:

⁹ *Լեռ*, Երկերի ժողովածու, Վեցերորդ հատոր, Ե., 1987 թ., էջ 757:

¹⁰ *Հր. Աճառյան*, Հայ գաղթականության պատմություն, Ե., 2002թ., էջ 122:

Լեհաստանում հայերի՝ լեզվական այլ հանրություններից ոչ մեկուսացումը, տարբեր ազգերի հետ տնտեսական, քաղաքական, մշակութային, գաղափարական շփումներն առաջ են բերում լեզվական փոխազդեցություններ ու լեզվական համապատասխան փոփոխություններ, որը հանգեցնում է հայախոսության կորուստին: Ուժացման այս գործընթացներն ու վտանգներն ավելի են ահագնանում 16-րդ դարի կեսերին, երբ կաթոլիկ եկեղեցին լեհահայերին պարտադրեց կաթոլիկությունը¹¹: Այս կրոնադավ գործընթացը խթանողներ են հանդիսանում 1626 թվականին Լվով ժամանած Հռոմի կաթոլիկական եկեղեցու հետ Հայ առաքելական եկեղեցին միավորելու կողմնակից Էջմիածնի կաթողիկոսի օգնական Մելիխսեդեկը և նրա հետևորդը՝ քահանա Նիկոլայ Թորոսովիչը: Արդեն 1662 թվականին Իվովում (Լվովում) բացվել էր դպրոց, ուր հայ մանուկները կրթվում ու դաստիարակվում էին կաթոլիկ դավանաբանությամբ: Չկարողանալով դիմակայել այս պարտադրանքին՝ բազմաթիվ հայ քրիստոնյաներ, որ մինչ այդ ունեին կրոնական դավանանքի ազատության և ամուր կառչած էին իրենց դավանանքին, ստիպված ընդունեցին կաթոլիկություն, իսկ դիմադրություն ցույց տվողները կա՛մ սպանվեցին ու արքայապետի, կա՛մ վտարվեցին երկրից: Այս քաղաքականության պայմաններում 17-րդ դարի կեսերին, օրինակ, Լվովում 50.000 հայկական գաղութից մնացել էր ընդամենը 500 հայ:

1650-ական թվականներին սկսվում է հայ գաղթականության վերջնական անկումը Լեհաստանում: Իրենց մայրենի լեզուն մոռանալուց և թաթարերեն լեզուն որդեգրելուց հետո տեղացի հայերն այն էլ են թողնում: Այս հանգամանքն ավելի է խորացնում լեհահայերի ինքնության վերացման ազդակները¹²: Ոչ համակարգային լեզու լինելու պատճառով թաթարերենը դադարում է դատարաններում գործառվել, որին 17-րդ դարում փոխարինում է լեհերենը, իսկ խոսակցական լեզուն ներկայանում էր թաթարե-

¹¹ *Ս. Արքաեհայան*, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Ե., 1964 թ., էջ 222:

¹² *Հր. Աճառյան*, Հայ գաղթականության պատմություն, Ե., 2002 թ., էջ 134:

րենով թե՛ հասարակ դասակարգում, թե՛ գավառներում: Ազնւ-վականներն ու հարուստները հաղորդակցվում էին օրըստօրե իր սահմաններն ընդարձակող լեհերենով: Լեհահայ խանութայինները վերանում են, մասամբ՝ հանգրվանում այլ երկրներում: 17-րդ դարի վերջերից սկսվում են Լվովի հայերի գաղթերը դեպի լեհական այլ քաղաքներ՝ Կրակով, Տանցկա, Վարշավա: 18-րդ դարի վերջերում հայերի կացությունն ավելի է վտանգվում Լեհաստանի մասնատման պայմաններում՝ դառնալով տարբեր երկրների՝ Ռուսիայի, Բրուսիայի տիրույթ, իրավիճակ, որը շտկվում է 1830 թվականի ապստամբության ժամանակ: Վերանում են Յարոսլավի, Պրոտիի, Զլոսչակի և Եազլովիցի հայկական գաղութները: Հայերի ունեցած արտոնությունները վերջնականապէս ի չիք են դառնում 1848 թվականի հեղափոխությունից հետո:

Արդեն 20-րդ դարի սկզբում լեհահայերը շարունակել են իրենց անվանական գոյությունը, սակայն ժողովուրդը լեհացած ու լեհախոս, միայն արտաքին դիմանկարով կամ հին հիշատակներով են ընկալվում որպէս հայ: Ժամերգությունները կատարվում են հայերենով ու լատիներեն տառերով գրված գրքերով, որոնք անհասկանալի են թե՛ ժողովրդի, թե՛ ժամասաց քահանայի համար: Եվ հայերի բոլոր ջանքերը՝ վերադառնալ իրենց հոգևոր ու ազգային արմատներին, հաջողություն չեն ունենում: 20-րդ դարի տվյալների հաշվառմամբ՝ Հր. Աճառյանը գրել է. «Հայերենը հիմա արդեն լրած է Լեհաստանին մեջ»¹³: Ըստ Լեհաստանում ՀՀ դեսպանատան պաշտոնական կայքի տրամադրած տեղեկատվության¹⁴՝ 20-րդ դարի սկզբին Լեհաստանում բնակվել է մոտ վեց հազար հայ, առավելապէս՝ Արևելյան Գալիցիայում (այսօր՝ Արևմտյան Ուկրաինա): Այս տարածքի կենտրոններն են՝ Լվով, Ստանիսլավով (Իվանո-Ֆրանկովսկ), Բժեզան (Բերեզան), Կուտի, Լիշեց (Լիսեց), Հորոդենկա, Տլումաչ (Տլումախ) և Շլյատին (Մնյատին): Առաջին համաշխարհային պատերազմից հետո հայ համայնքը սփռվել էր ամբողջ Լեհաստանով մեկ՝ հաստատվելով

¹³ Հր. Աճառյան, Հայ գաղթականության պատմություն, Ե., 2002թ., էջ 134:

¹⁴ <http://poland.mfa.am/hy/community-overview/>

Լեհաստանի հյուսիսային և արևմտյան քաղաքներում՝ Կրակովում, Գլիվիցեում, Օպոլեում, Վրոցլավում, Պոզնանում, Գդանսկում և Վարշավայում՝ ազգային ձուլման դեմ մղվող պայքարում ձևավորելով մի շարք հայ մշակութային միություններ:

Դիտարկված էթնոլեզվական և պատմական փաստերը ցույց են տալիս, որ լեհահայ բարբառը վերացել է տարաբնույթ փոխներթափանցումների հետևանքներով: Այս հարցում մեծ դեր է խաղացել կենսատարածքը, տնտեսական ու քաղաքական նվաճումը և այլ ժողովուրդների՝ հատկապես քրիստոնյաների մերձավոր հարևանությամբ ապրելը: Նման պայմաններում, ըստ ամենայնի, օրինաչափ է դառնում լեհահայերերի՝ մայր լեզուն այլ լեզուներով, հատկապես լեհերենով փոխարինելու, այլ լեզուներից ազդվելու, ինչպես նաև իրենց էթնոգոյը կորցնելու հանգամանքները: Հավելենք, որ, համաձայն հայ և հայամետ աղբյուրների պնդումների, այս պահին հայ ծագում ունեցող լեհերի թիվը երկրում հասնում է մոտ 92 հազարի:

Гарик Мкртчян – *Общая характеристика польско-армянского диалекта и причины его исчезновения.* – Древне-армянское сообщество, когда-то существовавшее в Польше, являлось самым древним на европейской территории. В статье рассматриваются вопросы формирования, развития и исчезновения польско-армянского диалекта на основе общественно-лингвистического анализа. Приведенные в статье этнолингвистические и исторические факты показывают, что диалект исчез, однако сами армяне переродились в поляков вследствие различных взаимосмешений. Большую роль в этом сыграли местожительство, экономические и политические достижения, а также факт проживания среди других народов, в особенности народов, исповедующих христианство.

По оценке различных экспертов, на данный момент в Польше проживают от 40 до 80 тысяч армян, из которых только 8 тысяч – выходцы из “древнего сообщества”. Согласно армянским и армяноведческим источникам, число поляков с армянскими корнями в стране достигает 92 тысяч, и их можно различить по фамилиям, которые оканчиваются на

фамильные суффиксы “-ич” и “-ки”. Оставшаяся часть носителей армянского языка принадлежит “новому сообществу”, в котором они прижились после распада СССР. С точки зрения языка этот слой населения неоднороден, так как состоит из представителей разных областей и деревень Армянской республики, которые, если не сегодня, то в будущем подвержены риску ассимиляции.

Диалект польских армян принадлежит ветви “Կր” армянских диалектов и, по описанию Г. Ачаряна, входит в домен Артиальского диалекта. Носители диалекта данной территории мигрировали в средние века из различных частей центральной Армении. Следовательно, изучение этого диалекта имеет реабилитационное значение и будет способствовать выявлению многочисленных свободных звеньев в проблеме дифференцирования средневековых армянских диалектов.

В статье также проводится смысловой-этимологический анализ слова “кабзан”, являющегося одним из имен, которыми поляки нарекали армян.

Garik Makrtchyan – *The Common Characteristics of Polish-Armenian Dialect and the Causes of its Disappearance.* – The ancient Armenian community which once existed in Poland was the oldest in Europe. This paper considers the issues of formation, development and disappearance of the Polish-Armenian dialect based on a societal and linguistic analysis. The ethnolinguistic and historical facts presented in the paper reveal that the dialect has disappeared, while Armenians regenerated into the Polish people as a result of various blendings. An essential role was played by the place of residence, economic and political achievements, as well as the fact of living among other nations, especially ones professing Christianity.

According to different experts, 40,000-80,000 Armenians are now residing in Poland, and only 8,000 of them descend from the “ancient community.” According to Armenian and Armenological sources, the number of the Poles of the Armenian origin in the country reaches 92,000, and they are distinguished by their surnames, which end in family suffixes “-ich” and “-ki”. The rest of the Armenian speakers are part of the “new community,” into which they assimilated after the collapse of the USSR. From the language perspective, this layer of society is heterogeneous, as it is represented by the

people from various regions and villages of the Armenian Republic who are running the risk of assimilation in the future.

The dialect of the Polish Armenians belongs to the “կը” branch of the Armenian dialects and, as described by H. Acharyan, is included in the domain of the Artial dialect. The speakers of the dialect of this territory migrated from various parts of Central Armenia in the Middle Ages. Consequently, the study of this dialect has a rehabilitation meaning and will assist in identifying the many missing links in the issue of differentiation of medieval Armenian dialects.

The paper also conducts a semantic and etimological analysis of the word “kabzan”, which is one of the names given to Armenians by the Polish people.

Բանալի բառեր: բարբառ, ձուլում, լեհահայ բարբառ, Կենտրոնական Հայաստան, Արտիալի բարբառ, ածանց, տարածք:

Ключевые слова: диалект, ассимиляция, польско-армянского диалект, центральный Армения, Артиальский диалект, суффикс, территория.

Key words: dialect, assimilation, Polish-Armenian dialect, Central Armenia, Artial dialect, suffix, area.

ՀԱՏԿԱՆՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ,
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ
ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ,
ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆ,
ՈՃԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲՆԱԿԱՆՈՒՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ՆԱԳԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ

(Երևանի պետական համալսարան)

Տեղանվանագիտության մեջ բնականությունների (օյկոնիմ) քննությունը յուրահատուկ դիրք է գրավում, որովհետև բնակավայրերի անվանադրման բանաձևը, դրանց տարածված կադապարները երևան են բերում տարբեր ազգային լեզուների և նրանց կրող հանրությունների լեզվական աշխարհընկալման ընդհանրությունները տարբեր ժամանակներում և աշխարհագրական տարածքներում: Բնականուն եզրույթը միավորում է մարդկային բնակության ցանկացած վայրի անվանումները՝ գյուղ, շեն, ավան, քաղաք, մարզ կամ վարչատարածքային այլ միավորի անվանում: Երկրանունները կամ պետությունների անվանումները որպես կանոն առանձնանում են բուն բնականություններից, որովհետև դրանք հիմնականում ծագում են ժողովրդանուններից (էթնոնիմ), որոնց գումարվում է հավաքականակերտ կամ հոգնակերտ որևէ ածանց, օրինակ՝ **Հայք-Հայ/ա/ստան-Արմեն/իա-Սո/մխեթ/ի** կամ **Վիրք/-Վր/ա/ստան/-Գրուզ/իա-Սա/քարթվել/ո, Չին/ա/ստան, Ֆրանս/իա** և այլն: Եթե տվյալ ազգն ունի մի քանի ժողովրդանուն՝ տրված տարբեր ցեղերի և ազգերի կողմից, ապա կարող է ունենալ մեկից ավելի երկրանուն, որոնք կկազմեն հոմանշային շարքեր, այդ հոմանիշ երկրանուններն իրարից տարբերվում են իրենց գործածության տեղով կամ ժամանակով: Այսպես՝ մենք մեր պետությունը ճանաչում ենք որպես **Հայք** կամ **Հայաստան**, **Հայք**-ն ավելի հին անվանում է, **Հայաստան**-ը ինչ-որ առումով վերժամանակյա է, ընդհանրական: Մենք վճռորոշ ենք համարում **հայ** անունը կրող ցեղի գործունը մեր ազգային ինքնության որոշման գործում, իսկ արևմտյան և արևելյան շատ երկրների բնակիչները մեզ ճանաչում են որպես արմենների ժառանգորդներ, երկիրն էլ՝ **Արմենիա**: Այս շարքում առանձնանում են մեր հին հարևաններից վրացիները, որոնք մեզ ի սկզբանե ճա-

նաչել են **սումելի** ժողովրդական միջոցով, երկիրն էլ՝ **Սումիլեթի**: Նման հոմանշայնություն առկա է շատ երկրների և ազգերի պարագայում (**Գերմանիա/Ալեմանիա/Ղոչչանդ** և այլն), որովհետև չափազանց հազվադեպ է մեկ ցեղից մեկ ազգ կազմավորվում, ավելի հաճախ ցեղերը և ցեղային միավորումներն են միախառնվում, միաձուլվում՝ ստեղծելով ազգային ավելի մեծ և կազմակերպված այնպիսի հանրույթ, ինչպիսին ազգն է:

Բնակավայրերի անվանադրման բանաձևը զգալիորեն ավելի բարդ է և ընդգրկուն, նրա մեջ որպես հնարավոր բաղադրիչ կարող են ներառվել նաև ժողովրդանունները կամ դյուցազնանունները, բայց դրանց գումարվում են լեզվի բառապաշարի այլ բազմաթիվ միավորներ, ինչպես՝ շրջապատող աշխարհի և բնության միավորների անվանումները, կենդանանունները, բուսանունները, գունանունները, մարդկային կենսագործունեության արդյունք երևույթների անվանումները և այլն: Այսինքն՝ երկրանուններն ունեն շատ ավելի պարզ կառուցվածք, և նրանց քննությունն ուղղակի շաղկապված է ազգերի կամ ժողովուրդների անվանումների ծագումնաբանության հետ, իսկ բուն բնականությունների քննություն առնչվում է լեզվի բառապաշարի հիմնական շերտերի հետ: Ա. Սուպերանսկայան, անդրադառնալով տեղանվանական ավանդույթ հասկացությանը գրում է. «Բնակավայրերի անունները գրեթե երբեք անմիջաբար չեն կազմվում հասարակ անուններից..., նրանց և ելակետային հասարակ անունների միջև երկարատև տեղանվանական ավանդույթն է: Այս ավանդույթի համաձայն, բնական ճանապարհով տեղանվանական համակարգերի կայացման ընթացքում հասարակ անվան և բնակավայրի անվանման միջև կա մ ֆիզիկա-աշխարհագրական միավորի անունն է, որի մերձակայքում ձևավորվել է ավանը, կա՛մ անունը, հայրանունն այն մարդու, որն ամենասերտոն է կապված այդ օբյեկտի հետ (տերը, հիմնադիր առաջին բնակիչը)»¹: Այս հիմնավորմամբ տեղանվանագիտության մեջ ընդունված է տարբերակել 2 տիպի բնականություններ՝ 1. բնական-աշխարհագրական բը-

¹ **А. В. Суперанская**, Что такое топонимика? Из истории географических названий, Москва, 2011, էջ 65:

նույթի՝ գեոգեն կամ երկրածին և 2. պատմա-մշակութային բնույթի՝ անտրոպոգեն կամ մարդածին բնականություններ:

Բնական-աշխարհագրական բնույթի են համարվում բնակավայրերի այն անվանումները, որոնք առաջացել են ֆիզիկական աշխարհի իմաստային դաշտի տարբեր հասկացությունների բառային անուններից, դրանք որպես կանոն արտացոլում են տեղանքի ֆիզիկա-աշխարհագրական հատկանիշները, բնական պայմանները, բուսական և կենդանական աշխարհը, ուղղակի բնութագրում են բնակավայրի ֆիզիկական հատկանիշները: Այդպիսի տեղանունների նշանային գործառույթն ուղղակի բխում է այն լեռից, ձորից, ծովից, լճից կամ գետից, որին կից նրանք հիմնվել են: Կախված տվյալ ազգի զբաղեցրած աշխարհագրական տարածքից՝ նրա բնականությունների մեջ որպես տեղանվանակազմիչ կզերիշխեն լեռնային կամ ջրային տեղանքին բնորոշ միավորների անվանումները՝ լեռ, սար, քար, ձոր, այր, հովիտ կամ ջուր, ծով, խորշ, ծոց, ափ: Հայկական բնականություններում, հատկապես գյուղական, լեռնային տարածքը բնութագրող բառարմատներն ամենահաճախադեպն են՝ **Միլքար, Քարակերտ, Քարանիստ, Սևքար, Քարահունջ, Լեռնապար, Լեռնակերտ, Լեռնահովիտ, Սարիգյուղ, Սարակապ, Սարանիստ, Բարձրաշեն, Եղեգնաձոր, Վանաձոր, Վարդաձոր, Վարդաբլուր, Արջաձոր, Ծաղկահովիտ** և այլն:

Նման կադապարով տեղանունները սփռված են Հայաստանի ողջ տարածքում: Այս տեսանկյունից հետաքրքիր է Հ. Կարապյոզյանի կողմից Կումայրի/Գյումրի և Մեղրի բնականությունների ստուգաբանությունը, որը կապվում է այր բառի հետ. «*Կումայրի* (հմմտ. *Բզրայրի*՝ գիւղ Տուրուբերանի Ասպակունիք)> **Կումերի* (այ>ե անցումով)> **Կումիրի* (միջնադարյան ե>ի անցումով)> *Կումրի* (ենթադրեալ վերջնական ձև, հմմտ. **Մեղայրի*>**Մեղերի*>**Մեղիրի*>**Մեղրի*)»²:

² *Յովհաննէս Կարապետեան*, Սեպագիր արձանագրութիւններ, Երեւան, 1998, էջ 84:

Առատ են նաև **ջուր** իմաստային դաշտի բառերից կազմված բնականությունները՝ **Թթուջուր, Աչաջուր, Ջրածոր, Ջրաբերդ, Ջրառատ, Կաթնաղբյուր**:

Վայրի կամ ընտանի կենդանանություններից բաղադրված բնականությունները ևս կազմվում են, բայց, որպես կանոն, միայն փոքր գյուղական շենքերի համար՝ **Աղավնածոր, Աղավնատուն, Արծվաշեն, Արջուտ, Երնջատափ, Եղնիկ, Խոզնավար, Խաշթատակ, Լորուտ, Մարալիկ**: Ընդգծենք, որ ներկա ժամանակներում կենդանանություններից խոշոր բնականություններ այլևս չեն կազմվում, միայն մանրատեղանություններ:

Պատմա-մշակութային բնույթի են այն բնականությունները, որոնք կապված են տվյալ բնակավայրի տերերի կամ բնակիչների անունների և նրանց վարած գործունեության հետ: Դրանք կարող են ծագել. ա) անձնանուններից, տոհմանուններից կամ ժողովրդանուններից, բ) դիցանուններից կամ կրոնա-պաշտամունքային բառապաշարի այլ հասկացությունների անվանումներից, գ) մարդու տնտեսական, մշակութային և սոցիալական գործունեությունը բնութագրող իմաստային դաշտերի բառային միավորներից: Օրինակ՝ **Այրում, Հերիեր, Բայանդուր, Շիրակավան, Արտաշատ, Հայկաշեն, Գեղամավան**,

Վաղարշապատ, Վահագնի, Չարենցավան, Աբովյան, Հաղթանակ, Շինուհայր, Հայրենյաց, Նոր կյանք, Բուժական և այլն:

Բնականությունների շարքում յուրօրինակ դիրք են գրավում խորհրդանունները՝ խորհրդային ժամանակներում ծնունդ առած տեղանունները: Հետհեղափոխական տարիներին աշխարհագրական անունների վերաբերմամբ գերակայում է զուտ գաղափարական մոտեցումը, այսինքն՝ անվանադրում կատարվում է հանուն համայնավարական-ընկերվարական արժեքների, հեղափոխության հերոսների, ապա քաղաքական-կուսակցական, ռազմական առաջնորդների, ավելի ուշ խորհրդային մշակույթի և գիտության գործիչների անունների անմահացման՝ **Սովետաշեն, Լենինական, Կիրովական, Կալինինո, Կարմիր, Հոկտեմբերյան, Նոյեմբերյան, Մայիսյան, Գազարին, Կամո, Մայակովսկի, Բաղ-**

րամյան, Ստեփանակերտ: Նախահեղափոխական պատմական իրողություններն արտացոլող անվանումները սկսեցին համարվել գաղափարապես վտանգավոր և փոխարինվեցին նոր, քաղաքականացված անուններով, օրինակ՝ **Ալեքսանդրոպոլը** դարձավ **Լենինական, Ղարաքիսը՝ Կիրովական:** Հայկական բնականուններն այս հայեցակետերից բազմաթիվ հարձակում-սրբազրուների են ենթարկվել:

Մեր գեկուցման նպատակն է դասակարգել Հայաստանի բնականունները՝ ըստ իմաստային և կառուցվածքային հիմնատիպերի: Հայկական բնականունները ըստ կազմության լինում են պարզ, ածանցավոր, բարդ բաղադրյալ-բառակապակցական: Պարզ-արմատական բնականունները փոքր թիվ են կազմում, և հիմնականում պարզ են գյուղանունները, ընդ որում բնականուն դառնում են հիմնականում բնակավայր նշանակող հասարակ անունները, ինչպես՝ *քաղաք, ավան, շեն, գյուղ, բերդ, աշտարակ, ագարակ:* Սա անվանադրման ամենապարզունակ հնագույն ձևն է, որը վկայված է բոլոր ժողովուրդների մոտ, ներկայումս անվանադրման այս եղանակն այլևս չի գործում, կարող է հանդիպել միայն մանրատեղանունների կազմության ժամանակ, երբ կամուրջը կոչվում է հենց **Կամուրջ**, արտը՝ **Արտ:** Նման անվանումները պարունակում են նվազագույն տեղեկատվություն անվանվող օբյեկտի մասին, այսինքն՝ գուրկ են նկարագրականությունից միայն մատնանշում են բնակավայրի առկայությունը: Ուստի նոր ժամանակներում նման անվանումները արագ փոխվում են. ժամանակակից նշանները պետք է հնարավորինս ավելի շատ տեղեկատվություն հաղորդեն նշանակվողի մասին: Անվանադրման նման սկզբունքը վաղնջական ժամանակներում գործել է նաև լեռների, գետերի և այլ աշխարհագրական միավորների անվանակոչման դեպքում. անվանադիր մարդը լեռը կոչում էր **Լեռ, գետը՝ Գետ, լիճը՝ Լիճ** և այդպես շարունակ: Բերենք Հայաստանում առկա պարզ արմատական բնականունների օրինակներ՝ **Բերդ, Գավառ, Ավան, Ագարակ (Գյուղ և Շեն** տեղանունն Արևմտյան Հայաստանում և ցարական Հայաստանում բավական տա-

րածված էր, բայց ներկայումս նման անվամբ բնակավայրեր ՀՀ-ում այլևս չկան): Ավելի հաճախ այս արմատական անվանումներին ավելանում էին ածանցներ՝ ստեղծելով նոր բնականություններ՝ **Ավանիկ, Ավանս, Ավանց, Գյուղիկ, Գյուղիս, Բերդակ, Բերդիկ, Գավառակ**: Հայերենի բնականություններին առավել բնորոշ է ածանցավոր կառուցվածքը: Իբրև բնականվանակերտ տարածված ածանցներ կարող ենք առանձնացնել հետևյալները՝

-ի – Առափի, Աքորի, Գեղի, Ծավի, Կարբի, Մեղրի, Ջրափի, Կոթի, Վեղի, Փարպի,

-նի/անի/ունի/ենի տարբերակները՝ Արգնի, Բջնի, Պտղնի, Պարնի, Վահագնի, Մարտունի, Վարդենի, Արտենի, Ճակատենի,

-իկ – Արթիկ, Արնիկ, Գետիկ, Դալարիկ, Եղնիկ, Լանջիկ, Շղարշիկ, Հացիկ, Սասունիկ, Փանիկ, Խաչիկ, Լանջիկ,

-ին – Աղին, Դվին, Արդվին, Թալին, Շատին,

-իս- Բաղանիս, Բնունիս, Գորիս, Մասիս, Արդենիս,

-ան – Ազատան, Բլդան, Գորովան, Ոստան, Որոտան, Կապան, Սևան, Սիփան,

-ակ – Ազատակ, Բերդակ, Գավառակ, Խաշթառակ, Ծովակ, Հաղթանակ, Փամբակ, Քուչակ,

-յան – Աբովյան, Ախուրյան, Բաղրամյան, Թումանյան, Նալբանդյան, Մխչյան, Նոյեմբերյան, Մայիսյան,

-ուտ – Լորուտ, Թավշուտ, Կեչուտ, Կաղնուտ, Մեղրուտ, Վարդենուտ, Տանձուտ, Ուռուտ, Հոնուտ,

-պատ/ապատ – Հաղպատ, Վաղարշապատ, Սարդարապատ,

-ական – Ազատական, Արզական, Բուժական, Բյուրական,

Օշական:

Որքան էլ բազմազան լինեն ածանցները բնականությունների կազմում, այդուհանդերձ հայկական բնականությունները բառակազմական տեսանկյունից հիմնականում հողակապով բարդություններ են, ընդ որում բարդության առաջին բաղադրիչը բնակավայրի որակական հատկանիշներն արտահայտող մասն է կամ այն անհատի անունը, ի պատիվ որի անվանակոչվել է քաղաքը կամ գյուղը, իսկ երկրորդը բնակավայր նշանակող կամ ֆիզիկական

աշխարհի իմաստային դաշտի միավորներ են, այսինքն՝ բնականվան ցուցիչը բարդության երկրորդ հաստատուն բաղադրիչն է, օրինակ՝ *Վանաձոր=վանքերի+ձոր, Եղեգնաձոր=եղեգն/ա+ձոր, Իջևան=իջ/ի+ավան, Արծվաշեն=արծիվ/ա+շեն, Բերդաշեն=բերդ/ա+շեն, Պեմզաշեն=պեմզա/ա+շեն, Նորաշեն=նոր/ա+շեն, Հարթագյուղ=հարթ/ա+գյուղ, Բազմաբերդ=բազում/ա+բերդ, Մերձավան=մերձ+ավան, Ստեփանավան= Ստեփան+ ավան, Չարենցավան= Չարենց+ավան, Սևակավան=Սևակ+ավան, Ստեփանակերտ= Ստեփան/ա+կերտ* և այլն:

Բաղադրյալ բառակապակցական բնականունները հույժ սակավադեպ են հայերենում, որպես կանոն այդպիսի կառույցներ կազմվում են, երբ կան նույն անունը կրող մի քանի բնակավայրեր, որոնք տարբերակվում են *ներքին, արտաքին, մեծ, փոքր* և նման հականշային ածականների միջոցով՝ **Ներքին Բազմաբերդ, Վերին Բազմաբերդ, Ներքին Սասնաշեն, Վերին Սասնաշեն**: Կրոնական բովանդակությամբ և նախադասության արժեք ունեցող եզակի բնականուն է **Էջմիածին** քաղաքանունը, որտեղ ունենք ենթակայի և ստորոգյալի միավորում՝ **Էջ** (գրաբարյան **իջանել** բայի սահմանական եղանակի անցյալ կատարյալի եզակի թիվ երրորդ դեմքի բայաձև)+ **միածին = իջավ միածինը**:

Եթե փորձենք վիճակագրական տվյալների հիման վրա ընդհանրացնել հայկական բնականունների կազմության հիմնական սկզբունքը, ապա պետք է նշել, որը առավել հնագույն շրջանից եկած բնականուններում, հատկապես գյուղանուններում ամրագրվել են ժողովրդանունները կամ ցեղանունները՝ **Լոռի, Շաքի, Վեդի, Արարատ**:

Բնապաշտության ժամանակաշրջանում տարածում են զրտնում աստվածություններ դարձած երկնային մարմինների անուններից կազմված բնականունները: Այդ տեսանկյունից քննելով հայկական բնականունները՝ կարող ենք նշել, որ հայերի մեջ ամենաամուրն արեգակի և ջրի պաշտամունքն ու սրբացումն են եղել: Այս երկու հասկացությունների տարբեր անվանումներից բազմաթիվ պարզ, ածանցավոր և բարդ բնականուններ են կազմվել,

որոնց զգալի մասը պահպանվել է և հասել 21-րդ դար: Օրինակ՝ **Արեգ, Արեգի, Արև, Արևիք, Արևիս, Արևիկ, Արևշատ, Արևանիստ, Արփի, Ծովակ, Ծովագյուղ, Ծովինար, Ջրարփի, Ջրաբեր, Ջրածոր, Աղբյուր, Աղբյուրակ** և այլն:

Բնականոնների կազմության դեպքում վճռական գործոն է նաև տեղաբնակների ազգությունը, այսպես՝ Հայաստանի այն գյուղերը, որտեղ բնակվել են հավատքի համար արտաքսված ռուսները՝ մոլոկաններ, հնադավաններ, ռուսական տեղանվանակազմիչներ և արմատներ ունեն՝ **Ֆիոլետովո, Լերմոնտովո, Մեմյոնովկա, Գալինինո/Վորոնցովկա, Մեդովկա, Միխայլովկա, Նովոսելցեվո, Կրիվոյ մոստ, Պետրովկա, Պրիվոլնոյե** և այլն:

Գունանունները հայկական բնականոններում բավական հազվադեպ են հանդիպում, դրանց առաջացումը երկու հիմք ունի. առաջին մակարդակում գունանունը նշան-բնութագրիչ է, այսինքն՝ տեղանքին հատուկ որակական ածական է՝ կապույտ լճի կամ ծովակի ափին հիմնադրվող բնակավայրը կոչվում է **Կապույտ, Կապույտք, Կապուտակ**, կամ հրաբխային ծագման ապարների, հանքաքարերի հարևանությամբ ստեղծվող բնակավայրը կոչվում էր՝ **Կարմիր, Կարմիրք, Կարմիրշեն, Կարմիրաղբյուր**, իսկ կրաքարային տարածքների բնակավայրերը՝ **Սպիտակ, Սպիտակաղբյուր, Սպիտակաշեն, Սպիտակաջուր, Սպիտակաբերդ**, սևահողով կամ սև տուֆով հարուստ բնակատեղիները՝ **Սևահող, Սևաբերդ, Սևակն**: Երկրորդ հիմքը գույների դիցաբանական և փոխաբերական ընկալման հետ է կապված, հայտնի է, որ չարի և բարու հակադրությունը բազմաթիվ ազգերի հավատալիքներում կապվում է *սև* և *սպիտակ* գույների հակադրության հետ, աստվածներին, սրբությունները, կյանքը և մահը մարդն ընկալում և պատկերում է գույների միջոցով: Ուստի բնակավայրերի անվանումները ևս, անկախ իրենց տեղանքի գունային հատկանիշներից, կազմվում էին **սև, սպիտակ, կարմիր, կապույտ, շեկ, կանաչ** բառարմատներից՝ յուրաքանչյուր դեպքում ունենալով իրենց խորհրդանշական իմաստը: Այս առումով իմաստային ամենամեծ բեռնվածությունն ունեն վերոնշյալ վեց

գույները, որոնք հայոց բնականուններում ևս ամրակայված են՝ անցյալում ավելի մեծ հաճախականությամբ, ներկայումս՝ սակավ:

Վաղնջական ժամանակներում, երբ հնդեվրոպական ցեղերը սփռվում էին Եվրոպայի և Ասիայի տարածքներում, մշակվել էր քաղաքանուններ կերտելու հատուկ ավանդույթ, որի վերաբերյալ պատմաբան Մարինա Սկրիժինսկայան ուշագրավ հետազոտություններ է կատարել, ըստ այդմ՝ հունական համայնքները Ք.ա. 8-7 դարերից սկսյալ նոր բնակավայր հիմնելուց առաջ դիմում էին Դելֆիքի Ապոլոն աստծուն նրա հավանություն-օրհնությունը ստանալու համար: Հին հնդեվրոպացիների պատկերացմամբ բնակավայր ստեղծելու համար աստվածների բարեհաճությունը պարտադիր պայման էր, նման երևույթ առկա էր ոչ միայն հին հույների, այլև ուրարտացիների մոտ, որոնց արքաների արձանագրություններում վկայված է, որ քաղաքի հիմնադրումից առաջ արքաները դիմել են բիայնական դիցարանի աստվածներին, հատկապես Խալդ աստծոն, որոնց գորությամբ հաջողվել է ոչ միայն ռազմական հաղթանակներ տանել, այլև բնակավայրեր ստեղծել: Հին հույների ավանդույթով աստուծո գուշակին դիմում էր նոր բնակավայր տեղափոխվողների ղեկավարը: Տաճարի քուրմը, որը քաջագիտակ էր այն ժամանակի բնակելի տարածքների աշխարհագրական, կլիմայական, տնտեսական և քաղաքական պայմանների մասին, երջանիկ կյանք և ապագա էր կանխագուշակում տվյալ բնակավայրը հիմնադրողների և նրանց հետագա սերունդների համար: Այս ավանդույթի համաձայն՝ բազմաթիվ քաղաքներ ստանում էին Օլբիա պոլիս անունը, որը թարգմանաբար նշանակում է Երջանիկ քաղաք: Դարերի ընթացքում պոլիս բաղադրիչն ընկնում էր, մնում էր Օլբիա/Օլվիա հատվածը՝ Երջանիկ³: Այս խորհրդանշական ավանդույթով էլ Հովհաննես Կարազոյզյանը փորձում է ստուգաբանել Երևան քաղաքանունը՝ գրելով «դժվար չէ նկատել, որ **Երեբուն>Երեւան** քաղաքը եւս հիմնադրուել է հնդեւրոպական յիշեալ սովորոյթի համաձայն

³ Ст' у *М.В. Скрижинская*, О происхождении названии города Ольвия, “Вестник древней истории”, 1981, N3, էջ 146:

եւ այդպէս էլ ստացել է իր անունը **Երեբուն** («երջանիկ քաղաք»): Եւ եթէ Երեւանը երջանիկ քաղաքների մեջ առաջինը չէ (թեւեւ կարող է եւ առաջինը լինել), ապա այնուամենայնիւ, առաջիններից մէկն է, անկասկած: Եւ նրա հիմնադրման սեպագիր-վիմագիր գրութեամբ վկայուած ժամանակը՝ մ.թ.ա. 782 թ., 28 տարով աւելի հին է, քան «հավերժական քաղաք» Հռոմի հիմնադրման՝ առասպելների վրայ հիմնուած ենթադրեալ տարին՝ մ.թ.ա. 754 թ.»⁴: Ըստ Հ.Կարապոյզյանի, Երեբունի>Երևան անցումը կարող է օրինաչափ լինել միայն այն դեպքում, երբ ընդունենք Երեբունե>Երևան տարբերակը, որովհետև հայերենում **ու**-ն **ա** չի դառնում, այլ միայն **ո**>**ա** անցումն ունենք: Այս կարծիքին էր ժամանակին նաև Գ.Ղափանցյանը, որը նշում էր, որ սեպագրերում «**ո**» հնչյունն արտահայտող վանկագիր չկա, այն փոխարինվում էր «**ու**» սեպախմբով կամ այդ հնչյունը պարունակող որևէ այլ վանկագրով, ուստի Արգիշտի Ա-ի հիմնադրած բերդաքաղաքի անվանումը պետք է կարդալ **Երեբուն**: **Եր**-ը «երջանիկ» բառի արմատն է, որը վկայված է «երանի, երանելի» բառերում նաև, իսկ **բուն**ը հնդեվրոպական բառ է, որը նշանակել է «խրճիթ», նաև «շենք, տուն, քաղաք», Բոն տեղանվանակազմիչով հայտնի են բազմաթիվ հունական բնակավայրեր, օրինակ՝ *Ալգուստոբոն*, *Հուլիոբոն*, *Կասիբոն*, *Կենաբոն*: Բ>վ հնչյունական անցումը հայերենում ճանաչված երևույթ է: Մեր քաղաքամայր Երևանի անվան այս մեկնաբանությունն անշուշտ խանդավառող է, բայց նշենք, որ Երևան-Երեբունի տեղանունն ունի նաև այլ բացատրություններ Գ.Ղափանցյանը և Մ.Նիկողոսկին **Երևան** անվանումը բխեցնում էին **Երիաինի** երկրանունից, որը, ըստ Ղափանցյանի, ծագում էր **Երիա-Երիա** ցեղանունից⁵, իսկ ուրարտագետ Մ. Իսրայելյանի կարծիքով այն նշանակում էր «**հաղթանակ**», **irbu** արմատը ուրարտերենում նշանակել է «հափշտակել, գողանալ» նաև «**գրավել, նվաճել, հաղթել**»⁶: Վ.Խաչատրյանը Երևան բնականունը

⁴ Տե՛ս *Յովհաննէս Կարապէտզեան*, նշյալ աշխատությունը, էջ 80-82:

⁵ *Капанцян Гр.* Историко-лингвистическое значение топонимики Древней Арменнии, Ер., 1940, էջ 7-8:

⁶ Տե՛ս *Մ. Իսրայելյան*, Երեբունի-բերդ քաղաքի պատմությունը, Եր., 1971, էջ 11-13:

ստուգաբանում է հայերենի հնդեվրոպական «երև» արմատի միջոցով, որն առկա է երևիլ՝ «երևնալ» բայի մեջ, որին ավելացել է ան ածանցը, ուստի երևան նշանակում է «երևացող տեղում գրտնրվող բնակավայր»⁷:

Ժամանակի ընթացքում փոխվում են աշխարհընկալման առաջնահերթությունները, և մեզանում ամրագրվում է բնակավայրը հիմնադրող արքայի կամ ավատատիրոջ անունից բնակավայր ցույց տվող բաղադրիչներով տեղանուններ ստեղծելու ավանդույթը: Աստվածներն իրենց տեղը զիջում են հզոր և սեփականատեր մահկանցուներին: Այսպես՝ Տիգրան Մեծի կողմից Մեծ Հայքում շուրջ մեկ տասնյակ **Տիգրանակերտ**ներ են հիմնվել, թագավորների և իշխանների անուններն ամրագրվել են նաև հետագա դարերում՝ **Արշակավան, Վաղարշապատ, Գագկաշեն, Բակուրակերտ** և այլ բնականություններում: Հետագայում թագավորական և նախարարական գործոնի անհետացմանը զուգընթաց՝ բնակավայրերի անվանադրումը սկսում է կատարվել քաղաքական, ապա մշակութային հերոսների անունների հիման վրա: Քաղաքական-ռազմական նշանավոր գործիչների անունները հատկապես խորհրդային ժամանակներում էին տեղանվանահիմք դառնում՝ *Հենինական, Կիրովական, Ազիզբեկով, Ստեփանավան, Ղարիբջանյան, Մուսայելյան, Բաղրամյան, Շահինյան, Կալինինո, Ղուկասյան, Մխչյան, Ենոքավան, Սուրենավան* և այլն: Ամբողջատիրությունից ազատականությանն անցումը տեղանվանաստեղծման մեջ նշանավորվեց մշակութային գործիչների անունների վերաժնորմամբ, բնակավայրերը սկսեցին անվանվել խոշոր գրողների, բանաստեղծների անուններով, երբեմն տեղանվանակերտ բաղադրիչով, երբեմն առանց որևէ բաղադրիչի մաքուր հիմքով՝ *Չարենցավան, Ստեփանակերտ, Աբովյան, Թումանյան*: Ընդ որում պետք է նշել, որ բնականությունների ներսում ևս պետք է կատարել կառուցվածքային տարբերակում: Վերոնշյալ անվանադրման սկզբունքներն առավելապես կիրառվում էին խո-

⁷ Հմմտ. Վ. Խաչատրյան, Հայկական տեղանունները սեպագիր աղբյուրներում. Տեղագրական և ստուգաբանական քննություն, Եր., 2012, էջ 116-117:

շոր բնակավայրերի անվանման համար, փոքր բնակավայրերի անվանումներում աստվածների կամ արքաների և իշխանների գործոնն այդքան վճռորոշ չէր: Փոքր բնականուներն անվանակոչվում էին հիմնականում ըստ իրենց աշխարհագրական տեղադրության և վերջինիս շրջակա բուսական և կենդանական աշխարհի բնութագրիչների՝ **Աղնջաձոր, Գետափ, Եղեգիս, Քարագլուխ, Մեծամոր, Խնածախ, Գլաձոր, Ագարակաձոր** և այլն: Այս տեսանկյունից **Կիրովականի** անվանափոխությունը **Վանաձորի** հաջող տարբերակ չէր. **ձոր** բաղադրիչով հայերենում կան հազարավոր գյուղանուններ, ուստի որպես քաղաքանուն **Վանաձորը** համակարգից դուրս է:

Այսպիսով, խոր անցյալում անվանադրման գործընթացը ոչ միայն ճանաչելի և տարբերակիչ նշան ստեղծելու նպատակ էր հետապնդում, այլև ծիսական երևույթ էր, որը պետք է կանխորոշեր և ապահովեր անվանվող միավորի հավերժությունը և բարեբախտ ապագան: Ներկայումս անվանդրումն ունի զուտ գործնական նպատակ՝ տեղծել համընդհանուր հասկանալի և տարածության ու ժամանակի մեջ կողմնորոշող նշաններ, ուստի բնականուների կազմության կադապարները կրճատվում են և զրկվում զգայական-իմացաբանական խոր բովանդակությունից՝ աստվածայինից դառնալով մարդկային:

Нарине Дилбарян – Структура армянских ойконимов. – В топонимике принято названия населенных пунктов (ойконимы) классифицировать по характеру основного топоформанта: а) названия населённых пунктов, образованные от слов, обозначающих естественно-географические объекты (геогенные ойконимы) и б) от слов, обозначающих культурно-исторические явления (антропогенные ойконимы). К ойконимам естественно-географического характера относятся названия населённых пунктов, образованные от названий водных источников, обозначений особенностей ландшафта, природных условий, животного и растительного мира; такие топоформанты отражают физико-географические особенности самого населённого пункта. Например, *Каракерт, Саранист, Ланджакап, Геташен, Цовагюх,*

Ахпюрак, Арджут и т.д. К ойконимам культурно-исторического характера относят названия, связанные с личными именами (имя, фамилия или прозвище) жителей и владельцев селений, а также членов их семей, с социальным составом населения, с религиозно-культовой лексикой, с хозяйственной и социальной жизнью человека. Например, *Арташат, Айкашен, Чаренцаван, Баграмян, Ванадзор, Шинуайр, Бужакан, Нор кянк, Ахтанак*.

Цель этого доклада - охарактеризовать семантическую и словообразовательную структуру армянских ойкономов.

Nariney Dilbaryan – *The structure of Armenian oikonyms*. – In toponymy it is accepted to classify the names of settlements according to the nature of the main topoformants: a) the names of settlements derived from words denoting natural geographic features (geogenic oikonyms) and b) from words denoting cultural-historical events (anthropogenic oikonyms). To the oikonyms of natural geographic character belong the names of settlements derived from the names of water sources, landscape features, natural environment, flora and fauna. Such topoformants reflect the physiographic features of the most populated locality, for example *Carakert, Saranist, Getashen, Tzovagyur, Ardgeut* etc. To the oikonyms of cultural and historical character belong the names associated with proper names (name, surname or nickname) of residents and owners of the villages, as well as their family members, and those associated with the social composition of the population, religious-cult vocabulary, household and social life of a man, for example *Artashat, Haykashen, Bagramyan, Vanadzor, Bujakan, Haghtanak*.

The purpose of this report is to describe the semantic and word formational structure of Armenian oikonyms.

Բանալի բառեր: հայկական բնականությունների կառուցվածքը, տեղանվանագիտություն, աշխարհագրական, կառուցվածք, բնականուն, հնդեվրոպական և հայկական անվանադրման սկզբունքները, բնականությունների հիմնական տեղանվանակազմիչները, դրանց իմաստաբանական դասակարգումը::

Ключевые слова: структура армянских ойконимов, топонимика, географический, структура, ойконим, индоевропейские и армянские

принципы именования селений и городов, основные топоформанты ойконимов, их семантическая классификация.

Key words: the structure of Armenian oikonyms, toponymy, geographic, structure, oikonym, Indo-European and Armenian principles of naming towns, basic topoformants oikonyms, their semantic classification.

ՖԵԴԵՐԱԿ ԿՈՐՏԼԱՆԴՏԻ ՀԱՅԵՐԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

(ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ)

Ֆրեդերիկ Կորտլանդտը ժամանակակից հոլանդացի լեզվաբան է: Նա աշխատում է Նիդեռլանդներում, Լեյդենի համալսարանի նկարագրական և համեմատական լեզվաբանության բաժնում և հայտնի է որպես բալթիկ և սլավոնական լեզուների մասնագետ: Մեծ արժեք են ներկայացնում նաև հայերենին վերաբերող նրա ուսումնասիրությունները, որոնք մեծ չափով կատարվել են որպես իր հիմնական ուսումնասիրություններին օժանդակող աշխատանք: Այս աշխատանքի շրջանակներում ներկայացվում է տեղեկատվություն գիտնականի՝ հայերենի պատմահամեմատական ուսումնասիրությանը վերաբերող հոդվածներից երեքից, որոնցից երկուսն առնչվում են հայերենի և ալբաներենի համեմատությանը, և երրորդը քննարկում է հայերենի դերը բալթիկ-սլավոնական լեզուների ուսումնասիրության հարցում: Հոդվածներից երկուսը վերաբերում են հին հայերենի և հին ալբաներենի կապին և զրվել ու հրապարակվել են տասը տարի տարբերությամբ:

Երկար ժամանակ ի վեր ընդունվել է, որ հնդեվրոպական լեզվաընտանիքի այս անդամների՝ նախահայերենի և նախաալբանական բարբառների միջև կապ կա: Այս կապի ուսումնասիրության համար անհաժեշտ է որոշակի տեսական դիտարկումներ կատարել, օրինակներ համեմատել և ուշադրություն դարձնել ժամանակագրական տվյալներին, ինչը մանրամասն ներկայացված է հոդվածի բնագրում:

Կորտլանդտը քննարկում է ետնալեզվայինների երեք դաս ունենալու համատեքստում հայերենի և ալբաներենի ընդհանրությունները, ինչը հետաքրքրական է այնքանով, որ դրանք հիմք են ծառայել հնդեվրոպական նախալեզվում համապատասխան

վերակառուցումներ կատարելու համար: Ֆրեդերիկ Կորտլանդ-տը թերահավատությամբ է մոտենում այս թեզիսին. նա չի ընդունում, որ երեք դասերը գոյություն են ունեցել միաժամանակ: Կորտլանդտի հողվածում քննարկվում են նաև հայերենում նման հնչյունների կառույցների և վերջիններիս քմայնացման նրբությունների օրինակներ:

Նմանատիպ վերականգնման դեմ երկու փաստարկ կա, որոնց պետք է պատրաստ լինի պատասխանել յուրաքանչյուր ոք, ով ընդունում է Ա. Բեզենբերգերի¹ երեք դասի տեսությունը:

Մի կողմից, մաքուր քմայինները և մյուս դասերը մեծամասամբ ֆակուլտատիվ բաշխման մեջ են, ինչպես թեմային առնչվող մենագրության մեջ վերջերս ներկայացրեց Ստինսլենդը²: Դժվար է գտնել այնպիսի օրինակ, որտեղ բոլոր դասերը հակադրված են միմյանց: Եթե անգամ միշտ չհամաձայնենք, Ստինսլենդի համեմատությունների հետ, որոնց մեծամասնությունը վերցված է Պոկորնիից³, մենք ստիպված ենք ընդունել, որ նախալեզուն ունեցել է հնչյւթների միայն երկու դաս:

Մյուս կողմից, այսպես կոչված “Gutturalwechsel”-ի դեպքերը չափից շատ են, որպեսզի դրանք դիտարկենք որպես պատահական բացառություններ:

Չնայած ալբաներենի ընդհանուր պատկերը նաև խիստ նման է հայերենին, առկա են մանրութներում աչքի ընկնող բազմաթիվ տարբերություններ: Կորտլանդտն արդեն նշել է, որ հայերենում, որտեղ մենք առաջնային ձայնավորից առաջ քմայնացում ենք նկատում, առաջնային ձայնավորը վերակառուցվել է բոլոր այն դեպքերում, երբ դրա համար մոդել է եղել: Հետաքրքրական է, որ ալբաներեն qeth համընկնում է հայկական k'ert'em-ի հետ, գուգահեռ՝ k'erem և k'orem- ին, ճիշտ այնպես, ինչպես ալբաներեն zjarm համընկնում է հայերենի jerm, jer (ջերմ) բառերի հետ: Համաձայնություն չկա ալբաներեն pesë և հայերեն hing (հինգ) և

¹ http://www.lituanus.org/1974/74_2_03.htm

² https://openaccess.leidenuniv.nl/bitstream/handle/1887/1853/344_017.pdf?Sequence=1

³ *Pokorny J.*, Indogermanisches Etymologisches Woerterbuch, Bern - Muenchen, 1959

ալբաներեն *ergyiz* և հայերեն *orjil* միջև: Նախորդ հրապարակման մեջ Կորտլանդտը առաջարկել էր վարկած, որ նախորդող ռնգա-
յինը խոչընդոտել է հայերենի “հինգ”-ի քմայնացմանը, որտեղ
ետնալեզվայինը չէր կարող վերականգնվել, քանի որ նմանատիպ
զարգացման համար համապատասխան մոդել չկար:

Կորտլանդտը գտնում է, որ հայերեն *keam* (կամ)-ի դեպքում
քմայնացման բացակայությունը պետք է պատճառաբանվի մի-
ջանկյալ շրթնայինների առկայությամբ: Միևնույն հանգամանքը
կարող է պատասխանատու լինել ալբաներենում *qis*, *qoj* արթնա-
նալ (*wecke*) լատիներենում՝ *cieō* բառերում քմայնացման բացա-
կայության համար:

Քմայնացման գործընթացի տարբերությունները ալբաներե-
նում և հայերենում կարծես թե պայմանավորված է հայերենում
ներքին ժամանակագրական վկայություններով: Հայերենի նա-
խապատմական փուլի ամենահին ժամանակաշրջանը բնորոշ-
վում է նոր շրթնայնացված բաղաձայնների թվի աճով: Ըստ լեզ-
վաբանի՝ մեր մայրենիում քմայնացումը ժամանակագրվում է
հնդեվրոպական **kw*, **ǵhw*-ից կիսաշփականների քմայնացված
կորստից, որը հետևեց հնդեվրոպական **s*-ից *h*-ի առաջացմանը և
հնդեվրոպական **tw*, **dw*-ից առաջացած շրթնայնացված ատամ-
նայինների կորստով: Սա հավանաբար հաջորդել է նախորդ
զարգացումներին, քանի որ քմայնացված շրթնային ետնալեզվա-
յինները չեն միաձուլվել շրթնայնացված քմային ետնալեզվային-
ների հետ: Սա միանշանակ նախորդել է վերջինիս զարգացմանը,
քանի որ ետնալեզվայինը չի քմայնացվել *k'ez* (քեզ)-ում, սասկրի-
տերեն՝ *tvám*: Քանի որ առկա է ներքին և համեմատական փաս-
տարկների վկայությունների համընկնում, մենք պետք է հրա-
ժարվենք ալբաներենի և հայերենի քմայնացման ծագումնաբա-
նական նույնության հնարավորությունից: Մյուս կողմից, տվյալնե-
րը երկու լեզուներում չափազանց նման են, որպեսզի բացառենք
նրանց միջև որևէ տեսակի պատմական կապակցվածություն:

Հայերենի ամենավաղ փուլերին առնչվող երկու այլ զարգա-
ցումներ կապված են հնդեվրոպական **s*-ից *h*-ի առաջացմանը
(*skesur* սկեսուր) և միաձուլման հետ: Սրանցից ոչ մեկը տեղի չի

ունեցել ալբաներենում: Պեդերսոնը հնդվրոպական *s-ից h-ի առաջացումը վերագրում է պատմական ժամանակաշրջանի, որը կարծես թե չի համընկնում shoh ‘sehe’ բառի վերլուծության հետ: Հնդեվրոպական *ē-ի ներքաշումը հազիվ թե թվագրվի այդքան ուշ ժամանակահատվածի: Այնուամենայնիվ, հնդեվրոպական *s-ից h-ի առաջացումը սահմանափակվում է հետին չշեշտված ձայնավորից առաջ տեղադրմամբ և ապացուցված է միայն բառակերպի *s -ի համար:

Քանի որ սա ավելի ուշ է տեղի ունեցել, քան հնդեվրոպական *s-ի տրոհումը ձայնեղ ու ոչ ձայնեղ անդադարձումների, մենք ևս մեկ փաստարկ ենք գտնում ներքին և համեմատական վկայությունների միջև, որը հանգեցնում է հայերենի և ալբաներենի զարգացումների տարբերությանը: Ենթադրյալ ասիմիլյացիան ալբաներենում vjehërrë “Schwiegermutter”-ում ոչ մի կապ չունի հայերենի skesur (սկեսուր) բառում նույն գործընթացի հետ:

Ազդեցությունը շարունակական կլիներ առաջին լեզվում, մինչդեռ դա ավելի քիչ է հանդիպում է երկրորդ լեզվում: Դեռ ավելին՝ ասիմիլյացիան ալբաներենում անհավանական է երկու պատճառով: Նախ ձայնավորների միջև *s-ից h-ի զարգացումը հիմնավորվում է միայն kohë բառի ոչ վստահելի ծագումնաբանությամբ, մինչդեռ դա հակադրվում է օ արմատներով ինչպես vesh և abl.pl. վերջավորությունը՝ -sh: Երկրորդ, հետադարձ դիասիմիլյացիա կա thi ‘Schwein’, լատիներենում՝ sūs և thanj ‘trockne’, լիտվերենում՝ saūsas: vjehërrë –ի դեպքում ճիշտ է թվում հառել Մեյերի հնչյունային բացատրությանը, որն ընդունվել է նաև Պեդերսոնի կողմից:

Կա երկու զարգացում, որոնք իրավամբ ընդհանուր չեն հայերենի և ալբաների համար: Դրանք, համաձայն հայերենի ներքին տվյալների վկայության, նախորդել են մինչև այժմ քննարկվածներին:

Ալբաներենի համար Հ. Պեդերսոնը սահմանել էր, որ հնդեվրոպական *sw –ն հանգեցրել է շեշտված ձայնավորից առաջ d-ի և բերել հետևյալ օրինակները.

(1) *diell* ‘Sonne’; Skt. *svār*.

(2) *dergjem* ‘bin krank’, Lith. *sergù*.

(3) *dirse* ‘Schweiß’, Gr. *ἰδρώς*, Arm. *k’irtn*.

Այս կարևոր զարգացումը, որի արդյունքը շատ է տարբերվում սովորական հնդեվրոպական շեշտված ձայնավորից առաջ *s-ից gj անդրադարձից, առաջարկում է, որ *sw-ն միահնչությային է դարձել հարաբերականորեն ավելի վաղ փուլում:

Սկզբնապես չշեշտված ձայնավորից առաջ *sw-ի անդրադարձի արտասանական հատկանիշների կորուստը, և վերևում թվարկած բառերում շրթնային բաղադրիչի կորուստը կառուցվածքով համանման է հայերենի *ձոն* (շուն) բառում ետ քաշված արտասանությանը և *յայո* (ձայն) բառում շրթնայնացման վաղ կորստին: Ալբաներենում հնդեվրոպական *sw-ի՝ միահնչությային դարձած լինելու առաջարկը վաղ շրջանում պահպանվեց այդ լեզվում հնդվրոպական *kw-ի և *ǵhw-ի զարգացմամբ: Այստեղ նույնպես մենք կարող ենք պնդել վաղ միահնչությացում:

Վարկածն այն մասին, թե հնդեվրոպական *k-ն *u-ից առաջ պահպանել է միևնույն անդրադարձը, չի կարող հիմնավորում գտնել: Այսպիսով՝ հայերենի հետ համաձայնեցումը կատարյալ է: Այն ներառում է ոչ միայն պայմանները, այլև շրթնայնացման ժամանակագրությունը: Ինչպես *Ջոկլն* է նշել, ռումիներեն *cioară* < ալբաներեն *sorrë* փոխառությունը ապացուցում է, որ շփականը պահպանվել է մինչև պատմական ժամանակները: Այստեղից հետևում է, որ նոր շրթնայնացված բաղաձայնները նախորդել են հնդեվրոպական խմբերում հնդվրոպական *k-ի ասիմիլյացիային: Նույն ժամանակագրությունը պետք է ենթադրվի հայերենի համար:

Ի հակադրություն հայերենի՝ ալբաներենում քմայնացված շրթնային շփականները միաձուլվել են շրթնայնացված շփական ետնալեզվայիններին: Շրթնայնացումից զատ, մենք այսպիսով բացահայտում ենք, որ հնդեվրոպական քմայնացված ետնալեզ-

վայինների ասիմիլյացիայի ժամանակագրությունը երկու լեզուներում նույնպես համընկնում է: Հայերեն *skesur* (սկեսուր) բառի մեր քննարկման մեջ տեսանք, որ այս բառում ասիմիլյացիան պահանջում է այնպիսի փուլ, որում հնդեվրոպական հ-ն միաձուլվել էր, մինչդեռ հնդեվրոպական *kw-ի անդրադարձը կիսաշփական էր: Ռումիներեն *cioaria* բառը ցույց է տալիս, որ այդ փուլը կարող էր ալբանական-հայկական լինել: Խլացնող բաղադրիչների պահպանումը քմայնացված ետնալեզվայիններում *w-ից առաջ կարող էր բնորոշ լինել ավելի մեծ տարածաշրջանում, *cif. ուկրաինական dzvin, dzvir` zvir*-ին զուգահեռ: Այս դեպքերը հազիվ թե վերագրվեն աֆեկտիվ շփայնացման՝ հաշվի առնելով համապատասխանությունը լեհերեն *dzwan* և մակեդոներեն *dzvonec, dzver* ձևերի հետ:

Այս հոդվածը գրելուց հետո տաս, և հրապարակելուց հետո՝ հինգ տարի անց Ֆրեդերիկ Կորտլանդտը հրապարակեց դրա տրամաբանական շարունակությունը հանդիսացող «Հայերենն ու ալբաներենը» հոդվածը:

Առաջին հոդվածում հեղինակի ներկայացրած թեզիսի համաձայն՝ այս երկու լեզուները զարգացել են հնդեվրոպական բարբառներին զուգահեռ՝ կապ կառուցելով մի կողմից բալթիկ-սլավոնական լեզուների, մյուս կողմից՝ հունարենի հետ:

1984թ. Մ. Հալդի ծագումնաբանական բառարանի հրատարակչությունից հետո⁴, ալբաներենի վերաբերյալ տվյալներն ավելի հասանելի դարձան հնդեվրոպական լեզուներն ուսումնասիրող ուսանողների համար ոչ միայն ի շնորհիվ դրա հարուստ գրականության ցանկի, այլ քանի որ առկա էր հրապարակման ենթակա մեծ քանակությամբ տեղեկատվություն բարբառների մասին, որոնք հաճախ որոշիչ դեր են խաղում լեզվի վաղ տարբերակների վերականգնման համար: Սա հիմք տվեց ակնկալելու, որ հետագայում նշված աղբյուրները կօգնեն նոր, ավելի թարմ ու

⁴ *Martin E. Huld*, Basic Albanian Etymologies, Columbus, Slavica, 1984

հստակ նյութերով բառարան հրատարակել, որը կփոխարինի 1981թ. Մեյերի ծագումնաբանական բառարանին⁵:

Երկրորդ հոդվածում Կորտլանդտը Հալդի մենագրության լույսի ներքո վերադիտարկել է իր նշած կապը հայերենի և ալբաներենի միջև:

Հալդը նշել է հետևյալ նմանությունները ալբաներենի և հայերենի միջև.

- Ալբաներեն *enderr* <*anderre*, հայերեն՝ *anurj*, անուրջ, երազանք, որոնք ծագել են *H3nryo-*, *H3noryo-*, *H3neryo-*ից համապատասխանաբար:

- Ալբաներեն՝ *edh*, հայերեն՝ *ayc*, հունարեն՝ - *այծ*: Այս բառի հետ կապված խնդիրը *h-*ի բացակայությունն է և՛ հայերենում, և՛ ալբաներենում:

- Ալբաներեն՝ *ende*, հունարեն՝ ծաղիկ և հայերեն՝ *and* դաշտ, որոնց կարող է ավելացվել սանսկրիտերեն՝ *andhah*՝ բույս, թոխարենեն՝ *A ant*, *b ante*՝ հարթ: Սրանք բոլորն էլ կարող են առաջացած լինել *H2endhos*, *H2ndhes*-ից:

- Ալբաներեն՝ *thelle* խորը, հայերեն՝ *soyl* անձավ, հունարեն <*kowilos* դատարկ, որը ըստ Հալդի առաջացել է *houHlo-*ից՝ փորագրված: Քանի որ հունարենի-*i*-ի շրթնային ծագման վկայությունը բավարար չէ, Կորտլանդտը կարծում է, որ հայերենն ու ալբաներենը պահպանել են բառի սկզբնական տարբերակը:

Ինչպես և առաջին հոդվածում, այստեղ նույնպես Ֆրեդերիկ Կորտլանդտն առանձին կետով ներկայացնում է այն բոլոր օրինակները, որոնք վկայում են այն մասին, որ և հայերենում, և ալբաներենում հնեվրոպական նախալեզվի **sw-*ն ունի անդրադարձումներ.

- Հայերենում՝ *k’ut* քուն, սանսկրիտերենում՝ *svapnah*, բայց զրո գրեյդ հունարենում՝ լայլայ, ալբաներենում՝ *gjume*

- հայերենում՝ *k’oyr*, քույր, սանսկրիտերենում՝ *svasa*

- հայերենում՝ *k’irtn*, քրտինք, ալբաներենում՝ *dirse* < **swidr-*, ամբողջ գրեյդով լատվերեն *sviedri*, սանսկրիտերեն՝ *svedah*:

⁵ <https://archive.org/details/romanischesetymo00meyeuoft>

Դեռ աավելի վաղ Կորտլանդտը անհամաձայնություն է արտահայտել այն մասին, որ հնդեվրոպական նախալեզվի *sw-ն հայերենում և ալբաներենում կարող է բացատրելի դառնալ, եթե մենք ենթադրենք, որ խումբը դարձել է միաֆոնեմիկ այս լեզուների զարգացման վաղ փուլում:

Հայերենն ու ալբաներենը պահպանել են նաև հնդեվրոպական նախալեզվի *kw և *ghw-ի հատկանշական անդրադարձներ.

- հայերենում՝ ջսո շուն, սանսկրիտերենում՝ sva
- հայերենում՝ Էժ էշ, սանսկրիտերենում՝ áśvah ձի
- հայերենում՝ յայռ ձայն, ալբաներենում՝ zë, zâ<*ghwonos, ռուսերենում՝ zvон զանգել:

Կորտլանդտը այստեղ նույնպես ենթադրում է, որ խմբերը դարձել են միաֆոնեմիկ երկու լեզուների զարգացման վաղ փուլում:

Հեղինակը այս հոդվածում նաև անդրադարձել է իր՝ նախկինում արդեն ներկայացրած մի տեսությանը: Դա է հնդեվրոպական նախալեզվի *H₂e-ի արտացոլումը հայերենում han տատ, hatanem կտրել, haw պապ, hagacim կապվել եմ, harawaunk դաշտ, haw թռչուն բառերում, հնդեվրոպական նախալեզվի *H₃e-ի արտացոլումը hoviw հովիվ, hot հոտ, hum հում բառերում, *Ho-ի և վոկալիզացված *H₂-ը arj արջ, arcat արծաթ, argel արգել, acem բերել բառերում: Այս առնչությամբ ստորև ներկայացվում են օրինակներ, որոնք ցույց են տալիս, որ ալբաներենում նույնպես առկա են նմանատիպ դեպքեր:

- (3) Alb. *hut* < **H₂eut-* 'empty', Gr. αὔτως, Gothic *aubeis*.
 (4) Alb. *hipënj*, *hypij* < **Heup-* 'mount', Gr. ὑπέρ, Skt. *upári*. This etymology is questionable.
 (5) Alb. *herdhe* < **H₃erǵh-* 'testicle', Gr. ὄρχις, Arm. *orj* 'male' (with *o-* or zero grade).
 (6) Alb. *ha* < **H₂eu-* 'eat', Skt. *áva-* (cf. above).
 (7) Alb. *halë* < **H₂elsno-* 'alder', Latin *almus* (Huld 1984: 151).
 (8) Alb. *ardhur* < **H₁orǵh-un-* 'come' (part.), Gr. ἔρχομαι.
 (9) Alb. *athët* < **H₂ok-* 'sour', Gr. ὄκρις, ὄξύς.
 (10) Alb. *amë* < **H₃odmā* 'stench', Gr. ὀδμή, ὀσμή, Arm. *hot* < **H₃edos*, Latin *odor*.
 (11) Alb. *ah* < **H₃osko-* 'beech', Arm. *hac* 'i < **H₃esk-* 'ash', OE. *æsc*, Gr. ὄξύη 'beech'.
 (12) Alb. *asht* < **H₃ost-* 'bone', Arm. *oskr*, Gr. ὀστέον, Skt. *ásthi*.

Հոդվածին ծանոթանալուց հետո եզրակացնում ենք, որ հայերենի ու ալբաներենի միջև առկա են մի շարք բառային ընդհանրություններ, որոնք ընդհանուր են նաև հունարենի հետ: Ինչպես նաև, բալթիկ-սլավոնական լեզուներում նկատվում են բազմաթիվ հնչյունային զարգացումներ, օրինակ՝ հնչեղներից առաջ քրմային ենտալեզվայինների անքմայնացում:

Հնդեվրոպական նախալեզվի **sw*, **kw*, **ghw-*ի միահնչույթացումը երկու լեզուներում կարող էր զարգանալ զուգահեռաբար:

Եվ միգուցե հնդեվրոպական նախալեզվի *H₃* և *H₂* –ի կրկնակի զրոյական անդրադարձը, որոնք ձայնեղ են դարձել հնչեղից առաջ, ինչպես հունարենում, և հանգեցրել է հնդեվրոպական նախալեզվի *e* ից առաջ շնչեղությանը: Լեզուների միջև նմանությունները հիմք են տալիս մտածելու, որ դրանք առաջացել են սահմանակից հնդեվրոպական բարբառներից, որոնք աշխարհագրական առումով ընդգրկում են հարավում հունարենից մինչև հյուսիսում՝ բալթիկ-սլավոնական բարբառները:

Չեկուցման համար հիմք ծառայած մեկ այլ հոդված նվիրված է հայերենի ցուցական դերանունների ուսումնասիրման հարցին: Վերջինս կատարվում է բալթիկ սլավոնական լեզուներին և թուրքարերենի հետ համեմատության համատեքստում: Բալթիկ-սլավոնական ցուցական դերանունների վերականգնումը սկսելով՝

Ֆ. Կորտլանդտը նկատեց, որ դրանք վերականգնելու համար պարսկերենի, լիտվերենի ու հին սլավոներենի համեմատությունը բավարար չէ: Շարունակական հետազոտությունները հանգեցրին հայերենի համակարգի դիտարկմանը: Նախահայերենի և վերականգնված բալթիկ-սլավոնական համակարգի նմանությունը, ինչպես նաև հայերենում եռակի անաֆորիկ դերանվանական համակարգի առկայությունը հիմք են ծառայում հնդեվրոպական Tans դերանունի ծագման համար:

Բալթիկ-սլավոնական ցուցական դերանունների վերականգնումը հիմնված է պարսկերենի, լիտվերենի և հին սլավոներենի վկայությունների վրա: Այսպիսի համեմատությունը, պարզվում է, ավելի բարդ է, քան առաջին հայացքից է թվում:

Ի տարբերություն մյուս հնդեվրոպական լեզուների՝ հայերենում կան երեք անաֆորիկ դերանուններ, որոնք համապատասխանում են երեք ցուցական դերանունների.

<i>ays</i> 'hic'	<i>sa</i> 'is'	<i>soyn</i> 'idem'
<i>ayd</i> 'iste'	<i>da</i> 'is'	<i>doyn</i> 'idem'
<i>ayn</i> 'ille'	<i>na</i> 'is'	<i>noyn</i> 'idem'

Երեք դասերի ռադիկալ բաղադրիչը նման է: Ինչպես Հ.Պեդերսոնն է նշել⁶, հայերենի զարգացման ելակետը պետք է փնտրվի *da*-ի ձևերում, որը ներկայացնում է *to* և *ayn* ձևերը, *anio*-ի անդրադարձն է, սանսկրիտերենում՝ *anya-* մյուս: Վերջինիս ածանցյալն է առաջարկված *an* մասնիկի, որը պահպանվել է *and* այնտեղ մակբայում:

Այսպիսով, կարող ենք հանգել այն եզրակացության, որ հայերենի համակարգը վերականգնվել է բալթիկ-սլավոներենում:

Այս վերլուծության ճշգրտությունը կապված է *awasik* «voici», *awadik*, *awanik* «voilà» ձևերով:

⁶ *Holger Pedersen*, *Albanesisch und Armenisch*, 340-341, 1900b

Պեղերսոնը արդեն մատնանշել է օրինակներ որպես հնդեվրոպական նախալեզվում *ki-* ի *-ko-* ածանցյալներ⁷: Սրանից հավանաբար ծագել է *anik* ձևը, որն էլ իր հերթին պահպանել է բառակերպի ձայնավորը *asik* ձևի ստեղծման համար: Նմանապես, *ast-*ի այստեղ բառակերպի ձայնավորը ակնհայտորեն վերցվել է *and-*ից՝ «այնտեղ»: Սկզբնական *aw-*մասը կարող է ներկայացնել նախահնդեվրոպական *au* մասնիկը: Պերիխանյանի վարկածը, թե քննարկվող ձևերը իրանական ծագում ունեն, չի բացատրում ին: Իհարկե, իրաներեն *hau-*ն ինքնին *so-*ի և *au-*ի միաձուլում է:

Նախահայերենի և վերականգնված բալթիկ-սլավոնական համակարգի միջև նմանությունը և եռապատիկ անաֆորիկ դերանունի առյակությունը հայերենում բացատրություն են առաջարկում Pr. Tans-ի ծագման համար: Այս դերանունը ակնհայտորեն իր *t-*ն ստացել է դերանվանական *ane*, *anei* արմատների առաջացումից հետո, սակայն մինչև *so-*ի՝ *to-*ին *contamination*ը:

Եվ այսպիսով, ենթադրվում է, որ պարսկերենի զարգացման միջին փուլում եղել է եռապատիկ անաֆորիկ դերանուն, որն էլ հիմք է ծառայել բալթիկ-սլավոներենի ցուցական դերանունների համակարգի վերականգնման համար:

Ֆրեդերիկ Կորտլանդտի հայերենագիտական ուսումնասիրությունները մեծ արժեք են ներկայացնում պատմահամեմատական լեզվաբանությամբ զբաղվող բոլոր գիտնականների ու ուսանողների համար, քանի որ դրանք համապարփակ կերպով ներկայացնում են վերջին տասնամյակների զարգացումները այս բնագավառում: Կորտլանդտի «*Armeniaca: Comparative Notes*» ժողովածուում զետեղված երկու տասնյակից ավելի հոդվածները խիստ կարևոր են թե՛ որպես ուսումնասիրված բազմաթիվ օրինակների շտեմարան, և թե՛ որպես հին ու նոր տեսությունների ամրագրում:

⁷ Նույն տեղում

Ани Вардамян – Изучение армянского языка в трудах Фредерика Кортландта. – Данный доклад излагает сведения из научных статей современного голландского лингвиста Фредерика Кортландта. Имея более 20-и статей по теме исторического и сравнительного изучения армянского языка, лингвист в 2003-ем году собрал все статьи и опубликовал собрание работ в книге под названием “Armeniaca: Comparative notes” (Армениака: сравнительные примечания).

В докладе автор суммирует две статьи по теме сравнения армянского и албанского языков и одну статью посвященную роли системы указательных местоимений армянского языка при их восстановлении в Балтийских-славянских языках.

Ani Vardanyan – The Armenian language studies by Frederik Kortlandt. – This report aims to put together the data presented in the scientific articles by modern Holland linguist Frederik Kortlandt. Having collected more than twenty articles on historical and comparative studies of the Armenian language, the linguist published them all in the set of articles entitled “Armeniaca: Comparative notes” in 2003.

In this report the author has summarized data from two articles on the comparison of Armenian and Albanian and one article on the role of the Armenian demonstrative pronoun system when reconstructing that of Balto-Slavic languages.

Բանալի բառեր: Ֆրեդերիկ Կորտլանդտ, հայերեն և ալբաներեն, ցուցական դերանուններ, հետնալեզվայինների քմայնացում, h-է sw, *kw, *ghw-ի միահնչույթացում:

Ключевые слова: Фредерик Кортландт, армянский и албанский, указательные местоимения, палатализация лабиовелярных, монофонемизация ИЕ sw, *kw, *ghw.

Key words: Frederik Kortlandt, Armenian and Albanian, demonstrative pronouns, palatalization of labiovelars, monophonemicization of PIE *sw, *kw, *ghw.

ՎՐԱՑ ԲԱՌԱՆՅՈՒԹՇ ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ «ԱՐՄԱՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆՈՒՄ»-ՈՒՄ

ՋԵՆՆԻ ԹԱՄԱՐՅԱՆ

(Երևանի պետական համալսարան)

Ն. Մառը, որպես լեզվի նոր ուսմունքի և հայ վրացագիտության հիմնադիր, իր բազմաթիվ գործերում՝ սկսած առաջին աշխատություններից մինչև վերջին շրջանի երկերը, շոշափել է հայ-վրացական ընդհանրությունները, համառորեն պաշտպանել այն թեզը, որի համաձայն՝ հայոց և վրաց լեզուները *ազգակից* են իրար¹: Երկու լեզուների ազգակցությունը նա պայմանավորում է երկուստեք մերձեցման, շփման, ներթափանցումների ու խաչավորումների ուղիով: Ըստ որի՝ երկու լեզուների նմանությունները, որոնք բազմաթիվ են, բոլորովին էլ պատահական չեն:

Հոդվածում քննության առնված զուգակից ձևերից բառերն ու բառարմատները երկու լեզուների այնպիսի ընդհանրություններ են, որոնք պահպանված են երկու լեզուներում էլ՝ ձևահմաստային հատուկ երանգավորումներով: Մեզ հետաքրքրող ընդհանուր բառերի մի մասը «հնդեվրոպական» լեզուների մեջ չկան: Այդ բառերը կան միայն հայոց և կովկասյան լեզուների մեջ, սակայն չպետք է կարծել, որ դրանք հայերենում կովկասյան լեզուներից են փոխառյալ:

Հայերնի ունեցած այն հսկայական ընդհանրությունները հատկապես հարավ-կովկասյան լեզուների հետ՝ հնդեվրոպաբան գիտնականները համարում են լոկ ինչ-որ «փոխառություններ» կամ «պատահական նմանություններ»²:

Հայ լեզվաբաններից ոչ ոք այնքանօգտագործած չկա վրացերենը, որքան Հ. Աճառյանն իր «Արմատական բառարան»-ում: Նրա համեմատությունները, կամ, ինչպես ինքն է գրում իր «կարծիքով», հայ-վրացական «փոխառությունները» անցնում են նույ-

¹ Ն. Մառը և հայագիտական հարցերը, Երևան 1968, էջ 17:

² Ն. Մառի անվան կաբինետի աշխատություններ, Երևան 1947, էջ 242:

նիսկ մի քանի հարյուր միավորից³: Հայ-վրացական այս ընդհանրությունները, որ Հր. Աճառյանը համարում է գոյություն չունեցող կամ երևակայությամբ ստեղծված «լեզվաընտանիքից» դուրս գրված, միշտ չէ, որ համապատասխանում են իրար:

Նա օգտագործել է իրեն մատչելի մի շարք վրացերեն բառարաններ, մասնավորապես Դ. Չուբինաշվիլու վրաց-ռուսերեն բառարանը (I և II հրատարակությունները):

Ընդհանրապես պետք է ասել, որ Հ. Աճառյանը վրացերենից օգտագործել է շատ սահմանափակ գրականություն, որից դուրս, անպայման, եղել է ու կա նրան անծանոթ վրաց ուրիշ գրականություն, որը հնարավորություն է տալիս միշտ էլ լրացումներ կատարել:

Աճառյանը, որքան հնարավոր է, հայերենի բառարմատները հարմարեցրել է եվրոպական որոշ լեզուների բառարմատներին՝ համարելով գոյություն չունեցող, մի «նախամայր» լեզվից ծագած:

Այսպես օր.՝ **հյ.լալկ||լալկ-ել** «շան պես լիզելով ուտել», որ հին մատենագրության մեջ չի ավանդված, Հ. Աճառյանը համարում է «բնիկ» և վերականգնում է ինչ-որ «հնդեվրոպական» գոյություն չունեցող **lak** ձևը, որը, նրա կարծիքով, պետք է տար **հյ. լաք** ձևը...այս «անկանոնությունը» նա վերագրում է բնաձայնության՝ նման հնչյուններով բառեր գտնելով նաև ուրիշի «ընտանիքների» լեզուներում, օր.՝ քարթվելական լեզուներում՝ վրց. **lok-va** (լոկ-վա «լիզել»): Հյ. **լալկ** բառը պետք է կապել, անշուշտ, տեղական քարթվել. **lok-va** (լոկ-վա «լիզել») բառի հետ:

Հյ. **խարշ||խարշ-ել** «խաշել, այրել, վառել» բառը Հ. Աճառյանը համարում է «բնիկ հայ բառ» («Արմ. բառ.», III հ. էջ 42-6) և կապում խար «այրել, դաղել» արմատի հետ. սա էլ հնիս. **qer, qor, qr** «այրել» գոյություն չունեցող, արմատի հետ, որի մյուս ժառանգներն է համարում վեդ. **kudayati** «խսանձել», սանսկ. **kundayati** «այրել», լտ. **ercmo** «այրել», **carb** «ածուխ» (III հ. էջ 397): Սրանց նման

³ Ն. Մառի անվան կաբինետի աշխատություններ, Երևան 1947, էջ 242:

չէ հյ. **խար2||խար2-ել**բառը, որը, նախ պետք է կապել վրց. xarS-va(խար2-վա «խար2ել») բառի հետ:

Հյ. **ծեծ**«զան, հարված, ծեծելը» բառը Աճառյանը համարում է «բնիկ հայ բառ՝ հնիս. geg-արմատից» հանելով, որը լոկ երևակայության արդյունք է: Սրա հետ համեմատում է սանսկ. jajati «կռվել», jaja «կռվող», նույնը ռնգականով՝ janj, janjati «կռիվ», անմիջապես ավելացնելով՝ «ուրիշ լեզվի մեջ պահպանված չէ բառս» (III հ. էջ 756-7): Իսկ վրց. wew-a(**ծեծ-ա «ծեծել, գգել»**) || ZeZ-a(**ձեծ-ա ||ձենձ-ա «ծեծել,գգել»**), որի հետ անմիջականորեն պետք է կապել հյ. ծեծ բառը, Հ. Աճառյանը դնում է փոխառության բաժնում:

Հյ. **ձող**«երկար փայտ, ծառի երկար ճյուղ, բուն» բառը Հ. Աճառյանը համարում է «բնիկ հայ բառ՝ հնիս. ghol-ձևից» հանելով համեմատում է hala «արոր» բառերի հետ (IV հ. էջ 509-510), որոնք հեռու են իրարից: Հյ. **ձող** բառը պետք է կապել վրց. Zel-I(**ձել-ի || ձոլ-ի** «կտրած ծառ, գերան») բառի հետ:

Հյ. **սունկ (ն)** բառը Աճառյանը համարում է «բնիկ հայ բառ՝ հնիս. spongos ձևից» բերելով հուն. σπόνγγος«սպունգ, փոխք. կոկորդի նշանագեղձերը», որից հետո ավելացնում է՝ «ուրիշ լեզվի մեջ պահպանված չէ այս արմատը»(VI հ. էջ 359): Իսկ վրց. sok-o (**սոկ-ո «սունկ»**) բառը, որը պետք է կապել հյ. սունկ, Հ. Աճառյանը դնում է փոխառության բաժնում:

Նման օրինակներ շատ կան, բայց այսքանն էլ բավական է գաղափար կազմելու հնդեվրոպաբանների այն «տեսակետի» մասին, որի համաձայն հայերենի մի շարք բառարմատները աշխատում են մի կերպ հարմարեցնել եվրոպական որոշ լեզուների բառարմատներին և «վերականգնել» ինչ-որ «նախամայր» լեզու:

Շատ կարևոր է այն փաստը, որ Հ. Աճառյանը, ելնելով որոշ ձևական համեմատություններից և չըմբռնելով վրացերենն ու քարթվելական լեզուները, հաճախ ոչ ճիշտ եզրակացությունների է հանգում, օր. ոչ մի հիմք չկա հաստատելու, որ հյ. **խոց**«վերք (հարվածից, սրից, նիզակից կամ ինքնին առաջացած)» բառից փոխառյալ է վրց. Oxoc-a (խոց-ա «խոցել, կոտորել, ջնջել»), որից na-xoc-i (նա-խոց-ի «կոտորած»), da-xoc-a (դա-խոց-ա «կոտո-

րել»)... և այլն: Սրանք ընդհանուր բառեր են, իմաստի որոշ երանգավորումներով պահպանված:

Դժվար է ասել, որ հյ. **ծայր** «ծայր (սկզբի կամ վերջի)» բառից փոխառյալ է վրց.wver-I (ծվեր-ի «ծայր»), քանի որ սրանք ևս ընդհանուր են:

Ընդհանուր են նաև՝ հյ. **նեխ** «ժահահոտություն, փտություն, թարախ» և վրց. nexv-i (նեխվ-ի «աղբ, թրիք»), որից՝ na-nexv-i (նանեխվ-ի «աղբով պարարտացած հող»), sa-naxv-e (սա-նախվ-ե «աղբանոց») և այլն: Սրանք մեկը մյուսի փոխառությունը չեն կարող լինել, ինչպես տալիս է Հ. Աճառյանը («Արմ. բառ.», V հ. էջ 79-80):

Աճառյանը փոխառություն է համարում նաև **ծուխ** «մուխ, գոլորշի, շոգի» բառը կովկասյան **ծուխ** «մուր, ծուխ, մուր» արմատից («Արմ. բառ.», III հ. էջ 816-7), իսկ **մուխ** բառը՝ «բնիկ հայ բառ»՝ հնիս.գոյություն չունեցող meuq-, meuqh կամ smeuq-, smeuqh- արմատի ռուգի- ձևից ծագած: Երկուսն էլ հայերեն են՝ տեղական լեզվաշերտից պահպանված, վերջինս (**մուխ** բառը) ծագած լինելով առաջինից՝ նրա կրկնությունից՝ ծուխ-մուխ, ինչպես օր.՝ ծուռ-մուռ, շուռ-մուռ, տուն-մուն:

Հայերենի որոշ բառարմատների հարմարեցումը «հնդեվրոպական» համարվող որոշ լեզուների բառարմատներին կատարվում է նաև սովորաբար որոշ հնչյունների աճումով կամ անկումով: Օր.՝ **խարշ** «խաշել, այրել, վառել» բառը Հ. Աճառյանը համարում է «բնիկ հայ բառ՝ աճած շ ածանցով՝ պարզական **խար** արմատից» սա էլ համարում է հնիս. ինչ-որ, երբեք գոյություն չունեցող, qer-, qor-, qr «այրել» արմատից, իսկ հյ. **խարշ** բառի վրց. ձևա-իմաստային համարժեքը՝ xarS-va (խարշ-վա «խարշել») բառը դրել է փոխառության բաժնում:

Քիչ չեն նաև հնչյունների անկման միջոցով հարմարեցման դեպքերը, օր.՝ հյ. «**մի բան**» (որից՝ իք, իմն, ինչ, իր) Աճառյանը համարում է «բնիկ հայ բառ» հանելով հնիս. qui հարցական դերանունից և համեմատելով մյուս «ժառանգներից» սանս. cid, kim «ինչ, ինչու», հուն. tis, լտ. quis «ով», ռուս. Կ-то «ինչ»...: Հայերենի մեջ,

ինչպես գրում է Աճառյանը («Արմ. բառ.», III հ. էջ 53-4), հնիս. գո նախաձայնը հ շնչին անցնելուց հետո՝ ընկած:

Ըստ Հ. Աճառյանի «տեսակետի»՝ նույնիսկ հայ-վրացական ձևախմբաստային իսկական այն համարժեքները, որոնք ուրիշ ոչ մի լեզվի հետ չեն կապվում ու չեն հարմարեցվում, այնուամենայնիվ, «պատահական նմանություն միայն ունեն»: Այսպես օր. **տան-ել** «կրել, փոխադրել» բառի տակ, փոխառության բաժնում, ինչպես Աճառյանն է ասում («Արմ. բառ.», VI հ. էջ 769), «հայերենի հետ նույնն են հնչում» վրգ. **tan-eba** (տան-եբա || տար-եբա «տանել, մանածել»), որից՝ **tan-eb-uli** (տան-եբ-ուլի «ուղարկած»), **na-tan-i** (նա-տան-ի «կրած»)... և **tar-eba** (տար-եբա || տան-եբա «տանել, մանածել»), որից՝ **ga-tar-eba** (գա-տար-եբա «մանածել»)... և այլն: Սրանք հայ-վրացական ձևախմբաստային համարժեքներ են: Բայց, հակառակ այս բանի, իսկական պատահական նմանությունները համեմատության են դրված Հ. Աճառյանի մոտ: Այսպես, օր. **իբբ** բառը՝ «որպես, ինչպես, պես», «երբ որ, երբ» նշանակություններով՝ Հ. Աճառյանը նույն է համարում **եբբ** բառի, -բար «պես» մասնիկի և **բարբ** «բնավորություն, որպիսիություն» գոյականի հետ («Արմ. բառ.», III հ. էջ 60-62): Նույն տեղում, փոխառության բաժնում դնում է վրգ. **ebr** (Էբր), **ebriv** (Էբրիվ «նման, պես», օր.՝ միս-էբր «նրա նման»): Սրանք հենց պատահական նմանություն ունեն հյ. իբբ<ի բար բառի հետ: Դա, շատ բնական է, քանի որ վրգ. **ebr** (Էբր) երկու տարբեր մասնիկների միացման սղումից է ստացված, այն է-**eb+ur** (էբ+ուր>Էբր), որոնք թե՛ առանձին-առանձին են գործածական և թե՛ երկուսը միասին՝ անփոփոխ, ինչպես օր.՝ վրգ. **Cem** (չեմ- «իմ») բառից **Cem-eb+ur+i** (չեմ-եբ+ուր+ի)>**Cem-eb+r** (չեմ-եբ+r)-«իմի նման, ինձ նման»), որին կարող է ավելանալ նաև -**iv** (-իվ) ընդհանուր մասնիկը՝ **Cem-eb+r+iv** (չեմ-եբ+r+իվ)>«իմի նման, ինձ նման»)... և այլն: Այս հանգամանքը հաշվի չառնելով և իրար համեմատելով պատահականորեն իրար նման այս ձևերը՝ թույլ է տալիս իրեն այսպես եզրակացնել. այս բոլորի մեջ վրգ. -**iv**(-իվ) հյ. և ձևից է, որ և ունենալով հնդեվ-

րոպական ծագում, ցույց է տալիս, թե փոխառությունը հայերենից վրացերեն է և ոչ թե վրացերենից հայերեն:

Պարզ է, որ Հ. Աճառյանը վրացերեն չի իմացել: Այս է պատճառը, որ նա թույլ է տվել երբեմն նույնիսկ նման վրիպումներ. օր.՝ հյ. **ամայի**|| **ամայ** || **ամա** «անշեն, անբնակ» բառաձևերի տակ, որոնց հետ նույնն է վրգ.amao (ամաո «իզուր, պարապ») բառը, փոխառության բաժնում վրգ. **ամաո**, **ամաոդ** ձևերի կողքին բերում է նաև վրգ. amaoxrebeli ամաոխրեբելի «անտերացնող» բառաձևը («Արմ. բառ.», I հ. էջ 183-4), որ բնավ էլ կապ չունի վրգ. **ամաո** բառի հետ: Աճառյանը, վրգ. **ամաոխրեբելի** բառից ցանկացել է սկզբի չորս հնչյունը (ամաո) անջատել, որպես առանձին բառ մոռանալով, որ իսկական բառարմատն է՝ **ոխեր** (>ոխր) «անտեր», մնացածը բառամասնիկներ են, սկզբից՝ ա+մա>ադ+մա բարդ մասնիկը (վերջից էլ՝ եր+ել): Նմանապես ոչ ճիշտ մեկնություն է արված qala-**քալա**բառին («Արմ. բառ.», VI հ. էջ 1336), որի դիմաց Աճառյանը գրել է «ա՛յ աղջի» (իբր կոչական): Վրգ. **քալ-ա** ձևը երբեք էլ «կոչական» չէ, ինչպես կարծում է Հ. Աճառյանը. բառարմատն է՝ **քալ**«աղջիկ», իսկ վերջավորությունը՝ -ա<-ակ հայերենի հետ ընդհանուր նվազափաղաքշական մասնիկն է, որ սովորական մասնիկներից է երկու լեզվում էլ: Այսպիսով, վրգ. **քալա** ձևը, որ անցած է հայերենին, նվազափաղաքշական ձև է և ոչ թե կոչական: Իսկ կոչական արտահատող ձևը **քալո-ն** է:

Հ. Աճառյանը հյ. **անթեղ**«տաք մոխիր» բառը համարում է կովկասյան լեզուներից փոխառյալ, որի արմատը, նրա կարծիքով, պահում է վրացերենը. այսպես՝ anTeba (անթեբա «կրակ վառել, հրահրել, բորբոքում»), anTebul-i (անթեբուլ-ի «վառած»՝ («Արմ. բառ.», I հ. էջ 326): Բայց հյ. **անթեղ** բառը պետք է կապել վրգ.naTel-i (նաթել-ի «լույս» ձևի հետ, այսպես՝ նաթել>ա-նաթել> (բառամիջի ա հնչյունի սղումով)>անթեղ (լ>ղ փոխանցումով):

Այսպիսի փաստեր կարելի էր դարձյալ գտնել ու բերել: Սակայն փաստ է, որ Հ. Աճառյանի բառարանում, բացի, այսպես ասած, «ոչ ճիշտ» լուսաբանումներից, կան նաև շտապողականության հետևանքով թույլ տրված վրիպումներ, որոնք, ցավոք, տեղի

չպետք է ունենային, ինչքան էլ մեծածավալ լինի նրա «Արմատական բառարանը»:

Չնայած նշված այս անճշտություններին՝ այնուամենայնիվ Հ. Աճառյանի «Արմատական բառարանը» մեր իրականության մեջ դեռևս իր նմանը չունի: Նա մի գործ է, լեզվաբանական մի հավաքածու՝ նման հանրագիտարանի, որը ուսումնասիրողին կարող է որոշ կարգի ուղեցույց հանդիսանալ բառապաշարը օգտագործելու գործում, այս կամ այն չափով, կողմնորոշվելու համար: Բացի այդ, չկա մեկ այլնր, որ նրա չափ օգտագործած լինի վրացերենը և մյուս կովկասյան լեզուները, որոնք անհրաժեշտ են հայերենը ուսումնասիրելու համար:

Дженни Тамарян – О грузинском лексическом материале в словаре Грачья Ачаряна. – Из сопоставления ряда общностей обоих языков, выясняется, что армянский язык, как язык смешанный, своими многочисленными языковыми элементами, действительно, увязывается с местными языками – в первую очередь картвельскими языками (грузинским, чанским, мегрельским и сванским).

Документально прослеживая процесс языковых перекрещиваний, в котором из ряда предыдущих языков – образовались армянские языки (литературный и народный), я старался в исторической перспективе, увязать историю армянского языка с древнейшими языками и наследствующими им – живыми языками той страны, где поистине образовались первые. С этой точки зрения картвельские языки как наследие древнейших языков, в некоторой степени, обнимают родственные армянскому языку такие языковые элементы (в древнейших формах и понятиях), которые, как указано в настоящей статье, намного способствуют правильному пониманию армянских языковых элементов.

Jenni Tamaryan – The Georgian word-stock in the Dictionary of Root Words by Acharyan. – This article deals with the interpretation of Armenian-Georgian lexical coincidences in the etymological dictionary by Acharyan. There are a lot of general features in both languages, which show, that Armenian as a language of mixed type with its numerous linguistic elements has common peculiarities with the Kartvelian languages. Nobody can deny

the existing transmissions between the languages. They are linguistic facts of comparatively later period. And it won't be correct to call "transmissions" the existing linguistic generalities of early stages, because they are equal original for these languages.

From this point of view the Kartvelian languages have some linguistic elements of Armenian or related other languages in their language structure and they sometimes can help to interpret some Armenian linguistic phenomena.

Բանալի բառեր: արմատական բառարան, փոխառյալ բառ, ձևական համեմատություն, հնդեվրոպական լեզուներ, բառարմատ, վրացագիտություն, վրաց լեզու:

Ключевые слова: корневое словарь, заимствованные слова, формальное сравнение, индоевропейские языки, корень слова, грузиноведение, грузинский язык.

Key words: etymological dictionary, borrowed word, formal comparison, Indo-European languages, root of the word, Georgian Studies, Georgian language.

**ՓՈԽԱՌՅԱԼ ԲԱՌԵՐԸ Ս. ԷԶՄԻԱՇՆԻ
ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆՈՑԻ
ՏԱՊԱՆԱԳՐԵՐՈՒՄ**

ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
(ԳԱԱ ՀԱԻ)

XVI դարի սկզբներից մինչև XVII դարի 30-ական թթ. վերջերը Հայաստանը պարբերաբար գտնվում էր Առաջավոր Ասիայի երկու հզոր տերությունների՝ Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Իրանի նվաճողական քաղաքականության կենտրոնում: Թուրք-իրանական երկարատև պատերազմները կործանարար հետևանքներ ունեցան անդրկովկասյան ժողովուրդների և հատկապես հայերի համար՝ առավել ծանր, քան սելջուկների, մոնղոլների ու թուրքմենների ջարդերը, ավարառություններն ու ավերումները¹:

Պատերազմական գործողությունների արդյունքում քայքայվում էր երկրի տնտեսությունը, հոգևոր ու մշակութային կյանքը, ինչն առավել սրվեց Շահ Աբբաս I-ի (1587-1629) հայահալած ծրագրի իրագործմամբ, որի մասին պատմագիր Առաքել Դավրիժեցին հաղորդում է հետևյալը. «Եւ յազգէն Հայոց ժողովուրդք, որք եկեալ զետեղեցան յաշխարհի Ատրպատականի, մեծ և առաջին Շահաբասն Պարսից թագաւորն զամենեսեան զնոսա վարեալ քշեաց, տարաւ յաշխարհն Պարսից, զկէս բաժին մի ի Ֆահրապատ, և զկէս բաժին մի ի Սպահան քաղաք և ի գաւառս նորա»²:

Զնայած գերեվարությանն ու ավերիչ պատերազմներին՝ հայ ժողովուրդը կարողացավ դիմակայել օտար նվաճողներին՝ պահպանելով իր ինքնուրույնությունը, լեզուն ու մշակույթը: 1639 թ. Կասրե-Շիրինում կնքված հաշտության պայմանագիրը, համա-

¹ Հայ ժողովրդի պատմություն (այսուհետ՝ ՀԺՊ), հ. IV, Եր., 1972, էջ 81-89:

² *Առաքել Դավրիժեցի*, Գիրք պատմութեանց, աշխատասիրությամբ **Լ. Ա. Խան-լարյանի**, Եր., 1990, էջ 147:

ձայն որի՝ Հայաստանը բաժանվեց Իրանի ու Թուրքիայի միջև, շրջադարձային եղավ հայ ժողովրդի համար. սկսվեց խաղաղ մի ժամանակաշրջան, որը նշանավորվեց տնտեսական ու մշակութային կյանքի որոշակի վերելքով³:

Ստեղծված նպաստավոր պայմաններում տնտեսական կյանքի աշխուժացմանը զուգահեռ վերականգնվում էին պատերազմների ընթացքում ավերված քարավանատները, ճանապարհները, իսկ որ ամենակարևորն է՝ մեծ թափ ստացավ եկեղեցաշինությունը: Կաթողիկոսներ Մովսես Գ Տաթևացու (1629-1632) և Փիլիպոս Ա Աղբակեցու (1633-1655) հոգածությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում սկիզբ են առնում շինարարական ու նորոգչական մեծածավալ աշխատանքներ: Հիշյալ ժամանակաշրջանից սկսած Մայր Աթոռում ձևավորվում է կանոնավոր վանական միաբանություն, որի մասին վկայում են ոչ միայն մատենագրական սկզբնաղբյուրները (Առաքել Դավրիժեցի, Դավիթ Բաղիշեցի և այլք) և արխիվային փաստաթղթերը, այլև Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանոցի XVII և հետագա դարերով թվագրվող ավելի քան 400 տապանագրերը:

Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանոցը գտնվում է Մայր տաճարից մոտ 150 մ հարավ-արևելք: Տապանաքարերն ըստ տեսակի հիմնականում օրորոցաձև կամ հարթ ուղղանկյունաձև են. դրանք մեծ մասամբ արձանագիր են, որոնց ընդհանուր քննությունը հնարավորություն է ընձեռում պատկերացում կազմել Մայր Աթոռի՝ ուշմիջնադարյան վանական միաբանության, բարձրաստիճան հոգևորականների ու սպասարկող անձնակազմի մասին⁴: Ս. Էջմիածնի տնտեսական գործերը ղեկավարել են

³ ՀԺՊ, հ. IV, էջ 294, 630:

⁴ Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանոցի տապանաքարերն ու դրանց արձանագրություններն իր ավարտաձառում համարակալել ու ցացակազրել է Գևորգյան հոգևոր ճեմարանի սան Արարատ սարկավագ Գալոյանը (Տեր Ղևոնդ): Տապանագրերը բերվում են նախ բնագրային տեսքով, ապա՝ վերծանված, սակայն առանց ծանոթագրությունների ու գրչանկարների: Տե՛ս *Արարատ սար-*

միաբանները. այդ են վկայում տապանագրերում քանիցս հիշատակվող տնտես, հացապան, մառանապետ, շորապան, դոնապան, թարգման, գործակալ և այլ պաշտոնները: Միաբաններից շատերն էլ անմիջական կապ են ունեցել այս կամ այն կաթողիկոսի հետ՝ լինելով նրա խոստովանահայրը, դպիրը, աշակերտը կամ գրագիրը:

Ուշագրավն այն է, որ տվյալ ժամանակաշրջանով պայմանավորված՝ մի շարք արհեստների ու մասնագիտությունների անուններ տապանագրերում հիշատակվում են փոխառված թուրքերենից, պարսկերենից, կամ էլ վերջիններիս միջոցով՝ արաբերենից, ինչպես օրինակ՝ վեքիլ (վաքիլ), շաթիր, թուֆանգչի, բոյաչի, դալայճի, շիրաչի, դետ, քարվան բաշի և այլն:

Սույն հոդվածի բուն նպատակը Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանոցի տապանագրերում հանդիպող հիշյալ եզրույթների փաստագրումն է, դրանց՝ հայերենում իբրև փոխառություն գործածումը և, առհասարակ, Վաղարշապատի վիմագրերում այդօրինակ վկայությունների վերհանումը: Նշյալ բառերը բազմիցս վկայված են նաև ձեռագրերի հիշատակարաններում, մանր ժամանակագրություններում, ինչպես նաև կաթողիկոսական դիվանի արխիվային փաստաթղթերում⁵: Ի հավելումն մատենագրական նյութին՝ ներկայացվում են Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանոցի տապանագրերում պահպանված համանման վկայությունները՝ քննության ենթարկելով նաև հիշյալ ժամանակաշրջանում՝ Մայր Աթոռում ձևավորված վանական միաբա-

կավագ Գափոյան, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանատան արձանագրությունների վերծանություն, (ավարտաճառ), Ս. Էջմիածին, 1998:

⁵ Ս. Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվային բաժնի կաթողիկոսական դիվանում պահպանվել են աղբյուրագիտական ուշագրավ տեղեկություններ ոչ միայն Մայր Աթոռի՝ ուշմիջնադարյան միաբանության, այլև տվյալ ժամանակաշրջանում՝ հայերենում փոխառված բառերի ու բարբառային ձևերի վերաբերյալ: Տե՛ս Ս. Մաշտոցի անվան Մատենադարան, Արխիվային բաժին, կաթողիկոսական դիվան, թղթ. 2, վավերագիր 11 (այսուհետ՝ Կաթողիկոսական դիվան):

նությունն ու տնտեսությունը, լեզվական ու բարբառային փոխառությունները:

«Չկա ազգ, որ այս կամ այն լեզվից որոշ թվով փոխառություններ չունենա, և նրանց թիվը օրեցօր աճում է, քանի աճում են միջազգային հարաբերությունները»⁶, - գրում է ականավոր լեզվաբան, ակադեմիկոս Հր. Աճառյանը՝ հավելելով, որ հայերենն ունի բազմաթիվ փոխառություններ եվրոպական ու ասիական տարբեր լեզուներից, որոնք կարելի է բաժանել երկու խմբի՝ գրական և ժողովրդախոսակցական: Ըստ Աճառյանի՝ փոխառություններն ստեղծվում են ժողովուրդների՝ միմյանց հետ ունեցած հարաբերությունների արդյունքում և դա պատմական անհրաժեշտություն է: Փոխառությունների առաջացման համար խթան կարող են հանդիսանալ երկու ժողովուրդների հարևանությամբ ապրելը, միմյանց հետ տնտեսական ու քաղաքական հարաբերության մեջ լինելը, մեկը մյուսի կամ մի երրորդի տիրապետության տակ գտնվելը և այլն⁷:

Քննության ենթակա տապանագրերը թվագրվում են XVII-XIX դդ., երբ Հայաստանը գտնվում էր հիմնականում պարսկաթուրքական ազդեցությունների ներքո, ինչից չէր կարող զերծ մնալ հայերենի բառաֆոնդը, որը ձեռք էր բերել բազմաթիվ լեզվական, բարբառային փոխառություններ՝ մեծ մասամբ թուրքերենից, պարսկերենից ու արաբերենից: Ստորև ներկայացվող տապանագրերը հիշյալ փոխառությունների նաև վիմագրական վկայություններն են:

Վաղագույնը 1675 թ. կրող օրորոցաձև տապանաքարի երկտող վիմագրում «վաքիլ» տերմինի հիշատակումն է.

ԱՅՍԷՏԱՊԱՆՈԼՈՒՄԱՆԵՑ
ԻՍԿ ԳՍԻՆՂԻՆ ՈՒՃԻԻԴ:

ԱՅՍԷՏԱՊԱՆՈԼՈՒՄԱՆԵՑ
ՎԱՔԻԼ ՍԱՐԳՍԻՆ, ԹՎԻՆ ՌՃԻԴ (1675):

⁶ Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի. համեմատությամբ 562 լեզուների, Եր., 1955, էջ 373:

⁷ Նույն տեղում, էջ 368-369:

«Վաքիլ»-ը արաբերենից փոխառյալ բառ է, որ նշանակում է վերակացու, հավատարմատար, կառավարիչ⁸: Հայերենում՝ արաբերեն փոխառությունների առկայությունն ուշ միջնադարում բացատրվում է պարսկաարաբական հարաբերություններով: Մուսուլմանություն ընդունելով՝ պարսիկները ոչնչացրին ոչ միայն ասորուհանները, այլև իրենց գիրն ու գրականությունը: Նրանք ընդունեցին արաբական տառերը, բազմաթիվ փոխառություններ արաբական լեզվից, որն այդ ժամանակ «մահմեդական Արևելքի կուլտուրական լեզուն էր»⁹: Համաձայն Աճառյանի բնորոշման՝ արաբերեն փոխառությունների փոքր մասն է VII կամ VIII դարից, դրանց մի մասը Ասորիքի արաբների միջոցով մտել է կիլիկյան հայերենի մեջ, իսկ առավել մեծ մասը՝ **Պարսկաստանի և պարսիկների միջոցով արևելյան հայերենի մեջ**¹⁰ (ընդգծումը մերն է – Ա. Հ.): Այսինքն՝ XVII-XVIII դդ. սկզբնաղբյուրներում վկայված արաբերեն փոխառությունների զգալի մասը հայերեն է ներթափանցել պարսկերենի միջոցով:

Գերմանացի հայագետ Հ. Հյուբշմանի կարծիքով՝ հայերենում արաբերեն փոխառություններն առավել ընդգծված են XII դ. հետո: Ըստ նրա՝ դրանցից շատերը «պատահման գործածուած, գրական լեզուին յատուկ բառերն են, որ ժողովրդեան լեզուին մեջ ամենեւին մտած չեն»¹¹: Հայերենում արաբերեն փոխառությունների առկայությունը Հյուբշմանը մեկնաբանում է այսպես. «կա՛մ այն բառն կամ այն նախադասութիւնն՝ ուր նոյն բառը կը գտնուի, յետնամուտ յաւելուած է..., կա՛մ այն գրութիւնը հետնագոյն ժամանակի է..., կա՛մ նոյն բառն ուղղակի փոխառեալ չէ, այլ ուրիշ

⁸ Ռ. Մ. Ղազարյան, Հ. Մ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Եր., 2009, էջ 735 (այսուհետ՝ Միջին հայերենի բառարան); տե՛ս նաև Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. 2, Եր., 2010, էջ 40, 63:

⁹ Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Եր., 1951, էջ 171, 186:

¹⁰ Նույն տեղում, էջ 186

¹¹ Ուսումնասիրությունը հայերենի փոխառեալ բառից. Հ. Հիւպշման, Մեմական փոխառեալ բառեր հին հայերենի մեջ, թարգմանեց Հ. Յակովլբոս վ. Տաշեան, Վիեննա, 1894, էջ 50:

ազգաց միջնորդութեամբ Հայոց հասած...»¹²: Ակնհայտ է, որ հայերենի պարագայում փոխառությունն արվել է պարսկերենի միջոցով՝ պայմանավորված տվյալ ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանի՝ Պարսկաստանի տիրապետության տակ գտնվելու հանգամանքով:

Մինչ «վաքիլ» եզրույթի բուն նշանակությանն անցնելը, բերենք միաբանական գերեզմանոցի տապանագրերում նաև «վեքիլ» նույնիմաստ տերմինի վկայությամբ վիմագրերը: Դրանցից մեկը վկայված է ուղղանկյուն օրորոցաձև տապանաքարի հարավային և արևմտյան նիստերի եռատող վիմագրում.

ԱՅՍԵՏԴԱՎԷԲԻԼՍԻՄՈՆԻՆԻ ՀՐԴՏ
ՌԹԵՏՆԵՎԻՍԶԱՆԻ Ի ԹՎԵՆՌԻՃ
ԱՅՍԵՏԴԱՎԷԲԻԼՍԻՄՈՆԻՆԻ
ԼԵՐԳ ՀՆԻԴԻՔԶՈՂՈՐՄԻՆ

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ/ ՎԷՔԻԼ ՍԻՄՈՆԻՆ/ ԱՅՍ Է: ԱՅՍ Է ՏԼԱՂԱՂԱՆ
ՎԷՔԻԼ ՍԻՄՈՆԻՆ Ի ՀԼԱՅԼԸԱՂԵՏ/ՈՒԹԵԼԱՆ՝ ՏՆ
ԵՂԻԱԶԱՐՈՒ, Ի ԹՎԻՆ ՌՃ/ԼԷ (1688),
ՈՐՔ ՀԼԱՆԸԴԻՊԻԼՔԶՈՂՈՐՄԻՆ:

Տապանագրում հիշատակված է Եղիազար Ա Այնթապցի (1681-1691) կաթողիկոսի օրոք վեքիլության պաշտոնը ստանձնած Սիմոնը: Բառիս «վեքիլ» տարբերակը փոխառված է և՛ թուրքերենից, որ նշանակում է փոխանորդ, ներկայացուցիչ, լիազոր¹³, և՛ արաբերենից¹⁴: Այն գործածական է եղել Պոլսի, Վանի, Ղարաբաղի բարբառներում: Հր. Աճառյանի համոզմամբ՝ թուրքերեն բազմաթիվ փոխառություններ ծագում են արաբերենից ու պարսկերենից: Արաբերեն համարվող որևէ մի բառ կարող է հայերենին

¹² Նույն տեղում, էջ 51-52:

¹³ Մանր ժամանակագրություններ, հ. II, կազմեց՝ Վ. Հակոբյան, Եր., 1956, էջ 612:

¹⁴ Հր. Աճառյան, Թուրքերեն փոխառեալ բառեր հայերենի մեջ, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Գ, Մոսկուա-Վաղարշապատ, 1902, էջ 327; տե՛ս նաև Վ. Գրիգորյան, Էջմիածնի վանական միաբանությունների ցուցակներ (1801 թ.), «Բանբեր Մատենադարանի», 1984, № 14, էջ 239:

տոնները հանձնվել են և՛ հոգևորականներին, և՛ աշխարհականներին անխտիր¹⁷:

«Վեքիլ» պաշտոնը բազմիցս հիշատակվում է նաև մատենագրության մեջ. Մաշտոցյան Մատենադարանի՝ 1634 թ. գրված թիվ 2428 «Աւետարան» ձեռագրի պատվիրատու-ստացող է հիշվում մահտեսի Տոնապետը. «...որ հաւատարմութեամբ և սրտացաւութեամբ ծառայէ Ս. Յակոբայ վանիցն՝ երբեմն թերծիման և երբեմն վեքիլ և աթոռակալ գոլով...»¹⁸: «Թերծիման»-ը արաբերեն փոխառությունն է, որ նշանակում է թարգման¹⁹: «Զամբո»-ի՝ մաղափության մասին գլխում, երկրի վեքիլ և դիվանի քարտուղար է հիշվում ոմն «պիղծ» Միրզա Շեֆի, որը Սուրբ Աթոռից «...խնդրեց գաղտնի հարյուր թուման՝ պատճառ բռնելով իր հաճի գնալը»²⁰:

Թուրքերեն փոխառությունների վերաբերյալ առաջին լուրջ ուսումնասիրությունը պատկանում է Հր. Աճառյանին: Ընտրելով Պոլսո բարբառը՝ լեզվաբանը հավաքել է բոլոր այն բառերը, որ Պոլսի ժողովրդական բարբառը փոխ է առել թուրքերենից: Նա նշում է, որ թուրքերենի անվան տակ պետք է հասկանալ նաև օսմաներենը, որը կազմված է թուրքերենի, պարսկերենի ու արաբերենի խառնուրդից: Փոխառված բառերը հեղինակը համեմատության մեջ է դրել Վանի, Ղարաբաղի և Նոր Նախիջևանի բարբառներում գործածված ձևերի հետ²¹:

Հայերենում թուրքերեն փոխառություններին Հր. Աճառյանն անդրադարձել է նաև իր հետագա աշխատություններում: Այդօրինակ փոխառությունների պատճառը նա համարում է պարսկաթուրքական և օսմանական երկարատև պատերազմները, երբ հայերը, կամա թե ակամա, փոխադարձ հարաբերությունների մեջ էին թուրքերի հետ: Սակայն, եթե պարսկերենն ու արաբերե-

¹⁷ *Խ. Կանայան*, Էջմիածնի նվիրակությունը ԺՀ դարում, «Էջմիածին», 1977, Գ, էջ 30:

¹⁸ Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Բ, կազմեցին՝ *Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան*, Եր., 1978, էջ 559:

¹⁹ Նույն տեղում, էջ 876:

²⁰ *Միսեոն կաթողիկոս Երևանցի*, Զամբո, Եր., 2003, էջ 206-207:

²¹ *Հր. Աճառյան*, Թուրքերեն փոխառեալ բառեր հայերենի մեջ, էջ 12-14:

նը ազդել են հայերենի գրական լեզվի վրա, ապա թուրքերենը՝ միայն բարբառների, որը մուտք չի գործել գրական լեզու, այսինքն՝ դրանք առաջ են եկել բուն ժողովրդական թուրքերենից և բերնեբերան խոսակցության միջոցով²²:

Թուրքերենից և պարսկերենից է փոխառված գերեզմանոցի հարթ ուղղանկյունաձև տապանաքարերից երկուսի վիմագրերում հանդիպող «թուֆանգչի» եզրույթը.

ԱՅՍԷ ՏԱՊԱՆ ՍԱ
ՀԱԿԻ ՈՐԴԻ ԲՆԳԱ
ՆԳՉԻ ՍԱՆԴՐՈՍԻՆ
ՈՐՀԱՆԳԵԱՒ ԻՌՄԺ
ԲՆԻՆ ԵՄԱՏԻ
ԻՂԻՆ



ԱՅՍԷ ՏԱՊԱՆ ԲՆ
ԳԱՆԳՉԻ ՄԵԺԱՆԻ
ՄԻՆ ՈՐՀԱՆԳԵԱՒ
ԻՌՄԺԳ ԲՆԻՆ

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՍԱ/ՀԱԿԻ ՈՐԴԻ
ԹՈՒՖԱ/ՆԳՉԻ ՍԱՆԴՐՈՍԻՆ,/
ՈՐ ՀԱՆԳԵԱՒ Ի ՌՄԺ (1761)/
ԹՈՒՐԻՆ ԵՒ ՄԱՐՏԻ/ ԻԴ (24) ԻՆ:

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԹՈՒ/ՖԱՆԳՉԻ
ՄԵԺԱՆԻ/ՄԻՆ, ՈՐ ՀԱՆԳԵԱՒ/
Ի ՌՄԺԳ (1764) ԹՈՒՐԻՆ:

Տապանագրերում վկայված «թուֆանգչի» տերմինը բնորոշում է ննջեցյալների ունեցած մասնագիտությունը, այն է՝ հրացանակիր կամ հրացանագործ: Վանի և Ղարաբաղի բարբառներում Հր. Աճառյանը հիշյալ բառը գործածված է տեսնում «թվանքչի», «թվեանգչի» ձևերով²³: Ս. Էջմիածնի միաբանության՝ 1801 թ. ցուցակներում վանքի տնտեսությամբ զբաղվողների ցանկում հիշատակվում է նաև անվանապես 23 թուֆանգչի: Վանքն ունեցել է սահմանափակ թվով հրացանակիրներ, ովքեր պաշտպանում էին վանքը, ինչպես նաև ուղեկցում տարբեր վայրեր մեկնող բարձրաստիճան հոգևորականներին²⁴: Քննվող բառին համանուն են մատենագրության մեջ հանդիպող «թուֆանկ», «թուանգչի» եզրույթները, որոնք փոխառված են թուրքերենից ու պարսկե-

²² Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, II մաս, էջ 258, 270:

²³ Հր. Աճառյան, Թուրքերենէ փոխառեալ բառեր հայերէնի մէջ, էջ 137:

²⁴ Վ. Գրիգորյան, Էջմիածնի վանական միաբանությունների ցուցակներ (1801 թ.), էջ 231, 236:

րենից և ստուգաբանվում են հրացան, հրացանակիր, զինագործ իմաստներով²⁵:

Փոխառյալ բառ է նաև տապանագրերում քանիցս հանդիպող «շաթիր» եզրույթը, որոնցից միայն մեկն ենք վկայակոչում: Այն օրորոցաձև տապանաքարի արևելյան նիստին է, 5 տող.



ԱՅՍ Է ՏԱՊԱՆԱԿ/ ՏՐ՝ ՕՎԱՆԷՍԻՆ,/ ՈՐ Է ՈՐԴԻ Շ/ԱԹԻՐ ՎԱՐԹ/ԱՆԻՆ,
ԹՎԻՆ՝ ՌՃՏԱ (1702):

Ննջեցյալը տեր Հովհաննեսն է (Օվանես), որը շաթիր Վարդանի որդին է: «Շաթիր» բառը փոխառված է ինչպես արաբերենից²⁶, այնպես էլ թուրքերենից ու պարսկերենից²⁷ և նշանակում է հետիոտն սուրհանդակ կամ կաթողիկոսի անձնապահապետ, որը պաշտոնական և հանդիսավոր երթի ժամանակ գնում է նրա առջևից՝ ձեռքին գավազան բռնած. կատարում է նաև կաթողիկոսի հանձնարարությունները²⁸: Կաթողիկոսական դիվանի «Միաբանից դաֆթար»-ում քանիցս հիշատակվում է «շաթիր» պաշտոնը. օրինակ՝ շաթիր Յոհանը, որին տրվել է մեկ շալ կապայ, գոտի, շապիկ, ոտաց շոր և այլ կենցաղային պարագաներ²⁹:

Թուրքերեն փոխառություններ են տապանագրերում վկայված բոյաչի, դալայճի, քարվան բաշի, յուզբաշի մասնագիտություններ և պաշտոններ բնորոշող բառերը:

Գերեզմանոցի օրորոցաձև տապանաքարերից մեկի արևմտյան նիստի 9 տողանի տապանագրում ննջեցյալը հիշատակվում է իբրև դալայճի.

²⁵ Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Ա, կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Եր., 1974, էջ 761; Մանր ժամանակագրություններ, հ. II, էջ 606:

²⁶ Մտ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, հ. III, Եր., 1944, էջ 491:

²⁷ Միջին հայերենի բառարան, էջ 582:

²⁸ Հայերեն բացատրական բառարան, հ. III, էջ 491; տես նաև Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Դ, Եր., 2007, էջ 182:


²⁹ Կաթողիկոսական դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 39:



ԱԾ՝ ՈՂՈՐՄԻ ԱՐ/ԶՐՈՒՄՅԻ
 ՂԱԼ/ԱՅՃԻ/
 ԶԱՏԱՅ/ ՍՏԵՓԱՆՆՈՍ
 ԾԵ/ՐՈՒՆԱԶԱՐԴ
 ՎԼԱՐ/ՂԱՂԵՍԻՆ, ՈՐ
 ՀԱՆԳԵԱԻ/ Ի ՔՍ
 ՌՃԶԹ (1740) ԹՎԻՆ/ ՀՈԳԻՈՅՆ:

Էրզրումցի (Արզրումցի) Ստեփաննոս վարդապետը կյանքից հեռացել է ծեր հասակում: Նա դալայճի (խալայճի, դալաճի, դադանճի) է եղել, այսինքն՝ ամաններ կլայեկող, անագող արհեստավոր: Վանի բարբառում հիշյալ եզրույթը գործածվել է պարզապես «կլայեկջի» ձևով³⁰:

Ուղղանկյուն օրորոցաձև տապանաքարերից մեկի հարավային նիստի եռատող վիմագրում հիշատակվում է Մկրտիչ վարդապետ քարվան բաշին կամ քարավանապետը.



ԱԾ՝ ՈՂՈՐՄԻ ՄԿՐՏԻՉ ՎԼԱՐ/ՂԱՂԵՍԻՆ, ՈՐ Է ՏԵՂԵԱԻ
 ՂԱՓԱՆԵՅԻ/ ՄԲՅ ԳԱՀԻՍ ՔԱՐՎԱՆ ԲԱՇԻ, ՎԱԽՃԱՆՆ ԵՂԵԻ
 ՅԱՅՍՍ ԹՎԻ/ ՌՃՂ (1741) ԵՂԻ ԵԻ
 ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄՍՈՅ ՄԷԿԻՆ:

Քարվան բաշին (քելվան՝ կարավան + բաշի՝ պետ, գլխավոր) թուրքերեն, նաև պարսկերեն փոխառություն է³¹: Քարավան-

³⁰ Հր. Աճառյան, Թուրքերենէ փոխառեալ բառեր հայերէնի մէջ, էջ 157; տե՛ս նաև Միջին հայերենի բառարան, էջ 452:

³¹ Հր. Աճառյան, Թուրքերենէ փոխառեալ բառեր հայերէնի մէջ, էջ 359; տե՛ս նաև Վ. Գրիգորյան, Էջմիածնի վանական միաբանությունների ցուցակներ (1801 թ.), էջ 239:

ները ուղևորների խմբեր էին, որոնք գրաստներով ճանապարհ էին գնում: Դրանցով էին պայմանավորված միջնադարում բավականին տարածված քարավանատների (քարվանսարա, հյուրանոց-հյուրատուն, պանդոկ) գոյությունը, որոնք հիմնականում կառուցվում էին առևտրային տարանցիկ ճանապարհներին (Արուճ, Սելիմ և այլն)³²: Ենթադրելի է, որ XVIII դ. Մայրավանքի բարեկարգման, նորոգչական աշխատանքներին զուգահեռ աճել է այցելու-ուխտավորների թիվը, և վանքը պետք է հոգար նրանց գիշերելու, սնվելու և այլևայլ կարիքները: Ըստ էության, Ղազար Ա Զահեկեցի (1737-1751) կաթողիկոսը Մայր տաճարի հարևանությամբ՝ 1750 թ. «Ղազարապատ» հյուրանոցը կառուցելիս հենց հիշյալ հանգամանքն է նկատի ունեցել: Մկրտիչ վարդապետի՝ տապանագրում Սուրբ Աթոռի քարվան բաշի հիշատակումը կարելի է պայմանավորել հենց տվյալ մոտեցմամբ, այսինքն՝ նա ստանձնել է Մայր Աթոռի ուխտավոր խմբերի առաջնորդի, վերատեսչի պաշտոնը: Կաթողիկոսական դիվանի «Միաբանից դաֆթար»-ում բազմիցս հիշատակվում է նաև «քարվան բաշի» պաշտոնը. օրինակ՝ Առաքելը, որին տրվել է «Ա (1) գթակ հասարակ աբա, արխալ[ու]դ, շապիկ և ոտաց շոր, ի նոյ[եմբերի] Ա (1)»³³:

Բոյաչի (պոյաճի) եզրույթը հիշատակված է գերեզմանոցի փոքր օրորոցաձև տապանաքարերից մեկի հարավային նիստի քառատող վիմագրում.

ԱՅՍԷ ՏԱՊԱՆՆ ՆԱԽՉԵԻ
 ԿԱՆՑԻ ԲՕԵԱՂԻ ՅԱՐՈՒԻ
 ԻՌՈՒՄ ԽԻ ՅՈՎՍԵՓՅԱԻ
 ԻՒ ՌՄԵՒ Թ.Ք ՅՈՒԼԵՅԱԻ

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ
 ՆԱԽՉԵԻ/ԱՆՑԻ ԲՕԵԱՂԻ
 ՅԱՐՈՒԻ/ԹԻԲԼԻ ՈՐԴԻ
 ՅՈՎՍԵՓԻ/Մ
 Ի ՌՄԿԴ (1815) ԹՎԻՆ,
 ՅՈՒԼԻՍԻՒՆ Ե (5) ԻՆ:

³² Միջնադարյան Հայաստանի քարավանատների մասին մանրամասն տե՛ս Վ. Հարությունյան, Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները, Եր., 1960:

³³ Կաթողիկոսական դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 78:

Հովսեփը Հարությունի որդին է: Վերջինս մասնագիտությամբ բոյաչի է: Հր. Աճառյանն այս բառը փոխառված է համարում թուրքերենից, որ նշանակում է ներկարար³⁴ պոյա (բոյա) – ներկ բառից որը, թերևս, հագուստի կամ կտորեղենի ներկման, գունավորման իմաստով է կիրառվել: Վանի և Նոր Նախիջևանի բարբառներում հիշյալ բառը գործածվում է «պոյաճի», իսկ Ղարաբաղի բարբառում՝ «բոյախչի» ձևերով³⁵:

«Բոյաչի» եզրույթը «բոյախչի» ձևով վկայված է մեկ այլ օրոքոցաձև տապանաքարի քառատող վիմագրում.

✠ԴԱՆՁԱՆՆ ԱՐՄՆՈՅ՝ ՈՐԴԻՅ ՅՕՅԱՆՆՈՒ✠
 ✠Ե ԵՆՍՅԻ՝ ՆԱԽԻՋԵԱՆ ՅԻՅ✠
 ✠ԻԻՉՂԱՇԻ ԽԱՁԱՏՐՈՅՆ՝ ԵՂԵՐԸ ԼԵՐԵՆՈՉ✠
 ✠ԲԱՐԵՍԵՐ ԲԱՐՈՒԲ՝ ԱՐՆՆ ԲՈՒՆԻՅ՝

ԳԱՆՁԱՐԱՆ ՄԱՐՄՆՈՅ ՈՐԴԻՅ ՅՕՅԱՆՆՈՒ/ Է ԵՂԻԱՅԻ
 ՆԱԽԻՋԵԻԱՆՅԻՅԻՅ/ ԻԻՉՂԱՇԻ ԽԱՁԱՏՐՈՅՆ, ԵՂԲՈՂ
 [ՍԻՐԵԼԻՅՈՅ]/ ԲԱՐԵՍԵՐ ԲԱՐՈՒԲ ԱՐՆ
 ԲՈՅԱԽՉԻՅՈՅ]:

Տապանագրի վերջնամասը եղծված է, սակայն, տառամնացորդներից պարզվում է, որ այստեղ ևս ննջեցյալը՝ Եղիա Նախիջևանցին, մասնագիտությամբ բոյաչի (բոյախչի), այսինքն՝ ներկարար է եղել: Համաձայն տապանագրի՝ Եղիան Խաչատուր յուզբաշու եղբայրն է: «Իւզպաշի»-ն ևս թուրքերեն փոխառություն է, որ նշանակում է հարյուրապետ³⁶: «Ջամբո»-ում հիշատակվում է ոմն յուզբաշի, որը եղել է լուսարար, Նահապետ Ա Եդեսացի (1691-1705) կաթողիկոսի փոխանորդն ու գործակալը: Վաղարշա-

³⁴ Հր. Աճառյան, Թուրքերենէ փոխառեալ բառեր հայերէնի մէջ, էջ 300; տե՛ս նաև Եղիա Մուշեղյան Գարնեցի, Թուրքերեն-հայերեն բառարան, աշխատասիրությամբ՝ Բ. Լ. Չուգասզյանի, Եր., 1986, էջ 74; Միջին հայերենի բառարան, էջ 665:

³⁵ Հր. Աճառյան, Թուրքերենէ փոխառեալ բառեր հայերէնի մէջ, էջ 300:

³⁶ Հր. Աճառյան, Թուրքերենէ փոխառեալ բառեր հայերէնի մէջ, էջ 250; տե՛ս նաև Մանր ժամանակագրություններ, հ. II, էջ 610:

պատ գյուղում նա ունեցել է մի ջրաղաց, որը կոչել են Յուզբա-
շոնց³⁷:

Տապանագրերում քանիցս հանդիպում է նաև դէտ, դիտ (դի-
տորդ, տեսուչ) եզրույթը՝ փոխառված պահլավերեն det, պարս-
կերեն՝ didan - տեսանել բառերից³⁸: Վկայություններից մեկը օրո-
րոցաձև տապանաքարի հարավային նիստի 7 տողանի վիմագ-
րում է.

ՎՏՐՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՐՀԻՆ ՊԱՆԾԱ ԼԻ:Ի
 -Ի Ի ԳԵԼՋԵՆ ՄԾՆՆԻՈՅ ՅՈՐՈՄ ԴԵՏԼԻԻ:Ի
 -Ի ԵԼԵԱԿԱՐԱՊԵՏ ՄԲ ԵՋՄԻԱՆ ԿԻ:Ի
 -Ի ԵՄԵՐԹԻ ՆՈՒՐԱԿԻ ԿԱՆՈՅ ԿԱՂԱ ԿԻ:Ի
 -Ի ԿԵԿԵՑԱԿ ԵՄՄՆՈՎԱՅՍՄՍԱՊԱ ԿԻ:Ի
 -Ի ՅՈՒՍԱՅԵԱԿ ՀՈԳԻՈՎ ԱՌ ՏՐՆ ԱԵ ԿԻ:Ի
 -Ի ՅԱԿ ՏՆԼ 796 Ե ԱՐՏԻ 29 :Ի

ՏՐՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՐՀԻՆ ՊԱՆԾԱԼԻ/ Ի ԳԵԼՋԵՆ ՄՕՂՆԻՈՅ,
 ՅՈՐՈՒՄ ԴԵՏ ԼԻՆԻ/ ԵՂԵԱԼ ՎԱՐԺԱՊԵՏ ՄԲ ԷՋՄԻԱԾՆԻ/ ԵԻ
 ՄԵՐԹ ՆՈՒՐԱԿԻ ԿԱՐՆՈՅ ՔԱՂԱՔԻ/
 ԿԼՔԵՅԱԿ ՄԱՐՄՆՈՎ ՅԱՅՍՍ ՏԱՊԱՆԻ/
 ՅՈՒՍԱՅԵԱԿ ՀՈԳԻՈՎ ԱՌ ՏՐՆ ԱՄԵՆԻ/
 ՅԱՄԻ 1796 ԵԻ ՄԱՐՏԻ 29:

Բավականին խոսուն հիշյալ չափածո տապանագրում վկայ-
ված են տեր Նիկողայոսի զբաղեցրած պաշտոնները: Նա նախ հի-
շատակվում է իբրև դէտ, այսինքն՝ դիտորդ, տեսուչ, վերահսկիչ
Մուղնի գյուղում, ապա Ս. Էջմիածնի վարժապետ, հավանաբար,
Սիմեոն Երևանցու կառուցած դպրատանը, և Կարնո քաղաքի
նվիրակ:

Հայերենում պարսկերեն փոխառություններն ըստ Հր. Աճառ-
յանի՝ հայ-պարսկական երկարատև փոխհարաբերությունների
արդյունքն են: Այնքան մեծ է եղել հիշյալ երկու լեզուների նմա-

³⁷ Միմեն կաթողիկոս Երևանցի, Ջամբո, էջ 256:

³⁸ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Եր., 1971, էջ 661-662;
 տե՛ս նաև Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Բ, էջ 875:

նությունը, որ լեզվաբանության մեջ հայերենը երբեմն իրանական լեզու է համարվել (Լազարդ, Մյուլլեր): Հյուբշմանն է եղել առաջինը, որը ժխտել է այդ թուր կարծիքը և ապացուցել, որ հայերենը իրանական լեզվաընտանիքի մաս չէ, այլ առանձին ու անկախ մի ճյուղ, ինչպես հունարենը, լատիներենը և այլն³⁹: Թվով 232 բուն հայերեն բառերի և նրանց հնդեվրոպական ազգակիցների ստուգաբանման հիմամբ Հյուբշմանի կազմած հնչյունաբանությունն ու ձևաբանությունը փաստել են, որ հայերենը «...պարսկերենից փոխառյալ ու սխալմամբ բուն հայերեն համարված բառերի հիման վրա միայն հանիրավի այսքան ժամանակ դասվել է իրանական լեզուների թվին»⁴⁰:

Ուշ շրջանի պարսկերեն փոխառությունները, որոնց Հր. Աճառյանն անվանում է հետին շրջանի պարսկերեն կամ նորապարսիկ, տարբեր են իրանական փոխառություններից, որոնք ավելի շատ պահլավերեն են: Նորապարսիկ բառերի մի մասն էլ լեզվաբանը կեղծ է համարում՝ կազմված հայ բանասերների ձեռքով, որոնք ստեղծվել են նոր պարսկերենից, սակայն պահլավերենի նմանությամբ⁴¹:

Պարսկերեն փոխառություններից նշելի է նաև «պէմուրագ» (պէմուրատ) եզրույթը, որը վկայված է օրորոցաձև տապանաքարերից մեկի արևմտյան նիստի 7 տողանի վիմագրում.



ԱՅՍ Է Տ/ԱՊԱՆ ՍՐԱՐ/ՈՒԹԻ
ՈՐԴ/Ի ՊԷՍՈՒՐԱԳ/ ՍԷՖՈՒՆ,
Թ/ՎԻՆ ՌՃՁԳ (1734)/ ԻՆ:

³⁹ Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս I, Եր., 1940, էջ 223-225:

⁴⁰ Հ. Հյուբշման, Հայերենի քերականություն, առաջին մաս, Հայերենի ստուգաբանությունը, Եր., 2003, էջ XIX:

⁴¹ Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս II, էջ 187-188:

Ննջեցյալն ըստ ամենայնի Մեֆին է, իսկ «պէմուրագ»-ը, թերևս, նույն պէմուրատն է՝ պարսկերենից փոխառյալ bi-morad, որ բացատրվում է նպատակին չհասած, իդձը չկատարված, անմուրագ⁴²: Այսինքն՝ Մեֆին կյանքից հեռացել է անմուրագ, գուցե և՛ երիտասարդ հասակում:

Նկատենք, որ հայերենում փոխառված վերոհիշյալ բառերն այսօր արդեն անգործածական են դարձել, սակայն, դրանցից շատերը պահպանվել են ազգանուններում, ինչպես օրինակ՝ Բոյաջյան, Բոյախյան, Յուզբաշյան, Ղեշյան (գուցե դալայճի ձևից), Շաթիրյան և այլն:

Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանոցի տապանագրերում կարելի է հանդիպել արհեստներ կամ մասնագիտություններ բնորոշող նմանատիպ տերմինների, ինչպես օրինակ՝ շիրաչի (թուրք. < գինեգործ)⁴³, սհաթսագ (թուրք., պարս. < ժամագործ, /Ղարաբաղի բարբառն է/)⁴⁴, խալիֆայ (արաբ. < ամիրա, վարժապետ)⁴⁵, ուստա (թուրք. պարս. < վարպետ, քարահատ)⁴⁶, աշչի (թուրք., պարս. < խոհարար)⁴⁷, դուրկար (թուրք., պարս. < հյուսն, ատաղձագործ)⁴⁸ և այլն: Այդուհանդերձ, նշվածներն էլ բավական են փաստագրելու՝ հայերենում XVII-XIX դդ. ներմուծված փոխառյալ բառերը և որ էականն է՝ դրանց արտացոլումը վիմական արձանագրություններում: Մատենագիր ու վիմագիր սկզբնաղբյուրներում վկայված փոխառյալ բառերը մեծապես կարևորվում են լեզվաբանության, հայերենի ստուգաբանության ու բարբառագիտության պատմության ուսումնասիրման տեսանկյունից:

⁴² Միջին հայերենի բառարան, էջ 653:

⁴³ **Վ. Գրիգորյան**, Էջմիածնի վանական միաբանությունների ցուցակներ (1801 թ.), էջ 239:

⁴⁴ **Հր. Աճառյան**, Թուրքերեն փոխառեալ բառեր հայերենի մեջ, էջ 302; տե՛ս նաև Մանր ժամանակագրություններ, հ. II, էջ 612:

⁴⁵ Մանր ժամանակագրություններ, հ. II, էջ 607; տե՛ս նաև Միջին հայերենի բառարան, էջ 301:

⁴⁶ **Հր. Աճառյան**, Թուրքերեն փոխառեալ բառեր հայերենի մեջ, էջ 264; տե՛ս նաև Միջին հայերենի բառարան, էջ 621:

⁴⁷ **Հր. Աճառյան**, Թուրքերեն փոխառեալ բառեր հայերենի մեջ, էջ 72-73:

⁴⁸ Միջին հայերենի բառարան, էջ 175:

Арсен Арутюнян – *Заемствованные слова в эпитафиях монастырского кладбища Св. Эчмиадзина* – В эпитафиях монастырского кладбища Св. Эчмиадзина XVII-XIX вв. часто встречаются слова характеризующие ремесла и профессии, которые заимствованы из турецкого, персидского или арабского. Наличие этих слов в эпиграфических и рукописных первоисточниках, а также в архивных документах обусловлено турецко-персидскими войнами (XVI-XVII вв.), когда армянский народ имел взаимоотношения с турками и персами. Согласно эпитафиям, хозяйственные и административные дела Св. Эчмиадзина находились под руководством конгрегации. Об этом также свидетельствуют рассмотренные заимствованные слова, такие как: векил, бойачи, галайчи, карван баши и т. д. Фиксация этих заимствований также важно с точки зрения изучения эпиграфического наследия города Вагаршапата.

Arsen Harutyunyan – *The Loan words in the epitaphs of monastic cemetery of St. Echmiadzin*. – In the epitaphs of the monastic cemetery of St. Echmiadzin (XVII-XIX cc.) the words characterizing crafts and professions are often met, which are borrowed from Turkish, Persian and Arabic. The presense of these words in epigraphical and manuscript sources as well as archival documents is conditioned by Turkish-Persian wars (XVI-XVII cc.), when Armenians had interrelations with Turks and Persians. Accortind to epitaphs, the household and administrative activities of St. Echmiadzin were supervised by congregation. That is also witnessed by the studied borrowed words: vekil, boyachi, ghalaychi, qarvan bashi etc. The record of these borrowings is also important from the viewpoint of study of the epigraphical heritage of Vagharshapat.

Բանալի բառեր: վանք, բարբառ, տապանագիր, արհեստ, գերեզմանոց, փոխառություն, ձեռագիր:

Ключевые слова: монастырь, диалект, эпитафия, ремесло, кладбище, заимствование, рукопись.

Key words: monastery, dialect, epitaph, craft, cemetery, loan, manuscript.

**ՄԱԿԱՐԱՎԱՆՔԻ ՎԻՄԱԳՐԵՐԻ
ԱՆՁՆԱՆՈՒՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ
ԾԱԳՄԱՆ ՀԱՐՅԸ**

ՎԼԱԴԻՄԻՐ ՊՈՂՈՍՅԱՆ

(Երևանի պետական համալսարան)

Անձնանունները պատմական նշանակություն ունեցող բառային են, որոնցից յուրաքանչյուրը ծագել է որոշակի ժամանակահատվածում՝ տվյալ ժողովրդի կոնկրետ հասարակական միջավայրում¹: Բացի այս, թե՛ անձնանունները և թե՛ տեղանունները, լեզվի բառապաշարի կարևոր շերտերից լինելով, տվյալ ժողովրդի լեզվում էթնոլեզվական դեռևս չճշտված բազում իրակությունների բացահայտման խթան կարող են հանդիսանալ:

«Մարդկային հասարակության մեջ չկա թեկուզ ամենավայրի մի ցեղ, որի անդամները անձնանուն չունեն: Անձնանունը համաշխարհային երևույթ է: Անձնանունն այն գլխավոր միջոցներից մեկն է, որով համայնքը կամ հասարակությունը զանազանում է իր անդամներից այս կամ այն անհատին մյուս անդամներից: Ամեն հատուկ անուն մի բառ է, նշանակությամբ օժտված հասարակ անուն», -գրում է Հր. Աճառյանը²: Անդրադառնալով անվանակոչությանը՝ Հ. Բարսեղյանը գրում է. «Ամբողջ պայմանականությամբ հանդերձ՝ անձերի և առարկաների անվանակոչությունը, սրանց հատուկ անուններ դնելը ունենում է նաև տրամաբանական հիմուքն և որոշ դրդապատճառներ»³:

Անդրադառնալով Մակարավանքի արձանագրություններին՝ փորձել ենք քննել հիշատակվող անձնանունները, դրանք դիտարկել տարաժամանակյա և համաժամանակյա հարթություններում, անունը դարձնել ելակետ՝ պատմա-քաղաքական, հասա-

¹ *Никонов А.В.*, Имя и общество, М., 1974, с. 3.

² *Աճառյան Հր.*, Հայոց անձնանունների բառարան, հատոր 5, Երևան, 1962, էջ 11:

³ *Բարսեղյան Հ.*, Հատուկ անուններ, Երևան, 1964, էջ 28:

րակական-մշակութային որոշ հիմնախնդիրներին գիտական այլընտրանքային մոտեցում ցուցաբերելու համար:

Մակարավանքի վիմագիր արձանագրություններում հիշատակվում են շուրջ 80 անձնանուններ, որոնց մեծամասնությունը արական պատկանելիություն ունի: Հոդվածի շրջանակներում նպատակահարմար են գտել ուսումնասիրել դրանցից քառասունը, որոնք, ըստ էության, չունեն գործածության լայն դաշտ և որոշ պարագաներում նաև եզակի են և այլուստ գործածություն չունեն:

Մակարավանքի անձնանունները խմբերով դասակարգելու և ենթարկված ազդեցությունները ներկայացնելու համար փորձենք դրանք բաժանել խմբերի:

Անունները ծագումով լինում են բնիկ և փոխառյալ: Եթե համեմատենք հասարակ և հատուկ անունների փոխառության ընթացակարգը, ապա կտեսնենք, որ վերջիններս ավելի հեշտ ու արագ են անցնում մի լեզվից մյուսին, քան հասարակները, թեև «տեղանունները շատ ավելի կայուն են, հեշտությամբ և առանց անհրաժեշտության չեն փոխվում, մինչդեռ անձնանունների գործածությունը մեծ չափով կապված է քաղաքական, մշակութային, կրոնական գործոնների հետ. այստեղ մեծ դեր են խաղում տվյալ ժամանակի ըմբռնումները, մոդան, անձնական հակումները»⁴: Մի լեզվից մյուսին անցնելիս փոխառյալ անունները ձգտում են գտնել իրենց տեղը փոխառու լեզվի համակարգում՝ ձեռք բերելով առավել հարմար հնչյունական և ուղղագրական պատկեր: Սա է պատճառը, որ ցանկացած լեզվի հատուկ անունների թե՛ ծագումնաբանական և թե՛ հնչյունական կազմը չափազանց խայտաբղետ է:

Ա. *Բուն հայկական անձնանուններ*:

Արեւիկ – իգական: Արև անվան փաղաքշական տարբերակն է, բավական տարածված էր 13-17-րդ դարերում⁵:

Տիկին – իգական.: Բուն հայկական անձնանուն է, համապատասխանում է Խաթուն, Խանում անձնանուններին: Հիշատակվում է 12-րդ դարից սկսած⁶:

⁴ *Ջահուկյան Զ.*, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 412:

⁵ *Աճառյան Հր.*, Հայոց անձնանունների բառարան, հատոր 1, էջ 272-273:

Տերունական – ար.: Հայերեն տերունական ածականից է, համապատասխանում է հունական *Կիրակոսին*: Ըստ Աճառյանի՝ առաջին անգամ հիշատակվում է 1513 թ-ին, այսինքն Մակարավանքի արձանագրության մեջ հիշատակվող անձնանունը կիրառության առաջին դեպքն է⁷:

Հոգեդեղ⁸ – ար.: Այս անձնանունը, ըստ Աճառյանի, առաջին անգամ հիշատակվում է 1282 թ-ին և Մակարավանքի արձանագրությամբ՝ առաջին գործածությունն է հայոց մեջ: Անունը բաղկացած հոգի և դեղ արմատներից, կա և Մակարավանքում արձանագրություններում ևս օգտագործվում է *Խոցադեղ* տարբերակը:

Բ. Անձանոթ և ծագումն անհայտ անձնանուններ:

Արալանսա – ար., միակ գործածությունն է: Հնարավոր է նաև վիմագրչի շփոթության հետևանք լինի, սակայն կարդացվող բոլոր տառերը համապատասխանում են⁹:

Ասփա – իգական: Ծագումն անհայտ է և ըստ Աճառյանի բառարանի՝ առաջին անգամ հիշատակվում է 1263 թ-ին¹⁰:

Բանհան – իգական: Ծագումն անհայտ է և այլուստ չի հիշատակված¹¹:

Բազազ – ար.: Անձնանունը ևս ընդգրկված չէ հայոց անձնանունների բառարանում: Ըստ էության բազազ՝ կերպասավաճառ, հասարակ անվան իմաստի նեղացման արդյունք է¹²:

Գածեր¹³ – իգական: Այլուստ հիշատակված չէ և ծագումն անհայտ է:

Գրան-Գերան¹⁴ – ար.: Կրկին հիշատակված չէ և գերան հասարակ բառի իմաստի նեղացման արդյունք կարող է լինել:

⁶ *Աճառյան Հր.*, Հայոց անձնանունների բառարան, հատոր 5, Երևան, 1962, էջ 152:

⁷ Նույն տեղում, էջ 144:

⁸ *Աճառյան Հր.*, Հայոց անձնանունների բառարան, հատոր 3, Երևան, 1946, էջ 93:

⁹ Դիվան հայ վիմագրության, պրակ 6, կազմեցին՝ Ս. Ավագյան, Հո. Ջանփոլադյան, Երևան, 1977, էջ 157-158 (այսուհետև՝ Դիվան, պրակ 6):

¹⁰ *Աճառյան Հր.*, Հայոց անձնանունների բառարան, հատոր 1, էջ 251:

¹¹ Դիվան, պրակ 6, էջ 172:

¹² Նույն տեղում, էջ 158-160:

¹³ Նույն տեղում, էջ 177-178:

Գծուռ¹⁵ – ար.: Այս անվան առաջին և միակ հիշատակությունն է:

Զուգ¹⁶ – իգական: Ըստ Հր. Աճառյանի՝ անունը ձագուռ է գուգա՝ արծաթի դրամի անվանումից, որը գործածության մեջ է եղել մինչև 10-րդ դարը: Մակարավանքի արձանագրության մեջ հիշատակվող այս անձնանունը ևս եզակի է:

Թաթել¹⁷ – ար.: Աճառյանի բառարանում այս անձնանունը ևս բացակայում է և ըստ էության Տարիել անվան փոփոխված տարբերակն է:

Խաթութ¹⁸ – իգական: Այս անձնանունը ևս անհայտ է, հնարավոր է Խաթուն անվան փոփոխված տարբերակ հանդիսանա:

Կուտկան – ար.: Այս անունը Աճառյանի բառարանում չի ներառված: Այս արձանագրությունում նվիրատու հանդես է գալիս Մակարավանքի հիմնադիր-կառուցող Կուտկանի թոռ Վասակ իշխանը, <<ՈՐ ԷՏՈՒ ԶԱՅԳԻՆ ՎԱՆԻՅՍ ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՅՈՀԱՆԻՍԻ»¹⁹: Կուտկանի թոռ Վասակը, ըստ վիմագրերի, տեղական իշխանական խավի ներկայացուցիչներից էր՝ Մահկանաբերդի Արծրունիների վասալներից:

Միթաթ – ար.: Այս տարբերակը ևս հայտնի չէ:

Շրուան – ար.: Այս անձնանունը ևս անհայտ է:

Ռանշահ²⁰ – ար.: Այս անձնանունը ևս բացառիկ է և այլուստ չի հիշատակվում:

Միսա²¹ – ար.: Կրկին այլուստ հիտակված չէ:

Տաշոբել – ար.: Աճառյանը հիշատակում է Տաշուրակ անձնանունը, իսկ այս տարբերակն անհայտ է²²:

¹⁴ Նույն տեղում, էջ 179-180:

¹⁵ Նույն տեղում, էջ 181:

¹⁶ *Աճառյան Հր.*, Հայոց անձնանունների բառարան, հատոր 2, Երևան, 1944, էջ 216:

¹⁷ Դիվան, պրակ 6, էջ 176-177:

¹⁸ Նույն տեղում, էջ 193:

¹⁹ Նույն տեղում, էջ 162-163:

²⁰ Նույն տեղում, էջ 165:

²¹ Նույն տեղում, էջ 193:

Գ. Պարսկական անձնանուններ

Ամեն անուն ունի իր պատմությունը, «կենսագրությունը», աշխարհագրական տարածումը, ծավալումն ու ազգային պատկանելությունը: Հենց իր պատմության, ժամանակի և տարածության մեջ է նկատվում անվան շարժընթացը: Այն փոխառվում է կամ նույնությամբ, կամ մասնակի ձևափոխությամբ²³: Այս օրինաչափությամբ էլ, ինչպես հայերը, այնպես էլ շատ ժողովուրդներ, իրենց անձնանունները փոխառել են այլ ազգերից²⁴: Պարսկերենը հայ ազնվականության լեզուն է եղել և վարչական, տնտեսական հարաբերությունները այդ լեզվով են կատարվել, հայ պալատականները և նախարարները խոսել են նաև այդ լեզվով: Հետևաբար պարսկական ազդեցությունը հայերենի վրա շատ մեծ է: Միջնադարում ևս պահպանվեց այդ ավանդական, դարավոր փորձը, ինչի հետևանք է նաև Մակարավանքի անձնանուններում պարսկերեն փոխառությունների առկայությունը:

Արտաւագ – ար.: Պարսկական փոխառություն է, Արտավազդ անվան կրճատ տարբերակն է: 13-րդ դարում այս անձնանունը սակավ գործածելի էր, իսկ հետագա դարերում ընդհանրապես չի հիշատակվում²⁵:

Երանշահ²⁶ – ար.: Աճառյանի Հայոց անձնանունների բառարանում հիշատակվում է նաև Իրանշահ տարբերակով: Տվյալ ժամանակաշրջանում հազվադեպ գործածվող անձնանուններից է:

Խարիբեկ – Այս անունը ևս չի հիշատակվում: Ըստ Աճառյանի՝ խարի-ն պարսկերենից թարգմանաբար «փուշ» է²⁷:

²² *Աճառյան Հր.*, Հայոց անձնանունների բառարան, հատոր 5, էջ 140:

²³ *Արեղյան Մ.*, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 144: Բարսեղյան Հ., Հատուկ անուն (տեսական նկարագրական ակնարկ), Երևան, 1964, էջ 42:

²⁴ *Խաչատրյան Ա.Ա.*, Բնիկ և փոխառյալ իգական անունները հայերենի զարգացման հին շրջանում, Լրաբեր Հասարակական Գիտությունների. 2007. N 2, էջ 210:

²⁵ *Աճառյան Հր.*, Հայոց անձնանունների բառարան, հատոր 1, էջ 310-311:

²⁶ *Աճառյան Հր.*, Հայոց անձնանունների բառարան, հատոր 2, էջ 395:

Մլքան – իգական: Պարսկերենից փոխառված անձնանուն է և բավականին տարածված է եղել 13-14-րդ դարերում²⁸:

Մլքշահ – ար.: Այս տարբերակը ևս հայտնի չէ, միջնադարում գործածվել է Մելիքշահ տարբերակը:

Մեհնազ²⁹ – իգական: Պարսկերեն Mehnaz (Լուսին, նազանք): Մակարավանքի արձանագրության մեջ պահպանվածը վերոնշյալ անձնանվան առաջին հիշատակությունն է, Աճառյանի մոտ հիշատակվում է մեկ անգամ, սակայն անթվակիր:

Շարուհի – իգական: Պարսկերենից թարգմանաբար նշանակում է «երկունքի ցավ» և այս անվան առաջին հիշատակությունն է³⁰:

Վասակ, Վարդան, Վահրամ, Վաչե

Քուրդկան – ար.: Քուրդ անվան բարբառային տարբերակն է, որը ևս Աճառյանի մոտ հիշատակված չէ: Ծագում է պարսկերեն Kurd բառից, Հայոց մեջ հիշատակվում է դեռևս 9-րդ դարից³¹:

Դ. Ասորական անձնանուններ

Վաղ միջնադարում ասորական ազդեցությունը Հայոց վրա բավական մեծ էր, ուստի սկսած վաղ միջնադարից հայկական անձնուններում բավական տարածում են ստանում ասորական փոխառյալ անձնանունները: Մակարավանքում ևս հիշատակվում են մի քանի ասորերենից փոխառյալ անձնանուններ՝ **Աբաս, Նունե, Սարգիս**:

Ե. Եբրայական անձնանուններ

Եբրայական անձնունները հայերենին անցել են Աստվածաշնչի թարգմանության և քրիստոնեության միջոցով: Այսպես՝ Մակարավանքի վիմագրերում հիշատակվող անձնուններում հանդիպում ենք եբրայական ծագում ունեցող **Յակոբ, Դաւիթ, Եսայի** և այլն:

²⁷ *Աճառյան Հր.*, Հայերեն արմատական բառարան, հատոր 2, Երևան, 1926, էջ 344-345:

²⁸ *Աճառյան Հր.*, Հայոց անձնանունների բառարան, հատոր 3, էջ 364:

²⁹ Նույն տեղում, էջ 313:

³⁰ *Աճառյան Հր.*, Հայոց անձնանունների բառարան, հատոր 4, Երևան, 1948, էջ 153-154:

³¹ *Աճառյան Հր.*, Հայոց անձնանունների բառարան, հատոր 5, էջ 223-224:

Զ. Հունական և լատինական փոխառություններ

Հունական և լատինական միջավայրից հայերը ևս մեծ ազդեցություն է կրել: Այդ ազդեցության շնորհիվ էլ հայերենին են անցել մեծ թվով հունական և լատինական ծագման անձնանուններ: Այսպես՝ **Անտոն, Բարսեղ, Յովանէս, Ստեփանոս, Գրիգոր:**

Գեորգ, Գեորք³² – ար.: Գեորգ անվան տեղական բարբառային տարբերակն է և հիմնականում գործածելի էր 13-14-րդ դարերում:

Նանա – արական և իգական: Ծագում է լատինական *nonnus* (հայրիկ) բառից: Մակարավանքի արձանագրության մեջ օգտագործված է որպես իգական անուն: Հայոց մեջ օգտագործվում է դեռևս 8-րդ դարից³³:

Է. Արաբական անձնանուններ

Հայերը ընդունել են նաև ոչ քրիստոնյա այլ ժողովուրդների՝ արաբների և թուրքերի անձնանունները: Սա դարավոր ազդեցության արդյունք է: Մակարավանքի վիմագրերում հիշատակվում են **Հասան, Խաթուն** և այլն:

Ը. Հայերեն կրոնական անձնանուններ

Քրիստոնեության տարածումից հետո երբայական և հունական անձնանունների փոխառման հետ միասին հայեր սկսեցին թարգմանել օտար քրիստոնեական անձնանունները: Մակարավանքի վիմագրերում հիշատակվում են **Խաչատուր, Մխիթար, Մխիթարիչ** և նմանատիպ այլ անձնանուններ:

Յուրաքանչյուր անձնանուն բառ է, որն արտահայտում է որոշակի իմաստ: Պետք է նշել, որ հայկական կազմությամբ անձնանունների մեծ մասը առաջացել են հասարակ գոյականներից:

Ա. Կենդանիների անուններից առաջացած անձնանուններ

Գազան³⁴ – ար.: Առաջացել է գազան հասարակ բառից, միջնադարում գործածելի անձնանուններից է և մանավանդ տարածված էր 13-րդ դարում:

³² *Աճառյան Հր.*, Հայոց անձնանունների բառարան, հատոր 1, էջ 453:

³³ *Աճառյան Հր.*, Հայոց անձնանունների բառարան, հատոր 4, էջ 18-19:

³⁴ *Աճառյան Հր.*, Հայոց անձնանունների բառարան, հատոր 1, էջ 437-438:

Գայլ³⁵ – ար.: Այս անձնանունը ևս գայլ հասարակ բառի իմաստի նեղացման հետևանք է, միջնադարում բավական գործանելի անձնանուն էր:

Բ. Զբաղմունքի՝ պաշտոն, արհեստ նշանակող բառերից կազմված անձնանուններ

Բազազ – ար.: Անձնանունը ևս ընդգրկված չէ հայոց անձնանունների բառարանում: Ըստ էության բազազ՝ կերպասավաճառ, հասարակ անվան իմաստի նեղացման արդյունք է³⁶:

Գ. Մարմնի մասեր արտահայտող անձնանուններ

Ականջ – ար.: Այս անձնանունը, ըստ էության, հասարակ անվան իմաստային սղացման բացառիկ օրինակ է:

Դ. Նյութ արտահայտող անձնանուններ

Գրան-Գերան³⁷ – ար.: Կրկին հիշատակված չէ և գերան հասարակ բառի իմաստի նեղացման արդյունք կարող է լինել:

Ե. Աճականներից կազմված անձնանուններ

Երիտասարդ³⁸ – ար.: Աճառյանի անձնանունների բառարանում այս անձնանունը ևս չի հիշատակվում և, ըստ էության, իմաստի նեղացման արդյունք է: Պետք է նշել, որ այս անձնանունը հիշատակվում է Գլխավոր եկեղեցու գլխավոր խորանի բեմի ճակատային հատվածում և եկեղեցին կառուցող վարպետ-ճարտարապետի անունն է:

Մակարավանքի վիմագրերում հիշատակվող անձնանունների մի մասը ածանցավոր կազմություն ունի, հիմնականում վերջաձանցներով են կազմված:

ա) *Ան* - **Կուտկան, Ռուսուդան, Շրուան, Մլքան, Քուրդկան** և այլն:

բ) *Ե, Է* - **Խաթուրթ** (իզական):

գ) *Իկ* - **Խարտէշիկ**³⁹ - ար.: Խարտեաշ անվան փաղաքշական տարբերակն է:

³⁵ Նոյն տեղում, էջ 445:

³⁶ Դիվան, պրակ 6, էջ 158-160:

³⁷ Նոյն տեղում, էջ 179-180:

³⁸ Դիվան, պրակ 6, էջ 166-167, 189-190:

³⁹ *Աճառյան Հր.*, Հայոց անձնանունների բառարան, հատոր 1, էջ 503:

Արեւիկ – իգական:

դ) *Բջ* – **Մխիթարիչ**:

ե) *Ուհի* – **Շարունի** (արական):

Անձնանունները, ի տարբերություն տեղանունների, որոնք ըստ տնականության հարակա են, ունեն կարճատև կյանք՝ կապված սերնդափոխության, գաղափարախոսության և սոցիալ-քաղաքական այլ ազդեցությունների հետ: Տեղանվան հարատևությունը որևէ քաղաքի կամ գյուղի դարավոր կյանք ունենալու արդյունք է: Մինչդեռ որևէ անձնանուն եթե դարերով պահպանվել է և չի անհետացել, նշանակում է, որ այն կամ պատմական է, այսինքն՝ որևէ նշանավոր անձի անուն է, կամ էլ ունի ներդաշնակ հնչողություն ու բովանդակային գեղեցկություն: Այստեղ կարևորվում է նաև անվան հակիրճությունը: Մակարավանքի անձանագրություններում հիշատակվող անձնանունների պարագայում դա էս բացահայտ է, քանզի հիշյալ անձնանունների մի մասը օգտագործվում է կամ մեկ անգամ, կամ հանդիսանում է առաջինը:

Հարց է առաջանում, որ հասարակություններին է բնորոշ անձնանունների նման բազմազանությունը, ինչ գործոններ են ազդում նոր անունների ի հայտ գալուն: Մարդկային քաղաքակրթությունը լեզվակենտրոն է և բոլոր քաղաքակրթական գործընթացներն անմիջականորեն արտահայտվում է գրավոր և բանավոր խոսքում: Եթե լեզուն, խոսքը ծավալվում է ժամանակի և տարածության մեջ, ապա զարգացումը, փոփոխությունը, ճգնաժամը, վերածնունդը անպայման առկա է հենց անձնանուններում:

Մակարավանքի արձանագրություններում հիշատակվող անձնանունների նման բազմազանությունը միանշանակ փաստում է, որ 13-րդ դարում առկա էր բավական ուժեղ գաղափարական դաշտ, հասարակ բառի հատուկ նշանակություն ստանալ բավական բարդ գործընթաց է և դրա համար անհրաժեշտ էր հասարակությանը զինել գաղափարապես:

Այսպիսով, ամբողջացնելով Մակարավանքի արձանագրությունների անձնանունների քննությունը կարելի է ենթադրել, որ անկասկած, 13-րդ դարը ոսկեդարյան նշանակություն է ունեցել

վերոհիշյալ վանական համալիրի պատմության մեջ: Նվիրատվական արձանագրությունների գումարային հսկայական չափերից կարելի է ենթադրել, որ Մակարավանքը ունեցել է հսկայական տնտեսություն՝ բազմաթիվ այգիներ, տնտեսական նշանակության բազմաթիվ կառույցներ, որոնց տնօրինությունը դրված է եղել վանական կազմի վրա, որը եղել է բազմամարդ՝ բաղկացած մինչև մի քանի տասնյակի հասնող վանական կազմից:

Լինելով գիտական, մշակութային կարևոր կենտրոն՝ Մակարավանքը ունեցել է տեղական, ինչու չէ նաև տարածաշրջանային նշանակություն, որ հովանավորվել է տեղական ազնվական խավի կողմից, ինչպես նաև ժամանակի պետական, քաղաքական գործիչների կողմից, ինչպիսիք էին Վաչե Վաչուտյանը, Սադուն Արծրունին և այլք:

Владимир Погосян – *Литографические имена Манакарванка и их происхождение.* – Ссылаясь на протоколы пожертвования Макараванка мы попробывали исследовать упомянутые наименования, рассмотреть их в асинхронных и синхронных аспектах, и сделать из названия оправную точку для альтернативного научного похода к некоторым историко-политическим и социально-культурным вопросам.

Vladimir Poghosyan – *Lithography names of Makaravank and their origin.* – Speaking about the donation protocols of Makaravank we tried to examine the names that we have mentioned, research their asynchronous and synchronous aspects and consider the name as the starting point for an alternative approach to some historical, political, social and cultural problems.

Բանալի բառեր: Մակարավանք, պատմական, քաղաքական, հասարակական, սոցիալական, մշակութային, անձնանուն:

Ключевые слова: Макараванк, исторический, политический, социальный, культурный, вопрос, имя.

Key words: Makaravank, historical, political, social, cultural, problem, personal name.

**ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԱՐՃԻՍ ԳՅՈՒՂԻ
ՄԱՆՐԱՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ
ՀԵՏ ԿԱՊԿԱԾ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ԱԼԵՏԱ ՀԱԿՈԲՅԱՆ, ՆՈՐԱՅՐ ՊՈՂՈՍՅԱՆ
(Երևանի պետական համալսարան)

Մանրատեղանունները և նրանց հետ կապված ավանդությունները որոշակի հետաքրքրություն են ներկայացնում, որոնք վերաբերում են թե՛ բանահյուսությանը, թե՛ լեզվաբանությանը: «Մանրատեղանուններն այն բառերն են, որոնք անվանում են որևէ բնակավայրին մոտ գտնվող, ըստ այդմ՝ տեղական նշանակություն ունեցող ֆիզիկաաշխարհագրական, պատմամշակութային և այլ օբյեկտներ»¹: Այդ անունների հիմքում հաճախ ընկած է լինում ավանդություն:

Ավանդությունների մասին գիտական ամբողջական աշխատանքը Ա. Ղանալանյանի «Ավանդապատում» ուսումնասիրությունն է: Այն, ցավոք, իր մեջ չի ամփոփում Հայաստանի բոլոր շրջանների ավանդությունները, և հեղինակն ինքն էլ գրում է, որ հավաքել է մինչ այդ եղած տպագիր ավանդությունները²:

Մանրատեղանունների և նրանց հետ կապված ավանդությունների զգալի մասը շարունակվում են հաղորդվել բանավոր, և կարիք ունեն գրառման, որ չընջվի ժողովրդի հիշողությունից և փոխանցվի սերնդեսերունդ: Մրանց ուսումնասիրությունն էլ յուրովի է հետաքրքիր, քանի որ շատ հաճախ իրենց մեջ պարունակում են բանալիներ, որոնցով հնարավոր է բացատրել տեղանքին հատուկ այս կամ այն երևույթը: Ուստի, կարևորելով այս հանգամանքը, ստանձնեցինք գրի առնել Տավուշի մարզի Արճիս գյուղի մանրատեղանունները և դրանց հետ կապված ավանդությունները:

¹ **Ն. Պողոսյան**, Հայերենի տեղանունների բառակազմությունը և հարակից հարցեր, Երևան, 2005:

² **Ա. Ղանալանյան**, Ավանդապատում, Երևան, 1969, էջ Ը:

Բերվող օրինակները հետաքրքիր են նախ նրանով, որ մինչ այժմ գրառած չեն: Ավանդությունները, որպես շրջապատող աշխարհի հանդեպ մարդու պատկերացումների արտահայտություններ, իրենց ուրույն տեղն են գրավում ժողովրդական բանահյուսության մեջ: Պետք է նկատել, որ այսօր էլ շարունակվում են ավանդությունների գործածությունն ու ուսումնասիրությունը: Լինելով ծավալով համեմատաբար փոքր ստեղծագործություն և անմիջականորեն կապված լինելով տվյալ առարկայի, անձի կամ երևույթի հետ՝ պատմվում է, երբ խոսք է բացվում այն երևույթի կամ առարկայի մասին, որի շուրջ հյուսվել է ավանդությունը:

Ժողովրդական մեկնաբանությունների «առաքելությունն» անվան գիտական և ճշգրիտ ստուգաբանությունը պարզելը չէ, այլ կարելի է ասել, որ նրանց վերագրվում է ավելի մեծ նշանակություն՝ պահպանել և վեր հանել տվյալ վայրին տրված անվան ժողովրդական ստուգաբանության հիմքերը, ժողովրդի պատկերավոր մտածողության յուրահատկությունները, ժամանակի կնիքը և մի շարք այլ հարցեր:

Մանրատեղանունների մեծ մասը ունի անվանադրման իր պատմությունը: Ժողովուրդը ստուգաբանում է բնակավայրի կամ դրան հարակից մանր օբյեկտների անունները՝ բխեցնելով այն տեղանքի հետ կապված որևէ պատմության, արտաքին նմանության, հնչյունակապակցության մեկնաբանության և այլ իրողություններից: Տեղանունը նրա հետ կապված որևէ պատմությունից բխեցնելու ժողովրդի ջանքերը հանգեցնում են նրան, որ այդ պատմությունը ժամանակի ընթացքում նույնանում է ստուգապատում ավանդության հետ:

Ի տարբերություն ժողովրդական բանահյուսության արձակ և չափածո մյուս ստեղծագործությունների, որոնք ժողովրդի մեջ հայտնի են որոշակի անվանումներով՝ ինչպես՝ երգ, հեքիաթ, անեծք և այլն, ավանդությունները ժողովրդի մեջ գոյատևում են անանուն:

Ա. Ղանալանյանը ավանդությունները բնութագրում է որպես «փոքր ծավալի ստեղծագործություններ, հաճախ գուրկ սյուժեից,

մի-երկու գործող անձով: Մեծ մասամբ տեղային նշանակություն ունեցող դեմքերի, դեպքերի, իրերի շուրջ³: Ուսումնասիրողը դրանք դասակարգում է ըստ *բացատրական, ստուգաբանական և վարքաբանական* տեսակների⁴:

Ինչպես յուրաքանչյուր տեղանուն, մանրատեղանունները նույնպես կարևոր նշանակություն ունեն տվյալ տարածքի պատմության, ֆիզիկաաշխարհագրական դիրքի, բնակլիմայական պայմանների, բնակչության ապրելակերպի, զբաղվածության և այլ առանձնահատկությունների բացահայտման տեսանկյունից: Ինչպես առհասարակ տեղանունների, այնպես էլ մանրատեղանունների համար սովորական երևույթ է ժողովրդական ստուգաբանությունը: Մարդիկ փորձում են որևէ իմաստային կապ տեսնել օբյեկտի և անվան միջև⁵:

Արճիս գյուղը գտնվում է Տավուշի մարզի հյուսիսարևելյան շրջանում՝ Դեբեդ գետի աջ կողմում: Մի կողմից սահմանակից է Լճկաձոր, մյուս կողմից Լոռու մարզի Շնող գյուղին: Այն տեղակայված է բարձր լեռների վրա՝ շրջապատված սաղարթախիտ անտառներով: Բնակչության հիմնական մասը զբաղվում է հողագործությամբ, բուծում են նաև խոշոր և մանր եղջերավոր անասուններ:

Արճիս գյուղի ներկայիս տարածքում, մինչև գյուղի հիմնադրվելը, դարեր առաջ մի քանի անգամ բնակավայր է հիմնադրվել: Այդ են վկայում շրջակայքում հայտնաբերված դեռևս 8-րդ դարի գերեզմանների հետքերը: Գյուղի «Ըղաքարի դաշ» կոչվող վայրում և «Մատուռի ձոր» խեչի ճանապարհի վրա հայտնաբերվել են ձուլարաններ, գերեզմաններ և բրուտագործության հետքեր: Հայտնի են պաշտպանական ամրոցներ, բերդատեղեր և նույնիսկ կիկլոպյան ոճի կառուցված ամրոց «Ռսի քարհանք» կոչվող տարածքում: Այժմ մի փոքր ակնարկ ներկայիս բնակավայրի հիմնադրման պատմությունից:

³ Նույն տեղում, էջ ԺԷ:

⁴ Նույն տեղում, էջ ԻԹ:

⁵ **Ն. Պողոսյան**, Տեղանվանագիտության համոռո դասընթաց, Երևան, 2008, էջ 42:

Ըստ ավանդագրույցի՝ Արճիս գյուղը հիմնադրող նահապետը ծնվել է Վանա լճի մոտ գտնվող Արճեշ քաղաքում և այնտեղ մասնագիտացել է պղնձագործության մեջ՝ դրանով իսկ ստանալով Միսկար (պղինձ մշակող վարպետ) մականունը: Այն հետո մոռացության է մատնել նրա իսկական անունը, իսկ սերունդներն էլ ժառանգել են Միսկարյան ազգանունը:

Մեր ուսումնասիրության ընթացքում գյուղի անվան ստուգաբանության մի քանի վարկածների ենք հանդիպել: Հենց այստեղ է, որ գիտական մեկնաբանությունը խառնվում է երևակայականին և ստացվում է գեղեցիկ ու գրավիչ քանահյուսական պատում: Տարբերակներից մեկը վերը նշած Արճեշ քաղաքի անունից բխեցնելն է: Մյուսը արճիճ>Արճիս՝ ճ>ս հերթագայությունն է: Մեկ այլ վարկածի համաձայն՝ գյուղի նախնիները գաղթել են կրկին Արճեշից, բայց այս անգամ արդեն ոչ թե Արևմտյան Հայաստանի, այլ՝ Ղարաբաղի համանուն գյուղից:

Տարբերակներից առաջինի դեպքում գյուղի հիմնադիրը, որ Արճեշում արդեն հայտնի միսկար էր, գալիս է Սանահին Մանեսի պղնձամշակման գործարանում աշխատելու, որն այդ ժամանակ գտնվում էր Վրաստանի Հերակլ 2-րդ թագավորի իշխանության տակ: Հերակլ 2-րդ թագավորը այցելում է պղնձամշակման գործարան ու շրջագայության ժամանակ ձուլարանի մոտ հանդիպում է Արճեշցի Միսկարին: Արժանանալով արքայի գովասանքին՝ ստանում է տարածք՝ վաստակած հանգստի անցնելու և այգեգործությամբ զբաղվելու նպատակով: Իբրև երախտագիտության նշան՝ Միսկարը մատի վրա արճից մատանի է պատրաստում և նվիրում արքային: Նախնին ունենում է 3 զավակ՝ Ստեփանը, Վերանը, 3-րդ-ի անունը անհայտ է: Նրան ամենուր անվանում են ուղղակի Արճեշցի վարպետ Միսկար, որը դառնում է նրա համար հատուկ անուն: Վարպետի իրական անունը մոռացության է տրվում:

Տարբերակներից երկրորդում գյուղի նախնիները եկել են Ղարաբաղից: Այս տարբերակը գրառել ենք գյուղի վաստակաշատ ուսուցիչներից մեկի՝ Գևորգ Միսկարյանի արխիվից, որը

մեզ տրամադրեց նրա դուստրը՝ Լյուդմիլա Միսկարյանը, տարբերակը ներկայացնում ենք բառացի.

«3 դ. առաջ՝ թուրք-պարսկական պատերազմի ժամանակ, Լոռին որպես չեզոք գոտի ընկել էր վրաց թագավորության տիրապետության տակ: Մահմեդականներից հալածված 3 երիտասարդ դարաբաղցի գալիս են Լոռի և աշխատանքի անցնում Ալավերդու ձուլարանում, որտեղ ձուլում են պղինձ և կապար:

Վրաց Հերակլ 2-րդ թագավորը, որի տիրապետության տակ էր գտնվում Գուգարաց աշխարհը, օրերից մի օր գալիս է իր կալվածքները շրջելու և մտնում է նաև Ալավերդու ձուլարանը: Այդ դարաբաղցի երիտասարդներից մեկը մատը թրջում է սառը ջրի մեջ, հալոցքի արձձից մի մատանի պատրաստում իր մատի վրա և նվիրում թագավորին: Վերջինս զարմանում է. արձիճը հալչում է 300⁰-ում, այդքան տաքությանը ինչպե՞ս է դիմանում այդ երիտասարդը:

-Ո՛ր գյուղից եք,-հետաքրքրվում է թագավորը:

-Մենք գյուղ չունենք, մենք թողեցինք մեր տուն ու տեղը. մահմեդականների հալածանքի պատճառով եկանք այստեղ՝ ձեր հովանավորության տակ:

-Իսկ եթե ձեզ գյուղատեղ տամ, կարո՞ղ եք հողագործությամբ զբաղվել, մի նոր գյուղ հիմնադրել:

-Մենք գյուղ կհիմնադրենք ու միշտ կհիշենք քո բարի անունը,-ասում են արձձից մատանի պատրաստողները:

Թագավորը նրանց գյուղատեղ է տալիս, արձիճ ձուլողները տներ են կառուցում և գյուղի անունն էլ դնում են «Արձիս»:

Միսկարյան (պղնձագործ) եղբայրները՝ Առաքելը և Անդրեասը, զբաղվել են հիմնականում պղնձագործությամբ և այգեգործությամբ»:

Ա. Ղանալանյանի «Ավանդապատում»-ում բերված տարբերակը որոշակիորեն արտացոլում է այս պատումը, միայն թե շեշտը դրված է նրա վրա, որ գյուղի անունը ծագել է արձիճ բառից: Ներկայացնենք հատվածը.

«Հարևան Ախթալայի հանքերում վրացի աղաները ջուհար են հալելեխ ըլում: Էրկու ախպեր՝ Մինասն ու Առաքելն էլ աշխատում են նրանց մոտ: Երբ վերջացնում են աշխատանքը, տերերն ասում են. Ի՞նչ պտի տանք ձեր հախը(վարձը): Ասում են՝ Արճիճ: Դրանից էլ գյուղի անունը մնացել ա Արճիս»⁶: Կարծում ենք՝ վերջինս ժողովրդական ստուգաբանության տիպիկ օրինակ է, քանի որ նախ վերը ներկայացրած ավանդության մի մասն էր միայն և հավանաբար պատմողը, չիմանալով կամ չհիշելով ավանդության մյուս մասը, հնչյունական նմանողությամբ բխեցնում է արճիճ բառից:

Հաջորդ տարբերակը, որ տալիս է Ա. Ղանալանյանը, կապված է արջ բառի հետ: Մեջբերենք հատվածը. «Դեմի սարերում արջ շատ ա էլել, ասել են Արչուտ: Հետո էկել են էստեղ տուն-տեղ դրել: Սկզբից երեք տուն ա էլել: Ամենից մեծը Միսկարենք են էլել: Գեղի անունն էլ Արչուտ են դրել, էնքան են ասել, Արչուտը դառել ա Արչիս»:

Այս տարբերակը թերևս պետք է ժողովրդական ստուգաբանություն համարենք, իսկ գյուղացիներն այժմ չեն պատմում սրա մասին:

Գյուղի անվան ստուգաբանությունը պարզելուց հետո այժմ ներկայացնենք մեր գրի առած մյուս ավանդությունները: Դրանք բերվում են տեղաբնակների բուն լեզվով, ինչպես որ գրի ենք առել: Այն մտնում է Լոռվա խոսվածքի մեջ:

Արճիսի ենթախոսվածքը բազմաթիվ ընդհանրություններ ունի գրաբարի հետ: Սա նկատելի է հատկապես բայական համակարգում: Գրաբարյան 4 լծորդություններից գրական հայերենում մնացել են 2-ը, իսկ Արճիսի ենթախոսվածքում պահպանվել են *ու* և *ի* լծորդության հետքեր, ինչպես՝ *գտնել-գղնուլ*, *մտնել-մտնուլ*, *թռչել-թռչիլ*, *խոսել-խոսիլ* և այլն: Հատուկ ձևավորում ունի հարկադրական եղանակը, որ կազմվում է գրական լեզվի *պիտի* եղանակիչից առաջացած *տի* մասնիկով և նրա խոնարհված ձևերով, ինչպես՝ *գնալ տիմ*, *գնալ տիս*, *գնալ տի* և այլն: Ժխտական խո-

⁶ Ա. Ղանալանյան, նշվ. աշխ., էջ 180:

նարհման դեպքում ժխտական ցուցիչը դրվում է բառավերջում, ինչպես՝ *գնալ չտիս, գնաս ոչ, գնալ մի և այլն*: Հնչյունական համակարգի ամենաբնորոշ իրողությունը գրական լեզվից տարբեր շեշտադրությունն է: Արճիսի խոսվածքում շեշտը սովորաբար դրվում է վերջընթեր վանկի վրա, ինչով էլ պայմանավորված բառակերպի ձայնավորները հնչյունափոխվում են կամ սղվում, ինչպես՝ *իրիկուն-րիգուն, առավոտ-ռավոդ, ամաչել-քմանչել* և այլն: Հնչյունական մյուս կարևոր առանձնահատկությունը խուլ բաղաձայնների ձայնեղացումն է, ինչպես՝ *գտնել-գդնել, գիտենալ-գիդենալ* և այլն: Բավականանալով Արճիսի ենթախոսվածքի առանձնահատկությունների մի մասի քննությամբ՝ ներկայացնենք մանրատեղանուններն ու դրանց առնչվող ավանդությունները:

Վերանանց աստղը

Գեղի հիմանդիր Վերանեցիք իրանց բանվորներին ըշխատանքիցը բաց են թողել էն վախտ, եփ երգնքումը ըրեվացել ա ամենապայծառ աստղը:

Այս ավանդությունը, ինչպես հասկացվում է պատումից, բացատրում է, թե ինչու գյուղում բևեռային աստղը անվանում են Վերանանց աստղ: Պատմության մեջ հիշատակված Վերանեցիք Միսկարի որդի Վերանի սերունդն է: Ինչպես տեսնում ենք, գյուղի հիմնադրման պատմությունը շաղկապվում է նաև այլ ավանդությունների հետ:

Պապի բռնչքի

Մըտիչանց պապը ճամփու յեխումը շատ բըռնչքի ա տնգել: Ամեն գնալ-գալով հետը ջուր ա տարել ու ջրել: Մի բռնչքին կպել ա: Էդ օրվանից մինչև սօր դրան ասում են պապի բըռնչքի: («Մի տեսակ վայրի ծառ, որ տալիս է սիսեռի մեծությամբ մի պտուղ. այս պտուղի մեծ մասը կորիզն է, վրան կայ բարակ կաշի, որ նախ կանաչ է, յետոյ դեղնում է և երբ հասնում է՝ սևանում ու մի քաղցրը համ է ստանում...կոչում է նաև լտուտ, տարտաղան⁷»):

Կանչելաքար (քար-գտնվում է գյուղի հարավում՝ Կոզմանի հանդամասում)

⁷ *Հր. Աճառեան*, Հայերեն արմատական բառարան, Երևան, հ. 1, 1926, էջ 409:

Գեղի սարերումը մի վենձ քար ա էլել: Սարերումը կենող բինավորնին, որ կարենան գեղի հետ կապ պահեն, կանգնել են էդ քարի ծերին, բարցր գոռացել, որ գեղացոնց խաբար դրգեն:

Բերձենի քարափ (քարափ-գտնվում է գյուղի հյուսիսարևմտյան մասում):

Էդ քարափիցը իրա բերձեն կընգանը վեր ա գձել ու սպանել: (Տարածաշրջանում հույներին վրացերենի ազդեցությամբ բերձեն են անվանում):

Հիտլերի դոշ-(գյուղին հանդիպակաց Հեպլեզ սարի լանջ) Պատերազմի վախտ գեղի կնանիքը Հիտլերին անըծելով ընդէն ծառեր են քաշ տվել, որ ձմեռը վառեն, դրա հմար էլ դոշը դրրդակվել ա ծառերիցը: Դրա խաթեր էլ Հիտլերի դոշ են ասում:

Հատկանշական է, որ սովորաբար որևէ վայր անվանում են ի պատիվ մի անձնավորության: Այս դեպքում ունենք հակառակ երևույթը. չնայած գյուղացիների՝ Հիտլերի նկատմամբ ունեցած մեղմ ասած բացասական վերաբերմունքի՝ անկախ իրենց կամքից սարի լանջը կոչվել է նրա անունով:

Պապի բախչեն-(այգի-գյուղի հարավային անտառի լանջին) Ժրդովըրդիցը հեռու, անտառի միջին, սարի դոշումը մի բախչա կա: Պապի բախչա են ասում: Շատ վաղուցվա պատմություն ա: Արտեմ պապը ձորիցը վեղորքերով ջուրը բըրձրացրել ա մի 200մ ու ընդի բախչա շինել: Հըմի արդեն ծառերը վայրիացած են:

Վերը թվարկած ավանդությունները ստուգաբանական են, այժմ բերենք մի վարքաբանական ավանդության օրինակ:

Սուլոյի ոտնատեղ

Գեղումը Սուլո անունով մի օքմի ա էլել: Էս Սուլոն իրա հընգորտանց հետ(գեղը բըրձրանալիս լիքը տափակ քարեր կան) էդ քարերի վրովը անց կենալիս իրա վօտնատեղն ա թողել:

Ըստ մեկ այլ տարբերակի՝

...դեղը անց կենալիս Սուլոն ասել ա՝ Էս իսկը իմ վօտնատեղն ա. վօտը դրել ա քարին ու հետքը թողել:

Այս ավանդությունը հիշատակված է Լալա Մինասեանի (Լիւսմիլա Միսկարեան) «Յոյսի հորիզոններ»⁸ գրքում՝ ծառայելով հեղինակի մանկության և հարազատ գյուղի պատմության գունեղ էջերից մեկի ստեղծմանը: Մեջբերենք հատվածը. «Արահետը ամբողջութեամբ գրաւած սալաքար մը պտկեր է: Իրաւ ալ, քարին վրայ հսկայական ոտնահետք մը դաջուած է: Կը դնեմ մէկ ոտքս, ապա՝ միւսը անոր առջեւ, սակայն դէռ 2 ևս ավելի թաթերու պէտք ունիմ անոր չափին մօտենալու համար... Աչքիս առջև կ'պատկերվի մեծ-մեծ քայլերով սար ու ձոր անցնող ածղահան, որոնք թափեն քարերն անգամ փոս կ'իյնան»⁹:

Իմաստային տեսանկյունից մանրատեղանունները դասակարգել ենք որոշակի խմբերում, որոնք պայմանական են:

ա) Նմանության վրա հիմնված մանրատեղանուններ

Քարցի ֆողեր-($\Delta > \text{ց}$, $\text{հ} > \text{ֆ}$) (այգիներ-գյուղի հյուսիսարևելյան կողմում)Վերևիցը որ մըտիկ ենք անում, էդ ֆողերը բարցերի ա նման:

Կուզիկ-(սար գյուղի հարավային մասում) Մի հատ սար կա, որ հեռվից նման ա կուզիկ մարդու:

Քամար քարեր-(քարակոյտ սարերից մեկի լանջն) Սարի դօշին հ'իրուր կողկի դասած քարեր կա. քամարի ա նման:

բ)Տեղանքի հատկանիշն անվանող մանրատեղանուններ

Այս տեղանուններն արտահայտում են իրենց անվանած օբյեկտի էական հատկանիշը:

Բերդատեղ-(հնավայր Կոզման լեռնաշղթայում) Այստեղ պահպանված են բերդի ավերակներ: Այս օրինակին հանդիպում ենք Ռ. Մալինյանի «Բառարան Նոյեմբերյանի տարածաշրջանի տեղանունների»-ում «Հնավայր Նոյեմբերյանի տարածաշրջանի Արճիս գյուղի մոտ: Վայրը Կոզման լեռնաշղթայի գեղանկար անկյուններից է, որտեղ հայտնաբերված է մ.թ.ա. 2-1 հազարամյակների ամրոցի և օժանդակ շինությունների հետքեր: Զբաղեց-

⁸ **Լ. Մինասեան**, Յոյսի հորիզոններ, Հալեպ, 2007:

⁹ Նույն տեղում, էջ 47:

նում է 4 հա տարածք»¹⁰: Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանում նշվում է դրա լեռնագագաթը: Մեջբերենք հատվածը՝ «Բերդատեղի մատ-Լեռնագագաթ Փոքր Կովկաս լեռնահամակարգում՝ Պապաքարի լ-շղթայում, Թումանյանի շրջանի Շնող գյուղից 1,5կմ հեռավորությամբ: Բարձր.1500մ: Լանջերն անտառապատ են: Լեռան բարձունքին գտնվում են Վահանաբերդ անունով Կիկլոպյան ամրոցի մնացորդներ»¹¹:

Բրդանց թաղ-(ու>ը, տ>դ) (թաղամաս գյուղի տարաքում)- Վախտին սրանից թաղումը մի զավոդ ա էլել, որ բերդանք են ըշխատել:

Զավոդի գլուխ-(տարածք գյուղի հին թաղամասերից մեկում)(ռուս.՝ գործարան) Մեկնաբանությունը նույն է, ինչ նախկինը:

Ժուլոբ-(տարածք սարն ի վեր)(ռուս.՝ անձրևատար) 3մ լեն, 2մ խորը և 3կմ յերգարություն ունեցող ժուլոբի (անձրևատար) նման մի ճամփա են սարքել ժողովուրթը, փետերով պատել, որ կարենան գերաննին անտառիցը գեղի տակն իչացնեն: Հըմի էլ էտ սարքած ճամփեն պետկը չի, բայց տեղը ըրելվում ա ու դրա հմար էլ ժուլոբ են ասում:

Իծանոցի դոշ-(սրալանջ- հարավարևելյան անտառում) (այծ> էծ>իծ)- Վախտին էս դոշումը շատ էծեր են պահել ու ըրածացրել:

Մատոռի ձոր-(ձոր-հարավարևելյան անտառամասում) (ու>ը) - Էս ձորումը հին մատոռի հետքեր կա:

գ)Իրադարձությամբ առաջացած մանրատեղանուններ

Որոշ մանրատեղանունների անուններն էլ ծագել են ինչ-որ մի դեպքից, իրադարձությունից:

Անց-(տարածք գյուղի արևելյան հատվածում) Էս տարածքը անց կենալու տեղ ա էլել հանդերը գնալու հըմար:

¹⁰ **Ռ. Մալինյան**, Բառարան Նոյեմբերյանի տարածաշրջանի տեղանունների, Երևան, 2005, էջ 25:

¹¹ **Թ. Հակոբյան** և ուրիշներ, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, 1985, էջ 545, այսուհետ՝ «ՀՏԲ»:

Հղաքարի դաշ-(սարալանջ գյուղի հարավարևմտյան անտառներում)(ա>ը) Էս դաշումը քարերի վրա աղ են լցրել ժողովուրդը, որ տավարը ըրածելիս լիզե: Ըտեն դեսը էտ դաշը կոչվում ա ըղաքարի:

Ռսի քարհանք-(տարածք-հնավայր գյուղի հյուսիսային ծայրամասում)(ու>ը)-Ըստեն ռուսնին վախտին քարեր են տարել:

Սա կիկլոպյան ամրոց է: Հենց սա ի նկատի ունի «ՀՏԲ»-ն, երբ գրում է «Գյուղի ծայրամասում 1.5 կմ-ի վրա պահպանվել են կիկլոպյան հսկայական ամրոցի հետքեր»¹²:

Գործկումի պավարոտ-(գյուղի ոլորաններից մեկը) վախտին ըստի առաջին հեռքը Գործկումի ավտոն ա ավարյա տվել (վթարի ենթարկվել):

Շեկկրման-(վայր գյուղ տանող ճանապարհի վրա) -(ի>ը) Ժըղովուրդը ըստյան շեկ ֆոդ (կավահող)` ա տանում:

դ) Նախկին իմաստով պայմանավորված մանրատեղանուններ

Որոշ տեղանուններ էլ, թեև կորցրել են անվան արտահայտած իմաստի բուն հատկանիշը, նշանակությունը, բայց շարունակում են կոչվել նախկին ձևով:

Թոփի գաղուկը-(գագաթ հյուսիսարևմտյան մասում) Մի վախտ էս գաղուկումը թոփ ա էլել դրած: Հըմի մենակ նկարըն ա մնացել վառոտի (դարպասի) վրա:

Խուշուրի փոս-(տարածք գյուղի անտառներում) (խուշուր-փայտ կտրելուց առաջացած մնացորդներ)-Հանդիցը փետ բերելիս գեղացիք սելերն ըստի են կանգնացրել, փետը կըտորել, նոր գեղը տարել: Ըտի միշտ խուշուր ա մնացել, դրա հմար էլ ասել են «խուշուրի փոս»:

Հվանոցի ձոր-(ձոր գյուղի հյուսիսարևմտյան մասում)(ա>ը), Մովետի վախտովն ըստի վենձ հըվանոց ա էլել:

Ճոխմատան կալը-(տարածք հարավային մասում) Դեսն անց կենալիս սելերը հա ճոռալիս են էլել:

¹² Նույն տեղում, էջ 464:

Այլ մանրատեղանուններ

Գուլբուդադ-(ձորակ, հանդամաս Կոզմանի լեռնաշղթայում Լճկաձոր ու Արճիս գյուղերի միջև) «Գարնանը հանդամասը պատվում է երփներանգ ծաղիկներով, որի համար կոչել են ծաղկասար: Օտարները թարգմանել ու տարածել են Գ.¹³»: (թուրք. *գյուլ-վարդ, դադ-սար*)

Դհանակի ձոր-(դհանակ-ակունք)-Ձոր, որտեղ գտնվում է աղբյուրի ակունքը: Այս իմաստը, սակայն, գնալով մոռացվում է բարբառակիրների կողմից: Դահանակ բառը մեկնաբանվում է իբրև թանկագին ակ¹⁴: Հետաքրքիր է, որ այս բառը բարբառում ունի ակունք իմաստը: Այլ բառը նույնպես ունի և՛ թանկարժեք քար, և՛ ակունք իմաստը:

Դուզ-(հողատարծք-գյուղի արևմտյան հատվածում) այս տարածքը համեմատաբար ամենաուղիղն է մշակության համար, դրա համար էլ կոչում են դուզ, ասել է թե՛ ուղիղ, հարթ տարածություն:

Եղվարդի դաշ-(սարալանջ հարավային անտառներում) յուրոտ մասրենիներով՝ վարդերով հարուստ լանջ: Տեղի է ունեցել գրական լեզվին ոչ այնքան հատուկ ու>ե՛ յուղ-յեղ հնչյունափոխություն:

Թալենի-(հանդամաս գյուղի վերևի մասում) թալա-բաց տարածություն +ենի հոգնակերտ

Թեղուտ բազեր-(հանդամաս հարավային անտառներում) թեղիներով ծածկված խորդուբորդ տարածք (բազ-փոս):

Հացու տախտը-(բացատ-գյուղի արևելյան անտառներում) հացիներով պատված ուղիղ տարածություն (տախտ-ուղիղ, հարթ տարածություն): Հետաքրքիր է, որ վերջինիս անունը նոր սերնդի կողմից սխալ է մեկնաբանվում՝ կապելով այն հաց բառի հետ, քանի որ այստեղ շատ կան աղբյուրներին կից տաղավարներ, որտեղ գյուղացիք կերուխում են անում՝ հաց են ուտում:

¹³ *Ռ. Մալինյան*, նշվ. աշխ., էջ 35:

¹⁴ *Հր. Աճառեան*, նշվ. աշխ., էջ 614:

Զարմանալին այն է, որ այս սխալը համատարած էր՝ չնայած կարծես թե տեղացիներից յուրաքանչյուրն էլ մեկնաբանում էր յուրովի՝ լսած չլինելով ուրիշներից:

Ղարասվի ձոր-(ձոր Արճիս գետի ձախ ափին) (թրք. դարաս, սու-ջուր)-Օտար լեզվի ազդեցությունը տաղանվան ստեղծման վրա պայմանավորված է հիմնականում այլազգիների հետ առևտրային և այլ հարաբերություններով, ինչը ենթադրում է նաև լեզվական փոխազդեցություններ: Իսկ անունը կապում են ջրի պղտորության (սև ջուր) հետ:

Ճալա-(վայր Դեբեդի հովտում) Այսպես է կոչվում մի բավականին մեծ հողատարածք. անունը ստացել է ցածրադիր ու տաք վայր իմաստից: Մ. Ասատրյանի գրքում¹⁵ բառը բացատրված է իբրև «ճահիճ», այդ իմաստը սակայն Արճիսի ենթախոսվածքում այլևս գործածական չէ:

Մոշուտ գոլ-(հանդամաս-գյուղի հարավային անտառներում) Մոշի թփերով պատված վայր: Ինչպես վերը նշված *Թեղուտ*, այնպես էլ այս օրինակը կազմվել է *թփուտ*, *թալուտ* բառերի համաբանությամբ:

Տախտի բաղեր-(այգիներ-Դեբեդ գետի հովտում) Ուղիղ տարածությունով այգիներ:

Ցմակձոր (ձոր-գյուղի արևելյան մասում)-ցամաք, ջրից զուրկ ձոր: Այստեղ նկատելի է շնչեղ խուլից խուլի անցման արտասանություն (ք>կ): Բացի դրանից՝ առկա է նաև հնչյունափոխություն ա>ը:

Ե)Մարդկանց անուններով կոչված մանրատեղանուններ

Երբեմն էլ որևէ վայր անվանվում է ինչ-որ մեկի անունով կամ մականունով այժմ անհայտ պատճառներով ու հանգամանքներում:

Հեպոյի գոլ (գյուլ-լիճ), **Շորանց քարափ**, **Տզմանի գաղուզ**(գագաթ), **Գիրագոսանց ֆողեր**(ֆող>հող ֆ>հ) և այլն:

¹⁵ Մ. Ասատրյան, Լոռու խոսվածքը, Երևան, 1968, էջ 32:

Հանդիպում են նաև այնպիսիները, որոնց մեկնաբանությունը հնարավոր չէ տալ, քանի որ ժամանակի ընթացքում դրանց ծագումը մոռացության է մատնվել, ինչպես՝ *Կոզման, Հեպլեզ, Շահլյամ* և այլն:

Ըստ կազմության՝ Արճիսի մանրատեղանունները գերազանցապես բառակապակցական են՝ բաղադրված հատուկ անունից և տեղանվան բնույթն անվանող անունից: Վերջիններս մեջ շատ են բարբառային բառերը՝ գադուզ(գագաթ), դաշ(լանջ), կալ(կալատեղ), դոշ(լանջ), բաղ(այգի), տախտ(ուղիղ, հարթ տարածություն), ֆող(հող):

Քիչ են հատկապես կազմությամբ պարզ՝ մենաբառ տեղանունները, ինչպես՝ *ժուռք, դուզ, ճալա*: Երբեմն հանդիպում ենք նաև կազմությամբ բարդ տեղանունների, այսպես՝ *Շղալնավ, Ցմակձոր, Կանչեղաքար*: Ածանցավորների թիվը ավելի քիչ է՝ *Կուզիկ, Գոմակ*:

Բառակազմական տեսանկյունից հետաքրքիր է, որ տեղանունների մեջ պահպանվել են հոգնակիակազմության բարբառային դրսևորումներ, ինչպես՝ -*նի* հոգնակերտը *Թալենի* բառում:

Տեղանուններին հատուկ երևույթ է օտար բառերի գործածությունը: Բացառություն չեն նաև մեր ուսումնասիրած մանրատեղանունները: Այստեղ հանդիպում ենք գոլ//գյոլ թուրքերեն բառին: Կամ էլ ամբողջական տեղանունն է արտահայտված օտար բառով, ինչպես՝ *Ղարասվի*(սև ջուր) *ձոր, Գյուլբուղաղ*(Վարդասար):

Առանձին ուշադրության են արժանի աղբյուրները, որոնց անունները դրված են երեք սկզբունքով՝ **1.**անունը պարունակում է աղբյուրին հատուկ հատկանիշը, ինչպես՝ Սըռնախալիր(Սառնաղբյուր- ա>ը, դ>խ,բ>պ, յու>ի), **2.**աղբյուրը պարունակում է սարքողի անունը, ինչպես՝ Համոյի ախալիր, Սանասարի ախալիր, Եղըշի ախալիր(ի>ը), Գիրագոսանց ախալիր, Վահագի ախալիր,- Ղուկասի ախալիր նաև մականունը՝ Կուկի ախալիր (դ-խ,բ-պ,յու-ի) կամ վերանորոգողի անունը՝ Շամոյի ախալիր. այս դեպքում անհասկանալի պատճառներով մոռացության է տրվում սարքողի անունը և նաև այն, թե ում է նվիրված, **3.**կրում է այն անունը,

ում հիշատակին կանգնեցվել է աղբյուրը՝ Ռաֆոյի ախպիր, Լաուրկի ախպիր (Լաուրիբրկի), Իսկանդարի ախպիր և այլն:

Արճիս գյուղի որոշ մանրատեղանուններ Կադաստրի վարչության անվանացանկերում բերված են նորովի: Օրինակ՝

Անդոյի թումբ-բլուր

Էրի գլուխ-խաչքար

Իրացանց-քարանձավ

Կուզիկ-բլուր

Ձկնաջուր-աղբյուր

Ճգնավոր-եկեղեցի

Ճգնավոր-մատուռ

Ճգնավոր-գերեզմանոց

Մատուռի ձոր-գերեզմանոց

Մատուռի ձոր-մատուռ

Պապի բոնչի-ծառ

Ռսի քարհանք-հանքավայր

Սառնաղբյուր-աղբյուր

Իսկ *Արքայից բլուր*, *Արճիսի հնագիտական վայր* և *Մարալանց հողեր* մանրատեղանունները, որ ընդգրկված են պետական մարմինների ցանկերում, մենք չենք հանդիպել մեր քննության ընթացքում:

Այսպիսով, հետազոտության շնորհիվ հավաքել ենք շուրջ 60 մանրատեղանուն և դրանց շուրջ հյուսված ավանդություն: Ավարտելով մեր ուսումնասիրությունը՝ նկատեցինք, որ ավանդությունների մեծ մասը ստուգաբանական էր: Սրանցից կարելի է պատկերացում կազմել արճիսցու բնավորության գծերի մասին՝ աշխատասիրություն, հնարամտություն և այլն: Կարելի է պատկերացում կազմել գյուղի հզոր նախնիների, նրանց խիզախ վարքի մասին:

Մանրատեղանունների հիմքում հաճախ ավանդություններ են: Մանր օբյեկտներին տրված անունները խոսում են այն մասին, որ անունները ծնվել են շրջապատի ճանաչողության արդյունքում՝ յուրահատուկ հնչյունական ու բառային փոփոխություններով:

Алета Акопян, Норайр Погосян – Микротопонимы области Тавуш деревни Арчис и связанные с ними предания. – В нашей работе мы попытались собрать микротопонимы и связанные с ними предания области Тавуш деревни Арчис и попытались изучить их языковые значение. Из всех собранных нами примеров микротопонимов в словарях топонимов встречаем только один, а примеры преданий для нас все новость.

Aleta Hakobyan, Norair Poghosyan – *The Names of mikrotopoi of Archis Village of the Region of Tavush and Their Traditions.* – We have attempted to register the traditions and names of mikrotopoi of Archis village of the region of Tavush and have tried to illustrate their linguistic analysis. Only one name of our examples of the names of mikroyopoi is met in the dictionary of topoi, as far as it concerns the traditions: all the mentioned examples are new.

Բանալի բառեր: Գյուղ Արճիս, ժողովրդական բանահյուսություն, ավանդություն, մանրատեղանուն, ժողովրդական ստուգաբանություն, բարբառ, առասպելական տարրեր:

Ключевые слова: Село Арчис, народный фольклор, предания, микротопонимы, народное толкование, диалект, мифические компоненты.

Key words: Village Archis, folklore, tradition, names of mikrotopoi, etymology, dialect, mythical elements.

**ԲԱՂԱԴՐՅԱԼ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԵՐԿԱ
ԺԱՄԱՆԱԿԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐԻ ԲԺՇԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ**

ՀԱՍՄՏԻԿ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

(ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ)

Բաղադրյալ երկրորդական ժամանակների կիրառությունը, ինչպես գիտենք, սովորական է եղել դեռևս գրաբարում: Դրանց կազմությանը սկսած գրաբարից մասնակցել են անցյալ (հետագայում՝ հարակատար, վաղակատար) և ապառնի դերբայները (տեսեալ եմ, էի, իցեմ, տեսանելոց եմ, էի, իցեմ): Իսկ անկատար դերբայը շատ ավելի ուշ է սկսել մասնակցել երկրորդական բաղադրյալ ժամանակների կազմությանը:

Անկատար դերբայն իր կիրառություններով աչքի է ընկնում միջին հայերենի երկրորդ շրջանում (15-17դդ)¹: Սա միանգամայն տրամաբանական կարելի է համարել, եթե նկատի ունենաք, որ առաջին շրջանում միջին հայերենը մեզ է ներկայանում կիլիկյան գրական հայերենով, որի գլխավոր հատկանիշը, ինչպես գիտենք, *կու-*ով սահմանական ներկայի կազմությունն է, և անկատար դերբայի մասին, բնականաբար, խոսք լինել չէր կարող: Միջին հայերենի առաջին փուլում մեր մատենագրության մեջ *ուլ-*ով անկատարի երկու նմուշ է վկայված: Առաջինը հանդիպում է 12-րդ դարում Մխիթար Հերացու աշխատության մեջ. «Ապա թե հիւանդին թպտիրն *մաշում* լինի, կերակուր չոր չէ պատեհ»², իսկ երկրորդը՝ 13-րդ դարում՝ Վարդան Արևելցու «Պատմութիւն տիեզերական» աշխատության մեջ. «...զինչ քրիստոնեայ կայ և արքայունք ընդ ծով և ընդ ցամաք՝ ամենու սիրտն հետ քեզ լաւ են, և քեզ աղոթք են առնում»³:

¹ Առաջնորդվել ենք «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» գրքում կատարված շրջանաբաժանմամբ, տե՛ս նշված աշխ., հ. Ա, Երևան, 1972, էջ 42-44:

² *Մխիթար Հերացի*, Ջերմանց մխիթարութիւն, Վենետիկ, 1832, էջ 61:

³ Տե՛ս Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Ե., 1972, էջ 304:

Եթե հաշվի առնենք լեզվաբանության մեջ առաջ քաշված այն կարծիքը, որ վերոնշյալ *մաշում*-ը արաբերեն բառ է և նշանակում է «չարաբաստիկ»⁴, ապա մեզ կմնա *ում*-ով անկատարի մեկ վկայություն միայն:

Այլ է պատկերը միջին հայերենի երկրորդ՝ Ջահուկյանի շրջանաբաժանմամբ աշխարհաբարացման ենթաշրջանում (15-16-րդ.)⁵, երբ Կիլիկիայի հայկական պետության անկումն իր հետ բերում է կիլիկյան հայերենի թուլացում, աշխուժանում են հայերենի բարբառներն ու ենթաբարբառները և լեզվի անմիօրինակությունն էլ շատանում է ի հաշիվ բարբառայնությունների: Այս շրջանում անկատար ներկայի հիման վրա արդեն տարորոշվում են բարբառների *ում*/ն *կը* ճյուղերը:

Հայտնի փաստ է, որ անկատարի *-ում* վերջավորությունն իր ծագմամբ կապվում է ներգոյականի *ում*/հոլովածնի հետ: Հիմնվելով այն փաստի վրա, որ բոլոր *-ում* վերջավորություն ունեցող բարբառներն ունեն նաև *ում*-ով անկատար՝ Ա. Այտընյանի կողմից առաջ քաշված այս տեսակետն⁶ անվերապահորեն ընդունում են բոլոր հայագետները⁷:

Անկատար դերբայի գործածությունը հաճախական է դառնում 16-17-րդ. սկսած: Այս շրջանում արդեն սովորական են դառնում անկատարով կազմված դիմավոր ձևերը⁸: Ուշագրավ է հատկապես այն, որ նշված ժամանակաձևերը իրենց արտացոլումն են գտել ոչ միայն տվյալ ժամանակաշրջանի առօրյա խոսքում և գեղարվեստական գրականության մեջ, այլ նաև՝ գիտական՝ տվյալ դեպքում՝ բժշկագիտական գրականության մեջ:

Հիշյալ ժամանակաշրջանում են (17-րդ դար) շարադրվել Սեբաստիայի բժշկագիտական դպրոցի ներկայացուցիչներ Ասար և

⁴ Տե՛ս Ա. Մարգարյան, Հայրերենի հարադիր բայերը, Երևան, 1966, էջ 471:

⁵ Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 49:

⁶ Տե՛ս Ա. Այտընյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Երևան, 1987, էջ 203:

⁷ Տե՛ս Ակնաբկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Երևան., 1972, էջ 366, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. II, Երևան 1975, էջ 87-90:

⁸ Տե՛ս Մ. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 1981, էջ 265:

Բունիաթ Սեբաստացիների բժշկարանները: Կիլիկիայի բժշկական դպրոցից հետո մեզանում ստեղծված բժշկագիտական ձեռքբերումները զարգացրին Ամասիայի և Սեբաստիայի դպրոցները: Եթե 15-րդ դարում վերելք ապրեց Ամասիայի դպրոցը՝ ի դեմս Ամիրդովլաթ Ամասիացու, ապա 16-րդ դարի վերջից առավել աչքի ընկավ Սեբաստիայի դպրոցը, որն իր վերելքին հասավ 17-րդ դարում: Այս բժշկագիտական դպրոցից հատկապես ուշադրության են արժանի Ասար Սեբաստացու «Գիրք բժշկական արհեստի» (տպագրված Երևան, 1987) և Բունիաթ Սեբաստացու «Գիրք բժշկութեան տումարի» (տպագրված Երևան, 1993) բժշկարանները, որոնց քննությունը մեզ պատկերացում է տալիս 16-17 դդ. լեզվական վիճակի մասին: Նշված բժշկարանները, ինչպես նկատում է Ղ. Հովնանյանը, հարազատորեն պահպանել են *կու-* ով ներկան: Դեռ ավելին, Հովնանյանը Ասար Սեբաստացու բժշկարանը առանձնացնում է *կու-* մասնիկի կիրառության տեսակետից⁹: Խոսելով Սեբաստացիների և նորագույն բժշկարանների լեզվի մասին՝ նա նկատում է, որ դրանք «շատ տեղ կը մօտենան արդի ռամկօրէնին՝ թէ ըստ նշանակութեան բառից եւ բացատրութեանց, եւ թէ ըստ դասաւորութեան մասանց նախադասութեան. այնչափ մինչեւ շատ անգամ ճշդիւ կը նոյնանան արեւմտեան (Կ. Պոլսոյ) բարբառոյն...»¹⁰:

Չնայած *կու-* ով ներկայի կիրառությանը՝ վերոհիշյալ բժշկարաններում առանձին դեպքերում նկատելի են նաև արևելյան բարբառներին բնորոշ *-ում* և *-ման* վերջավորություններով անկատար ներկայի ձևեր: Միջին հայերենի վերջին շրջանի համար սա, թերևս, կարելի է բնական դիտել: Ասար Սեբաստացու բժշկարանում ուշադրության է արժանի հատկապես անկատար դերբայով և *լինել* անկանոն բայի հարադրությամբ կազմված բաղադրյալ երկրորդական ժամանակի գործածությունը:

⁹ Տե՛ս Ղ. **Հովնանեան, Հետազոտութիւնք նախնեաց ռամկօրէնի վրայ**, Մասն Ա, տետր Բ, Վիեննա, 1897, էջ 509:

¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 510:

Արդի հայերենում անկատարի միայն *-լիս* վերջավորությամբ ձևն է մասնակցում երկրորդական բաղադրյալ ժամանակների կազմությանը (ապրելիս է լինում, եղել): Սա, բնականաբար, իր հիմքն ունի «ս» ճյուղի բարբառներում, որտեղ ներկա և անցյալ անկատար ժամանակները կազմվում են *լիս* անկատարով (ուզելիս իմ, իս, ի): Ինչ վերաբերում է *ուիս*՝ ով անկատարին, ապա պետք է ասել, որ այն թե՛ ժամանակակից հայերենում, և թե՛ բարբառներում մասնակցում է միայն հիմնական բաղադրյալ ժամանակների կազմությանը, իսկ երկրորդական բաղադրյալ ժամանակների կազմությանը գրեթե չի մասնակցում: Առանձին բարբառային օրինակներ նկատելի են միայն Արարատյան և Թիֆլիսի բարբառներում, ավելի կոնկրետ՝ Խ. Աբովյանի («Հագար կպրե կարաս, հագար օձ, կարիճ՝ բերանները բաց, նրան *ըլեին սպասում*, որ քրքրեն, կուլ տան, մարսեն»: «Հեր, մեր, ազգական... իրան անունը տալիս ու սուր *ըլեին անում*»: ԽԱԲ., Իջ 55), Գ. Սունդուկյանի («Թե մութ գիշեր էլ է, հենց գիդենաս աստղիրը հիդդ մասլահաթ *ըլին անում*» ԳՍ, էջ 98, «Էն ուփրո լավ չի ըլի, վուր գեդնի տակն ըլիմ ու գերեզմանս վուտի տակը կոխչըտում ըլին»: էջ 135) ստեղծագործություններում: Ա. Աբրահամյանի վկայմամբ դրանք հիմնականում հանդիպում են նախահեղափոխական շրջանի հայ գրողների երկերում¹¹. տվյալ դեպքում նա օրինակ է բերում Մուրացանից («*Լողացնում է եղել*» Մուր., I, էջ 150: «*Աղոթում է եղել*, երբ կույր աչքերով *գտնվում է եղել* Սևանում» ն.տ., էջ 151):

Անկատարի նման կիրառությունները աչքի են ընկել 18-19-րդ դդ, մինչդեռ Ասար Մեբաստացին գործունեություն է ծավալել 16-17րդ դդ., և նրա բժշկարանում նմանակարգ տաս գործածություն ենք արձանագրել.

Գնալ բայով՝ «Աչացն, որ արտասուն *լինի գնում* խարեն՝ աչքն քաշեն, արտասուն կտրե» (էջ 187): «Ինչ տեղէ, որ երակ լինի կըտրիլ արին *լինի գնում* վեր էն ցանեն արինն կապե» (էջ 188): Թե

¹¹ Տե՛ս **Ա. Աբրահամյան**, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953, էջ 92:

մարդոյ քէամէն արիւն լինի գնում, է(7) գարէ կշռանոք խմէ, շուտով ազատի Աստուծով (էջ 189):

Ուտեղ բայով՝ «Թէ աթաշակի համար *լինի ուտում*՝ թող կերակրին քիչ աղ ձգէ» (էջ 225): «Ի Ա (1) օր, որ *ուտում լինի*, աղ չուտէ» (էջ 226):

Տանեղ բայով՝ «Թէ շատ դուրս *լինի տանում*, որ նստոտեղն ցաւի, Ա (1) ձու դեղնուց խորովէ, մին փոքր նշի յուղ հետն խառնէ մլիամ դառնա» (216): «Որ օգտէ մարմնոյն թուլութեան և ուխտաւորութեան և մոռացկոտութեան և որ գիշերն մարէ կամ ջրվէթ *լինի տանում*» (էջ 228):

Թափեղ բայով՝ «Թէ աչացն արտասուն *լինի թափում* աչքն քաշէ, արտասուն կտրէ» (էջ 188):

Ցաւալ բայով՝ «Թէ որ փիք ունենայ, որ փորն *ցաւում լինի* Դ (4) դրամ ֆլուս խիարշամպայ ձգէ...» (էջ 117)

Երեսալ բայով՝ «Թէ նստոյտեղին մէջն *երեսում լինի* կամ դուրս լինի եկել, առ քաֆուր դէյսուրին...» (էջ 216):

Վերոհիշյալ կիրառությունները կարող են վկայել, որ տվյալ ժամանակաշրջանում բարբառներն ավելի գործուն են եղել, ուսով անկատարի բարբառային կիրառությունն էլ ևս մեկ ապացույց է անկատար դերբայի՝ ներգոյական հոլովից առաջացած լինելու մասին¹²:

Անկատարի իբրև առանձին դերբայի առանձնացումը հայ քերականագիտության մեջ կատարել է Մ. Աբեղյանը՝ փաստելով, որ վերջինս առանձին գործածություն չունի և եղած որաշ օրինակներն էլ՝ *գնում ժամանակ*, *գնում տեղ*, (փոխանակ գնալու) նա բարբառային է համարում¹³:

Ասար Սեփաստացու բժշկարանում մեկ անգամ հանդիպում է անկատար դերբայի անկախ կիրառություն. «Չուր չիմին, որ պահես, *ուտում ժամանակն* ձգես, ջրին մէջն եփես» (էջ 226):

Այստեղ ևս այս անկատար դերբայը ակնհայտորեն արտահայտում է «*ուտելու ժամանակ*» իմաստը:

¹² Տե՛ս նույն տեղում

¹³ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 313:

Բժշկարաններում կիրառվել է նաև-*ուլ*-ին համարժեք -*ման* վերջավորությամբ անկատար դերբայը, որը բնորոշ է Նոր - Ջուդայի բարբառին, ընդ որում այս ձևը կիրառվել է *ուլ*-ին գուգահեռ (ուլ-ը ընդհանուր է եղել բացի միավանկներից բոլոր բայերի համար): Ջուդայի բարբառում -*ման* են ստանում միայն չեզոք, կրավորական և կրավորակերպ-չեզոք բայերը (վախման ամ, խագման ամ, հալման ամ), իսկ ներգործական բայերը -*ման* կարող են ստանալ միայն կրավորական իմաստ արտահայտելու դեպքում, իսկ բայարմատում որևէ ածանցի առկայության դեպքում (վ, ն, ց) ներգործականը արտահայտվում է առանց ածանցի (թողնել-թողման), իսկ կրավորականի դեպքում ածանցը մնում է¹⁴:

Հետագայում արդեն հենց Ջուդայի բարբառում *ուլ* ճյուղի բարբառների ազդեցությամբ տեղի է ունենում *ման*-ից *ուլ*-ի անցում, իսկ ման-ը պահպանվում է միայն միավանկ *գալ*, *տալ*, *լալ* բայերի համար¹⁵:

Անկատարի այս *ման*-ը դարձյալ կապվում է ներգոյական հոլովի հետ. տվյալ դեպքում *ման*-ը ումն վերջավորությամբ բայանուն- գոյականի ներգոյականն է (շարժումն – շարժման – ի շարժման եմ)¹⁶: Իբրև ուլ-ով վերջավորվող գոյականի թեքված ձև մեր մատենագրության մեջ *ման*-ի կիրառություններ բազմիցս կարելի է գտնել թե՛ գրաբարի և թե՛ ետգրաբարյան շրջաններում: Նմուշները հայտնի են դեռևս 7-րդ դարից՝ Հովհան Մամիկոնյանի, Ա. Շիրակացու աշխատություններում¹⁷: Միջին հայերենի երկրորդ շրջանում արդեն քիչ-քիչ նկատելի է *ի* նախդրի անկում, ներգոյականի իմաստի մթազնում և գոյականից ժամանակային անցում բայի: Այսպես օրինակ՝ Ամիրդովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկութեան» (Երևան, 1940) աշխատության մեջ գուգահեռաբար կիրառվել են և՛ նախդրավոր և աննախդիր ձևեր. *ի շարժման կայ* (էջ

¹⁴ Հ. Աճառյան, Քննութիւն Նոր-Ջուդայի բարբառի, Երևան, 1940, էջ 250-253:

¹⁵ Նույն տեղում, էջ 255:

¹⁶ Նույն տեղում, էջ 256:

¹⁷ Տե՛ս Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953, էջ 102:

50), *ի լարման լինայ* (122), *կանգնման լինայ*, *գնացման ջրերն* (էջ 273):

Բունիաթ Սեբաստացու բժշկարանում հանդիպող երկու օրինակներում էլ ներգոյականի իմաստը գիտակցվում է, մանավանդ որ կա ի նախդրի առկայությունը. «Նշանն, որ ի սավտայէ լինի այն է, որ...քուն չի լինայ, շատ գրուցել չուզի, երակն *ի լարման լինի*» (էջ 162): «Նշանն, որ ի յարենէ լինի այն է, որ յորժամ ձայն տաս ծիծաղի և երեսն կարմիր լինի և երակն *ի կանկման լինի*» (էջ 66):

Պատկերը փոքր-ինչ այլ է Ասար Սեբաստացու բժշկարանում, որտեղ -*ման*-ով անկատարի հինգ օրինակներից միայն մեկում է ներգոյականի իմաստը փոքր-ինչ զգալի. «Թէ մարդ հանապազ անպատճառ *ի ծիծաղման լինի*, վրան հայելով ծիծաղն դարբեցնէ» (էջ 185):

Մյուս դեպքերում -*ման*-ով անկատարը արդեն կիրառվել է իբրև ժամանակակազմիչ դերբայ, ի դեպ հանդես է գալիս նաև *լինել* բայի հարադրությամբ՝ իբրև երկրորդական բաղադրյալ ժամանակ: Բերենք օրինակները. «Թէ կնոջ մեջքն կապվել լինի *չընի տեսման* մի քանի օր յիրիկունն Բ (2) դրամ այս մաջունես հապ շինէ կուլ տայ, մեջքն բացվի» (էջ 223): «Եթէ Ա(1) կամ Բ (2) օրէն կէ հետ բլղամ կամ արիւն *լինի գոլման*, առ Ե(5) դրամ դուրսի քաֆուր ծեծէ» (էջ 220): «Թէ կերած կերակուրն դաբգ լինի արարել, դուրս *չլինի տանում*, մինակ բլղամ *լինի գոլման*, առ դդման խատիճ Ը» (8) դրամ (էջ 218):

Ասար Սեբաստացու բժշկարանում մեկ անգամ միայն -*ման*-ով անկատարը հանդես է գալիս անկախ ածականական դերբայի (ոչ ժամանակակազմիչ) կիրառությամբ. «Եթէ *ցավման աչքն* քաշեն կամ խարեն, աչաց դեղերի մեջ խառնեն, խիստ օգտէ աչաց մթըննալուն և հաւկուրութիւնն տանի» (էջ 188): Այստեղ արդեն *ցավման*-ը «ցավող» իմաստն ունի:

Այսպիսով, ամփոփելով մեր խոսքը՝ ևս մեկ անգամ նշենք, որ ուշ միջնադարի բժշկարաններում ուշադրության են արժանի անկատար դերբայով կազմված բաղադրյալ երկրորդական ժա-

մանակների բարբառային կիրառությունները, որոնց քննությունը կարող է օգտակար լինել միջին հայերենի ու բարբառների ուսումնասիրության համար:

Асмик Тадевосян – Диалектные приминение второстепенного настоящего составного времени в лечебниках позднего средневековья. – Причастие несовершенного вида со своими применениями начинает функционировать на втором этапе среднеармянского языка (15-17 вв.), когда в условиях ослабления киликийского литературного армянского языка, неоднородность языка умножается за счет диалектных проявлений. В этом периоде созданы лечебники медиков Асара Себастаци и Буниата Себастаци (17-ий век), где употреблялись формы настоящего времени с окончаниями *-nɪʊ* и *-uʃuʃ*, которые характерны для восточных диалектов.

В лечебнике Асара Себастаци особенно примечательно употребление несовершенного причастия *-nɪʊ* в составе второстепенного составного времени с нерегулярным глаголом *լիկել* (*быть*). Только однажды встречается независимое употребление этого причастия.

В обоих лечебниках параллельно с *-nɪʊ*-ом применялось несовершенное причастие с окончанием *-uʃuʃ*, которое характерно для джугайского диалекта. Это причастие тоже в основном применялось вместе с глаголом *լիկել*, составляя второстепенное составное время, за исключением одного независимого прилагательного использования (*ցաւաւի աչք* – больной глаз).

Hasmik Tadevosyan – Dialectal Usage of Secondary Composite Present Tense in the Medical Books of the Late Middle Ages. – Imperfect participle with its applications starts functioning in the second stage of Middle Armenian (15-17cc.), when the language's non-uniformity is multiplied at the expense of dialectal manifestations, as a result of weakening Kilikian literary Armenian. Medical books of Asar Sebastatsy and Buniat Sebastatsy are compiled in this period (17-th century). There were used present tense's forms with endings *-nɪʊ* and *-uʃuʃ*, which are characteristic for East dialects.

Use of imperfect participle with ending *-nɪʊ* is especially remarkable in Asar Sebastatsy's medical book. It is used with irregular verb *լիկել* (to be) as a

part of secondary composite tense. Independent use of this participle occurs only once.

Imperfect participle with the ending *-ւան* is used in parallel together with *-ում* in both medical books. This participle, which is typical for the Dzhuga dialect, is also generally applied with the verb *լինել*, making secondary composite tense. An exception is the independent use of this participle as an adjective, which occurs only once (*ցամառն աչք-sore eye*).

Բանալի բառեր: միջին հայերեն, բարբառ, բարբառային ձև, բժշկարան, բաղադրյալ երկրորդական ժամանակ, անկատար ներկա, անկատար դերբայ:

Ключевые слова: средне армянский язык, диалект, диалектная форма, лечебник, второстепенное составное время, несовершенное настоящее время, причастие несовершенного вида.

Key words: middle Armenian, dialect, dialect form, medical book, secondary composite tense, present imperfect, imperfect participle.

**ՀԱՅԿԱԿԱՆ ՁԵՌԱԳԻՐ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ. ՄԿԶՐՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ
ԶԱՐԳԱՑՈՒՄԸ**

ԽԱԶԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

(Երևանի պետական համալսարան)

Գրավոր մշակույթի տարածման, կրթական ու պատմական երկերի ստեղծման համար առաջնային խնդիրներից էր մատյան ստեղծելու ավանդույթի հիմնադրումը և դրանով իսկ լուսավորության տարածումը: Գրերի գյուտից հետո զարկ է տրվում դպրության զարգացմանն ու գրչության արվեստի ուսուցմանը: Այդ է փաստում Կորյունն իր հայտնի վկայությամբ. «Եւ եղեալ սկիզբն թարգմանելոյ զգիրս նախ յԱռակաց Սողոմոնի, որ ի սկզբանն իսկ ծանօթս իմաստութեանն ընծայեցուցանէ լինել, ասելով՝ եթէ **Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ. Որ եւ գրեցաւ ձեռամբն այնորիկ գրչի, հանդերձ ուսուցանելով զմանկունս գրիչս նմին դպրութեան**» (ընդգծումը մերն է)¹:

Թարգմանված առաջին իսկ պատգամը ուղեցույց եղավ ինչպես ժամանակի, այնպես էլ միջնադարյան գրիչների ու դպրության կենտրոնների համար: V դարի գրական վերելքով սկիզբ դրվեց ձեռագրեր կազմելու գործընթացին, որը լայն թափ ստացավ հետագա դարաշրջաններում՝ դառնալով հազարամյա պատմություն ունեցող հայ ժողովրդի գիտական-գեղարվեստական մտքի և մեկ ապացույցը: «Ձեռագիրը պատմամշակութային հուշարձան է, տվյալ ժողովրդի պատմական զարգացման արտահայտություններից մեկը, ստեղծված որոշակի հանգամանքներում, տեղում և ժամանակում»²:

¹ **Կորյուն**, Վարք Մաշտոցի (բնագիրը, ձեռագրական այլ ընթերցվածներով, թարգմանությամբ, առաջաբանով և ծանոթություններով ի ձեռն պրոֆ. դոկտոր Մանուկ Աբեղյանի), Եր., 1941, էջ 50:

² **Ա.Մաթևոսյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դարեր, Եր., 1988, էջ Ե.:

Ձեռագրի կազմությունը պահանջում էր մի շարք գիտելիքներ: Հաճախ մեկ ամբողջական մատյանն ավարտին հասցնելու աշխատանքներին մասնակցում էին 5-6 մասնագետներ՝ թուղթ կոկողը, ձեռագիր կազմողը (նախնական կազմություն, որի մեջ մտնում էր ձեռագրի չափսերի որոշումը, պրակների բաժանումը, տողատումը և այլն), թանաք պատրաստողը, գրիչը, սրբագրիչը (երբեմն գրիչը նաև սրբագրիչն էր), ծաղկողը և ուրիշներ: Մատյանի կազմության համար անհրաժեշտ էին տասնյակ գործիքներ³, որոնք պատրաստվում էին դարձյալ տարբեր անձանց կողմից (գրչության նպատակով կիրառվող գործիքներից մի քանիսի պատկերները տե՛ս նկ.1): Նշյալ աշխատանքները նորություն էին հայ վարպետների համար, ովքեր այդ ամենը հիմնականում քաղում էին տվյալ ասպարեզում արդեն փորձ կուտակած հույներից: Ճիշտ է, ուղղակի վկայություն այն մասին, թե ինչպես են հայ մասնագետները կիրառել հույների կամ ուրիշների փորձն այս ոլորտում, բացակայում է, սակայն եղած սակավաթիվ վկայությունները ցույց են տալիս, որ դեռևս V դարում գրիչներն ու ծաղկողները ջանք չեն խնայել ստեղծելու լավագույն մատյաններ, որոնք այժմ էին ընկնում նաև իրենց գեղարվեստական ձևավորմամբ: Շվեդ գիտնական Նորդենֆալկն իր աշխատության մեջ նշում է, որ դեռևս V-VI դարերում Կեսարիայի գրչության կենտրոններից Հայաստան է բերվել մի Ավետարան, որն էլ իր հերթին օրինակ է ծառայել հայկական նորաստեղծ Ավետարանների նկարագարդման համար⁴: Ուստի բնական պետք է համարել նաև ձեռագրի մյուս բաղկացուցիչ մասերի նախնական ազդեցությունը հունական ձեռագրերից:

Մատյանի կարևոր միավոր է կազմում հիշատակարանը (եզրը՝ անգլ. colophon, որ ծագում է հուն. *κολοφων* «զագաթ, ա-

³ Այդ գործիքների գծապատկերները տե՛ս **Ա. Գևորգյան**, Արիեստներն ու կենցաղը հայկական մանրանկարներում, Եր., 1978, պատկերներ XXVII-XXX:

⁴ **Nordenfalk C.**, Die spätantiken Kanontafeln. Kunstgeschichtliche Studien über die eusebianische Evangelien Konkordanz in den vier ersten Jahrhunderten ihrer Geschichte, Textband, Göteborg, 1938, s.273.

վարտ» բառից⁵). «Գրիչները, հայ մատենագրության ասպարեզում, այլ ձեռագիր ընդօրինակություններից բացի, կատարել են շնորհակալ մի այլ գործ ևս. նրանք իրենց ընդօրինակած ձեռագրերի բացատներում կամ տեքստերի վերջերում թողել են գրառումներ և հաղորդել անչափ արժեքավոր պատմական տեղեկություններ ձեռագրի արտագրության հանգամանքների, գրության վայրի, պատվիրատուի, ժամանակակից քաղաքական իրադարձությունների և բազմաթիվ այլ հարցերի մասին»⁶:

Թե երբ և ինչ բովանդակությամբ է հիշատակարանն առաջին անգամ տեղ գտել հայերեն ձեռագրերում, ստույգ վկայություններ չկան. V դարից մեզ ամբողջական ձեռագիր չի հասել: Ե-ԺԲ դարերի հիշատակարանների գրքի առաջաբանում Արտաշես Մաթևոսյանը գրում է. «Եթե Ե և հաջորդ դարերից մեզ ամբողջական ձեռագրերի հիշատակարաններ չեն հասել, ապա այդ ժամանակներից մենք ժառանգել ենք հարուստ մատենագրություն, որոնց առաջաբանները կամ խորագրերը հիշատակարանային տվյալներ են պարունակում մասնավորապես երկի բնույթի, հեղինակի ու ստացողի մասին»⁷:

Ա. Մաթևոսյանի կարծիքով առանձին հիշատակարանի անհրաժեշտությունն այս ժամանակահատվածում թերևս չի կարևորվել, քանի որ դրա բաղադրիչ միավորները՝ գրիչ, վայր և այլն, լրացվում էին այդ շրջանում ստեղծվող գրքերի առաջաբաններում: Բիարկե, անվիճելի է անվանի պատմաբանի այն պնդումը, որ հին երկերի առաջաբանները որոշակիորեն իրականացնում էին նաև հիշատակարաններին հատուկ գործառույթ: Մեր կարծիքով, սակայն, այդ երկու միավորները, չնայած որոշ նմանությունների, այդուամենայնիվ չէին փոխարինում միմյանց և ունեին իրենց յուրահատուկ դերը:

⁵ Древнегреческо-русский словарь, составил И. Х. Дворецкий, том I, Москва, 1958, ст. 964.

⁶ **Ա. Զ. Աբրահամյան**, Հայ գրի և գրչության պատմություն, Եր., 1959, էջ 379:

⁷ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ Ե-ԺԲ դարեր, աշխատասիրությամբ Ա.Ս. Մաթևոսյանի, Եր., 1988, առաջաբան, էջ ԺԱ:

Մեզ հասած թվակիր ամենահին ձեռագիրը, որն ունի նաև ընդարձակ հիշատակարան, 887 թվականին գրված հռչակավոր Լազարյան Ավետարանն է. «*Գրեցաւ սուրբ եւ կենսաբեր Աւետարանս այս ՅԼԶ.(887) թուականութեան Հայոց, ի հայրապետութեան Գեորգայ Հայոց կաթողիկոսի, եւ յիշխանութեանն Աշոտի իշխանաց իշխանի, և ի տերութեանն Սմբատայ Բագրատունւոյ...*»⁸:

Նշյալ հիշատակարանը Ա. Մաթևոսյանը համարում է «կատարյալ նմուշ»⁹: Մեկ այլ աշխատության մեջ պատմաբանն այն կարծիքն է հայտնում, թե V դարում մեզանում հիշատակարան գրելու սովորություն չի եղել¹⁰, ուստի IX դարի այս հիշատակարանը եզակի օրինակ է իր դարի համար: Գրեթե նույն ձևակերպումն ենք տեսնում նաև մեկ այլ տեղ. «Ձեռագրի գրիչներն ու պատվիրատուները, կազմողներն ու նորոգողները, ձեռագրի վերջում, առանձին հատվածներից հետո, սկսած IX դարից թողել են սեղմ ու համառոտ նշումներ»¹¹:

Վկայակոչելով Նիկոլ Աղբալյանի կարծիքը V դարում հիշատակարան լինելու վերաբերյալ՝ Հ. Բախչինյանը գրում է. «Շատ հնարավոր է, որ V դարում գրված և ընդօրինակված մեսրոպատառ ձեռագրերն արդեն ունեցել են հիշատակարաններ»¹²:

Մեր կարծիքով ևս հայերեն մատյաններում հիշատակարանի սկիզբը հավանաբար կարելի է համարել V-VI դարերը, այսինքն՝ հիշատակարան գրելու սովորությամբ IX դարում արդեն ընդունված երևույթ էր: Սույն պնդումը կարելի է բացատրել այսպես.

⁸ Հիշատակարանն ամբողջությամբ տե՛ս Ա.Ս.Մաթևոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ Ե-ԺԲ դդ., Եր., 1988, էջ 40:

⁹ **Ա.Մաթևոսյան**, Լազարյան ձեռարանի հնագույն ձեռագիրը, ՊԲՀ, 1973, N1, էջ 128:

¹⁰ **Ա. Մաթևոսյան**, Հայերեն ձեռագրերի հիշատակարանները միջնադարյան հայ մշակույթի ուսումնասիրության սկզբնաղբյուր, Եր., 1998, էջ 11:

¹¹ Հայ ժողովրդի պատմություն, հ. III, Եր., 1976, էջ 815:

¹² **Հ.Գ. Բախչինյան**, Հայկական ձեռագրերի հիշատակարանները, Եր., 1980, էջ 50:

Ա. Եթե Լազարյան Ավետարանի հիշատակարանը, որ ստեղծվել է 887 թվականին, և իրավամբ կարելի է համարել «կատարյալ նմուշ», ապա մինչև այդ «կատարելություն»-ը, ժամանակի ընթացքում այն պետք է անցներ որոշակի զարգացում. այդօրինակ զարգացումը երևում է նաև հետագա դարաշրջանների հիշատակարաններում՝ ինչպես ծավալի, այնպես էլ բովանդակության առումով. ավելի ուշ շրջանի որոշ հիշատակարաններ նույնիսկ վերածում են առանձին ստեղծագործությունների:

Կարևոր է նաև մեկ այլ հանգամանք. Լազարյան Ավետարանից քիչ ուշ գրված հայտնի «Ծուղրութի» (974թ.) և «Թարգմանչաց» (966թ.) Ավետարաններում հանդիպում ենք մի ուշագրավ երևույթի՝ հիշատակարանի հանդեպ ձեռագիր կազմողների վերաբերմունքին: Երկու Ավետարանների հիշատակարանների համար էլ ընտրված է գեղարվեստական ձևավորման յուրահատուկ ձև՝ մի դեպքում խաչի, իսկ մյուսում՝ ուղղանկյան (նկ. 2 և 3): Այս և նմանօրինակ մյուս հիշատակարանները ցույց են տալիս, որ դրանց կարևորությունը խորապես գիտակցվել է: Եվ եթե IX-X դարերում հանդիպում են այսպիսի կատարյալ օրինակներ, ուստի կարելի է կարծել, որ հիշատակարան գրելու ավանդույթը ձևավորվել է առավել վաղ: Նախնական շրջանում դրանք հավանաբար եղել են համառոտ հիշատակումներ (կամ հիշատակագրություններ) գրչության վայրի, ժամանակի վերաբերյալ, քանի որ բյուզանդական ձեռագրերին հիմնականում հատուկ չէին ճոխ հիշատակարանները. երբեմն դրանք քարացած կառույցներ էին, որ անցնում էին մի ձեռագրից մյուսը՝ չունենալով պատմական մեծ արժեք¹³:

Բ. Գրավոր այս հուշարձանների՝ IX դարից առավել վաղ կիրառություն ունենալու օգտին են խոսում նաև այն նախազադափար կամ հեղինակային հիշատակարանները, որոնք մեզ են հասել ոչ թե անմիջականորեն, այլ միջնորդավորված՝ արտագրվե-

¹³ *А.П. Каздан*, Книга и писатель в Византии, Москва, 1973, ст. 39.

լով ավելի ուշ շրջանում տվյալ ձեռագիրն ընդօրինակող գրիչների կողմից¹⁴:

Գ. Հիշատակարանների ժամանակային քննության հարցում, մեր կարծիքով, զգալի նշանակություն կարող են ունենալ հայկական վիմագրերը: Հիշատակարանի այս երկու ձևերի հիմնական բովանդակությունը նույնն է՝ տվյալ հուշարձանի կառուցման կամ ձեռագրի գրչության ժամանակի, տեղի, կառուցողի կամ գրչի մասին տեղեկություններ հայտնելը՝ մի դեպքում մագաղաթի կամ թղթի վրա, մյուս դեպքում քարի վրա¹⁵: Բացի այդ, ճիշտ է նկատում ակադեմիկոս Հովսեփ Օրբելին, որ. «Չկա համարյա ոչ մի հայկական մոնումենտալ հուշարձան, տաճար, մատենադարանային շենք, գավիթ ու այլ եկեղեցական կառուցվածք, պալատ, բերդաշտարակ, վերջապես գերեզմանային կոթող, սահմանափաժան քար, որ իր վրա չունենա արձանագրություն»¹⁶: Արձանագրություն-հիշատակարան գրելու սովորություն եղել է ի սկզբանե: Ուստի տրամաբանական է, որ ձեռագիրը ևս ավարտին հասցվելուց հետո պետք է պարունակեր համապատասխան տեղեկություններ: Օրբելին մի հետաքրքիր դիտարկում ունի արձանագրությունների և ձեռագրերի անմիջական կապի վերաբերյալ: Մատնացույց անելով Մարմաշենի եկեղեցու արձանագրությունը (10-րդ դար)՝ գրում է, որ մոնումենտալ կոթողների արձանագրությունները ևս կարող էին արտագրվել կամ ընդօրինակվել (*ինչպես որ սովորաբար արվում է ձեռագրերի դեպքում - հավելումը մերն է*), և շատ հավանական է, որ այդ ընդօրինակումները ոչ թե պատերի կամ քարերի վրայից էր արվում, այլ ձեռագրերից¹⁷: Մյուս կողմից ուշագրավ է, որ վիմագրերը երբեմն անվանվել են «հիշա-

¹⁴ Այս մասին առավել մանրամասն տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ Ե-ԺԲ դարեր, աշխատասիրությամբ Ա. Մաթևոսյանի, Եր., 1988, էջ ԺԴ-ԺԵ, **Հ. Գ. Բախչինյան**, նշվ. աշխ., էջ 51-53:

¹⁵ Վիմագրերի հիմնական բովանդակության մասին տե՛ս **Մ.Ա. Ավագյան**, Վիմագրական պրպտումներ, Եր., 1986, էջ-8-15:

¹⁶ Դիվան հայ վիմագրության, հ. I, Անի քաղաք, կազմեց **Հ.Ա. Օրբելի**, Եր., 1966, էջ IX:

¹⁷ Նշվ. աշխ., էջ X:

տակարան», ինչպես օրինակ՝ Անիի Աբուխանսի եկեղեցու հետևյալ արձանագրության մեջ. «ԺԷ. ԹՈՒԱԿԱՆԻՆ ԳՐԵՑԱԻ **ՅԻՇԱՍՏԱՆԻ** ԱՊՈԽԻԱՆՍ ԻՇԽԱՆԻ, ՈՐ ՏՈՒԵԱԼ Է ԶՀՈԳՈ ԹՈՇԱԿ Ի ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՍ... ԵՒ ԵԹԷ **ՋՅԻՇԱՍՏԱՆԻ** ԶԱՅՍ ԽԱՓԱՆԷ, ԴԱՏԱՊԱՐՏԵԱԼ ԷՂԻՑԻ Ի ԳԱԼՍՏԵԱՆՆ ՈՐԴՈՅՆ ԱՍՏՈՒԾՈՅ...

¹⁸ (ընդգծումները մերն են): Սույն արձանագրությանն անդրադառնում է նաև Հ. Բախչիյանը հայկական ձեռագրերի հիշատակարաններին նվիրված իր գրքում¹⁹:

Հայերեն վիմագրերից ամենահինը համարվում է Տեկորի տաճարի արձանագրությունը, և ըստ այդմ էլ՝ այստեղ առաջին անգամ երևում են մեսրոպյան այբուբենի տառաձևերը: Արձանագրության մեջ թվական նշված չէ, մասնագետների կարծիքով տաճարը կառուցվել է V դարում: Առաջինը համարվող այդ արձանագրությունը պարունակում է այն հիմնական տեղեկությունը, որ հատուկ է նաև ձեռագիր հիշատակարանին. բացակայում է միայն թվականը: Արձանագրությունը գիտական գրականության մեջ հանդիպում է տարբեր ընթերցումներով. ստորև ներկայացնում ենք այն՝ ըստ Կ. Ղաֆադարյանի ընթերցման.

1. Սահակ Կամսարական շինեաց զայս վկայարան սրբոյ Սարգսի

2. յիւր բարեխաւսութիւն, եւ բոլոր ազգիս, եւ ամուսնի, եւ որդեկաց, եւ սիրելեաց (եւ)

3. Եւ հիմնարկեցաւ տեղիս ի ձեռն Յոհանու հայոց կաթաղիկոսութեան, եւ Յոհանու Արշարունեաց

4. (ե)պիսկապոսի, եւ Տայրոնի՝ Տեկորոյ վանաց երիցու, եւ Մանանայ հազարապետի, Ուրանայ Հռոմի, որ շ/// ²⁰:

¹⁸ Նշվ. աշխ., էջ 34:

¹⁹ **Հ. Գ. Բախչիյան**, Հայկական ձեռագրերի հիշատակարանները, Եր., 1980, էջ 5:

²⁰ **Կ. Ղաֆադարյան**, Տեկորի տաճարի V դարի հայերեն արձանագրությունը և մեսրոպյան այբուբենի առաջին տառաձևերը, ՊԲՀ, 1962, N 2, էջ 51-52: Արձանագրությունն այլ հերթականությամբ է ընթերցում Գ. Յովսեփեանը, տե՛ս Գրչութեան արուեստը հին հայոց մէջ, մասն Գ. Քարտեզ հնագրութեան, Վաղարշապատ, 1913, էջ 5:

Հնարավոր է, որ նախապես հիշատակարան գրելու ավանդույթը դրսևորվել է վիմագրերում, ապա անցել ձեռագրերին:

Հիշատակարանը ձեռագրում հաստատվելուց հետո զարգացման յուրահատուկ շրջաններ է ունեցել՝ անմիջաբար առնչվելով գրիչների կրթվածության աստիճանի, մտքի թռիչքի և իհարկե, պատմա-քաղաքական ու հասարակական տարբեր երեվոյթների հետ:

Գրիչները տարիներով ուսանում էին գրչության կենտրոններում, վանքերում, ընդօրինակում բազմաթիվ ձեռագրեր: Այս կենտրոններում առաջնային տեղ էր հատկացվում հենց գրչության արվեստին: Այն ոչ միայն գեղեցիկ գրելու, այլև առաջին հերթին անսխալ և քերականորեն ճիշտ աշխատանք էր ենթադրում: Միջնադարյան Հայաստանի գրչության կենտրոններում շատ է կարևորվել հատկապես քերականության ուսուցումն ու դրանշանակությունը: Այս առիթով Գր. Մագիստրոսը գրում է. «...*քերականութեամբս լինել հմուտ ամենայն իմաստից և խտրութեամբ մաքրել զբան և զբայ և զգիր մաքուր և վճիտ առաստութեամբ*»²¹: Այդ նպատակով է, որ գրիչները հատկապես ընդօրինակման համար ընտրում էին այսպես կոչված «նախագաղափար օրինակ», որը որպես կանոն «ընտիր և ստույգ օրինակ» էր համարվում: Նույնիսկ լիակատար թվացող, գրեթե ոչ մի սխալ չունեցող ձեռագրում, որտեղ գրիչը «ոչ թե գրել, այլ գծագրել, նկարել է»²², նա իրեն համարում է անարհեստ, անվարժ, փծուն:

Գրչության կենտրոնների զարգացումն իր խոր կնիքն է թողնում հետագա դարերի ձեռագրակերտման աշխատանքներում, որի վկայությունն են նաև հիշատակարանները. վերջիններս շարունակում էին ընդարձակվել՝ ընդգրկելով ոչ միայն գրչի, այլև վերջինի հարազատների մասին տեղեկություններ, տարբեր երեվոյթների նկարագրություններ՝ երկրաշարժ, մորեխների հարձակում, թշնամիների կողմից կեղեքում, ցուրտ, մույթ և այլն: Ահա

²¹ **Н. Адонц**, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроградъ, 1915, ст. 226.

²² **Ա. Գ. Արքայանյան**, Հայոց գիր և գրչություն, Եր., 1973, էջ 303:

մի դիպուկ նկարագրություն, թե ինչպիսի պայմաններում են սովորաբար աշխատել գրիչները. «Անմեղադիր լերուք վասն խոշորութեան գրիս, զի ժամանակս ձմեռ էր, և խուցս մութն և ցուրտ, և նիւթս պակաս, և թանաքս աւեր. և իմ պիտոյքն ոչինչ այլ, բայց միայն ցամաք հաց, և խոցած ներքինս ի բանսարկուէն և արտաքինս՝ ի բնութեան տկարութենէ» (ԺԵ,Բ,231): Հաջորդ հիշատակարանում նկարագրվում է մորելիների առատությունը, և թե ինչպէս են վերջիններս վնաս հասցնում գյուղատնտեսությանը. «Բ յՊ. և ի ԿԸ. թվականին (1419) եկն մարախ սաստիկ, ըստ անչափութեան աւագոյ ծովու, բայց ի յաւուրս հնձոցն եկն և իրք մի կերաւ զվաստակն և իրք մնաց, և ձգեաց զսերմն իւր յերկիր և միւս այլ տարին ձագն ելաւ և խիստ աւեր էած» (ԺԵ,Ա,375): Մեկ այլ հիշատակարանում կարդում ենք. «Ո՛հ, ոհ դառն ժամանակիս, դարձեալ աղաչեմ, զի անմեղադիր լինիցիք, զի շաղգամով մալէզն²³ և կորեկէ ճաթն օգնական եղն մեզ ի գրելն» (ԺԵ,Ա,89):

Համառոտ և միայն գրչության ժամանակի ու վայրի մասին տեղեկություններ հաղորդող հիշատակարանները միջնադարում փոխարինվում են ընդարձակ ու մանրամասն նկարագրություններով, ինչպէս վերոբերյալ օրինակները: Դրանց ավարտին գրիչները թախանձում են հիշել ոչ միայն իրենց՝ որպէս «անարժան ու անտաղանդ» գրչի, այլև իրենց ծնողներին, հարազատներին և բոլոր նրանց, ովքեր ինչ-որ կերպ օգնել են գրչին իր կյանքի ընթացքում կամ էլ ձեռագրի պատրաստման ժամանակ²⁴. «...ըստացայ զսա յիշատակ ինձ... և զԿրծանեց զամէն ժողովուրդն՝ զայր և զկին, զծեր և զտղայ, զայգապան և զամենայն աշխատաւոր, որք մեզ մէկ կտոր հաց բերելով, կամ մէկ քարեղէն ապուր, և կամ մէկ փառչ ջուր տալով» (ԺԵ,Ա,462-463): Գրիչները քաջ գիտակցում էին իրենց կատարած աշխատանքի՝ կազմած կամ ընդօրինակած ձեռագրի արժեքը, և որ այն ծառայելու է նաև գալիք սերունդնե-

²³ Այլուրով պատրաստված կերակուր:

²⁴ Գրիչների կողմից հիշատակվող հիմնական անձանց նշելու համար կազմել ենք համապատասխան գծապատկեր, տե՛ս էջ 37 (գծապատկեր 1):

րին: Ահա թե ինչու աշխատանքի ավարտին նրանք համոզված էին հետևյալում.

Ձեռքըս փրտի ի հող դառնա
Գիրս յաւիտեան կայ և մնայ²⁵:

Այս համառոտ, բայց խոսուն հիշատակարանը հատուկ է ոչ միայն հայ գրչին, այլև հանդիպում է տարբեր ազգերի գրիչների մոտ²⁶:

Ուշագրավ է, որ առավել կենդանի և խոսուն լինելու համար միջնադարում երբեմն հիշատակարանն արտահայտվում էր մանրականկարի տեսքով: Այսինքն՝ ծաղկողն իր հերթին նկարում էր ձեռագրի ստացողին կամ այլ անձանց, ապա մանրանկարի կողքին իր կամ գրչի կողմից թողնվում էր հիշատակարան-հիշատակագրություն, որով դարձյալ խնդրում էին հիշել իրենց (նկ. 4): Սովորաբար հիշատակագրություններն աչքի են ընկնում իրենց սեղմությամբ, որոնք կազմված են լինում մեկ կամ երկու նախադասություններից, բովանդակային առումով դրանք հիմնականում հիշատակության արժանանալու թախանձանք են:

Հետաքրքիր են կազմի վրայի հիշատակարանները ևս, որոնք հաստատում են միջնադարում հիշատակարանի դերն ու կարևորությունը: Մյուս կողմից ցույց են տալիս, թե ժամանակի ընթացքում ինչպիսի փոփոխությունների է ենթարկվել հիշատակարան գրելու ընդունված «կանոնը», որով հիշատակարանը սովորաբար գրվում էր ձեռագրի կամ նրա մեջ մտնող որևէ միավորի ավարտին²⁷ (նկ. 5):

Ձեռագրում հիշատակարանի կարևորությունը, անկախ գրչի կրթական մակարդակից, ստիպում է, որ գրչության կենտրոններում աստիճանաբար ձևավորվեն հիշատակարանի կադապարներ:

²⁵ *Եր. Լալայեան*, Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի, պրակ Ա, Թիֆլիս, 1915, էջ 32:

²⁶ *Каждан А.П.*, նշվ.աշխ. էջ 39:

²⁷ Կազմերի վրայի հիշատակարանների վերաբերյալ տե՛ս *Գ. Յովսեփեան*, Մի էջ հայ արուեստի և մշակոյթի պատմութիւնից, Հալէպ, 1930: *Ա. Մախասյան*, Սուրբ Էջմիածնի մետաղէ կրկնակազմերը, պրակ Ա., Էջմիածին, 2011:

Բազմաթիվ հիշատակարանների ուշադիր քննությունը ցույց է տալիս, որ դրանք բառագործածության և ընդհանրապես ձևի առումով բավական նմանություններ ունեն՝ անկախ այն հանգամանքից, թե ձեռագիրն ինչ բովանդակություն ունի՝ Ավետարան, Մաշտոց, Բառգիրք և այլն: Այդպիսի օրինակները հաճախադեպ են: Ահա այդպիսի հիշատակարաններից մեկ օրինակ.

Աւետարան, 1469թ., գրիչ, վայր՝ անհայտ	Աւետարան, 1469թ., գրիչ՝ Յովանէս, վայր՝ Գամաղիէի վանք
«Արդ, կատարեցաւ աստուածախաւս և տիեզերաքարոզ Աւետարանս ի խնդրոյ պատուական և հաւատարիմ տանուտրոջն Յոհանիսին, որ վառեալ էր հաւատով և սիրովն, որ ի Քրիստոս Յիսուս, և ետ գրել զսուրբ Աւետարանս յիշատակ իւրն և ծնաւդացն Յովհաննիսին, և մաւրն Արուսին...» (ԺԵ,Բ, 295):	«Արդ, կատարեցաւ աստուածախաւս և տիեզերաքարոզ Աւետարանս ի խնդրոյ աստուածաւեր և հաւատարիմ տանուտրոջն՝ Առաքելին, յիշատակ իւրն և ծնաւդաց իւրոց՝ Շատարելին, և մաւրն՝ Նազ-Խաթունին և կողակցին՝ Մարգարտին ...» (ԺԵ,Բ,293):

Սա ենթադրել էր տալիս, որ գրավոր այս հուշարձանն իբրև ձևավորված ժանր և ձեռագրի բաղկացուցիչ մաս պետք է ունենար նաև ձևավորված կառուցվածք, որի հիման վրա էլ շարադրվում էր հիշատակարանը: Արդեն XV դարում (հնարավոր է նույնիսկ ավելի վաղ) կարող ենք ասել, որ հիշատակարանն ուներ կադապար, ուստի գրիչները հիմնականում փորձում էին չձեղվել այդ ընդհանուր կադապարից: Այն, որ հիշատակարանն ուներ ընդունված կառուցվածք և ձև, հաստատվում է Մատենադարանում պահվող ձեռագրերից մեկում գտնված հետևյալ փաստով. 1476 թվականին Երուսաղեմում կազմված ժողովածու-մանրուսմունքի 181բ էջին տեսնում ենք մի հետաքրքիր նյութ: Պետք է

նշել, որ սույն կադապարը հանդիպում է ոչ թե ձեռագրի վերջում՝ որպես հիշատակարան, այլ ճիշտ հակառակը, գրված է բովանդակության մեջ՝ որպես առանձին միավոր, որ անհրաժեշտ է սովորել:

Ստորև ամբողջությամբ ներկայացնում ենք այն՝ թավ տառերով ընդգծելով գրչի կամ ստացողի կողմից լրացնելիք հատվածները.

«[Փ]առք եզակի տէրութեանն և եռահիսակ դաւանութեան: Համագոյ, համապայծառ, համագաղափար, զուգակշիռ, վըսեմագոյ, ինքնագոյ էութեանն և միութեանն **Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ**, այժմ և անպայմանն յաւիտենիւ, ամէն:

Արդ յանգ ելեալ աւարտեցաւ հոգիաբոլի մատեանս, որ կոչի Մանրուսումն ի շրջագայութեան Հայոց տումարի (**այս չափ**), ի գաւառս (**այս անուն**), ի հայրապետութեան տեառն (**այս անուն**), ի յերկնահանգեալ և ի գերահոջակ և ի հրեշտակաճեմ և յաստուածաբնակ վանքս, որ կոչի (**այս անուն**), որ նման է Վերինն Երուսաղէմի, ընդ հովանեաւ (**այս անուն**), ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս (**այս անուն**), որ է վարութն մաքուր, բնութեամբ հեզ՝ լեզուան քաղցր, սրտին առատ, իմաստուն, որպէս Աբրահամ (**որչափ կամիս, ասայ**), առ ոտս (**այս առաջնորդի**), ձեռամբ յոգնամեղ և անարհեստ գրչի (**այս անուն**):

Արդ ստացաւ կրօնաւոր ոմն (**այս անուն**), որ է ժիր և արի ի գործս առաքինութեան, անապատաստն, վարժեալ և սնեալ առ ոտս (**այս անուն**), իբրև զլապտեր վառեալ ի մէջ եկեղեցւոյ, և իբրև զանուշահօտ խունկ հաճոյացեալ Աստուծոյ, իբրև ծիծառն բանաւոր կանգնեալ ի մէջ տաճարի, և որպէս զմէլիւ կարօտեալ երկնային ցօղին, այսպէս և սա ցանկացաւ եղև այսմ գրոցս և ետ գրել զսա ի վայելումն անձին իւրոյ, և ի յիշատակ ծնաւդաց իւրոյ:

Արդ աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա, ընդ նմին և զիս զանարժան գծաւդս (**այս անուն**), որ կամանն Աստուծոյ սկսայ և աւգնականութեամբ նորին կատարեցի, յիշեցէ՛ք Աստուած ողորմայիւ միով, զի կարող է Աստուած ի ձեռն այլոց՝ այլոց ողորմութիւն առնել, և ձեզ դիւրին է ասելն և մեզ կարի պիտանի,

և ձեզ յիշողացդ և մեզ յուսուցելոցս ողորմեսցի Քրիստոս Աստուած»²⁸:

Հիշատակարանին անմիջապես հաջորդում են (182աբ էջեր) նաև բառեր, բառակապակցություններ, հոմանշային շարքեր և հիշատակարանին հատուկ ոճեր, որոնք առավել հաճախ են հանդիպում հիշատակարաններում՝ «*բաղձալի եղբայրք, սրբազան մարութ քահանայք, նուսատ սիրով քահանայ, լուսատուք առաքելական աթոռոյ, ամուք հաւատոյ, աստուածանման, աստուածատիպ, քրիստոսապսակ, կամ ...բաղձալի և հոգեւից սրբազան արհեպիսկոպոս, նուսատ (անունը բաց է թողնուած) վեհիցդ վեհագունեաց և քաջամիտ հռետորաց, պանծալի ըրբունապետաց և աստուածաբան իմաստասիրաց...*»:

Հետագա դարերի ընթացքում (16-20-րդ դարեր) հիշատակարանների կազմության սկզբունքները ձևային առումով զգալի փոփոխությունների չեն ենթարկվում: Հիմնական փոփոխությունը բովանդակային էր՝ պայմանավորված ժամանակաշրջանի հասարակական և պատմական զարգացումներով և տեղաշարժերով: Այդ են վկայում նաև տպագիր գրքերում հանդիպող բազմաթիվ հիշատակարաններն ու հիշատակագրությունները²⁹:

Ամփոփելով հիշատակարանի սկզբնավորման ու զարգացման ընթացքի վերաբերյալ մեր քննությունը՝ հանգում ենք հետևյալ եզրակացությունների.

1. Հայերեն հիշատակարանը ձեռագրում տեղ է գտել մատյանի կազմման առաջին օրերից՝ V-VI դարերում՝ դառնալով ձեռագրի կարևոր բաղկացուցիչ միավոր: Մեր կարծիքով, ժամանակի ճշգրտման հարցում էական նշանակություն ունեն հայերեն վիմագիր արձանագրությունները, նախագաղափար հիշատակարանները: Գրավոր այս հուշարձանների նախօրինակների

²⁸ ՄՄ հ⁴ր 2335, 181բ-2բ: Հիշատակարանի այս կաղապարն առաջին անգամ հրատարակել է Ա.Մաթևոսյանը, տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԲ դարեր, Եր., 1988, էջ ԺԸ (ծանոթագրության մեջ):


²⁹ Այս մասին տե՛ս **Ն. Պողոսյան**, Հայ հնատիպ գրքերի ձեռագիր հիշատակագրություններ (1512-1712), Եր., 2012:

վրա հնարավոր ենք համարում նաև հունական ձեռագրակերտման ավանդույթների ազդեցությունը:

Ձևավորվելով V-VI դարերում և ժամանակի ընթացքում ենթարկվելով գրավոր մշակման՝ IX-X դարերում ստեղծվում են հիշատակարանների օրինակելի նմուշներ, որոնք կրում են արդեն գրիչների հատուկ վերաբերմունքը:

2. Դարերի ընթացքում հիշատակարանը, որպես գրական և լեզվական իրողություն, անցել է զարգացման ինքնուրույն ուղի՝ արտացոլելով հայ ժողովրդի կյանքի և պատմության այնպիսի մանրամասներ, որոնք տեղ չեն գտել պատմիչների երկերում: Հիշատակարանը կրել է նաև մի շարք փոփոխություններ ինչպես ձևային, այնպես էլ բովանդակային առումով. այն հանդիպում է ոչ միայն ձեռագրի տարբեր հատվածներում, այլև կազմի վրա:


3. XIV-XV դարերում (գուցե ավելի վաղ), անկախ գրչի կրթական մակարդակից, ձեռագրում հիշատակարանի կարևորությունը ստիպում է, որ գրչության կենտրոններում աստիճանաբար ձևավորվեն հիշատակարանի կաղապարներ, որոնք իրենց ազդեցությունն են թողնում գրիչների լեզվի վրա:



Նկ.1, Ավետարան, 1211թ., Հաղբատ, ՄՄ 6288, 18բ




Նկ. 2, Ավետարան, 974թ., Մուրրութ, Վրաստան
(լուսանկարը Հրայր Բազեի)



Նկ. 3, Թարգմանչաց Ավետարան, 966թ., Մեծ Բրիտանիա,
Ուոլթերսի թանգարան, ՀՊ 537
(Լուսանկարը՝ Հայ մատենագրության թուանշային գրադարանի)




Նկ. 4, Ավետարան, Հիզան, 1402թ., ՄՄ 5562, 10ա



Նկ. 5. «Ծովի Ավետարան», 1332թ., Երուսաղեմ³⁰

³⁰ Հմբ 2649/94 - Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. ութերորդ, կազմեց Նորայր արքեպս. Պողարեան, Երուսաղեմ, 1977, էջ 276: Նկարի հրատարակությունը տե՛ս Armenian art treasures of Jerusalem, edited by Bezalel Narkiss in collaboration with Michael E. Stone, historical survey by Avedis K. Sanjian, managing editor: Alexander Peli, Massada Press, 1979 (տիտղոսաբերքի նկարը): Կազմի մասին տե՛ս նաև **Գ. Յովսէփեան**, Մի էջ հայ արուեստի և մշակույթի պատմությանից, Հալեպ, 1930, էջ 30-34: Լուսակարը՝ Հայ մատենագրութեան թուանշային գրադարանի:

Գծապատկեր 1.
(Հիշատակվող հիմնական անձինք)



Khachik Harutyunyan – *History of Armenian Colophons*. – A colophon is a short text added to a manuscript. It may take the form of a page or pages bound in at the end, or it may be written on last page.

The Armenian colophons have been introduced into the manuscript since their origin, i.e. the 5th- 6th centuries, becoming an indispensable constituent unit of the manuscript. The further development of colophons brought into the emergence of the pattern, which, in its turn, had its impact on the scribes' language as well.

Хачик Арутюнян – *История армянских колофонов (памятных записей)*. – Армянские колофоны появились с первых же дней возникновения рукописной книги, в V-VI вв., став её важной составляющей частью. Мы считаем, что армянские эпиграфические надписи имеют важное значение в вопросах датировки первичных колофонов.

Последующее развитие колофонов приводит к возникновению шаблонов, которые влияют на язык переписчиков.

Բանալի բառեր: Հայկական ձեռագրեր, հիշատակարաններ, կաղապարներ, գրչության կենտրոններ, գրիչներ, պատմություն:

Ключевые слова: Армянские рукописи, памятные записи, формы, скриптории, переписчики, история.

Key words: Armenian Manuscripts, Colophons, Formulae, scriptorium, scribes, history.

ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ ՏԵՐՅԱՆԻ ՉԱՓԱԾՈՅՈՒՄ

ՄԵՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՄՅԱՆ

(Երևանի պետական համալսարան)

Գրողի լեզվական արվեստն ուսումնասիրելիս հետազոտողները շատ անգամ մեծ ուշադրություն են դարձնում լեզվի ժողովրդայնության հարցին՝ մանրագնին քննելով հեղինակի խոսքարվեստում տեղ գտած բարբառային, ժողովրդախոսակցական բառերն ու բառաձևերը: Լեզվի ժողովրդայնությունը, անշուշտ, զգալիորեն պայմանավորված է բարբառային, ժողովրդախոսակցական բառերի հմուտ օգտագործմամբ, սակայն, ինչպես նկատում է Արտ. Պապոյանը, «...դրանից չի կարելի բխեցնել, թե ժողովրդական չի կարող լինել այն գրողների լեզուն, ովքեր խուսափում են բարբառներից ու ժողովրդական ձևերից և նախապատվություն են տալիս «մաքուր» գրական արտահայտություններին...: Իսկական գրողը, եթե իրոք նա մեծ արվեստագետ է, այս դեպքում էլ կգտնի այլոց համար անսպասելի ու անմեկնելի, միայն իրեն հայտնի լեզվական միջոցների ու գույների այն գաղտնի խաղը, որը խոսքին կհաղորդի կենդանություն ու հյութեղություն, ինչն անհրաժեշտ է լեզվի ժողովրդայնացման համար»¹: Ասել է թե՛ գրողը կարող է բարբառային, ժողովրդախոսակցական բառ ու բառաձև չգործածել, բայց նրա խոսքը կարող է լինել ժողովրդական: Լեզվին «ժողովրդայնություն տվողը բառերը չեն,– գրում է Գ. Սևակը,– այլ հարազատ, ժողովրդային լեզվամտածողությունը, պարզ, ոչ շինծու լեզուն, որ տրվում է հարազատ ժողովրդի կենդանի խոսքի ուշադիր դիտումով և հմուտ օգտագործմամբ»²: Նույնիսկ Վահան Տերյանը, որի մշակված լեզուն գրական լեզվի փայլուն օրինակ է, չի խուսափել բարբառային ու ժողովրդախոսակցական բառերից: «Տերյանի կազմած բառերի մի

¹ *Արտ. Պապոյան*, Պարույր Սևակի չափածոյի լեզվական արվեստը, Ե., 1970, էջ 26:

² *Գ. Սևակ*, Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն, Ե., 1948, էջ 124:

մաւր,- ինչպէս նշում է Վ. Առաքելյանը,- իրենց ձեռով ու արտահայտչական բնութեով բնավ չեն տարբերվում ժողովրդախոսակցականից. իսկ այսպիսի բառերը թափ ու թռիչք են տալիս Տերյանի չքնաղ խոսքին»³:

Տերյանական լեզվում հանդիպում են Կարնո բարբառի Ջավախքի խոսվածքի, ինչպէս նաև Արարատյան բարբառի մի շարք խոսվածքների բառեր և ընդհանրական հատկանիշներ: Ստեղծագործության վաղ շրջանում բանաստեղծը, հետևելով Թումանյանի և Իսահակյանի լեզվական ավանդույթներին, հրապուրվել է գրական լեզուն ժողովրդայնացնելու ուղղությամբ: Հետագայում, սակայն, ժողովրդախոսակցական լեզվի ազդեցությունն աստիճանաբար նվազել է, և Տերյանը նախապատվությունը տվել է գրական լեզվին: Բանաստեղծը վերամշակել է իր ստեղծագործությունները՝ բարբառային ու ժողովրդախոսակցական բառերը թողնելով միայն այն բանաստեղծություններում, որոնց բովանդակությունը պայմանավորում է դրանց գործածությունները:

Բարբառային բառերի գործածությամբ Տերյանն առավել արտահայտիչ ու կենդանի է դարձնում բանաստեղծական խոսքը, նրան հաղորդում է ոճական մեծ լիցք: Բարբառները եղել և մնում են մեր լեզուն սնող հիմնական աղբյուրներից մեկը: Հայերենի բազմաթիվ բարբառներ դեռևս պարունակում են գրական լեզվի կողմից չյուրացված հարուստ բառապաշար, որի՝ գրական լեզու մուտք գործելու ուղին, բնականաբար, մնում է գեղարվեստական գրականությունը: Տերյանը բարբառներից ու համաժողովրդական լեզվից վերցրել է այն, ինչը դրական է և նպաստում է խոսքի հուզականությանն ու արտահայտչականությանը: Մա գեղարվեստական խոսքին ներկայացվող էական պահանջներից մեկն է: Այսպէս՝ *շվաք* (ՄԱ, I, 50), *հանաք* (ԱԷ, II, 115), *մուժ* (ԵՆ, I, 250), *աշունք* (ԳՀ, I, 118), *ծեզ* (ԱԷ, II, 141), *մանկուր* (ՄԱ, I, 59), *հավք* (ԱԷ, II, 68), *նազ* (ՄԱ, I, 28), *նանիկ* (ԱԷ, II, 50), *վառման* (ՈՇ, I, 218), *ժեռ* (ԱԲ, I, 263), *գինով* (ՈՇ, I, 216), *դի* (ՈՀ, I, 155), 284), *օրհ-*

³ Վ. Առաքելյան, Ավետիք Իսահակյանի պոեզիայի բառապաշարի ոճաբանական առանձնահատկությունները, Ե., 1954, էջ 17:

նենք / օրհնենք (ԱԷ, II, 119, ՈՀ, I, 187), *հիացք* (ՄԱ, I, 83), *ասղտել* (ԱԷ, II, 48), *խոնջած* (ԱԷ, II, 40), *բեզարած* (ԱԲ, I, 267), *պահվտած* (ՄԱ, I, 30), *երթալ* (ԱԲ, I, 282), *հերիք* (ԱԷ, II, 88), *էգուց* (ԱԷ, II, 110) բարբառային բառերն ու բառաձևերը բանաստեղծական խոսքում նուրբ ու հոգեբանական երևույթներ դրսևորող լեզվական անփոխարինելի միավորներ են: Դիտարկենք օրինակներ.

Ժեռ սարի կրծքից դու դուրս ես թռչում,
Սառույցը ճեղքում – գոհարներ ցողում... (ԱԲ, I, 263)

Ընկերքս գարշ մի, *գեշ* սարդ,
Ոստայն է, չարը, հյուսում... (ԱԲ, I, 288)

Ակնհայտ է, թե ինչքան մեծ նշանակություն է տվել բանաստեղծը նշված բառերի իմաստաբանական կողմին. *ժայռ* բառից այժ է հնչյունափոխությամբ կազմված *ժեռ* բառը իմաստային ու արտահայտչական կողմով տարբերվում է իր գրական հոմանիշներից. այն ոչ միայն նշանակում է «ժայռ», այլև «ամուր», «կարծր», ընդ որում՝ վերջինները չունեն *ժեռ* բառի արտահայտչականությունը: Ուշագրավ են նաև *գեշ* բառի իմաստային առումները: Արեւելահայերենում գրական հնչեղությունն ստացած այս բառի «տգեղ», իսկ արևմտահայերենում «վատ» իմաստի դիմաց բարբառներում ունենք «վտանգավոր» իմաստը⁴, որն էլ գործածության մեջ է դրել բանաստեղծը՝ մի կողմից անժխտելի ոճական լիցքով ընդգծելով բառիմաստը, մյուս կողմից արտահայտելով զգացական-դատողական վերաբերմունքի նրբերանգներ:

Վերահաս մահվան ներշնչմամբ գրված «*Գինուվ եմ, գինուվ եմ ես էլ...*» բանաստեղծության տողերում ժողովրդախոսակցական ու բարբառային բառերը նուրբ երաժշտականությամբ և թախծոտ ու քնքուշ զգացմունքայնությամբ հագեցած գեղեցիկ պատկեր են ստեղծում.

Գինուվ եմ, գինուվ եմ ես էլ,
Թեթև եմ, անհոգ, լեզվանի...

⁴ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 1, Ե., 1969, էջ 384:

Բայց դեռ երգն իմ երգում է տենդում –
Օ, երա՛գ է, երա՛գ ու երա՛գ...
Իսկ ներսում իմ, ներսում մի ասեղ
Ասղտում է – ննջե՛լ առհավետ... (ԱԷ, II, 48)

Բառաշղթայում ոճական ինքնատիպ արժեքով է հասկանալի լինում «ասեղով ծակծկել» իմաստով գործածված բարբառային **ասղտել** բառը, որը Տերյանի բանաստեղծությունների որոշ հրատարակություններում սխալաբար տպագրվել է «աստղել» կամ «ասղնտել»⁵ տարբերակներով: Նշենք, որ Հ. Աճառյանի «Գավառական բառարանում» **ասղտել** բառն ամրագրված է միայն **ասղնտել** ձևով⁶: Կարնո բարբառում, ինչպես նշվում է, **ասղտելը** հանդիպում է երկու տարբերակով՝ «**ասխըղել**» և «**ասխընղել**»:

«Մթնշաղի անուրջների» բանաստեղծություններից մեկում գործածված **պահվտած (պահվտիլ)** բայի վերաբերյալ հետաքրքիր տեսակետ է հայտնում Ա. Աբրահամյանը՝ վկայակոչելով նշված բառի տերյանական գործածության օրինակը՝ «**Հեռածավալ անհայտներում պահվտած Գալիք օրերն անհուն, անտես խավարում...**» (ՄԱ, I, 30): Ըստ լեզվաբանի՝ ժամանակակից հայերենում -տ- և նրանով բաղադրված -րտ- բազմապատկական ածանցների գործադրումը մի շարք բայերի ածանցագուրկ ձևերում թեպետ «սովորական և ընդունված չէ, բայց կրավորական տիպարի մեջ հնարավոր և ընդունելի է»⁸: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ չեզոք սեռի **պահվտել (պահվտիլ)** բայը, որն այսօր գործածական է արևմտահայերենում, զուտ բարբառային և ոչ թե ժամանակակից հայերենին բնորոշ լեզվական իրողություն է: Այս փաստի օգտին են խոսում նաև որոշ բարբառներում գործածական,

⁵ Վ. Տեղյան, Բանաստեղծություններ: Լիակատար ժողովածու, Ե., 1940, էջ 297 և Երկեր, Ե., 1956, էջ 391:

⁶ Հ. Աճառեան, Հայերեն գաւառական բառարան, Էմինեան ազգագրական ժող., հ. Թ, Թիֆլիս, 1913, էջ 139:

⁷ Հ. Մկրտչյան, Կարնո բարբառը, Ե., 1952, էջ 123:

⁸ Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, գ. 1, Ե., 1962, էջ 289:

նշված բայից կազմված մի շարք գոյականներ՝ *պահվտոցիկ* (ժողովրդախոսակցական լեզվում՝ *պահմտոցի*), *պահվտուք*⁹ և այլն:

Տերյանական խոսքում վերապրուկային բնույթ ունեն կրավորակերպ չեզոք բայերի՝ առանց -վ- ածանցի գործածությունները (*«Մինչև հանդարտեն շշուկներն այս չար...»* (ԱԲ, I, 273), *«Վերջին լույսերը մեղմ կըվախճանեն...»* (ՄՍ, I, 56), *«Օ՛, խաղաղիր քո նրբագին Նայվածի տակ, ոսկի բոցում...»* (ԱԷ, II, 41), *«Միբտ իմ, հանդարտիր...»* (ԳՀ, I, 112): «Այն բայերը,– գրում է Ա. Աբրահամյանը,– որոնք այժմ մեր լեզվում հանդես են գալիս իբրև կրավորաձև չեզոք բայեր (չեզոք, բայց -վ- ածանցով), ժամանակակից հայերենի զարգացման պրոցեսում, մինչև լրիվ ձևավորվելը առանձին դեպքերում գործածվել են նաև առանց -վ- ածանցի՝ որոշ չափով պահպանելով մեր լեզվի հին շրջանի կրավորաձև չեզոք բայերի ածանցագուրկ վիճակը»¹⁰: Միջին հայերենում -վ- (*ի, ու*) ածանցի առաջացումը տարբերակում է մտցրել ներգործական, կրավորական և չեզոք սեռի բայերի միջև: Միջինհայերենյան նշված իրողությունը ժառանգել է Պոլսի բարբառը՝ հետագայում փոխանցելով նաև արևմտահայերենին: Ահա թե ինչու, կարծում ենք, թեպետ Ի լծորդության բայաձևերի գործածությունները լեզվի տևական զարգացման արդյունք են, այնուամենայնիվ, չպետք է անտեսենք նաև բանաստեղծի մայրենի բարբառի ու արևմտահայ գրական լեզվի ազդեցությունը:

Բազմավանկ բառերում *ա* ձայնավորի սղումը, ինչպես հայտնի է, միջինհայերենյան շրջանի հնչյունափոխական երևույթ է, որը պահպանվել է նաև արևմտահայերենում և Կարնո բարբառի խոսվածքներում¹¹: Դիտարկենք օրինակներ՝ *քարվան*՝ «Ոսկի *քարվաններն* անցնում են կրկին...» (ԱԷ, II, 100), *մոռնալ*՝ «Կը-

⁹ Մտ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան 4 հատորով, հ. 4, Ե., 2010, էջ 41:

¹⁰ Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, գ. 1, Ե., 1962, էջ 649:

¹¹ Մ. Ղազարյան, Միջին հայերեն, գ. 1, Ե., 1960, էջ 191-192, Ռ. Մաքսպետոյան, Արևմտահայերենի դասագիրք, Ե., 2006, էջ 30, Հ. Մկրտչյան, Կարնո բարբառը, էջ 13:

մոռնաւ հեռվի աղմուկը ահեղ...» (ՄԱ, I, 39), *պարզմիտ*՝ «Երգեր ուներ *պարզմիտ*, բայց ջեռ...» (Ս, II, 179), *մայրմուտ*՝ «*Մայրմուտն* էր ժլատ վառվում...» (ԵՆ, I, 250), *չարխինդ*՝ «Եվ *չարխինդ* ճնշե հողն իմ արյունոտ...» (ԵՆ, I, 241), *նորբաց*՝ «Դողում է սիրտըս *նորբաց*, *Նորբաց* մի հուրվարդի պես...» (ՈՇ, I, 215): Ռ. Բշխանյանը, անդրադառնալով բանաստեղծի խոսքարվեստում գործածական մի շարք բառերի հեղինակային կրճատումներին, դրանց թվում նշում է նաև *չարխինդ* բառը¹²: Հարկ է նկատել, որ նշված բառը, ինչպես նաև վերոհիշյալ օրինակներում գործածված բառերը ոչ թե հեղինակային կրճատման հետևանք են, այլ գուտ բարբառային իրողություն: Ա հոդակապը, ինչպես նշում է բարբառագետը, բարդ բառեր կազմելիս Ջավախքի և այլ խոսվածքներում սակավ է գործածվում¹³: Կարծում ենք՝ ճիշտ չէ բռնոր բառերի կրճատումները համարել հեղինակային մոտեցման հետևանք, որն իրագործվում է միայն ոտանավորի չափը պահպանելու համար:

Ոճական որոշակի երանգավորմամբ է օժտված նաև առկայացման քերականական կարգը: Այն ունի իր իմաստային-քերականական առանձնահատկությունները, որոնք ձևավորվում են որոշյալության, ստացականության, ցուցականության, դիմորոշության իմաստ արտահայտող *ս, դ, ն (ը)* հոդերի միջոցով: Վերջիններս աշխարհաբարին անցել են գրաբարից, իսկ ը-ն հետագայում հանդես է եկել որպես ն-ի դիրքային տարբերակ: Ժամանակակից հայոց լեզվում մինչև 19-րդ դարի վերջը որոշիչ հոդի գործածության սահմանափակումներ չեն եղել: Դրանից առաջ, ինչպես նկատում է Ս. Պալասանյանը, «գրական լեզվի մեջ բացառական, գործիական և ներգոյական հոլովները ավելի անհոդ են վարվում...»¹⁴, իսկ 20-րդ դարասկզբին արդեն նշված հոլովների որոշիչ հոդ չընդունելու հատկանիշը վերածվում է օրինաչափության: Գեղարվեստական խոսքում որոշյալ հոդի՝ ժամանակակից

¹² Ռ. Բշխանյան, Տերյանի լեզվական արվեստը (դասախոսություն), մաս Ա, էջ 89:

¹³ Հ. Մկրտչյան, Կարնո բարբառը, էջ 13:

¹⁴ Ս. Պալասանեան, Քերականութիւն մայրենի լեզուի, Թիֆլիս, 1906, էջ 120:

հայերենի համար ոչ օրինաչափ կիրառությունները հատուկ են ժողովրդախոսակցական լեզվին և նրան հաղորդում են բարբառային երանգ, ինչպես՝ «*Նաղաղ ննջեցին գյուղերը խավար Եվ քաղաքները բերդերովն ամուր...*» (ԱԲ, I, 260), «*Հմայված լուսնի շողերովն արծաթ...*, *Ուրվականորեն շրջում է անվերջ...*» (ՄԱ, I, 41): Դիտարկված օրինակներում գործիական հոլովի որոշյալ առումով գործածությունն իմաստային ինչ-ինչ նրբերանգներ շեղտելու կամ հանգավորման խնդիր լուծելու միտում չունի, պարզապես, ինչպես նկատում է Ռ. Իշխանյանը, «գրական արևելահայերենի նախորդ շրջանից մնացած վերապրուկ է»¹⁵, բարբառային-քերականական շեղում:

Ոճական յուրահատուկ արժեքով են հատկանշվում մակբայների բարբառային ձևերի կիրառությունները: Այսպես՝ **դիմաց** գրական ձևի փոխարեն Տերյանը մի դեպքում հանգավորման («*Նույնն է խանութը դեմի, Նույն ցուցանակը հիմար. Նույն մեղմախոս Վեռլենի Երգն ես կրկնում դու համառ...*» (ԱԲ, I, 274), մյուս դեպքերում խոսքի ոճավորման նպատակով գործածում է նշված մակբայի բարբառային տարբերակը՝ **դեմը** («*Ես դեմըդ – դողդոջ տերն...*, *Նետում ես ոսկի նետերը...*» ՈՇ, I, 222), «*Դեմն են ելնում պարզմիտ ու բոի Գյուլազիք ծանոթ – զարմանքով նայում...*» (Ս, II, 178)): Կամ՝ **վաղը** մակբայի փոխարեն **եզուց** բառի գործածությունը «Նամակ» բանաստեղծության մեջ նպաստում է համապատասխան լեզվամիջավայրի ստեղծմանը՝ «*Ձեզ համար սերը «հաց ու պանիր է», Այսօր այստեղ եք– եզուց այնտեղ...*» (ԱԷ, II, 110):

Տերյանի խոսքարվեստում մեծ է և բազմաբնույթ նաև ժողովրդախոսակցական բառաշերտին պատկանող բառերի ոճական արժեքը: Խոսքային համապատասխան միջավայրում իր տեղը գտած ժողովրդախոսակցական կամ բարբառային բառը հաճախ պայմանավորում է ամբողջ բանաստեղծության արտահայտչականությունը՝ միաժամանակ լուծելով նաև հանգավորման խնդիր, ինչպես օրինակ՝

¹⁵ Ռ. Իշխանյան, Արևելահայ բանաստեղծության լեզվի պատմություն, (17-րդ դարից մինչև 1920 թ.), Ե., 1978, էջ 330:

Որքան ձյունե թիթեռ,
Ձեռներ, ձեռներ բարակ.
 Որքան **գինով** ու ջեռ,
 Որքան գգվանք – կրակ.
 Որքան պուրպուր շուրթեր,
 Շուրթեր **ալ** մարջանե,
 Քնքշություններ – թույներ,
 Որքան **ջանե՛ր, ջանե՛ր...** (ՈՇ, I, 216)

Անժխտելի է խոսքի սեղմությանը նպաստող **ձեռներ, ալ, գինով, ջան** բառերի ոճաստեղծ արժեքը դիտարկված օրինակում: Թեպետ նշված բառերն ունեն իրենց գրական հոմանիշները (բացի **ջան** բառից), սակայն որոշ նրբիմաստներով տարբերվում են դրանցից. **ալ** նշանակում է «մուգ, վառ կարմիր», իսկ **գինով՝** «հարբած», «հմայված, արբեցած»: Ոճական կարևոր գործառույթ կատարող նշված բառերը բառաշղթայում հոմանշային գույգեր են կազմում գրաբարյան **ջեռ (տաք)** և բանաստեղծական լեզվին բնորոշ **պուրպուր** (մուգ կարմիր) բառերի հետ, իսկ գրական հընչեղություն ստացած **ջան** բառի փոխանվանական գործածությունները միաժամանակ տաղաչափական խնդիր են լուծում: Նկատենք նաև, որ բանաստեղծական հյուսվածքում ժողովրդախոսակցական **ջան** բառը չի կարող փոխարինվել գրական ոչ մի բառով: Գեղարվեստական գրականության մեջ նմանօրինակ բառերի դերը կարևորելով՝ Հովհաննես Թումանյանը դիպուկ պատասխան է տալիս այն քննադատներին, ովքեր պահանջում էին նման բառերը մաքրել գրական լեզվից: «...Առաջարկում եք «ջանի» տեղ գործածել «հոգյակ»..., այսուհետև փոխանակ **ախպեր ջան** կամ **Գրիգոր ջան** ասելու, մաքուր հայերենով կասենք հոգյակ եղբայր կամ հոգյակ Գրիգոր...: Մի թե չեք տեսնում, որ հոնքը շինելու տեղ աչքն էլ հանում եք», – գրում է բանաստեղծը: Տերյանի խոսքարվեստում ոճական նմանօրինակ գործառույթով են օժտված նաև **յար, նազան** և այլ բառեր, որոնց գործածությունները, ըստ Ռ. Իշխանյանի, ներդաշնակ և հարիր չեն տերյանական խոսքին, ինչպես օրինակ՝ «Այսօր գալու է իմ յարը, Օ սիրտ,

խնդա ու դողա...» (ՈՇ, I, 235), «Կը գամ իմ հոգու ալ-լավ վարդերով Հոգուդ դրախտը նագան գուգելու...» (Ս, II, 187) և այլն: Գ. Մահարին «Լինեի չոբան սարերում հեռու...» բանաստեղծության մեջ գործածված *չոբան* բառի գործածության վերաբերյալ գրում է. «Ա՛խ, այդ «չոբանը»: Որքա՛ն վատ է զգում նա իրեն Տերյանի «Կատվի դրախտում»...»¹⁶: Եվ չնայած նշված տեսակետներին, այնուամենայնիվ, կարծում ենք, որ այդպիսի բառերի գործածությունները լեզվական համապատասխան միջավայրում որոշակիորեն պայմանավորում են բանաստեղծական խոսքի հմայքն ու գրավչությունը: Կա ոճական մի գործառույթ, որը կարող է իրականացնել միայն բարբառային կամ ժողովրդախոսակցական բառը. դա միջավայրի պատրանքի ստեղծումն է:

Համաձայն չենք տերյանական լեզվին Չարենցի կողմից տրված «չափազանց նիվելիրովկայի ենթարկված լեզու»¹⁷ որակմանը, ինչպես նաև իսահակյանական այն բնորոշմանը, թե *նրա* (Տերյանի – ընդգծումը մերն է՝ Ս.Հ.) լեզվական ֆակտորան մաքուր գրական է՝ իր բառապաշարով և քերականությամբ... Սակայն ոչ մի ժողովրդական բառ, ոչ մի ժողովրդական դարձվածք և ոճ, ոչ մի արմենիզմ»¹⁸: Լեզվի արտակարգ զգացողությամբ օժտված բանաստեղծը ոչ միայն չի խուսափել բարբառային ու ժողովրդախոսակցական բառերից, այլև գործածել է ժողովրդախոսակցական բնույթի մի շարք արտահայտություններ, ինչպես՝ «–Հանաքը հաճախ դանակ է դառնում, –Մի օր սև գլխից փորձանք կըբերես..., Մի օր անպատճառ թակարդը կընկնես...» (ԱԷ, II, 115), «Ձեզ համար սերը «հաց ու պանիր է»...» (ԱԷ, II, 110), «Ջրի բերածը տանք նորից ջրին, Թող թեփը տանի, ոսկին լոկ մնա...» (Ս, II, 156), «Բայց կյանքն է տերը – մենք նրա գերին...» (ԱԷ, II, 145), «Չար աչքը թող չըտեսնի քեզ...» (ՈՇ, I, 220) և այլն: Տերյանը ոչ միայն գործածել է ժողովրդախոսակցական լեզվին

¹⁶ Նշենք, որ վերոնշյալ բանաստեղծությունը ընդգրկված է ոչ թե «Կատվի դրախտ» շարքում, այլ անտիպ էջերում:

¹⁷ Ե. Չարենց, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 6, Ե., 1967, էջ 319:

¹⁸ Ավ. Բասիակյան, Վահան Տերյանի մասին // ԳԹ, Ե., 1945, № 1, 10 հունվարի, էջ 3-4:

բնորոշ դարձվածքներ ու արտահայտություններ, այլև կերտել է այդպիսի ինքնատիպ լեզվական միավորներ: Այսպես՝ ժողովրդական խոսքում «դժբախտության հանդիպել» իմաստով տարածված **գլխին ձյուն իջնել** դարձվածքը բանաստեղծի խոսքարվեստում հանդիպում է նաև **գլխին ձմեռ իջնել, ձմեռ ծաղկել** տարբերակներով՝ «Ձմեռ իջավ իմ գլխին և ցուրտ, և խոր, և անդորր, Աղբյուրներըս չորացան – ոչինչ, ոչինչ չըմնաց...» (ԱԲ, I, 269), «Ձմեռն է, ձմեռն է ծաղկում... Օ, սիրտ իմ, օտար երկնի տակ Մեռնում ես անտուն ու անքուն...» (ԱԷ, II, 67): «Անվերջ, անդադար քայլել», «գնալ-գալ» իմաստով հատկանշվող **փողոց(ներ)ը մաշել** դարձվածքը բանաստեղծը փոխարինել է **ճանապարհների հեռուն մաշել, մայրքերը մաշել** ինքնատիպ դարձվածքներով՝ «Արդյոք ո՞ր էս դու... Ա՛խ, արդյոք դու որ ճանապարհների հեռուն ես մաշում...» (ՄԱ, I, 92), «Ես դուրս եմ գալիս փողոց եմ գնում, Եվ երկա ը, երկա ը մայրքերն եմ մաշում...» (ՄԱ, I, 79):

Միանգամայն հնարավոր է, որ հիմնականում անտիպ էջերում ու սևագրություններում հանդիպող բարբառային ու ժողովրդախոսակցական բառերի օրինակները հրատարակության ժամանակ իրենց տեղը զիջեին գրական բառերի ու արտահայտությունների, ինչպես «Մթնշաղի անուրջներ» ժողովածուի վերահրատարակման ժամանակ բանաստեղծի չափածոյի լեզվից դուրս մնացին **մախմուր, խաս, շուք, թակել** և այլ բառեր: Այնուամենայնիվ, Տերյանի խոսքին ժողովրդայնություն հաղորդող լեզվական նման մարգարտահատիկները մեր ժողովրդի բնավորության ու հավաքական մտածողության արտահայտություն են: Հանճարեղ բանաստեղծը լեզվական համապատասխան միջոցներով ժողովրդայնություն է հաղորդել իր լեզվին՝ միաժամանակ բարձունքի վրա պահելով գրական հայերենը: Իրավացի է լեզվաբանը՝ գրելով. «Բարձր ու վսեմ գրական հայերենը, եթե իրոք այդպիսին է, արդեն իսկ ներծծված է ժողովրդական լեզվամտածողությամբ: Հիշենք Տերյանի ոսկեղենիկ լեզուն...»¹⁹:

¹⁹ *Արտ. Պապոյան*, Պարույր Սևակի չափածոյի լեզվական արվեստը, էջ 26:

Мери Оганнисян – *Стилистические особенности диалектных слов в искусстве речи Ваана Теряна*. – Терян умело использовал разные стилистические пласты лексики армянского литературного языка, многочисленные возможности значения и использования слов. Один из факторов, обуславливающих самобытность поэзии Теряна – искусство выбора слов, которое ярко проявляется в семантико-стилистическом использовании диалектных слов. В лексике Теряна народные и диалектные слова, сопоставления, фразеологизмы выделяются удивительной образностью определения вещей и явлений. Диалектные и народно-разговорные слова, используемые в соответствующей речевой ситуации, зачастую определяют звучание поэтической строфы, а иногда и звучание всего произведения.

Meri Hovhannisyan – *The stylistic peculiarities of dialectal words in Vahan Teryan's speech art*. – Teryan was very skilful to apply various opportunities of different stylistic layers of Armenian literary language vocabulary, word meaning and their usage. The poet's speech art originality is the word-selection art, obviously reflected in the meaning-stylistic specific usage of ethno-verbal and dialectal words. Dialectal words, comparisons, phrases which are not specially popularized in Teryan's speech, characterize amazing figurativeness of things and phenomena. Ethno-verbal and dialectal words which have their suitable verbal place create the sonority of the paragraph, the rhyme, and the whole poem.

Բանալի բառեր: ոճագիտություն, խոսքարվեստ, բարբառ, բարբառային բառեր, ժողովրդախոսակցական բառեր, ոճական արժեք, դարձվածք:

Ключевые слова: стилистика, искусство речи, диалект, диалектные слова, народные слова, стилистическая ценность, фразеологизм.

Key words: stylistics, speech art, dialect, dialectal words, ethno-verbal words, stylistic value, phrase.

ՀԱՅ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

**ՏԱՎՈՒՇԻ ԱՍՈՒՅԹԱԲԱՆԱԿԱՆ
ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ**
(ըստ 1970-90-ական թթ. հավաքած նյութերի)

ԷՍԹԵՐ ԽԵՄՉՅԱՆ
(ԳԱԱ ՀԱԻ)

Ժողովրդական բանավոր ավանդության նշանակալից մասը կազմում է ասույթաբանությունը, որի մեջ ընդգրկված են խոսքային բանաձևերի տարբեր տեսակները՝ առած-ասացվածքները, անեծք-օրհնանքները, երդումներն ու դարձվածները, շուտասելուկներն ու հանելուկները, նախանշանային բանաձևված ասույթները և այլն: Ասույթաբանական ժանրերին բնորոշ է փոքր ծավալի մեջ խտացնել ու բանաձևել դարավոր փորձի ու գիտելիքների վրա խարսխված պատկերավոր ու իմաստուն խոսքային ամբողջություն, որը ըստ մատուցած գործառույթի ստորաբաժանվում է տեսակների:

Տավուշի ասույթաբանական բանահյուսության ամենատարածված, կենսունակ ու կիրառելի ժանրերից են առած-ասացվածքները: Սրանք մեծ մասսայականություն են վայելում, հարստացնում ու պատկերավոր են դարձնում յուրաքանչյուր տավուշցու բանավոր խոսքը:

Առած-ասացվածքները, ի տարբերություն վիպական բանահյուսության մյուս ժանրերի, չունեն սյուժե և կոնկրետ հերոս, այլ իրենց մեջ ամբողջացնում են բարոյահոգեբանական առանձնահատկություններ¹, որոնք ի դերն են հանում համամարդկային բնավորության ու հոգեբանության առանձին գծեր՝ դրանցով վեր հանելով կյանքի պայմաններով թելադրված մարդկային այս կամ այն հոգեբանական վիճակն ու այն ընդհանրացնելով հանգում իմաստուն եզրակացության:

¹ *Кравцов Н.И.*, Искусство психологического изображения в русском народном поэтическом творчестве, фольклор как искусство слова, Изд-во МГУ, Москва, 1969, с.13.

Առած-ասացվածքները կիրառվում են բանավոր խոսքի մեջ ըստ անհրաժեշտության և բացահայտում են տվյալ պահին բնորոշ և ունկնդիրներին հասկանալի այլաբանական, անուղղակի կամ ուղղակի միտք՝ որպես անկախ բանահյուսական ստեղծագործություն: Առած-ասացվածքների սեղմ, մի քանի բառի կամ տողի մեջ արտահայտված պատկերավոր ու խորհմաստ միտքը հնարավորություն է տալիս այն հեշտությամբ յուրացնել, մտապահել և օգտագործել, սակայն, ի տարբերություն երկարաշունչ բանահյուսական ստեղծագործությունների (հեքիաթ, զրույց, ավանդություն), այն գրառելը կապված է որոշակի բարդությունների հետ, հատկապես այն ըստ անհրաժեշտության կիրառելու հանգամանքի հետ: Ոչ մի վարպետ բանասաց սոսկ գրառելու համար առած-ասացվածք չի ասում: Առածներն ու ասացվածքները միմյանցից տարբերվում են ներքին, իմաստային առանձնահատկությամբ: Առածները միտքը և իրականությունը արտահայտում են փոխաբերական առումով, այլաբանորեն, օրինակ՝ «Էշն էլի էն էշն ա, փալանն ա փոխվել» [ՀԱԲ 21, № 95(458)], «Ղազանը վեր ընգնվ, կոտրեց վրէչ, ծըլնգոցը վեր ըլավ» [ՀԱԲ 21, № 237(600)], «Պառավը գիղնակ չէր, համա կյլոխը եկած էր» [ՀԱԲ 21, № 332(695)] և այլն: Ասացվածքներն իրականությունն արտացոլում են ուղղակի, առանց այլաբանական միջնորդության² և հաստատում են կոնկրետ իրողություն, օրինակ՝ «Թամամ խոսկը էշին կասեն» [ՀԱԲ 25, № 93(487)], «Որդեղ՝ մարթ էնտեղ՝ մահ» [ՀԱԲ 25, № 270(664)], «Լավություն արա, ճո՛ւրն ածա» [ՀԱԲ 21, № 142(505)], «Ով չուշտ, նա կուշտ» [ՀԱԲ 21, № 320(683)], «Փախչիլն էլ հոնար ա» [ՀԱԲ 21, № 398(761)], «Օցի սնն էլ սատկի, սիպտակն էլ» [ՀԱԲ 21, № 434(797)] և այլն:

Առած-ասացվածքների պատկերավորությունը մեծ արտահայտչականություն է հաղորդում խոսքին, որովհետև այն ասվածը հագեցնում է չափազանցությամբ, համեմատությամբ, ի ցույց է

² *Հարությունյան Ս.Բ.* Բանագիտական ակնարկներ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ, Երևան, 2010, էջ 246:

դնում բառի ներքին տարիմաստությունը, օրինակ՝ «Անջրդի հողը մի աստված ունի, //Զրովի հողը՝ երկու աստված» [ՀԱԲ 25, № 18(412)], այս առածում «ջուր» բառը իր հիմնական նշանակությունից բացի իր մեջ թաքցնում է երկրորդ՝ աստված նշանակությունը, ուստի այլաբանորեն «հողին» երկու աստված է հովանավորում՝ ջուրը և աստված: Այստեղ ջուրը ձեռք է բերում ամենագոր աստվածային հատկանիշ:

Առածի և ասացվածքի ժանրային տարբերակման համար լեզվաբաններն ու բանագետները հիմք են ընդունել նաև քերականական ավարտվածության հատկանիշը, ըստ որի, առածը ավարտուն նախադասություն է, իսկ ասացվածքը՝ անավարտ³: Առած-ասացվածքների հիմքը դիտարկելով որպես լեզվական կադապարային միավոր՝ ռուս բանագետ Պերմյակովը ըստ շարահյուսական ավարտվածության տարբերակում է երեք կադապար՝ 1) ասացվածք, 2) առած, 3) երկխոսական առած (побасенка): Տավուշի առած-ասացվածքները նույնպես իրենց կազմությամբ միանդամ, մեկ պարզ նախադասությունից կազմված կամ երկանդամ կազմությամբ, որոնց անդամները միմյանց լրացնում են իմաստով և հաճախ հանդես են գալիս հանգավոր⁴, օրինակ՝

Էլն էլ լիացավ,	Ըրեխին՝ մեջքիցըդ,
Պեւն էլ լիացավ,	Հացը՝ հորիցդ,
Մեզ պան չհասավ:	Ճիպոտն էլ՝ քոլիցդ:
[ՀԱԲ 25, № 65(459)]	[ՀԱԲ 25, № 87(481)]

կամ պատկերավոր երկխոսություն է հարց ու պատասխանի միջոցով, որը տեղի է ունենում երկու մարդու, մարդու և կենդանու, երկու կենդանու միջև՝ իր հեռահար իմաստուն եզրակացությամբ: Օրինակ՝ «Զուռնաչու կրնգանը ասեցին.- Պար կյնլ գիդե՞ս: Ասեց.- Բա էս պրոճըրկվածը (մազերը) որդե՞ղ ա սիպտակել» [ՀԱԲ 25, № 61(455)], «Աքլորին ասըմ են.- Խի՞ ես հպարտ: Ասըմ ա.- Զանքաչ չունեմ» [ՀԱԲ 21, № 53(416)], «Եթիմն ասեց.- Ես օր

³ *Пермяков Г.Л.*, Основы структурной паремиологии. Главная редакция восточной литературы, Москва, 1988, с. 16.

⁴ *Հարությունյան Մ.Բ.*, Նշվ. աշխ., էջ 247:

կքաշեմ: Աստվածն ասեց.- Ես վրերդի՞ եմ, վրեր տո՛ւ օր քաշես» [ՀԱԲ 21, № 69(432)], «Ուխտին ասել են.- Վիզըտ ծուռ ա: Ասել ա.- Ի՞նչս ա դիւզ, վրեր վիզըս դիւզ ըլի» [ՀԱԲ 21, № 389(752)]:

Երկխոսական առածները պատմական երկար ճանապարհ են անցել և ծագել են առակներից բխեցվող վերջնութեւր եզրակացությունից: Դրանք առանձնանալով առակից՝ ձեռք են բերել ինքնուրույն կիրառություն:

Տավուշի առած-ասացվածքները փոքր ծավալի մեջ խտացրել են ժողովրդի կյանքի, վարքի, պատմության, սոցիալական հարաբերությունների, կենցաղի, հոգեբանության, մտածելկերայի բազմապիսի դրսևորումներ: Ասույթաբանության այս տեսակը ոչ միայն հարստացնում է անհատի խոսքը, այլ ավելի արտահայտիչ, դիպուկ ու կոնկրետ է դարձնում ասելիքը, հնարավորություն է տալիս այլաբանորեն դիմացինին հասկացնել այն, ինչը երբեմն ընդունված չէ ուղղակի ասել: Տավուշի առած-ասացվածքներն ու դարձվածները համահայկական ասույթային բանահյուսությունը հարստացրել են զուտ տեղական ծագում ունեցող ստեղծագործություններով: Տավուշի ժողովրդական առած-ասացվածքները ճանաչողական մեծ արժեք ունեն և հաճախ արտացոլում են պատմաազգագրական տարածքի բուսական, կենդանական աշխարհը, կենցաղը, սովորույթները, միջավայրը, սոցիալ-տնտեսական հարաբերությունները, անգամ կոնկրետ անձանց և կատարված դեպքերը և դրանց հիման վրա ձևավորված ասույթները: Այդպիսի տեղական ծագում ունեցող առած-ասացվածքներից ու դարձվածներից են. «Քիչ չի չինչինեցի ա, էն էլ Ազրզըխալի թաղեցի ա» [ՀԱԲ 21, № 417(780)]. Չինչինը Շամշադինի ենթաշրջանի հեռավոր ու կենտրոնից կտրված գյուղերից է, իսկ Ազրզախալյուրը Չինչինի ամենահեռու և ցեխառատ թաղամասը: Այս առածի հիմքում ընկած է հեռավորության և անմատչելիության գաղափարը՝ խարսխված կոնկրետ տեղավայրերի հակադրության վրա: Իջևանի գյուղերում «Կատուն պլիթը տարել ա» [ՀԱԲ 25, № 153(547)] առածի համար հիմք է ծառայել հետևյալ պատմությունը: Տավուշում հացաթխման արարողության ժամա-

նակ ընդունված է տան փոքր անդամների համար թխել փոքրիկ կլոր հացիկներ, որ կոչվում է «պըլիթ» (բլիթ): Մի մայր թխել և տան փոքրիկին է տվել հասանելիք «պըլիթը», որը երեխային չի բավարարել և նա խռովել է ու մի կողմ դրել իր «պըլիթը». այն թոցրել է կատուն: Այստեղից հետևություն՝ ունեցած քչից էլ կարելի է գրկվել: «Մի վարար որ չըլի, մի ծըմծըման կըլի» [ՀԱԲ 25, № 224(618)] առածը ստեղծվել է Դիտավան գյուղում և պարունակում է շատ որ չլինի, քիչը կլինի իմաստը, որի համար հիմք է ծառայել գյուղից վեր՝ անտառում գտնվող Ծըմծման կոչվող քարածայրը, որի բարձունքից մի բարալիկ ջուր է հոսում ժայռերն ի վար: Մի շարք առածներ առնչվում են կոնկրետ իրական անձնավորությունների հետ, օրինակ՝ «Պետին կգիդա, թե տավարը դորն ա քըլմ» [ՀԱԲ 21, № 335(698)], «Գիդըմ չի, թե ով ա մեռել, //- Վա՛յ Վարթան ա կանչըմ» [ՀԱԲ 21, № 62(425)], «Գյնգին ցորեն հացին սըվորել ա» [ՀԱԲ 21, № 64(427)], Պետին գյուղի՝ իր գործին գիտակ նախրապանն է, իսկ Գյնգին գյուղի աղքատն է, որ ջրաղացպան է դարձել և փոխել իր սոցիալական վիճակը, որից հետևություն է արվել, որ աղքատն էլ կարող է հարստանալ:

Տավուշի ասույթաբանական բանահյուսության մեջ զգալի տեղ են գրավում դարձվածները: Դարձվածը կայուն վերահիմաստավորված նշանակությամբ բառակապակցություն է⁵, բաղկացած երկու կամ ավելի բաղադրիչներից: Առանձին-առանձին այս կամ այն նշանակություն ունեցող բառերի կապակցությունը արտահայտում է ուրիշ իմաստ, իսկ կապակցված բառերը կարող են և՛ ուղիղ, և՛ փոխաբերական նշանակություն ունենալ: Տավուշի դարձվածները բազմազան են և հյութեղ, գոյություն ունեն տեղական միջավայրում ստեղծված ինքնատիպ դարձվածներ: Քարվանսարա գյուղում (այժմ՝ Իջևան) ստեղծվել և կիրառվել է «Լոք տամ Գյրնգոս անել» [ՀԱԲ 25, № 56(808)] դարձվածը, որն այլաբանորեն նշանակում է շտապ ու վրայից ցատկելով լոք տալով,

⁵ *Քեղիքյան Պ.Ս.*, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, «Լույս» հրատ., Երևան, 1973, էջ 5:

սահելով ու շրջանցելով գործ, որի համար հիմք է ծառայել քարվանսարեցի հաղթահասակ Գյրնգոսի (Կիրակոս) լոք-լոք տալով, շտապելով քայլելու սովորությունը: Իջևանի ենթաշրջանի գյուղերում տարածված դարձվածներից է «Պառավը ծոցն անել» [ՀԱԲ 25, № 136(888)] դարձվածը, որն ուղեկցում է մի յուրօրինակ մրցույթ-խաղի: Խաղի իմաստը հետևյալն է՝ երեկոյան քնելու պատրաստվող երեխաները պետք է արագությամբ հանվեն և պառկեն, վերջինը անկողին մտնող երեխային բաժին է հասնում պառավը, որը ցանկալի չէ: Մեր կարծիքով՝ այս «պառավի» արմատները շատ խորն են և աղերսվում են «ջադու պառավի» գործառույթի դրսևորման հետ⁶: Նմանատիպ հնագույն երևույթի դրսևորման փաստ է «Քարը մտնել» դարձվածը, որը Տավուշում օգտագործվում է այն դեպքում, երբ որևէ մեկը երկար ժամանակ տեսադաշտում չի երևում և իմաստաբանորեն անհետանալու երևույթն է փաստում: Քարում փակվելու մոտիվի ծագումնաբանական հիմքերը աղերսվում են «Մասնա ծռեր» էպոսի չորրորդ ճյուղի գլխավոր հերոս Փոքր Մհերի՝ Ագռավու քարում փակվելու, ինչպես նաև ժողովրդական հեքիաթների հերոսների՝ ժայռի մեջ մտնելու հետ:

Հեքիաթագետները նկատել են, որ առած-ասացվածքներն ու դարձվածները հեքիաթի կառույցում երբեմն հանգույցի, կապող օղակի դեր են խաղում⁷, և բանասացները դրանք օգտագործում են իրենց խոսքին ավելի մեծ արժեք տալու և տարբեր երևույթներին տարբեր հնչեղություն հաղորդելու համար: Առած-ասացվածքի փոքր ծավալը, պատկերավորությունը, ճանաչողական ու իմացական արժեքը կիրառական մեծ հնարավորություն է ընձեռում հեքիաթի հերոսների վարքագիծը բնորոշելու, նրանց հետա-

⁶ Հեքիաթներում հաճախ պառավը խորհրդանշում կամ անձնավորում է մահը (Բաբա Յագան և կախարդ պառավները): Քունը ընկալվում էր որպես ժամանակավոր մահ, հետևաբար «պառավը ծոցն անել» դարձվածը սկզբնապես հավանաբար նշանակել է մահվան գիրկն ուղարկել ինչ-որ մեկին:

⁷ *Баранникова Е.В.*, Бурятские волшебные-фантастические сказки, Новосибирск, Сибирское отделение изд-ва «Наука», 1978, с. 200.

գա արարքները կանոնակարգելու համար, խորհուրդ տալու կամ էլ արդեն տեղի ունեցած իրադարձությունների մասին եզրակացություն-բանաձևով հանդես գալու: Օրինակ՝ «Թաքավորն ապրած կենա, տո՛ւ քանի թագա յա, քանի դեռ հլամ կլուխը պըրցըրել չի, արի տո՛ւ տրա՛ն կլխին տու, **թող ոտը իրան յորդանի գյիրա՛ մեկնի, իրան գյիրա՛ թող ժաժ կյա՛**»⁸, «Ա՛յ վըրըթենի ջան, դե՛, էսա էս մըրեռնըմ եմ, տո՛ւք եք գյիղըմ, թե վըրե՛նց կանեք, ի՞նչ կանեք, մըրե՛նակ մի խըրատ եմ ձըեզ տալըի, վըրե փըսակվեք, առանց ճընանչիլու, առանց տըրենալու խամ, օտար տըրեղից ախչիկ չի առնեք, **ծրեր ճիպոտը ծրեր քոլիցը կըկտորեք՞**»⁹, «**Թուրը՝ թքողին, մուրը՝ մրողին, ո՛վ կթքի իրան ծնողին**»¹⁰, «**Աման մարթ Հաջի Մուրադ չի տաննա՛լ, աման ցավի դիմանալ**»¹¹, «...աստոժ ինձ դրգյեց, ասեց. «Բյնա՛ն նհանց ասա՛՝ **ով կանի պարհուրին, նա կստանա անմահութի՛ն**, նհանց գյանք բախշի, իրանց ամենքին հարիր տարի գյանք տու»¹²:

Վերջին բանաձևերը գալիս են հաստատելու այն իրողությունը, որ բանահյուսական ժանրերը մեկուսացած չեն հանդես գալիս, այլ փոխադարձաբար ներթափանցում են մեկը մյուսի մեջ և հարստացնում, արտահայտիչ ու ինքնատիպ դարձնում տվյալ ստեղծագործությունը: Նման դերակատարությունը հատկապես իրենց վրա են վերցնում ասույթաբանական ժանրերը, որոնք իրենց սեղմ ծավալի մեջ խտացնում են իմաստաբանական մեծ ներուժ:

Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանների բնակիչների մեջ ցայսօր պահպանվել է խոսքի հմայական ներգործության հավատը: Տավուշում մինչ օրս ակտիվորեն կենցաղավարում են անեծ-

⁸ Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. VI, (հետայսու՝ ՀԺՀ VI), ՀՀ ԳԱ հրատ., Երևան, 1973, «Պիւրթ կյգիղը՝ թաքավոր», էջ 322:

⁹ ՀԺՀ VI, «Հոր խըրատը իրան տըղերանցը», էջ 382:

¹⁰ Հայ ազգագրություն և բանահյուսություն, **Խենկյան Է.Հ.**, Տավուշ, հ. 21 (հետայսու՝ ՀԱԲ 21), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2000, № 1(1), «Վըսկըքյա՛քուլ տղի հեքիաթը», էջ 20:

¹¹ ՀԱԲ 21, № 6(6), «Հաջի Մուրադ», էջ 48:

¹² ՀԺՀ VI, «Ով անի պարհուրին՝ կստանա անմահութի՛ն», էջ 489:

քի, օրհնանքի և բարեմաղթությունների ժանրերը: Անեծք-օրհնանքները հմայական պարզ բանաձևերի խմբին են պատկանում. դրանք, առարկայական հիմք ունենալով հանդերձ, հոգեբանական իրողության դրսևորումներ են¹³: Անեծքներն ու օրհնանքները օգտագործողի, ասացողի բացասական ու դրական ցանկություններն են, որոնց հմայական ներգործությանը մարդիկ հավատում են: Անեծքները գոծում են մահ, դժբախտություն, անբուժելի հիվանդություն, աղքատություն, սոցիալ-տնտեսական անելանելի վիճակ, ինչպես օրինակ՝

Կնիկդ ծննդկան ըլի,

Տանդ հաց չըլի,

Ճըղացիդ հերթ չըլի,

Տունդ էլ կաթիլիս ըլի: [ՀԱԲ 25, № 80(1085)]

Անեծքի ամենատարածված տիպը պարզ ու հակիրճ բանաձևերն են, օրինակ՝ «Օխտը պատան մաշես» [ՀԱԲ 21, № 190(1128)], «Սորու տակին շվաք անես» [ՀԱԲ 21, № 99(1037)], «Թյոն-գոնքըտ ռեշնի» [ՀԱԲ 21, № 53(991)]: Դրանց զուգահեռ հանդիպում են նաև բարդ ու ծավալուն, ինչպես նաև չափածո անեծքներ, օրինակ՝ «Ոսկոռնիքըտ տոպրակն ածեմ, չըխկչըխկալի ման ածեմ» [ՀԱԲ 21, № 115(1053)] կամ՝

Քյնաս, քյնաս փըրըսող,

Շատ անես՝ քիչ ուտես,

Կերածըդ ըլնի լսնըհող,

Քիչ անես՝ ոչ ուտես,

Կյոմշի պոզի պես կռանաս,

Քու ծոն քու ըոխովը վե քցես¹⁴:

Իծի պոզի պես չորանաս,

Տավուշի տարածաշրջանում մի շարք անեծքներ ձևավորվել են պատմական կոնկրետ իրադարձությունների հիման վրա և ուղղված են եղել երիտասարդ աղջիկներին, օրինակ՝ «Լնգգու կլվնկին քյնաս», «Թուրքի կլվնկին քյնաս», «Շորժեն անց կենաս»: XIX դարավերջին լեզգիներն ու թուրքերը հաճախ Տավուշի լեռնաշխարհից և հատկապես Մուրղուզ սարի ամառանոցներից

¹³ *Հարությունյան Ս.Բ.*, Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1975, էջ 124:

¹⁴ FEI: 0643-0646, Է. Խենյանի հավաքածու, 1977, Շամշադին, Բերդ:

աղջիկներ էին առնանգում¹⁵: Տղամարդիկ մինչև Շորժա հետապնդում էին առնանգիչներին, հասնելու դեպքում հետ էին բերում առնանգվածին, չհասնելու դեպքում՝ հետապնդողները Շորժայից վերադառնում էին ձեռնունայն:

Տավուշում նկատվում է ավանդական որոշ անեծքների տեղայնացման երևույթը. «Տերտերը դաքիտ քյնն» [ՀԱԲ 25, № 129 (1134)] անեծքը, որը թաղման ծիսակարգն է ներկայացնում, Դիտավան գյուղում վերածվել է «Նիկոլը դաքիտ քյնն» [ՀԱԲ 25, № 106(1111)] ձևին, որովհետև Նիկոլ անունով մեկը միշտ թաղման թափորի առջևից տարել է դագաղի կափարիչը: Նույն գյուղում «Տնտկանց տների տակը քյննս» [ՀԱԲ 25, № 125(1130)] անեծքը նույնպես մահագույժ է, որովհետև գյուղի գերեզմանատունը գտնվում է Տատկանց (տոհմանուն է) տներից ներքև: Ավանդական անեծքների հիմքի վրա նոր ժամանակակից առարկաների ու հասկացությունների օգտագործմամբ ձևավորվել են անեծքների նոր տարբերակներ, օրինակ՝ «Մեյիղըտ ժեշտա յաշիկըմ պիրեն» [ՀԱԲ 21, № 94(1032)], «Ռուլըտ փորըտ մտնի» [ՀԱԲ 21, № 125(1063)]:

Տավուշում ընդունված է անեծքին հակազդելու համար հանդես գալ պատասխան բանաձևով, որը կամ պետք է ոչնչացնի, կամ էլ թուլացնի անեծքի ուժը: Ամենատարածված պատասխան բանաձևերն են՝ «Ինչ ասես՝ քեզ քյնն», «Օոցըտ ճըվնլ տնոնն, նի քյնն», «Քիչ ընրծի, կաթն ըլըմ ա, իրան վրա վեր տնոնըմ»: Այստեղ ակնհայտ գործում է «բումբերանգի օրենքը», այսինքն՝ անիծողի բերանից դուրս եկած չարագույժ խոսքը հակադարձվում և ուղղորդվում է հենց անիծողին:

Օրհնանքներն ու բարեմաղթությունները Տավուշի տարածաշրջանում մեծ մասամբ կիրառվում են հարսանեկան ծեսի, նշանադրության ժամանակ, նորածին երեխայի ծննդյան կա-

¹⁵ FEI:3689-3693, Է. Խեմյանի հավաքածու, 1981, Շամշադին, Բերդ, Հայ ազգագրություն և բանահյուսություն, *Խեմյան Է.Հ.*, Իջևան (Չորոփոր), հ. 25 (հետայսու՝ ՀԱԲ 25), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2008, № 7(200), «Առնանգում», էջ 276:

պակցությամբ, հիվանդատեսության ընթացքում: Դրանցում բացառապես շեշտվում է բարեկեցիկ ու երջանիկ կյանքով ապրելու, շնորհների ու հաջողությունների արժանանալու, բարի, ազնիվ ու արդար լինելու ցանկություններ, օրինակ՝ «Կետի քան տո՛ւ ումբն ունենաս» [ՀԱԲ 21, № 31(869)], «Դորը քյննս՝ բախտավոր ըլես» [ՀԱԲ 21, № 14(852)], «Մինը տընես՝ հնգնր վեր ունես» [ՀԱԲ 21, № 40(878)]: Հին Քարվանսարայի (Իջևան) բնորոշ օրհնանքներից է. «Զորանաս, զորտիկանաս, /Մեջտեղիցըտ կետտիկանաս», որով մարդուն մաղթում են այնքան երկար կյանք ու ծերություն, որ մեջքից կռանա:

Անեծք-օրհնանքները և բարեմաղթությունները, օժտված լինելով ներքին հմայական զորությամբ և ընկալվելով որպես ներգործուն զորություն և ցանկության իրագործման գերբնական հնարավորություն, մշտապես ուղեկցել են նաև հեքիաթների սյուժեներին և կարևոր դեր են խաղացել դրանց կառուցվածքում: Տավուշի հեքիաթներում հանդիպում են անեծքների երկու տիպ: Առաջինը անեծքների այն տիպն է, երբ հեքիաթային հերոսի կատարած վատ արարքն է ազդակ դառնում անեծքի համար, որով կանխորոշվում է նրա ապագան և մատնանշվում է անեծքի ազդեցությունը վնասազերծելու միջոցը, որը պետք է ձեռք բերվի անդրաշխարհից: Սովորաբար անիծող կողմը մի պառավ կին է, որը, անկասկած, օժտված է հմայական կարողություններով և գիտի իր խոսքի արժեքն ու ուժը: Օրինակ՝ «Էս պառավը հիլ ա անըմ փախչըմ ա ու անըմըմ ա, ասըմ ա. «Ա՛յ որթի, ասժանե **խընթրում եմ, բայքի սամվելա քամին կյա՛ քու բաղը նհենց սրփի տանի, նհենց չորացնի, որ տեղը մի կանաչ էլա մնա ոչ**»: Սրա ասելն ու մի փիս հանքսըզ քամի վեր կենալը մին չի՝ ըլըմ:

... Դրանից ետը պառավը ասըմ ա. «**Ձեր բաղը չի կնանչի, հեչկեղ որ Ձաղի բլբուլը չպիրեք**»¹⁶:

Ինչպես տեսնում ենք՝ անեծքի այս տեսակով պայմանավորված են հեքիաթի հետագա գործողությունները՝ անեծքով դրված արգելքը չեզոքացնելու համար, իսկ երկրորդ տեսակը, որ կիրառ-

¹⁶ ՀԺՀ VI, «Թաքավորի բաղի հեքիաթը», էջ 688:

վում է հեքիաթում, ընդհանուր բնավորությամբ անեծքն է: Այս պարագայում անիծողը իր հոգեկան ապրումները, վրդովմունքն ու զայրույթը արտահայտում է բացասական ցանկությամբ, օրինակ՝ «Թող կյն, **ֆողեն դրա կուխը**, հորս հացը հալբաթ փորին ծանդրութին ա անըմ, հալբաթ կլուխը ցավըմ ա, աջալը մոտացել ա»¹⁷, «**Այ տըրա սըվորցնողի վիզը կոտրի**»¹⁸, «**Վա՛յ, տիւ բեմուրագ ըլես, վա՛յ տիւ խրորզնըհատ ըլես...**»¹⁹:

Դժբախտություն, վիճակի վատթարացում արտահայտող ցանկություններին զուգահեռ՝ հեքիաթներում հաճախ կիրառվում են բարի մաղթանքի հմայական բանաձևեր, որոնց միջոցով ասացողն իր լավագույն ցանկություններն ու երախտագիտությունն է փոխանցում դրան արժանացած հերոսին: Օրինանքներն ու բարեմաղթությունները հակակշռում են անեծքին, լավատեսական տրամադրություն են հաղորդում հեքիաթին և արդարացնում ունկնդիրների սպասումը՝ կապված բարու հաղթանակի հետ: Օրինակ՝ «**Փա՛հ, փա՛հ, քու ձեռները կնանչի, քու մատները պետք ա պաչել, որ էս դայդի հունարի տեր ա**»²⁰, «Բյնն, **աստոճ քու պանն աչողի, ինչ որ տվել էմ քեզ, քու մոր կաթնի պես հալալ լի քե՛**»²¹, «Վա՛յ, **ես քու ցավը տանեմ, ես քու հոքուն մատաղ, ես քեզ դուրբան**, որ իմ ախճկանն ազատեցիր...»²²:

Հմայական բանահյուսության հիմնական տեսակներից են աղոթքները, որոնք պատկանում են հմայական բարդ բանաձևերի խմբին: Տավուշի հմայական աղոթքի կրողները հիմնականում այն անհատներն են, որոնց այն ավանդաբար փոխանցվել է որպես մենաշնորհ և որոնք խոսքի դյուրական գործությունը չկորցնելու համար նախանձախնդրորեն պահպանել են հմայական բանաձևի գաղտնիքը և այն իրենց հերթին փոխանցել են հակառակ սեռի սահմանափակ թվով (յոթ հոգու) «ընտրյալ» անհատներ-

¹⁷ ՀԺՀ VI, «Մայիֆ թաքավորի հեքիաթը», էջ 309:

¹⁸ ՀԱԲ 21, № 1(1), «Վըսկըքյնքուլ տղի հեքիաթը», էջ 19:

¹⁹ ՀԱԲ 25, № 18(18), «Թաքավորի պուճուր տղեն», էջ 94:

²⁰ ՀԺՀ VI, «Սուլթան Մուրադ թաքավորի հեքիաթը», էջ 343:

²¹ ՀԺՀ VI, «Պիւրթ կյզդը թաքավոր», էջ 329:

²² ՀԱԲ 25, № 21(21), «Խեչոյի հեքիաթը», էջ 109:

րի: Հմայական աղոթքները հանդես են գալիս որոշակի ծիսական գործողությունների կիրառմամբ աղոթողի և աղոթվողի անհատական հանդիպման ընթացքում, այլոց աչքից հեռու, գաղտնիության պայմաններում, եթե աղոթքն ուղղված է չար աչքի կամ հիվանդությունների վերացմանը:

Տավուշի հմայական աղոթքները ըստ գործառույթի բաժանվում են հետևյալ խմբերի. ա) չար աչքի կամ նիաթի, բ) վախի, գ) զանազան հիվանդությունների (կարմիր քամի, մկնատամ, գորտնուկ, ուշաթափություն-«հնշնթք»), դ) գայլկապի, ե) չար ուժերի կանխարգելման (օրինակ՝ «ալմագի»): Դրանց գործողության մեջ դնելու ժամանակը կանոնակարգված էր: Ընդունված էր հմայական աղոթքը և նրան ուղեկցող հմայագործման ծեսն իրագործել չորեքշաբթի, շաբաթ (գյրրգնամուտ) և կիրակի օրերը՝ երեկոյան: Վնասակար ուժերը, չար աչքը, զանազան հիվանդությունները չեզոքացնելու նպատակով կիրառվող պահպանակները (աչքահուլունքներ, փոշենու փայտից պատրաստված պահպանակ և այլ առարկաներ) նախապես ենթարկվում էին հմայական աղոթքով ուղեկցվող ծիսական գործողության, որը գերբնական-հմայական գործություն պետք է հաղորդեր առարկային: Տավուշցիների կենցաղում հմայական ըմբռնումներով պայմանավորված ավանդական սովորութահավատալիքային մի շարք դրսևորումներ միտված էին վնասից, փորձություններից ու անցանկալի պատահարներից խուսափելու, կանխարգելելու նպատակ: Կորած անասունին գայլից ու այլ զագաններից պահպանելու համար «կիլկապ» էին անում. կացինը դնում էին սանդերքի բերանը կամ սանդերքի ատամներին գույնզգույն թելեր էին փաթաթում, որ գայլի բերանը կապվի, սանդերքի չորս կողմը մոխիր էին ցանում, որ գայլի աչքերը բռնի և ասում գայլկապի աղոթքը.

Պասն ու աղոտկն,	Մեկն՝ ի սիրտն սատանայի,
Պարսեղն ու անեղն,	Մեկն՝ ի բերան գայլ-զագանի,
Զինվորի Պարսեղը	Երկու բութով, յոթն մատնով,
Մուրզըլ խանդը	Քրիստոսի հրամանով,
Մտավ ի նեղ տապանը,	Աստծու մոր քաղծր կաթնով,

Կապվածն, զօծն,	Օհանես Մագրոդիչի աղոտկովը՝
Կարիճն, կոկճավորն:	Կիլի ըռեխը կապված կենա,
Չորս բետն,	Աչկերը խրփված կենա:
Կողմի թշեն խաչափայտյա	ՀԱԲ 21, № 17(1361)

Սովորաբար չար աչքի, հիվանդությունների ու վախի հմա-
յական աղոթքներից առաջ և վերջում ասվում էր տերունական
«Հայր մեր» աղոթքը (որը պետք էր կրկնել երեք կամ յոթ անգամ)
և եզրափակել «Ամեն» բանաձևով: «Չար աչքի» աղոթքներին ու-
ղեկցող արարողություններում կարևոր դեր էր վերապահված
հմայողի թքին և դանակին, որի մետաղյա շեղբը, ըստ ժողովրդ-
դական հավատալիքի, չեզոքացնում էր չար աչքի և չար ոգիների
ազդեցությունը: Հմայագործ աղոթողը իր ձեռքի դանակով ծակ-
ծրկում էր աղոթվողի մարմնի տարբեր մասերը, խաչակնքում էր
և իր շարժումները զուգակցում աղոթքին՝ ստեղծելով հոգեբանա-
կան այնպիսի տրամադրություն, որը նախապատրաստում էր ա-
ղոթվողին ազատագրվել հիվանդությունից կամ չար աչքից: Տա-
վուշի տարածաշրջանից գրառվել են «չար աչքի» 20 աղոթք, որը
տեղացիներն անվանել են «նիաթի աղոթք»²³: Գրառված նյութի
քանակը ցույց է տալիս, թե ինչպիսի մեծ տարածում ունի չար աչ-
քի վնասակար ազդեցության մասին հավատալիքը և այն կան-
խարգելելու միջոցները: Տավուշում «չար աչքից» պաշտպանելու
համար աղոթում էին թե՛ երեխաներին ու մեծահասակներին, թե՛
տնային կենդանիներին, տունն ու ունեցվածքը: Օրինակ՝

Ըրեխեն ըրօրոցըմը,	Քարն ու քացախը բերանին,
Մաղմուսը ծոցըմը,	Աստված օրհնի պառավին,
Թըշթըշան կետը,	Վըեր նստել ա յոթ շրհարին
Վըշվըշան քարը,	Ի չար նիաթին,
Սև օցի քիստը՝	Ի չար սհաթին
Աչք տվողի աչքի լիսըմը ²⁴ :	Օցը կըթի, օցը մորթի, օցը ուտացնի,

²³ Տարածաշրջանում տարածված է «նիաթի կյնլ» դարձվածը, որն օգտագործ-
վում է ակնահարության դեպքում: Տավուշի խոսվածքում «նիաթն» ըմբռնվում է
որպես չար աչք, չար հայացք:

²⁴ ՀԱԲ 21, № 10(1354), էջ 244:

* * *

Թե կնիկ ա՝ պոչը վեր կյն

Թե մարթ ա՝ միրութքը վեր կյա,

Քարը մատին ու վրետին, Թո՛ւ, թո՛ւ, թո՛ւ²⁵:

Տավուշի «չար աչքի» աղոթքներում չար աչքի ազդեցությունը չեզոքացնելու համար աղոթքների համատեքստերում հանդես են գալիս և գերակշռում են օձի քիստը (խայթիչ), կաթը, միսը, սև և սպիտակ օձը, չալ օձի պոզը, աղաքարը, քարն ու քացախը, նուոնն ու խաչափայտը որպես կանխարգելող ատրիբուտներ:

Տավուշում հատկանշական է նաև հիվանդության սկզբնապատճառը պարզելու համար «Փըթիթա» կոչվող գուշակման ծիսակարգը²⁶, որի միջոցով պարզում են, թե որ խաչից կամ սրբից է տրված հիվանդությունը և այն ինչ միջոցով պետք է բուժել: Հմայական տեքստերի հատուկ բաղադրամաս են քրիստոնեական սրբերը (Հիսուս Քրիստոս, Մարիամ Աստվածածին, սուրբ Մարգիս, Հովհաննես Մկրտիչ, սուրբ Ստեփաննոս, սուրբ Հովհաննես և ուրիշներ), որոնք ամենայն հավանականությամբ փոխարինել են հնագույն հեթանոսական դիցարանի աստվածներին: Աղոթողը, որպես բարի ոգիներ հանդես եկող սուրբ անձանց օգնությամբ (նրանց աղոթքով, Աստվածամոր կաթով, ս. Մարգսի ձիու ձարով, խաչափայտով, տեր Մովսեսի գավազանով) և հմայագործությամբ, բուժում է կարմիր քամին, մկնատամը, գորտնուկը, ուշաթափությունը և այլն:

Տավուշի աղոթքների մեջ իր ինքնատիպությամբ առանձնանում է «Ալմազի աղոթքը»²⁷, որը կիրառվում է այն դեպքում, երբ նոր ծնած անասունը (կով, գոմեշ, այծ, ոչխար) նորածին ձագին չի ընդունում և թույլ չի տալիս կաթ ծծել: Աղոթքի այս տեսակը եզակի երևույթ է հայ բանահյուսական ժառանգության մեջ, և նմանա-

²⁵ ՀԱԲ 21, № 5(1349), էջ 243-244:

²⁶ ՀԱԲ 25, № 44(1319), էջ 364:

²⁷ Այլ կոչվող չար ոգիները մասնավորապես վնասում էին ծննդկանին ու նորածինին: Տավուշյան տարբերակում ալը (սաղայելը) վնասում է նաև նոր ծնած անասունին:

տիպ աղոթք մինչ օրս չի գրանցվել: Դատելով աղոթքի տեքստից՝ անասունը ենթարկվել է չար ոգուն՝ սաղայելին, որի չար կապանքներից ձերբազատվելուն է ուղղված աղոթքը:

Կաթը տա, թքած քու աչկին,	Սաղայելին հոգուցըտ հանի:
Արյուն տա, թքած քու աչկին,	Հոքիտ խարխաւոտ արա,
Սաղայելն ա հոգուտ նստած,	Սրտիտ տուռը պնց արա,
Հոգիտ ծով ա ալեկոծված:	Ձագիտ սրտիտ տեղ արա,
Կաթ տա, թքած քու էրեսին,	Բարի աչկով ձագիտ նայի:
Արյուն տա, թքած քու էրեսին,	Արուտ արա, կուրծըտ լարի,
Ետ շուռ արի, քե շըղըհարի,	Ձագիտ պահի, կշտացրու ²⁸ :

Ավանդական հմայական աղոթքների որոշ տեսակներ (գայլկապի, չար ոգիների և այլն), կապված ժողովրդի կյանքի սոցիալ-տնտեսական փոփոխությունների հետ, կենցաղավարումից դուրս են եկել, իսկ որոշ տեսակներ իրենց հոգեբանական ներգործուն ուժով պահպանելով կենսունակությունը՝ տակավին շարունակում են կենցաղավարել (չար աչքի, հիվանդությունների):

Բանահավաքչական և բանագիտական հետազոտությունները հնարավորություն են տալիս պնդելու, որ Տավուշի մարզում ասույթաբանական բանահյուսության ժանրերի մի մասը (առածասացվածք, անեծք-օրհնանք, բարեմաղթություն, դարձված) շարունակում են կենցաղավարել, իսկ որոշ ժանրեր (աղոթք, հանելուկ, շուտասելուկ) և դրանց առանձին տեսակներ գրեթե դուրս են եկել կենցաղավարումից ու մոռացվել: Տավուշի ասույթաբանական ժանրերն իրենց ինքնատիպությամբ, առանձնահատկություններով, տեղական հյուրեղ խոսվածքի լեզվամիջոցների ու բառամթերքի օգտագործմամբ ստեղծել են տարբերակների բազմազանություն և հարստացրել հայ ասույթաբանական բանահյուսությունը:

²⁸ ՀԱԲ 21, № 21(1365), էջ 246:

Эстер Хемчян – Паремнологический фольклор Тавуша (по материалам, записанным 1970-1990 гг.). – Исследование паремнологического фольклора Тавуша показывает, что виды словесных формул региона различны и включают в себе почти все паремнологические жанры.

Представлены пословицы-поговорки, фразы, заклинания-благословения, пожелания, загадки и молитвы. Выявлены особенности паремнологического фольклора, которые обусловлены верой в магическое действие слова и яляются проявлениями психологической реальности.

Прокомментированы паремнологические материалы местного происхождения, сформированные под воздействием конкретных исторических событий, быта, обычаев и верований.

Рассмотрены группы традиционных заговоров и молитв, их функциональные особенности. Представлены исторически сформированные причинно-следственные и психологические основы продолжительности бытования и выхода из бытования нескольких типов молитв.

Исследование также показывает, что фольклорные жанры в Тавуше не изолированы, а соответственно проникают один в другой и обогащают, делают выразительнее и своеобразнее фольклорное произведение.

Ester Khemchyan – *Paremiological folklore of Tavush (according to the materials recorded on 1970-90s).* – The research of the paremiological folklore of Tavush exposes that the word-formula types are various and include in them almost all the paremiological genres.

There are presented the fables and sayings, proverbs, curses and blessings, wishes, riddles and prayers of Tavush marz. Also the characteristic features of the paremiological genre depending on the belief of the charming influence of speech and the manifestations of the psychological reality are revealed.

In addition, the paremiological materials of local origin formed under the influence of the specific historical events, life, customs and beliefs are interpreted too.

The groups of the traditional charming prayers of Tavush marz together with their functional features are inspected. The psychological bases of a series of types of prayers expelled from life in the result of some historical causes and the continuity of some types are presented too.

The research also exposes that folklore genres in Tavush aren't acting isolated but are penetrating reciprocally into one another and enrich folklore works, making them more expressive and unique.

Բանալի բառեր: ասույթաբանական, բանահյուսություն, առած-ասացվածքներ, դարձվածներ, անեծք, օրհնանք, բարենաղթություն, հանելուկ, աղոթք:

Ключевые слова: паремиологический фольклор, пословицы-поговорки, фразы, заклинание, благословение, пожелание, загадка, молитва.

Key words: paremiological folklore, fables and sayings, proverbs, curse, blessing, wishe, riddle, prayer.

**ՀԱՄԱՆՈՒՆ-ՀԱՐԱՆՈՒՆԱՅԻՆ
ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՆԵԿԴՈՏ-
ԶՎԱՐՃԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ
(ԳՍԱ ՀԱԻ)

Հայ ժողովրդական երգիծական մանրապատումների համատեքստում մեծ քանակ են կազմում իմաստաբանական կառույցներով անեկդոտ-զվարճախոսությունները, մասնավորապես համանուններով և հարանուններով ստեղծվածները: Իսկ վերջիններիս մեջ գերակշռողը համանունային /բուն և քերականական/ կիրառություններն են:

1. Համանունային կառույցներով երգիծապատումներում անսպասելի ծիծաղը դրսևորվում է.

ա/ արգելական հրամայականի մի մասնիկի և երաժշտական մի ձայնանիշի համանունության հենքի վրա:

Երաժշտական դպրոցից տուն վերադարձած երեխան ծնողին պատմում է իր անտրամադիր լինելու պատճառը. «Դասատուն ըսավ՝ *դո* զարգե, զարգեցի, ըսավ՝ *ռե* զարգե, զարգեցի, ըսավ՝ *մի* զարգե, չզարգեցի, գլխուս զարգեց»¹:

բ/ տեղանվան և գունատեսակի համանունությամբ.

Ապարանցիները Սպիտակի ավտոբուսը կանգնացնում են, մարդկանց իջեցնում ու սկսում ծեծելը: Ջարմացած ուղևորները երբ հարցնում են պատճառը, ասում են. «Մեզ էշի տեղ ե՞ք դրել. կարմիր ավտոբուսի վրա գրել էք «Սպիտակ»²:

գ/ համանունություն՝ գոյականի /մեզ/ և մենք դերանվան տրական-հայցական հոլովաձևի /մեզ/ կիրառությամբ: Մեր գրքանցած զվարճապատումներից մեկում բժշկի «Մի բոպե, հայ-

¹ Արմեն Սարգսյանի անձնական հավաքածու:

² Նույն տեղում:

րի՛կ, այսքանը մե՞զ եք բերել» հարցին հետևում է անալիզ բերողի՝ «Հա՛, ախչի՛կ ջան, դիփ ձեզ եմ բերել»³ պատասխանը:

դ/երես վերը ներկայացված համանունային դրսևորումներով երգիծական մանրապատումները մեծերի կողմից ծիծաղ առաջացնելու համար նպատակադրված են ստեղծվել ու շրջանառվել, ապա նման կառույցներով մանկական զվարճախոսությունները, կապված երեխայի մտածողության որոշակի աստիճանի հետ, իրենց ստեղծման ժամանակ երևույթների և առարկաների անմիջական և ուղղակի ընկալման արդյունք-վերարտադրություններ են և հարազատ-մտերիմների շրջանում վերապատմվելով՝ հետագայում են զվարճախոսության իմաստ ձեռք բերել: Մանկական զվարճախոսություններում դրանք ևս բազմազան են: Ստորև բերվող նմուշներում ծիծաղն առաջանում է.

- երկու հասարակ գոյականների համանունությամբ.

Նկատելով ոչխարի հոտը՝ հայրը ասում է.

– Արա՛մ, նայի՛ր, տե՛ս ոչխարների հոտը:

– Ոչխարներին տեսնում եմ, բայց հոտը չեմ տեսնում⁴, – պատասխանում է որդին:

- հատուկ և հասարակ գոյականների համադրությամբ.

Մինը իւր կնոջը նոր լուրեր էր ասում. ի վերջոյ ավելացրեց.

– Միրմանենց Շաքարը մեռաւ:

9 տարեկան որդին որ լսեց, ասաց.

– Հայրի՛կ, եթե շաքարը մեռնի, այսուհետև թէյն ինչո՞վ պետք է խմենք⁵:

ե/ համանունության կիրառությամբ գավեշտ է ստեղծվում նաև *բան* միավորի իմաստային դրսևորումներով.

Տաքսիով էրկու ընկեր գնալիս մեկը կանգնացնում ա, նստում վարորդի կողքին, ու որ մի քիչ գնում են, շրջվում ա ու հետևի նստածներին հարցնում.

³ Արմեն Մարգարյանի անձնական հավաքածու:

⁴ *Հենրիկ Հարությունյան*, Հայոց լեզուն հազարազանձ, «Արևիկ» հրատ., 1989թ., էջ 132:

⁵ *Մմբատ Շահազիզեան*, Ծիծաղի տոպրակ, Թիֆլիս, 1892թ., էջ 164:

– Ներեցեք, դուք ի՞նչ մասնագետ եք:
– Կենսաբան եմ, – կարճ ու չոր պարասխանում ա նրանցից մեկը:

– Իսկ դու՞ք, – հարցնում ա երկրորդին:

– Իրավաբան եմ, – պատասխանում ա երկրորդը:

Էս հարցնողը շրջվում, ու լռություն ա տիրում: Հետևի ուղե-վորներից մեկը սրան թե.

– Չհասկացա, ախպե՛ր, մեր մասնագիտությունները հարց-րի՞ր, էտ քո՞ւնն ինչի՞ չես ասում, դու՞ ինչ մասնագետ ես:

– Ճիշտն ասած, ես էլ եմ բան, բայց իմ բանն առաջից ա...⁶ /ի-մա՝ բանասեր/

2. Զվարճապատումի հենք կարող է հանդիսանալ տառային՝ մետրոպայան այբուբենի գրանվան՝ Ի-ւ /հիւն՝ հյուն–վյուն/ և բառա-յին /ծառապտուղ հոնի–բարբառային՝ հոն՝ հյուն / արտասանա-կան համանունությունը.

– Դարչի՛ն ջան, ո՞նց էր ուսումնարանը. հավանեցի՞ր, մա-տա՛ղ, – հարցրեց մայրը նոր ուսումնարան ուղարկած երեխային:

– Հա՛, այեա՛ ջան, շատ լավն էր. համ էլ գիդաս ի՞նչ, աճի՛ ջան, գրիս միջին լին/լ/ էլ կար, հիւն/ էլ...ա յ:

– Բա՛, մատաղ, եղպես ա. թե որ լավ կարդաս, տանձ էլ կըլի, խաղող էլ⁷:

3. Ինչպես գիտենք, գրական արևելահայերենն ու արևմտա-հայերենը, ինչպես նաև հայերենի բարբառներն ու խոսվածքներն ունեն արտասանական, քերականական և բառապաշարային մի շարք տարբերություններ: Հայության լեզվական տարբեր շերտե-րի կրողների շփումների ընթացքում ի հայտ եկած զավեշտալի միջադեպերն էլ հետազայում պատճառ են դառնում բազմաթիվ անեկդոտ գվարճախոսությունների ստեղծման: Դրանց մեջ մեծ քանակ են կազմում հատկապես արևելահայերենում և արևմտա-

⁶ Արմեն Մարգարյանի անձնական հավաքածու:

⁷ Օիծաղի տոպրակ, աշխատասիրեց դպիր Ս.Ս.Ս. Շահազիզեան, 1892, Թիֆլիզ, տպարան Մովսես Վարդանեանի, էջ 65:

հայերենում առկա բառերի և բառակապակցությունների համանունության և հարանունության հենքի վրա ստեղծված տարատեսակ դրսևորումներով անեկդոտ-զվարճախոսությունները.

ա/ հող /քերականական կարգի/ և հող ցուցական դերանվան կիրառությամբ.

Անգլերենի իմացությամբ պարծեցող մի տարեց հայրենադարձին ուղղված՝ «Դե որ լավ գիտես, անգլերենի հողէ՛րն ասա» խոսքին հետևում է նրա՝ «Է՛, ըսեմ. հոս, հող, հոն» ինքնագոհ պատասխանը⁸:

բ/ արևմտահայերենի ցուցական դերանվան /հոն, հոս/ և հոնորար, երգեհոն, հոնի օղի բառերի «հոն»-ի համանունությամբ «ստուգաբանվում» են այդ բառերը, ինչն էլ դառնում է զավեշտի մեխը.

Մի ախպարի հարցընըմ են.

– Հո՞ս է լավ, թե՛ հոն:

– Բհարկե՛ հոն:

– Էդ ո՞նց կապացուցես:

– Հարգավ, ապացուցեմ. թե որ հոս լավ ըլլար, կկոչվեր երգեհոս, և ոչ թե՛ երգեհոն, թե որ հոս լավ ըլլար, կկոչվեր հոսորար, և ոչ թե՛ հոնորար, թե որ հոս լավ ըլլար, կկոչվեր հոսի օղի, և ոչ թե՛ հոնի օղի...⁹

գ/անսպասելի ծիծաղը դրսևորվում է նաև հակառակ իմաստն արտահայտող ձգել /արևմտ.՝ բաց թողնել/ և ձգել /արևել.՝ քաշել/ բառերի համանունության միջոցով, ինչն էլ, անշուշտ, պատճառ է դարձել իրական միջադեպի /հայրենադարձի և պարանով փոսից քաշող արևելահայի, տարբերակ՝ ծանրությունը բաց թողնող սփյուռքահայի մասին/ հենքի վրա ստեղծված երգիծապատումների առաջացման¹⁰:

դ/արևմտահայոց մեջ շինել-կառուցել-ը և կոխել-տրորելը արևելահայոց շրջանում երկու իմաստներով էլ կիրառվում են. և՛

⁸ Արմեն Մարգարյանի անձնական հավաքածու:

⁹ Նույն տեղում:

¹⁰ Նույն տեղում:

կառուցել ու տրորել է նշանակում, և՛ բռնաբարել /իբրև բամբա-
ռակ արտահայտություն՝ դրանք ժողովրդախոսակցականում են
կիրառվում/: Հենց սրանց համանունությունն էլ հիմք է հանդիսա-
ցել մի շարք ժողովրդական երգիծապատումների ստեղծման:
Պատումներից մեկում հայրենադարձի՝ «եկանք, որ հայրենիքը
շինենք...» խոսքին հետևում է տեղացու երկիմաստ հեգնախառն
պատասխանը. «Հայրենիքին արդեն 70 տարի շինո՞ւմ է Սովե-
տը»...¹¹: Խորհրդային ժողովրդի «Հայր Ստալին»-ի «հայր» հաս-
կացությունը սփյուռքահայն «ընկալում» է հայրենադարձվելուց
հետո միայն.

Արտասահման եղած ժամանակ կըսեին՝ հայր Սթալին,
չէինք հասկնար՝ ինչու ադանկ կըսեն: Բայց երբ Հայաստան ե-
կանք, և ան մերին մայրիկները մեկիկ-մեկիկ լացացուց, ան ա-
տեն հասկցանք անոր հայր ըլլալը¹²:

Ե/գրական արևմտահայերենի և որոշ բարբառների արտա-
սանական առանձնահատկությունները, մասնավորապես ձայ-
նեղների իլացումը և հակառակը՝ շնչեղ խուլերի ձայնեղացումը
զավեշտալի միջադեպերի և անեկղոտ-զվարճախոսությունների
առաջացման պատճառ են դառնում:

Ռուսերենի «դեղ» /շաղափիչ/ բառի արևմտահայերեն ար-
տաբերումը՝ «թեղ» հնչողությամբ, համընկնում է արևելահայերի
բաց թողնել-տռել բառի արտասանությանը, ինչն էլ իրողությունը
վերածում է զավեշտի¹³:

Վանի բարբառում բ,գ,դ,ձ,ջ ձայնեղ բաղաձայնների փոխա-
րեն կիրառվում են պ,տ,կ,ծ,ճ խուլեր, ինչն էլ Վանի բարբառով
ծեթ-ը, արևելահայոց շրջանում չընկալվելով, հարանունությամբ
շփոթություն է առաջացնում ձեթ-ի հետ՝ տեղիք տալով երկխո-
սական զվարճապատումի ստեղծման.

Երևանցի – լա՛վ աղ, լա՛վ աղ...

¹¹ *Վերժինե Մվազյան*, Կիլիկիա, Ե., 1994, էջ 114:

¹² *Արմենուհի Ստեփանյան*, 20-րդ դարի հայրենադարձությունը հայոց ինքնուր-
յան համակարգում, Ե., «Գիտություն», 2010, էջ 254:

¹³ Արմեն Մարգարյանի անձնական հավաքածու:

Վանեցի պառավ – Քյա տղա, էտա ի՞նչ ի կրծախես:

Երևանցի – Մայրի՞գ, աղ էմ ծախում:

Վանեցի – Պէ՛ խէմ /բեր նայեմ/, պէ՛ խէմ, ծէ՞թ /մանր/ ի, թէ՞
պէտ /խոշոր/ ի:

Երևանցի – Մայրի՞գ, ձեթ չէմ ծախում, աղ էմ ծախում:

Վանեցի – Աղէկ, կրխասկընամ, պէ՛ խէմ, ծէ՞թ ի, թէ՞ պէտ ի:

Երևանցի – So մայրի՞գ, ասում էմ՝ ձեթ չէմ ծախում, աղ էմ ծա-
խում:

Վանեցի – Քյա տղա, աղէկ... կրխասկընամ... պէ՛ խէմ, ծէ՞թ
ի, թէ՞ պէտ ի¹⁴:

զ/զվարճապետումներից մեկում արևմտահայերեն առողա-
նությամբ արտաբերած սովորական անմեղ երկխոսությունը հա-
րանունության հետևանքով արևելահայերենում վերածվել է բամ-
բառակ արտահայտության¹⁵: Ջավեշտը ստեղծվում է բառային
կառույցների նպատակադրված ընտրության միջոցով:

4. Անեկդոտ-զվարճախոսություններում զավեշտը հանդես է
գալիս նաև գրական հայերենի և բարբառների կամ ժողովրդախո-
սակցական լեզվի և բարբառների բառ-բառակապակցություննե-
րի ու արտահայտությունների համանուն-հարանունային կա-
ռույցներով: Նման դեպքերում ծիծաղը դրսևորվում է՝

ա/ գրական արևելահայերենի և Լոռու խոսվածքի բառախա-
ղային համանունությամբ.

Այսպես, *հրել* բայի ըղձական եղանակի ապառնի ժամանակի
եզակի թվի 2-րդ դեմքի /հրես/ և Լոռու խոսվածքի նույնահունչ
/հրես- հիմա/ բառի հենքի վրա ստեղծված զվարճապատումը
դրա վառ օրինակն է.

Գյումրեցին գնում է Վանաձոր և մտնելով ճաշարան՝ մա-
տուցողին ասում է.

– Քուր ջան, քիչըմ ուտելու բան բեր:

– Հրես կբերեմ:

¹⁴ *Գ.Զահուկյան, Ֆ.Խղաթյան*, Հայոց լեզու, դասագիրք հանրակրթական դպրո-
ցի 10-րդ դասարանի համար, Եր., 1998, էջ 100:

¹⁵ Արմեն Սարգսյանի անձնական հավաքածու:

– Իյա՛, օր չիրեմ, չես բերե՞...¹⁶

բ/ ժողովրդախոսակցական լեզվում կիրառվող /չայ-թեյ/ գոյականի և Փերիո բարբառով հարադրավոր բայի /թեյ լինել – թուլանալ, նվաղել/ բառախաղային համանունությամբ.

Մեկը թեյ շատ էր սիրում, երբ ճամփից հասնում է ծանոթի տունը, ասում է.

– Թեզ արա մի չայ շինի, թե չայ չիմեմ, թեյ կլնեմ¹⁷:

գ/ բարբառային /հեր – ոնց, ինչպես, ինչու/ և ժողովրդախոսակցական /հեր-հայր/ բառերի համանունության հենքի վրա.

Մեկը գալիս է մսավաճառի մոտ ու հարցնում.

– Միս ունե՞ս:

– Հե՞ր չունեմ, –պատասխանում է մսավաճառը:

– Օղորմի հորըտ, մի կիլո կշռի¹⁸:

դ/ համանունություն՝ տնային կենդանու /էշ/ և գութանի մասերից մեկի՝ համձողի /ժողովրդախոսակցականում՝ էշ/ անունների կիրառությամբ.

Գութանի փայտերից մեկը կոչվում է «էշ» որ եթե մի քիչ թաց է լինում, կառվ ծեփում են ու դնում արելի տակը, որ չորանայ ու չճեղքուի:

Սկեսրայրը հրամայեց իւր քաղաքացի հարսին, որ էշը բոլորովին կառվ ծեփէ: Նա էլ մտաւ գոմը, էշը ոտքից մինչեւ գլուխ կառվ ծեփեց եւ «չու՛, չու՛» անելով՝ դուրս տարավ:

Սկեսրայրը տեսնելով՝ բացագանչեց.

– Աստուա ծ, իմ դուշման գեղացուն քաղաքի հարս չտա, որ լիզուն չիմանան¹⁹:

ե/ համանունություն՝ բարբառային և ժողովրդախոսակցական բառակապակցության հիման վրա /նման դեպքերում զավեշտի առաջացման պատճառը բարբառի չիմացությունն է/: Զվար-

¹⁶ **Գրիգոր Մելիք-Սարգսյան**, Զվարճալիք, Ե., 2001, «Պարույր Սևակ» հրատ., էջ 34:

¹⁷ **Լ. Մինասյան**, Գիւղական բառ ու բան, Նոր Զուլա, 1998թ., էջ 195:

¹⁸ Արմեն Սարգսյանի անձնական հավաքածու:

¹⁹ Անեկդոտներ, 3-րդ հատոր, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Թիֆլիս, 1883թ., տպարան Մ. Վարդանեանի, էջ 83-84:

Ճապատումներից մեկում զավեշտի աղբյուրը հաճախորդի՝ Մեդրու բարբառով անընդհատ արտաբերած խոր տուր /երես-երես/-ը սափրիչն ընկալում է խորը տալ՝ խորը խուզել:

– Տո՛ւ տավար, քեզ չե՞մ ասում՝ խո՛ր տուր:

– Ախմա՛լիս, – պատասխանեց սափրվերը, – այնքան խոր տվի մորուքդ, որ դառավ հնձած արտ, է՛լ խոր տամ²⁰:

5. Բարբառով արտաբերած խոսքը՝ արագախոսության և արտասանական դադարի խախտման շնորհիվ, հարանունության ինքնատիպ դրսևորում է ձեռք բերում՝ վերածվելով զավեշտի:

ա/ շիրակցի հարևանուհիս, ցանկանալով իր բարեկամուհուն հյուրասիրել տաք կարկանդակով, ասում է.

– Քա կեցի, տաք-տաք կեր, նոր կերթաս...²¹

բ/ լոռեցիները շիրակցիների լեզուն տնագ անելիս ասում են.

– Քակեցի, փափաղըդ դիր, նոր գնա, քակեցի, փափաղըդ դիր...²²

ե/ երգիծապատումում անսպասելի ծիծաղը դրսևորվում է տեղանվան նախկին բնորոշիչ հատկանշական բառի՝ բոզ-մոխրագույն /ժողովրդախոսական անվանմամբ՝ Բոզիգեղ/ և բարոյականությունն արտացոլող բացասական հատկանիշներից մեկի /ժողովրդախոսակցական լեզվով՝ բոզ/ համանունության միջոցով:

Վիլյամ Սարոյանը ավտոմեքենայով Մարգահովիտ գյուղի միջով անցնելիս հարցնում է.

– Ի՞նչ է աս գյուղին անունը:

– Բոզիգեղ, – ներկայացնում են ուղեկցողները:

– Ամերիքա ալ ադանկ հաստատություն կա, բայց ասանկ քումպակտ չէ, – ասում է Սարոյանը²³:

²⁰ Անեկդոտներ, հատոր 2, Աշխատասիրեց Յովհաննես Նազարեանց, Թիֆլիս, 1883, Մ. Վարդանյանի եւ. ընկ. տպարան, էջ 42:

²¹ Արմեն Մարգարյանի անձնական հավաքածու:

²² Նույն տեղում:

6. Երգիծական մանրապատումների մի մեծ խումբ էլ առնչվում է գրական հայերենի, բարբառների, բառ-բառակապակցությունների ու արտահայտությունների և օտար լեզուներով ստեղծված նրանց համանուն-հարանունային դրսևորումներով կառուցված զավեշտալի պատմություններին: Ի դեպ, նման անեկդոտ-զվարճախոսություններում գերազանցում են ծիծաղի դրսևորման հարանունային կառույցները.

ա/ հարանունություն՝ բարբառային «Եա՛, ՍուլփՓյգիչ» բառակապակցության արտաբերման և օտար՝ թուրքերեն «սյուփյուրգե-ավել» բառի համադրությամբ.

Զեյթունցիները շատ քաջ մարդեր էին: Անոնք երբ միշտ կռիվի կերթային թուրքերուն դեմը, կաղոթեին, օգնության կկանչեին իրենց Սուրբ Փրկիչին, կըսեին.

– Յա՛, Սուլփ Փյգիչ, – ու կհաղթեին:

Թուրքերն ալ կզարմանային, կըսեին.

– Ադ գյավուրները «Սյուփյուրգե» կըսեն, կսկսին կռվիլ ու կհաղթեն:

«Սյուփյուրգե» թուրքերեն կնշանակե՝ ավել: Ավելը ի՞նչպես անոնց կօգնե²⁴:

Եթե «Կարոս խաչ» վիպերգում թշնամու դեմ կռվելիս հայերին օգնում էր նեխուրի /քարաուզի/ դաշտում հայտնված խաչը, «Սասնա ծռերում» Խաչպատարագին, ապա այս զվարճապատումում զեյթունցիներին օգնության է հասնում Սուրբ Փրկիչը: Պատումի առաջին մասը վիպերգային կառուցվածք ունի: Հենց երկրորդ մասից էլ սկսվում է զվարճապատում տանող ուղին՝ հայերենի բարբառային արտահայտության և թուրքերենի բառային հարանունության կիրառությամբ, ինչն էլ դառնում է զավեշտի մեխը: Ի դեպ, զեյթունցիների այս ինքնատիպ զվարճապատումի մեկ այլ տարբերակ Հալեպում գրառել է նաև հայագետ Հակոբ Զոլաքյանը²⁵:

²³ Նույն տեղում:

²⁴ *Վերժինե Սվազյան*, Կիլիկիա, էջ 107:

²⁵ Միջ-գաւառական անեքթոտներ: Հաւաքեց եւ ներկայացուց Յակոբ Զոլաքեան, Հալէպ, 1988թ., էջ 55:

բ/ զվարճապատումում զավեշտի միջոց կարող է դառնալ նաև օտար բառի /ռուսերեն՝ *умница*/ և հայերենի *ուլ*/ հարաբերական դերանվան բացառական հոլովով ստորոգյալական կառույցի՝ Լոռու խոսվածքին բնորոշ *և* հոդով /ումիցն-ումնից/ համանունության ստեղծումը։ Ռուբենյան անեկդոտաշարի պատումներից մեկում ռուս անցորդուհու՝ «Կակայա ումնիցա» /ի՛նչ խելոքն է/ խոսքին հետևում է վրդովված հերոսի՝ «Ռուբենիցն ա, ո՛ւմնից ա» /տարբերակ՝ Էրեխի մերը թե՛ «Իմ մա՛րթիցն ա, ու՛մնից ա» պատասխանը²⁶։

գ/ հարանունության օգտագործմամբ զվարճապատումում անսպասելի ծիծաղ է առաջանում, երբ բաղադրյալ ստորոգյալի հարակատար ներկայով կազմված դիմավոր բայի եզակի երրորդ դեմքը՝ բարբառային հնչողությամբ, ներկայանում է իբրև օտար (վրացական) ազգանվան մաս.

Քեֆները լավ էրկու գյումրեցի Թիֆլիսում, մի արձանի մոտ կանգնած, իրար հետ վիճում են.

– Ծո՛, աշե՛ ինչքիս լավ ռանդած է /տարբերակ՝ տաշած է/

– Ոչ թե ռանդած է, այլ քանդրկած է։

Կողքներով անցնող մի վրացի միջամտում է նրանց.

– He /ոչ/ Ռանդածե, И he /և ոչ էլ/ Կանդրկածե /տարբերակ՝ Տաշածե/, это ճավճավածե /սա ճավճավածեն է/²⁷։

դ/ Զվարճապատումում զավեշտի առաջացման հենք կարող է հանդիսանալ հարցադրում-առաջադրանքով այնպիսի երկխոսական կառույցը, որտեղ հարանունությունը ստեղծվում է բառամասնատում-բառաբարդումով. անգլերեն քրքիրըրեյշն բառը մասնատելով՝ նրա առանձին մասերը համընկեցվում է Հայաստանի որոշակի տարածքների /Հրազդան-Ախտա և Ապարան/ բնակչությանը տրվող մականուններին.

– Էրկու ախտեցի ու մի աբարանցի որոշում են միասին գործ դնեն, աշխատեն։ Կարա՞ք ասեք՝ էդ ձեռնարկության անունն ինչ են դնում։

²⁶ Արմեն Սարգսյանի անձնական հավաքածու։

²⁷ Արմեն Սարգսյանի անձնական հավաքածու։

–

– Քոռքոռէշըն²⁸:

ե/ զվարճախոսությունում անսպասելի ծիծաղի աղբյուրը կարող է դառնալ հարցադրում-առաջադրանքով երկխոսական կառույցում բառերի /կոնկրետ դեպքում՝ քաղաքների անունների/ ուղիղ ձևերի դասավորության այնպիսի ընտրությունը /Բաքու, Վորկուտա, Երևան, Չիտա/²⁹, որոնց հաջորդականությունը արտաբերման ժամանակ կհանգեցնեք իմաստակիր բամբառակ նախադասության: Ընդ որում, այդ բարդ նախադասությունը կառուցելու համար վերցվել է երկու օտարերկրյա այնպիսի քաղաքների անուններ, որոնց մասնատումը հայերենում հնարավոր կդարձնեք դիմավոր բայով միտք արտահայտել:

զ/ զվարճապատումներում զավեշտի միջոց կարող է դառնալ օտար անուն-ազգանվան /Մաու Յգե Դուն/ և բարբառով կազմված նախադասության հարանունային կառույցը /Մացե տուն – մնացել է տանը/³⁰

է/ հարանունության կիրառությամբ զավեշտ է ստեղծվում, երբ ժողովրդախոսակցական լեզվի մեջ ներթափանցած հարկային տեսակի՝ եկամտահարկի օտար /ռուսերեն՝ պադախոդնի/ բառի չիմացությունը հայրենադարձի կողմից զուգորդվում է մեկ այլ օտար անվանը՝ պարախոդին /ջերմանավին/.

– Աս ի՞նչ պահում ըրած եք,– աշխատավարձն ստանալիս զարմացած հարցնում է հայրենադարձը:

– Պադախոդնի, հայրի՛կ, պադախոդնի: /եկամտահարկ-ռուս./

– Մայրը թաղեմ, եռսուն տարի առաջ փարախոդով Սովիետ-միություն եգած եմ, եռսուն տարի շարունակ փարախոդին փո՞ղը կպահեք...³¹

²⁸ Արմեն Մարգարյանի անձնական հավաքածու:

²⁹ Նույն տեղում:

³⁰ Նույն տեղում:

³¹ Նույն տեղում:

ը/ հարանունության ստեղծում՝ օտար լեզվով /ռուսերեն/ նախադասության և հայերենի բարբառի բառահամադրության միջոցով.

Շուկայում ռուսախոս մի հայ հարցնում ա.

– Պա չո՞ւմ կարտոշկա:

Քյավառցի կարտոշկա ծախողն ասում ա.

– Պաչա, խամա էլի տեղը դիր...³²

թ/ Օտար լեզվով /ռուսերեն/ նախադասությունը կամ նրա մի մասը սխալ ընկալելը կամ արտաբերելը ևս հարանունության շնորհիվ /Նի տառապի – Ո՞նց չըտառապեմ, թող մի լա՛վ տառապեմ/³³ կարող է զվարճապատումի պատճառ դառնալ:

ժ/ համանունությամբ զավեշտի ստեղծում՝ օտար լեզվով /վրացերեն/ և հայերեն նույնահունչ բայական կառույցների համադրմամբ.

– Կու տ է /անդամալո՞ւյծ է/:

– Կուտե, ինչպե՞ս չի ուտե³⁴:

7. Զվարճապատումի հենք կարող է դառնալ բառամասնատումով ստեղծված հարանունությունը.

Ցուրտ ու մութ տարիների համար ժողովուրդը հեգնելով՝ «արդարացնում» էր իշխանավորներին.

– Բայց Լևոն Տեր-Պետրոսյանն ի՞նչ մեղավոր ա, որ ժողովուրդը վառելիք չունի. ցուրտ ա, մրսում ա: Նա դեռ 1988-ից էր ժողովրդին զգուշացնում, որ չմոռանան՝ ցախ առնեն, ու չմոռանալու համար վանկարկելով կրկնել էր տալիս նրան. «Առ-ցախ, առ-ցախ, առ-ցախ»...³⁵

8. Հարանունություն՝ սխալ հնչյունարտաբերման կիրառությամբ.

– Քուր ջան, անունըդ ի՞նչ է, – հարցնում է մեկը:

³² Արմեն Սարգսյանի անձնական հավաքածու:

³³ Նույն տեղում:

³⁴ Ծիծաղի տոպրակ, աշխատասիրեց դպիր Ս.Տ.Ս. Շահագիզեան, 1892, Թիֆլիզ, տպարան Մովսես Վարդանեանի, էջ 100:

³⁵ Արմեն Սարգսյանի անձնական հավաքածու:

Բա թե՛

– Ձիաննա: /Դիանա/

– Ճիշտն օր ըսեմ, ընձի էլ էշ Վալոդ կըսեն³⁶:

9. Զվարճապատումների մի մեծ խումբ էլ առնչվում է հայերենից օտար լեզուներով և հակառակ թարգմանությունների համանունային դրսևորումներին: Մարդկանց կյանքում հաճախակի հանդիպող զանազան բառերի և արտահայտությունների թարգմանական զավեշտներն էլ, հետագայում շրջանառվելով, առիթ են դարձել բազմաթիվ անեկդոտ-զվարճախոսությունների ստեղծման.

Փանոս-Панос-ն ու панос-փորլուծ-ը օտար միջավայրում կիրառելիս զավեշտալի միջադեպերի և զվարճապատումների ստեղծման առիթ են հանդիսացել.

Հերոսի՝ Нет, я панос, а он Арутюн խոսքը դառնում է զվարճապատումներից մեկի³⁷ անսպասելի ծիծաղի առիթը: 1970-ականներին Ռուսաստանում ականատես եմ եղել թարգմանական հարանունային զավեշտի դրսևորման մի հետաքրքիր փաստի. հայկական «Զախորդ Փանոսը» կինոնկարի ռուսերեն ազդագիրը տարակուսանքի տեղիք էր տվել ու դահլիճը լցրել հետաքրքրասերներով:

10. Հայ ժողովրդական երգիծական մանրապատումներում բավականին մեծ քանակ են կազմում հայկական կամ հայության շրջանում տարածում գտած անձնանունների և դրանց հենքի վրա ստեղծված տարատեսակ բառերի համանուն-համանունային դրսևորումները.

ա/ հայկական անձնանվան /Մնացական/ և դրա համանունությունն արտացոլող ստեղծված իրավիճակի միջոցով.

Միլիցիան լոնված գողին հարցնում է.

– Անունդ ի՞նչ է:

– Մնացական, – պատասխանում է գողը:

– Իսկ էն, որ փախա՞վ:

³⁶ Արմեն Սարգսյանի անձնական հավաքածու:

³⁷ *Յովհ. Նազարեանց*, 3-րդ հատոր, էջ 36, 1883թ.:

– Գնացական³⁸:

բ/ բուսատեսակից ստեղծված անձնանվան /Ծաղիկ/ և այդ նույն բուսատեսակների փնջի /ծաղկեփունջ/ համանունությամբ.

Ավտոբուսից իջնելիս մեկը շրջվելով դիմում է իր ծանոթին.

– Ծաղի՛կ, տոմս չվերցրնես. վերցրել եմ:

Քիչ հետո մի 5-6 հոգի առանց տոմս վերցնելու իջնում են:

– Չհասկըցա, էսի՞ց ծաղիկ է՞ր, թե՛ ծաղկեփունջ, – գայրանում է գլուխը և վարորդը³⁹:

գ/ հայկական անձնանվան /Իշխան/ և ջրային կենդանու /իշխան/ համանունությամբ.

Իսպեկտորը մեկին կանգնացնում և, ուզում և ակտ գրի: Էս շոֆեռն ինչ անում և, չի անում, ինչքան խնդրում և, հնար չի ըլլում, ակտ և գրում ու ասում և՝ հմի կարաս ազատ գնաս:

Էս շոֆեռն ասում.

– Էտա դու քու ասածն արիր, մենակ մի բան եմ խնդրում. անունդ ինձ բաշխի ու ես հանգիստ խղճով կգնամ:

Իսպեկտորն ասում՝

– Իշխան, բավարարված ե՞ս, դե գնա:

– Իշխա՞ն... Վայ քեզ ջրիցը հանողի...⁴⁰

Համանունության վերոնշյալ դրսևորման ստորև բերվող բառախաղային կիրառությունը ոչ միայն ընկալելի է դարձնում իրավիճակը, այլև էլ ավելի է նպաստում զավեշտի տպավորիչ արտահայտմանը.

Գնացինք Սևան՝ իշխան բռնելու, մըլիցա Իշխանը բռնեց⁴¹:

դ/ հայկական անձնանվան /Գալուստ/ և մակդրավոր բայանուն գոյականի /բարի գալուստ/ համանունությամբ.

Թոռան հետ հարևան շրջան գնացող պապը, տեսնելով «Բարի գալուստ ցուցանակը, զարմացած հարցնում և ավտոբուսի վարորդին.

³⁸ Պատմում և կատակում էր Գալուստ Գալստյանը, Հավաքել և կազմել է Լենա Անթառանյանը, էջ17, Վերնատուն, Եր., 1994թ.:

³⁹ Արմեն Մարգարյանի անձնական հավաքածու:

⁴⁰ Նույն տեղում:

⁴¹ Նույն տեղում:

– Այտա, սրանք բա ո՞րդիան են իմացել, որ մեր Գալուստը բարի ա...⁴²

ե/ զվարճախոսություն՝ կառուցված թաղման և ծննդյան ծիսակարգային դրսևորումների և տոներից մեկի համանունությամբ.

Ուսանողուհին՝ դասախոսին.

– Ձեր յոթը /Ապրիլի 7-ը՝ Մայրության օրը/ շնորհավոր:

Դասախոս.

– Շնորհակալ եմ, քո էլ՝ քառասունքը...⁴³

/Ուսանողուհու երեխան 40 օրական էր դարձել/

զ/ զավեշտի ստեղծում՝ հայկական անձնանվան և ամիս-ամսաթվի համանունության հենքի վրա՝ կրկին կապված թաղման ծիսակարգային դրսևորումներից մեկի՝ յոթի հետ.

– Ընկերը ընկերոջը հարցնում է.

– Արա, էսօր Մայիսի յոթն է, գիտե՞ս:

– Այ դուռակ, էս ձևեղվա կեսին ի՞նչ մայիսի յոթ:

– Արա, ինչ ես խոսում, մի շաբաթ առաջ Մայիսին չթաղեցի՞նք⁴⁴:

Այսպիսով, անտիպ և տպագիր աղբյուրներից վերը բերված համանուն-հարանունային օրինակները ցույց են տալիս.

ա/ հայ ժողովրդական երգիծական մանրապատումների և զվարճախոսությունների համատեքստում համանունային տարատեսակ դրսևորումները գերակշռում են հատկապես գրական հայերենի և բարբառների ու ժողովրդախոսակցական լեզվի բառաբանակապակցությունների զուգադրմամբ ստեղծված կառույցներում.

բ/ հարանունային դրսևորումները հանդես են գալիս հիմնականում օտար լեզուների զուգադրմամբ ստեղծված կառույցներում. օտար լեզվին լիարժեք չտիրապետելու կամ մասամբ տիրապետելու պատճառով բառ-բառակապակցությունն արտաբե-

⁴² Նույն տեղում:

⁴³ Պատմում և կատակում էր Գալուստ Գալստյանը, Հավաքել և կազմել է Լենա Անթառանյանը, Վերնատուն, Եր., 1994թ., էջ 44:

⁴⁴ Նույն տեղում:

րելիս զավեշտալի իրավիճակ է ստեղծվում՝ առիթ հանդիսանալով բազմաթիվ ժողովրդական երգիծապատումների ստեղծման:

գ/ զվարճապատումներում գրական հայերենի և բարբառային բառ-բառակապակցությունների հարանունային կիրառություններ քիչ են հանդիպում, եղածներն էլ առնչվում են հիմնականում արագախոսությանը և արտասանական դադարի խախտմանը, բաղաձայնների քմայնացման-ձայնեղացմանը, սխալ հնչյունարտաբերմանը, բառամասնատմանը և այլն:

դ/ համանուն-հարանունային տարատեսակ կառույցներով անեկդոտ-զվարճախոսությունները զուտ հայկական բանավեպի նմուշներ են, ուրեմն նաև՝ օտարի համար անընկալելի ու անթարգմանելի:

Армен Саркисян – Омонимы и паронимы в армянских народных сатирических миниатюрах. – В текстах армянских народных сатирических миниатюр большое место занимают анекдоты семантического строения, в частности, созданные омонимами и паронимами. В подобных видах сатиры неожиданный смех проявляется:

1. в словах и словосочетаниях существительных в литературном западно-армянском и восточно-армянском языках, имеющих омонимные и паронимные основы / [ход]- грамматическая категория и [ход] - как местоимение; в словах имеющих противоположные значения [дзгел] - отпустить и [дзгел] - тянуть, [шинел] – строить, [шинел]-изнасиловать; в нарушениях декламационной паузы, выраженной артикуляционной наречной скороговоркой и т.д./

2. в литературном армянском языке и наречиях или в диалектах слов и словосочетаний, а также в омонимо-паронимных выражениях /существительное [тей] - чай /и диалектно –сопоставительный глагол/ [тей линел] - слабеет, чахнуть/; в строении игры слов и диалекта [hep] - как? почему?/ и [hep] - отец, использованием слов на омонимичной основе; в названии домашнего животного [эш] - осел и [эш] - часть плуга, которая омонимична на диалекте и др.

3. в литературном армянском языке, диалектных словах и словосочетаниях, и в выражениях, созданных на иностранных языках, а также их омонимо-паронимных выражениях /диалектное звучание глагола

[рандадзе] – струганный и окончанием грузинской фамилии [-адзе]; в иностранных собственных именах /Мао Дзе Дун/ и в словах с омонимичной основой, которые образуются паронимами диалектного предложения /[[Маце тун-мнацел э тан]]- остался дома/; в сопоставлении паронима английского слова /корпорэйшн/ и шуточного прозвища, которые даются местными жителями [коркорэшн] и др.

Armen Sargsyan – *Homonyms and aronyms in anecdote narratives.* – Among Armenian humorous folk narratives we come across a series of anecdotes where verbal humour shapes at the expense of different homonymous and paronymous relations. In these humorous texts laughter is provoked by the unique homonymic clash. The latter can be observed

1. Between the name of the Armenian letter ի-ի (hyun) and the dialectal pronunciation of the fruit - hon (meaning dogberry).

2. Between words and expressions of Eastern Armenian and their homonyms and paronyms in Western Armenian.

3. Between words and expressions of literary Armenian and their homonyms and paronyms in dialects or between conversational, colloquial phrases and dialectal expressions.

4. Between words and expressions of literary Armenian and its dialects on the one hand and their homonyms in other languages on the other.

Բանալի բառեր: համանուն, հարանուն, անեկդոտ, երգիծանք, հայերն, բարբառ, կարգ:

Ключевые слова: омоним, пароним, анекдот, сатира, армянском языке, диалект, категория.

Key words: homonym, aronym, anecdote, satire, Armenian, dialect, category.

ՆՎԻՐԱՏՈՒՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆ ՏԱՎՈՒՇԻ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ

ՄԱՐԻՆԵ ԽԵՄՉՅԱՆ

(ԳԱԱ ՀԱԻ)

Տավուշի մարզի բանավոր ավանդությունը հարուստ է հրաշապատում, կենդանական և իրապատում հեքիաթներով: Հեքիաթը բանարվեստի ամենահնագույն տեսակներից մեկն է: Այն իր արմատներով գնում է դարերի խորքը և մինչև օրս մնում է մարդու ուղեկիցը՝ նրան պատճառելով գեղագիտական մեծ բավարարվածություն: Հեքիաթի արժեքը բացատրվում է նրանով, որ դրանում արտահայտված են ժողովրդի՝ դարերով կուտակված զգացմունքներն ու մտքերը: Տավուշի հեքիաթները (հատկապես հրաշապատում), ինչպես Հայաստանի տարբեր պատմաազգագրական տարածաշրջանների, այնպես էլ աշխարհի բոլոր ժողովուրդների մեջ, սխեմատիկորեն ունեն միանման կառուցվածք, ունեն գործող անձինք՝ իրենց համապատասխան գործառույթներով. հերոսը հեռանում է տնից, նրան ներկայացվում է ինչ-որ արգելք, արգելքը խախտվում է, հայտնվում է հակադիր կերպարը, հերոսը ենթարկվում է փորձության, հայտնվում է նվիրատուն, հերոսի տրամադրության տակ է ընկնում հրաշագործ միջոց, հերոսի և հակադիր կերպարի միջև պայքար է ծավալվում, հերոսին դժվար խնդիր է առաջադրվում, թշնամին պատժվում է, հերոսն ամուսնանում է¹: Ինչպես ասել է Վլադիմիր Պրոպր. «Հեքիաթն այնքան հարուստ է և բազմազան, որ ուսումնասիրել հեքիաթի բոլոր երևույթներն ամբողջությամբ, ողջ ծավալով և բոլոր ժողովուրդների մոտ անհնարին է»²:

Հրաշապատում և կենդանական հեքիաթները մեծ մասամբ ծագում են առասպելներից. հնագույն հեքիաթներն ակնհայտ

¹ *Пропт В.Я.*, Морфология сказки, Издательство “Наука”, Москва, 1969, с. 29-60.

² *Пропт В.Я.*, Исторические корни волшебной сказки, Издательство Ленинградского государственного университета, Ленинград, 1946, с. 7.

սյուժետային կապ ունեն նախնադարյան առասպելների, ծեսերի, ցեղային սովորությունների հետ³: Տոտեմական առասպելներին բնորոշ մոտիվներն արտացոլվել են կենդանական հեքիաթներում: Հեքիաթի հերոսի ամուսնությունը հրաշագործ տոտեմական էակի հետ, որը կերպարանափոխվում և դառնում է գեղեցիկ աղջիկ կամ տղա, ունի բացահայտ առասպելական ծագում: Մարդկային կերպարանք ստացած տոտեմ-կինը իր ընտրյալին տալիս է որսորդության հմտություն կամ օգնում է առատ բերք ստանալ: Տոտեմական կենդանիների կամ ոգիների հետ սիրային կապը նախնադարյան մարդկանց մոտ հաճախ համարվում էր ուժի և հաջողության աղբյուր: Հերոսը սովորաբար այդպիսի կին-պահպան հրեշտակ ձեռք է բերում՝ լողանալու ժամանակ գողանալով նրա հագուստը (աղջիկ-աղավնի) կամ որսորդության ժամանակ (արձակված նետի տեղում գտած գորտ) և կորցնում է՝ խախտելով ամուսնական հմայական արգելքը:

Հեքիաթային որոշ սյուժեներում մարդիկ ընկնում են (երբեմն խախտելով հմայական արգելքը) դևերի ու առասպելական հրեշների իշխանության տակ և նրանցից փրկվում են կամ հրաշագործ առարկաների միջոցով, որոնց միջոցով հակադիր կերպարների համար անանցանելի խոչընդոտներ են ստեղծում իրենց փախուստն ապահովելու համար (հմայական փախուստ), կամ տարբեր միջոցներով խաբելով նրանց, կամ խորհուրդների օգնությամբ հարվածելով նրանց թույլ և խոցելի կողմերին: Հաճախ դևը կամ հրեշը գերիներին ենթարկում է ծանր փորձությունների: Մարդիկ սովորաբար իրենց ուժով, հմայական հնարքների գիտելիքներով ու հնարամտությամբ դուրս են գալիս փորձություններից և սպանում դևին: Սովորաբար մարդկանց խմբից ամենաիմաստունը և հնարամիտը նրանցից ամենափոքրն է դուրս գալիս. նա սպանում է դևին և փրկում եղբայրներին: Հեքիաթների առանցքային մոտիվը հերոսի ուղևորությունն է հակոտնյա աշխարհ: Այս և այն աշխարհների սահմանագիծը հատելու համար

³ *Հարությունյան Մ.Բ.*, Բանագիտական ակնարկներ, ՀՀԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2010, էջ 162-163:

հերոսը օգտվում է տարբեր խորհուրդներից և օգնական ուժերի աջակցությունից (թռչուն, խոյ):

Հրաշապատում հեքիաթը նկարագրում է «ընտանեկան» իրադրություն⁴: Տավուշի հրաշապատում հեքիաթների տիպական հերոսը կարող է լինել թագավորի փոքր տղան, որսորդի տղան, խորթ աղջիկը և այլն:

Հեքիաթային կերպարների շարքում կարևորագույն տեղ են գրավում նվիրատուներն ու խորհրդատուները, որոնց գործողությունները ողջ համակարգում նպաստում են հեքիաթային սյուժեի զարգացման ու հանգուցալուծման գործընթացին: Հեքիաթի գլխավոր հերոսը առանց օգնության ի գործու չէ լուծել իր առջև դրված խնդիրները: Նվիրատուների և խորհրդատուների կերպարային երանգապնակը ձևավորվել է դարերի ընթացքում և իր արմատներով գնում է դեպի մարդկային մտածողության խորքերը: Նրանք կարող են ներկայացնել տվյալ ժամանակահատվածի հասարակության ամենատարբեր շերտերը (թագավոր, պալատական, ծառա, դերվիշ, վաճառական, ջրաղացպան, որսորդ, հողագործ, ձկնորս, տերտեր և այլն):

Տավուշի հեքիաթներում նվիրատուն և խորհրդատուն երբեմն հանդես են գալիս միաժամանակ. նվիրատվությունն ուղեկցվում է խորհրդատվությամբ: Հերոսին ինչ-որ հրաշագործ առարկա փոխանցելիս նվիրատուն անպայման պետք է հերոսին տեղեկացնի, թե ինչպես պետք է այն օգտագործի: Կամ ընդհակառակը, որպեսզի հերոսը կարողանա իրականացնել խորհրդատուի ասածները, նրան տրվում է ինչ-որ միջոց՝ դժվարությունները հաղթահարելու համար: Այսպես, օրինակ, Շամշադինի շրջանում գրառած «Արա Գեղեցիկ» հեքիաթում հերոսը՝ թագավորի փոքր տղան, հոր կուրացած աչքերի բուժման դեղը փնտրելու ճանապարհին⁵ հանդիպում է դժվարությունների, որոնք հաղթա-

⁴ *Мелетинский Е.М.*, Герой волшебной сказки. Происхождение образа, Издательство “Традиция”, Москва-Санкт-Петербург, 2005, с. 7.

⁵ Այս մոտիվը համապատասխանում է Աարնե-Թոմփսոնի «Ժողովրդական հրաշապատում հեքիաթների գործող անձանց գործառույթները ըստ հեքիաթ-

հարելու համար հերոսի թիկունքում հայտնված ծերունին օգնում է հերոսին ոչ միայն իր խորհուրդներով, այլև տալիս է նրան հրաշագործ առարկաներ՝ փետուր, գլխարկ, երկու բլիթ, օդ. «Առ էս բլիթը, ոտներիտ տակը կքսես անց կկենաս, էտ կետը կկոխես անց կկենաս, կքյնաս: Էս գլխարկը կլիսիտ կտնես, տասնիբեք հատ դներ կան շարքով կաղնած: Առաչինին կբրախես, երկրորդին սիլա կտաս, երրորդին կբրախես, չորրորդին սիլա կտաս, տհե մինչև վերջ: Փափաղը կլիսիտ տըրած տո՛ւ չես ըրևալու, օթ էս տանոնալու, աներևույթ էս տանոնալու: Սիլա կտաս, անց կկենաս: Տըռան կլխովը չըանց կենաս, տռան ճեղքովը կմտնես մեշը: Որ կքյնաս գլխարկըտ կհանես, մարթ կտանոնաս, էս էրկու փնթիթն (բլիթ) էլ վեր կալ, կտանես, փլնքանի տակին էրկու շուն ա կապած: Կմոտենաս, փնթիթը կես կանես, կեսը կտաս Զանգուն, կեսը կտաս Բլանգուն, կմտնես մեշը: Որ թաքավորը հրե քնած, սեղանի վրն մի շիշ կինի կա, սեղանի վրն մի խնձոր կա, տեղն էլ պատուհանըմը տըրած: Էտ դեղը վեր կունես ու տո՛ւս կկյնաս»⁶:

Ծերունի նվիրատուն կամ խորհրդատուն Տավուշի հեքիաթներում հանդես է գալիս տարբեր կերպարանքներով. նա կարող է լինել աստված (սպիտակամորուս ծերունու տեսքով), դերվիշ, ճամփաբաժանի ծերունի, սև և սպիտակ թել կծկող ծերունի (գիշերը և ցերեկը կարգավորող անձ), կյանքի փորձով իմաստնացած ծերունի (հերոսի հայրը, հորեղբայրը, քեռին կամ պապը), հեքիմ, ջրաղացպան և այլն: Հայ ժողովրդական հեքիաթներում սովորաբար նվիրատվությունը և խորհրդատվությունն արվում է հերոսին օգնելու նպատակով, որպեսզի նա բարեհաջող հասնի իր առջև դրված խնդրի լուծմանը: Տավուշում բազմաթիվ են այդ-

ների տիպերի» միջազգային համացույցի AT 550 թվահամարով մոտիվին (տե՛ս A. Aarne, S. Thompson, The Types of the Folktale. A Classification and Bibliography. Antti Aarne's Verzeichnis der Märchentypen. FF Communications. № 184. Translated and Enlarged by Stith Thompson, Second Revision, Helsinki, 1964, Academia scientiarum Fennica (first edition 1928, № 74).

⁶ Հայ ազգագրություն և բանահյուսություն, *Խնայան Է. Հ.*, Տավուշ, հ. 21 (հետայսու՝ ՀԱԲ 21), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2000, № 4(4), «Արա Գեղեցիկ», էջ 30:

պիսի հեքիաթները, սակայն երբեմն հանդիպում են հեքիաթներ, որոնցում խորհրդատվությունը կամ նվիրատվությունը կատարվում է ի շահ խորհրդատուի կամ նվիրատուի՝ բազմաթիվ խոչընդոտներ ու արգելքներ ստեղծելով հերոսի ճանապարհին: Օրինակ «Ջոմշուդն ու Մոմշուդը» հեքիաթում դերվիշը, դեղ ու դարման տալով անժառանգ ամուսիններին, նրանցից պահանջում է որ ծնված երկվորյակ տղաներից մեկին իրեն հանձնեն: Դերվիշը տղային տանում է հասունանալուց հետո միայն՝ այն նպատակով, որ նա անդրաշխարհից դուրս բերի իր համար կախարդական մոմակալը: Հերոսը չի հետևում դերվիշի խորհուրդներին և մնում է ստորերկրյա աշխարհում: Եվ դերվիշի մի նախադասությունը՝ «Արթեն սա՛ էլ հեչ»⁷, ասում է այն մասին, որ նա այդպես շատ երիտասարդների է ուղարկել կախարդական մոմակալի հետևից, որոնց չի հաջողվել հետ վերադառնալ լույս աշխարհ:

Երբեմն հերոսը ծերունուց խորհուրդ է ստանում իր՝ ազնվորեն աշխատած փողի դիմաց⁸ կամ ծերունին խորհուրդ է տալիս այն դեպքում, երբ համոզվում է, որ հերոսն արժանի է, որ ձեռք բերի անմահական խնձորն ու ջուրը⁹:

«Արա Գեղեցիկ» հեքիաթում որպես նվիրատու է հանդես գալիս նաև կուրացած թագավորը՝ Ապրահամը: Թագավորի փոքր տղան՝ Արա Գեղեցիկը, երկար դեգերումներից հետո չի կարողանում գտնել հոր աչքերի դեղը և խնդրում է հորը՝ իրեն տալ այն ձին, որը սլանում էր մեծ արագությամբ¹⁰: Թագավորի կողմից իր որդիներին կամ որդիներից փոքրին ձի նվիրելը հանդիպում է Հայաստանի գրեթե բոլոր պատմաագագրական շրջանների, աշխարհի ժողովուրդների հեքիաթներում: «Կրտսեր եղբայրն ու Անջան դեր» հեքիաթում (AT 302) թագավորի քառասուն տղանե-

⁷ Հայ ազգագրություն և բանահյուսություն, **Խենյան Է. Հ.**, Իջևան (Ձորովոր), հ. 25 (հետայսու՝ ՀԱԲ 25), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2008, № 10(10), «Ջոմշուդն ու Մոմշուդը», էջ 72:

⁸ ՀԱԲ 21, № 16(16), «Հալալ աշխատանքը», էջ 98:

⁹ ՀԱԲ 21, № 10(10), «Ջըհանի հեքիաթը», էջ 70, 71:

¹⁰ ՀԱԲ 21, № 4(4), «Արա Գեղեցիկ», էջ 26:

րից կրտսերը հորից պահանջում է իր պապի ձին¹¹, որպեսզի կարողանա քառասուն քույրերի որոնումների գնացած եղբայրների հետևից հասնի¹²: Մեկ այլ հեքիաթում (AT 550 + AT 513C) թագավորը հրեղեն ձին ձեռք բերելու համար հորթարածին է տալիս իր ամենախմաստուն ձին, կախարդական սանձը և պարանը, իհարկե, դա արվում է հորթարածի՝ կյանքի բովում իմաստնացած ծեր հորեղբոր խորհրդով. «Տղա ջան, կքյննս թաքավորին կասես, որ մի զամբիկ ծի, քու ամենածիների էն իմաստուն զամբիկ ծին թամքի քեզ տա ու մի մեծ պարան էլ տա՝ թոկ: Էտ ծիուն կնստես, կքյննս ծովի ափին վե կկյնս, տո՛ւ կմտնես մի քարի քամակ, էտ ծին, որ պնն ասես, խրխնջալու ա, որ խրխնջա մի քանի անքամ, էն հրեղեն ծին նրա ծենին պղի տյո՛ւս կյն, հենց որ տյո՛ւս եկավ, տո՛ւ աշխաղիր էտ կախարդական սանձը նրա կյո՛ւխը քցի, երփ որ քցեցիր կլուխը, արթեն ծին հարուր տոկոսով կենթարկվի քեզ, էն ժամանակը կքաշես ու կպիրես»¹³:

Հեքիաթներում առկա է թագավորի կողմից իր ապօրինածին զավակի համար տրվող թագավորական ծագումը խորհրդանշող թնկապի նվիրելու մոտիվը: Թագավորական թնկապի նվիրատվության մոտիվով սյուժեները ոչ միայն ապագա արքայազնի հետ են կապվում, այլ նաև թագավորի հյուրընկալության ընթացքում հյուրընկալների տանը ծնված երեխայի կնքահայրը դառնալու փաստի հետ, որպեսզի սանիկը մեծանալուց հետո այդ խորհրդանշանով գտնի կնքահորը: Օրինակ՝ «Թաքավորի սանիկը» հեքիաթում թագավորը դառնում է աղքատ կնոջ տղայի կնքահայրը և ոսկե շղթայով մի արծաթե մեղալ է զցում երեխայի վիզը¹⁴:

¹¹ Ձիու նվիրատվությունն ընդհանուր վիպական բնավորություն ունի և հատուկ է բոլոր վիպական ստեղծագործություններին: «Սասնա ծռեր» էպոսում արտասեր պառավի խորհրդով Դավիթը հորեղբորից պահանջում է հոր ձին, զենքն ու զրահը («Սասունցի Դավիթ», Հայկական ժողովրդական էպոս, Հայպետհրատ, Երևան, 1961, էջ 223-224):

¹² ՀԱԲ 25, № 5(5), «Կրտսեր եղբայրն ու Անջան դեր», էջ 42:

¹³ ՀԱԲ 25, № 7(7), «Հորթարածի հեքիաթը», էջ 62:

¹⁴ ՀԱԲ 25, № 6(6), «Թաքավորի սանիկը», էջ 48:

Տավուշի հեքիաթներում թագավորի՝ հերոսին արված նվիրատվությանը կամ խորհրդատվությանը երբեմն միջամտում են պալատականները, ծառայողները կամ թագավորական ընտանիքի անդամները (վեզիր, խոհարար, կոշկակար, դերձակ, թագուհի, արքայադուստր, արքայազն և այլն): Այդ միջամտությունները կարող են լինել և՛ ի նպաստ հերոսի գործողություններին, և՛ հերոսին իր ճանապարհից շեղելու նպատակով: Խորհրդատու և նվիրատու թագավորը կարող է լինել ոչ միայն հերոսի, այլև դևերի մոտ գերի ընկած արքայադստեր կամ արքայազնի հայրը, ինչպես նաև հարևան երկրի կամ անդրաշխարհում գտնվող մեկ այլ թագավոր:

Հեքիաթի սյուժեի զարգացման ընթացքին մեծ ներգործություն ունի նաև երիտասարդ աղջիկը՝ իր խորհրդատվությամբ ու նվիրատվությամբ Տավուշի հեքիաթներում նա թագավորի աղջիկն է, հերոսի հարսնացուն կամ երիտասարդ կինը, դևերի մոտ գերի ընկած աղջիկը, դևի քույրը, հրեղեն աղջիկը, եղնիկ աղջիկը, գորտ-աղջիկը և այլն: «Թաքավորի տղեն ու գմբութ դուշը» հեքիաթում (AT 301) անդրշիրիմյան աշխարհում հանդիպած աղջիկներից թագավորի փոքր տղայի ընտրյալը խորհուրդ է տալիս նրան, թե եղբայրների դավաճանության դեպքում ինչպես դուրս գա լույս աշխարհ. «Կքյննս դվեր, հրենի ընդեղ տեղ կա, պլոշչադ, էսպես շինած քարից, կքյննս ընդեղ, կնստես, ճամփա կըպահես, երեք դոշ պղի կյնլ, մեկը՝ սև, մեկը՝ սպիտակ, մեկն էլ՝ կարմիր գույնի: Էն սևը նստես, քե սև երգիր կտանի, սպիտակը նստես, էս աշխարհը կհանի՝ ուր քո աշխարը, կարմիրը նստես, կարմիր աշխար կտանի: Լնվ մտիտ ըլի»¹⁵:

Տավուշի հեքիաթներում բազմազան գործառույթներ ունի նաև պառավը: Մեծ մասամբ նա ընկալվում է որպես կախարդ, չար ու անիծող, սակայն կարող է լինել նաև բարեհոգի, գթասիրտ և հոգատար: Հեքիաթի հերոսը պառավին կարող է հանդիպել և՛ այս աշխարհում, և՛ այն աշխարհում, և՛ հյուրընկալվել նրա մոտ: Հյուրընկալ պառավը, անկախ այն բանից՝ հարուստ է, թե աղ-

¹⁵ ՀԱԲ 21, № 2(2), «Թաքավորի տղեն ու գմբութ դուշը», էջ 21:

քատ, շատ հաճախ բարի է և իր խորհուրդներով օգնում է հերոսին. նա երբեմն հերոսին իր որդին է համարում: «Թաքավորի սանիկը» հեքիաթում թագավորի համար ջուր տանող արաբը հերոսից խլում է թագավորական տարբերանշանը և ինքը նրա փոխարեն ներկայանում թագավորին և աշխատում է թագավորի միջոցով վերացնել նրան. այստեղ մի յուրօրինակ խորհրդատու է խաբեբա արաբը, որի խորհրդով թագավորը անհնարին հանձնարարություն է տալիս հերոսին: Հուսահատված հերոսը փողոցում հանդիպում է մի պառավի, որի խորհուրդների օգնությամբ¹⁶ կարողանում է կատարել թագավորի հանձնարարությունը:

Տավուշի հեքիաթներում փնտրվող առարկայի կամ անձի որոնումների ճանապարհին հերոսի համար երբեմն խորհրդատու են դառնում դևը, դևի կինը կամ դևի քույրը: «Խյար բլբուլի ախչիկը» հեքիաթում յոթգլխանի դևը թագավորի տղային խորհուրդ է տալիս՝ ինչպես ձեռք բերի Խյար բլբուլը. «... ճամփեն էլ շհանց տամ, բաղմանչու տեղն էլ ասեմ: Կքյննս էս թուխտը վե կունես կտանես կտաս բաղմանչուն: Մի հատ խյար ա, խյարը պուկիլ դի քե տալ: Կտնես ծոցիտ ու ետ կտնննաս... ետ չմտիկ անես, քեզ պես շատ-շատերը քյննցել են՝ քար տննել...»¹⁷: Մեկ այլ հեքիաթում նվիրատու է քառասուն դևի քույրը, որը հերոսին տալիս է մի կախարդական քլունգ, որի միջոցով նա պետք է կատարեր քառասուն դևի առաջադրած երրորդ պայմանը. «Դե վեր կալ, էն քլոննգն էլ վեր կալ, հետո մի վեղրո ճախ էլ կա՝ էն էլ վեր կալ, քյնն ըստի-ընդի, ըստի-ընդի քլոննգի տու, էտ ճախերիցը վեր ածա, չոփերիցը վեր ածա, մինչև ընդի, մենակ քըմակետ հըրոռոց, գյըրոռոց, հըրամու ծեներ. «Տարա՛ն, տարա՛ն», կյոռոց դի ըլիլ, ետդբետ ետ չմտիկ անես, դուդին էլ դի քար տննննալ, տո՛ւ էլ»¹⁸: Այս հեքիաթում դուդին մի թռչուն է, բերդցի բանասաց Տիգրան Բաբայանի որակմամբ. «Դուդի դուշը գիդըմ է ս վըերն ա, էն իսկական դշերը է, գիդուն դշերը, մարթկային լեզվով խոսող մեծ

¹⁶ ՀԱԲ 25, № 6(6), «Թաքավորի սանիկը», էջ 51, 52:

¹⁷ ՀԱԲ 25, № 8(8), «Խյար բլբուլի ախչիկը», էջ 64:

¹⁸ ՀԱԲ 21, № 5(5), «Խազողլու հեքիաթը», էջ 40:

ղշերն են՝ չտեսնված սիրուն»¹⁹: Թռչունը, ի նշան երախտիքի, ողջ սյուժեի ընթացքում իր խորհուրդներով ուղեկցում է հերոսին ոչ միայն եղնիկ-աղջկան գտնելու, այլև նրան չար նվիրատուների (թագավորի կոշկակար, պայտար, դերձակ) խարդավանքներից զերծ պահելու գործում, որոնք փորձում էին իրենց նվերների (կոշիկ, ձի՝ ոսկե ասպազենով, հագուստ) միջոցով մոխրացնել եղնիկ-աղջկան և իրենց աղջիկներին նրա փոխարեն ներկայացնել որպես իսկական հարսնացու²⁰:

Տավուշի հեքիաթներում նվիրատու և խորհրդատու թռչունները բազմազան են իրենց տեսակով (ծիտ, աղավնի, դուղի դուշ, զմրութ դուշ, դուգդուն, արծիվ, հագարան բլբուլ) և գործառույթներով: Նրանք երբեմն հանդես են գալիս որպես կապող օղակ տարբեր աշխարհների միջև: Ի նշան երախտագիտության տրված փետուրը կամ փետուրները օգնության են հասնում հերոսին կա՛մ կրակին տալով, կա՛մ իրար քսելով, կա՛մ բերանով անցկացնելով, կա՛մ ջրի մեջ գցելով: Երբեմն թռչունը համոզված չէ, որ խորհուրդներից հետո հերոսը կարող է հասնել իր նպատակին: Այսպես, հեքիաթներից մեկում Զմրութ դուշը երկու փետուր է տալիս հերոսին և ասում. «Դե առաջ փոքրը պեռնովըտ քաշես, տանոնալ դես ծիտ, հետո մեծը կքաշես՝ տանոնալ դես ինձ նման դուշ, ու կքյնանք, աստված մեզ հետ, յա՛ կկարանք կհասնենք, յա՛ կարալ չենք»²¹: Այս պարագայում հերոսի տեղափոխությունը հակոտնյա աշխարհ կարող է իրականանալ միայն կերպարանափոխությամբ՝ թռչունի տեսքով (թռչունը հոգու խորհրդանիշն է):

Պակաս կարևոր դերակատարություն չունեն կենդանիները (ձի, առյուծ, ոգնի, աղվես, գորտ) և միջատները (մրջյուն, բոռ, մեղու): Տավուշի հեքիաթներում իմաստուն կամ հրեղեն ձին հերոսի տրամադրության տակ է անցնում երբեմն որպես նվիրատվություն՝ հոր (թագավոր) կողմից, երբեմն հերոսն այն ձեռք է բերում խորհրդատուների կողմից մատնանշված ծովի հատակից, երբեմն էլ ստանում է դներին հաղթելու արդյունքում: Ձիու պոչից

¹⁹ Նույն տեղում, էջ 38:

²⁰ Նույն տեղում, էջ 43, 44:

²¹ ՀԱԲ 21, № 10(10), «Ջրհանի հեքիաթը», էջ 72:

կամ բաշից պոկած մազը հեքիաթներից մեկում օգտագործվում է որպես բուժամիջոց հերոսի լեզուն բացելու համար. «Իմ թոփիցը (էս յալիցը էլի, բաշիցը) մի իրեք մազ պոկի, ստաքանի մեչին ճուր ածա, խմի, լեզուն պանց դի ըլիլ»²², «Քաչալը» հեքիաթում դևի կարմիր, սև, սպիտակ հրեղեն ձիերը, իրենց խնամելու համար, հերոսին իրենց մազերից տալիս են, որ նա դժվարության հանդիպելիս իրար քսի, որպեսզի նրանք հայտնվեն և օգնեն նրան²³, իսկ կարմիր ձին հերոսին խորհուրդ է տալիս, թե ինչպես ձեռք բերի թագավորի բուժման համար անհրաժեշտ առյուծի կաթը²⁴: Այս հեքիաթում առյուծն էլ է դառնում մի յուրատեսակ նվիրատու, թեն հերոսը առյուծի կաթը ճարպկորեն ձեռք է բերում կարմիր ձիու օգնությամբ²⁵: Իսկ «Ջոմշուղը և Մոմշուղը» հեքիաթում առյուծը նվիրատու է դառնում երախտագիտությունից դրդված. նա իր ոտքը բուժելու համար երկվորյակ եղբայրներից մեկին է նվիրաբերում իր երեք ձագերից մեկին²⁶: «Կախարդական մատանին» հեքիաթում աղքատ փայտվաճառ տղան չարաճճի երեխաների ձեռքից ոգնուն գնում է և ազատ արձակում: Ի պատասխան տղայի արած լավության՝ ոգնին լեզվի տակից մի մատանի է հանում, տալիս տղային և ասում. «Եթե ինչ կարիք ունես լիզվիտ տակին տի, տն քու կարիքը կյնլ դի, քու նպատակտ կատարվիլ դի»²⁷:

Խորհրդատու կենդանիները հանդես են գալիս ոչ միայն հրաշապատում հեքիաթներում: «Աղվեսի պասը» կենդանական հեքիաթում աղվեսը գայլին խորհուրդ է տալիս գնալ անտառ՝ դմակի հետևից, և խորամանկությամբ տիրանում է դմակին²⁸:

Դժվարությունները հաղթահարելու ճանապարհին հաճախ հերոսին օգնության են հասնում միջատները: Հեքիաթներից մեկում հերոսը թուրը գցում է առվի լայնքով, կամուրջ սարքում, որ-

²² ՀԱԲ 21, № 1(1), «Վրսկըքյնքոլ տղի հեքիաթը», էջ 20:

²³ ՀԱԲ 25, № 9(9), «Քաչալը», էջ 67:

²⁴ Նույն տեղում, էջ 69:

²⁵ Նույն տեղում:

²⁶ ՀԱԲ 25, № 10(10), «Ջոմշուղն ու Մոմշուղը», էջ 73:

²⁷ ՀԱԲ 25, № 12(12), «Կախարդական մատանին», էջ 78:

²⁸ ՀԱԲ 25, № 99(99), «Աղվեսի պասը», էջ 233:

պեսզի միլիոնավոր մրջյուններն անցնեն առուն: Վերջին մրջյունը թնի տակից երկու մազ է պոկում է տալիս նրան, ասում. «Քյնն, վրերդի տեղըտ նեղվի, մազերս իրար քսի, քու կոխկին եմ: Քառսուն հրամու դևը քեզ օքնական»²⁹: Ընդհանրապես հայ ժողովրդական հեքիաթներում հերոսին խորհուրդ են տալիս նվիրած մազը, բուրդը կամ փետուրը կրակին տալ: Տավուշի հեքիաթներում բազմաթիվ են այնպիսի հեքիաթները, որոնցում խորհուրդ է տրվում մազերը կամ փետուրները իրար քսել: Ինչպես գիտենք, շփման արդյունքում վերջին հաշվով առաջանում է կրակ և փետուրները կամ մազերը իրար քսելը կարող է հանգել կրակին տալու գաղափարին: Եվ սա տավուշյան հեքիաթների առանձնահատկություններից մեկն է, որ շատ քիչ է հանդիպում Հայաստանի մյուս պատմաագագրական շրջանների հեքիաթներում:

Տավուշի հեքիաթներում հանդիպում են նաև այնպիսի սյուժեներ, որոնցում նվիրատուն մարդ կամ շնչավոր արարած չէ: Այդպիսի նվիրատու, երբեմն նաև խորհրդատու կարող է լինել անտառը, աղբյուրը, ծառը, քարը, տերևը, կոճղը, գանգը և այլն, որոնք խորհրդանշում են հնագույն մոռացված իրողություններ և մթագնված կերպով պահպանում են նախնական մտածողության ու ծիսաստվորության հավատալիքների հետքեր:

Այդպիսի ակամա նվիրատու է դառնում անտառը, երբ հերոսը որսի ժամանակ անտառում գտնում է լույս տվող փետուր («Հորթարածի հեքիաթը») կամ լույս տվող շապիկ («Դև ախչկա շափիքը»): Այդ իրերը հերոսին են տրվում ոչ փետուրի կամ շապիկի տիրոջ կողմից: Այստեղ անտառը միջնորդավորված նվիրատու է:

Բերենք մի օրինակ ևս, որտեղ գանգն է խորհրդատու: Հերոսի երկվորյակ եղբորը մի մարդու գանգ է հանդիպում, բանասացի ուրակմամբ՝ «չոր ոսկուռ», որը նրան խորհուրդ է տալիս՝ ինչպես դիմակայի կախարդ պառավին և վերակենդանացնի եղբորը. «Տղա, ախպերըտ քյննց, բայց կախարդական պառավն առաչնե-

²⁹ ՀԱԲ 21, № 5(5), «Խազողլու հեքիաթը», էջ 38:

րուտ ա, ծեզ կախարդացնիլ դի, քար դի շինիլ՝ քար: Ծեզ հվաքեցեք: Մինչի քու հասնիլը քյալ դես տենալ ախպերըտ քար ա տանել: Ինչ պայման անի՝ նրա (կախարդի) պայմանին ստորագրես ոչ»³⁰:

Ինչպես տեսնում ենք վերը շարադրվածից՝ Տավուշի հեքիաթներում նվիրատուի գործառույթները շատ հաճախ ուղեկցվում են խորհրդատվությամբ: Եվ գատել միմյանցից նվիրատուին, խորհրդատուին, հերոսի հրաշագործ օգնականներին, ինչպես նաև հրաշագործ միջոցները իրարից այնքան էլ հեշտ չէ, քանզի նրանք հեքիաթներում հանդես են գալիս միմյանց հետ փոխկապակցված:

Դիտարկումները ցույց են տալիս, որ Տավուշի հեքիաթներում, ինչպես աշխարհի բոլոր ժողովուրդների հեքիաթներում, մեծ ու անգնահատելի է նվիրատուների և խորհրդատուների դերը հեքիաթի հերոսին առաջադրված դժվարագույն խնդիրների լուծման գործընթացում:

Марине Хемчян – *Даритель и советчик в тавушских сказках.* – Устная традиция Тавушской области богата волшебными, животными и бытовыми сказками. Сказка - одна из старейших видов словесного искусства. Она корнями восходит к глубинам веков и остается путником человека до наших дней, доставляя ему большое эстетическое удовольствие. Ценность сказки объясняется тем, что в ней воплощены идеи и чувства народа, накапливаемые веками. Тавушские сказки (особенно волшебные), как у всех народов мира, схематически имеют одинаковую структуру и действующие лица, соответствующими функциями.

Дарители и советчики занимают важнейшее место в ряду сказочных образов, действия которых во всей системе содействуют процессу развития и развязки сюжета сказки. Главный герой не в состоянии решать проблемы, поставленные перед ним: его действия направляются или ему предлагаются средства, для преодоления препятствий. Образный репертуар дарителей и советчиков формировался в течении веков.

³⁰ ՀԱԲ 25, № 10(10), «Ջումշուկն ու Մումշուկը», էջ 74:

Хотя с виду кажется, что дарители и советчики разные образы, но в статье выявлены их общие черты, и часто даритель и советчик объединились в один образ (король, старик, дервиш, конь, птица и т.п.).

Наблюдения показывают, что в тавушских сказках огромна и неопределима роль дарителей и советчиков в процессе решения труднейших проблем, предлагаемых герою сказки.

Marine Khemchyan – *Gift-Bringer and Adviser Figures in Tavush Folk Tales*. – The oral tradition of Tavush marz is rich with tales of magic and real tales. The tale is one of the oldest types of the folklore. It goes with its routes to the centuries and is accompanying human being up to today giving him great aesthetic satisfaction. The value of the tale is explained by the feelings and thoughts of the people exposed in it. The tales of Tavush (especially the fairy tales), as the tales of the all nations of the world, have identical scheme structure and actors with their corresponding functions.

In the list of the tale characters gift-bringers and advisers have very important role. Their actions in the whole system contribute to the process of the development and resolution of the subject. The main character of the tale cannot solve his problems without their assistance, his actions are directed by them and the means to overcome the obstacles are suggested by them. The character repertoire of the gift-bringers and advisers is formed in centuries.

Although from the first sight it seems that gift-bringer and adviser are different characters, in the article their similarities are exposed and often gift-bringer and adviser are united in one tale character (king, old man, dervish, horse, bird etc.)

The observations show us that the role of the gift-bringer and adviser in the process of the solving of hardest problems by the tale hero is big and essential.

Բանալի բառեր: բանավորականություն, հրաշապատում հեքիաթ, իրապատում հեքիաթ, հերոս, նվիրատու, խորհրդատու, սյուժե, գործառույթ:

Ключевые слова: устная традиция, волшебная сказка, бытовая сказка, герой, даритель, советчик, сюжет, функция.

Key words: oral tradition, magic tale, real tale, hero, gift-bringer, adviser, subject, function.

ՇՆՈՐՀԻ ՍՏԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ
(ըստ հայկական հեքիաթների նյութի)

ԵՎԱ ԶԱՔԱՐՅԱՆ
(ԳԱԱ ՀԱԻ)

Հնամենի մտածողությամբ երկրի վրա կատարվող ամեն ինչ բացատրվում էր աստվածային կամքով: Գիտելիքի, ստեղծագործական ունակությունների, հերոսության, անսովորի ի հայտ գալը աստվածային միջամտության արդյունք էր: Հերոսացած նախնիներին, ցեղերի հիմնադիրներին համարում էին աստվածներից սերված: Հետագայում դիուցազունների ծնունդը եթե դադարել էր ընկալվել իբրև հենց աստծուց անմիջականորեն ծագած, ապա գոնե փորձում էին այլ, ոչ սովորական, գերբնական ծնունդ վերագրել նրանց: Եվ այսպես ստեղծվում են առասպելները:

Նույնիսկ մարդկության առաջընթացը համարվում էր մշակութային հերոսների կողմից աստվածներից գողացված կամ թույլատրված գիտելիքների, ունակությունների, հմտությունների արդյունք: Արարումը աստծո մենաշնորհն է: Նա է բոլոր գիտելիքների, ստեղծագործ հակումների աղբյուրը: Եվ եթե գերբնական ծագում ունեցողներին անսովոր կարողությունները տրված են ի ծնե, ապա մարդն այն կարող է ստանալ աստվածներից, գերբնական էակներից իբրև շնորհ, պարգև, նվեր: Շնորհներ են համարվում մարդկային զանազան ունակությունները, հմտությունները, ձիրքն ու տաղանդը, նաև ներքին ու արտաքին վայելչությունն ու հրապույրը: Շնորհը տրվում է մարդուն գերբնական էակների հետ հաղորդակցության ընթացքում, տեսիլքի կամ երազի միջոցով: Այդ մարդիկ աստծո կողմից ընտրյալներ են՝ մարգարեներ, սրբեր, վարդապետությունների հիմնադիրներ, ստեղծագործ ունակություններ, գորավոր հասկություններ ունեցող մարդիկ, որոնք ստանում են իրենց գործունեության «օրհնությունը» աստվածային պարգևի ձևով: Շնորհով այդ գործերը

«օրինականացվել» են, համարվել ոչ միայն աստծո հավանությանն արժանացած, այլ հենց աստծուց պատրաստի մատուցված: Այսպես, Եհովա աստվածը Մինա լեռան վրա հայտնվում է Մովսեսին և նրան անձամբ փոխանցում քարե տապանակները, որոնց վրա Աստծո մատով գրված էին տաս պատվիրանները (Ելից 31, 18): Մահմեդական վարդապետության սրբազան տեքստը՝ Ղուրանը Ալլահի գահի տակ է, երկնքում, որտեղից այն Զիբրայիլ հրեշտակը աստծո կամքով հանձնում է Մուհամմեդին Խիբ լեռան վրա (Ղուրան 41, 5): Տաս տարի քարայրում փակված Զրադաշտին աստվածահայտնության արդյունքում տրվում է մագդեզական վարդապետության շնորհը, Որմիգդով ներշնչված՝ նա գրում է Զրադաշտական կրոնի սուրբ գիրքը՝ Ավեստան¹: Սուրբ Հոգու թելադրանքով են գրվել Նոր Ուխտի սուրբ գրքերը Հիսուսի առաքյալների կողմից: Ըստ ավանդության, հայկական այբուբենը Մեսրոպ Մաշտոցին է տրվել տեսիլքի միջոցով, աստվածահայտնությամբ: Կորյունը հայկական այբուբենը անվանում է «աստվածատուր», «շնորհատուր պարզներ»²: Իսկ ըստ Մովսես Խորենացու վկայության, սուրբ Մեսրոպը երկարատև դեգերումներից ու փնտրտուքներից հետո որևէ արդյունքի չհասնելով, ապավինում է աղոթքի: «Եվ տեսնում է ո՛չ երազ քնի մեջ, ո՛չ տեսիլք արթնության մեջ, այլ սրտի գործարանում նրա հոգու աչքերին երևում է աջ ձեռքի թաթ՝ քարի վրա գրելիս, այնպես որ քարը գծերի հետքը պահում էր, ինչպես ձյունի վրա: Եվ ոչ միայն երևաց, այլև բոլոր (գրերի) հանգամանքները նրա մտքում հավաքվեցին, ինչպես մի ամանում»³:

Հիսուսը շնորհատու է, նա առաքյալներին բուժելու շնորհ է պարգևում: Մինչ այդ դներին սանձել, հրաշագործ բուժումներ միայն ինքն էր իրականացնում, իսկ առաքյալներին այդ չէր հաջողվում: «Եւ նա կանչելով տասներկու առաքեալներին՝ նրանց զօրութիւն և իշխանութիւն տուեց բոլոր դեւերի վրայ, նաեւ

¹ *Ալիշան Ղ.*, Հին Հավատք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ, 1895, էջ 327:

² *Կորյուն*, Վարք Մաշտոցի, Եր., Եր. համալս. հրատ., 1981, էջ 98:

³ *Մովսես Խորենացի*, Հայոց պատմություն, Եր., Եր. համալս. հրատ., 1981, էջ 405:

բժշկելու հիւանդութիւնները: Եւ ուղարկեց նրանց քարոզելու Աստուծոյ արքայութիւնը եւ բժշկելու ախտերով վարակուածներին» (Ղուկաս 9, 1-2):

Հիսուսը ինքն էլ աստծու կողմից էր շնորհի արժանացած: Նրա շնորհը կրկնակի է՝ ի ծնէ, իբրեւ Աստծո նորդի, հղացած Սուրբ Հոգու կողմից և, իբրեւ այդպիսին, նա գերբնական էակ է. Գաբրիէլ հրեշտակը ավետելով Մարիամին անարատ հղիության լուրը, ասում է. «Մի՛ վախեցիր, Մարիա՛մ, որովհետեւ Աստծուց դու շնորհ գտար: Եվ ահա՛ դու կը յղիանաս եւ կը ծնես մի որդի ու նրա անունը Յիսուս կը դնես: Նա մեծ կը լինի եւ Բարձրեայի որդի կը կոչուի: Եւ Տէր Աստուած նրան կը տայ նրա հօր՝ Դաւթի աթոռը, եւ նա յաւիտեան կը թագաւորի Յակոբի տան վրայ, ու նրա թագաւորութիւնը վախճան չի ունենայ» (Ղուկ. 1, 30-33): Եվ ապա երկրորդ անգամ, արդէն երեսունամյա հասակում, Հորդանան գետում մկրտվելով շնորհի ստացման ընթացքն ավարտվում է ծիսական նվիրագործմամբ. «Երկինքը բացուեց, եւ Սուրբ Հոգին մարմնաւոր տեսքով, որպէս աղանի իջաւ նրա վրայ. եւ երկնքից ձայն եկաւ, որ ասում էր. «Դո՛ւ ես իմ սիրելի Որդին, որ ունես իմ ամբողջ բարեհաճութիւնը» (Ղուկ. 3, 21-22):

Այստեղ և ընդհանրապէս, շնորհի ստացումը նույնական է նվիրագործմանը և՛ բովանդակային, և՛ կառուցվածքային առումներով, ծիսական նույն մանրակերտն է (մոդելը): Երկու դեպքերում էլ արդյունքը նոր կարգավիճակի ստացումն է, ոչ երկրային ուժերի հետ շփման շնորհիվ միասնական հասկոթյունների ձեռքբերումը: Ե՛վ շնորհ ստացողը, և՛ նվիրագործվողը անցնում են նույն ծիսական փուլերով՝ մեկուսացում, օտարում շրջապատից, փորձություններ, ապա ծիսական մահ և հարություն՝ նոր որակներով, ինքնահաստատում՝ շնորհիվ ձեռք բերված գործության:

Շնորհը տրվում է ոչ երկրային ուժերի՝ աստվածների կամ ոգիների կողմից, հենց նրանց իսկ ցանկությամբ և ընտրությամբ: Ընտրյալ են դառնում բարեգործ, բարեպաշտ, հալածյալ, տառապյալ, որբ, անգավակ, միայնակ, հասարակությունից դուրս

մղված անհատները, ֆիզիկական, հոգեկան ու բարոյական առանձնակի տվյալներ ունեցողները, որոնք կարողանում են անցնել իրենց բաժին հասած դժվարին ճանապարհը և դիմանալ բոլոր փորձություններին՝ անհաղթահարելի սովորական մարդկանց համար:

Փորձությունները տրվում են նույն իսկ ոգիների, աստվածային ուժերի կողմից, որոնք հայտնվում են ընտրյալին տեսիլքի կամ երազի միջոցով և հայտնում իրենց կամքը՝ ընտրյալի ապագա կոչման մասին, որը նա պարտադրված է ընդունել: Ընտրյալը անցնում է հոգեկան տառապալից շրջան՝ անձի երկվություն, ապրումներ, հիվանդագին երևակայության հարուցած զգայախաբություններ, անկումային տրամադրություն, երբեմն հոգեխանգարման հասնող իրավիճակներ, որի դեպքում նա դադարում է նորմալ շփվել մարդկանց հետ, մեկուսանում է, աննպատակ թափառում ամայի վայրերում՝ հետապնդված ոգիներից: Այս տառապանքները տրվում են մարդուն իբրև ներքին ապրումներ: Ոգու հետապնդումներին նա ենթարկվում է էքստազի՝ հափշտակվածության մեջ, հմայված, կախարդված վիճակում: Ի վերջո հասնում է ճգնաժամային պահը, որի ժամանակ նրան ոգիները տեսիլքով տանում են այն աշխարհ, ապա «հարություն» տալիս իբրև նոր մարդ՝ օժտված գաղտնի գիտելիքներով, հրաշագործ զորությամբ: Այդպես են դառնում գուշակ ու հմայագործ, հեքիմ ու գրբաց և բոլոր այնպիսի ունակությունների տեր, որոնց համար անհրաժեշտ է ներշնչանքի, ոգեշնչման պահը: Ոգեշնչման, ներշնչման պահին է, որ գուշակը շփվելով ոգիների հետ, նրանցից ստանում է տեղեկություններ ապագայի մասին, հեքիմը ոգիներից ստանում է տվյալներ հիվանդության և նրա բուժման ձևերի մասին, իսկ հմայագործը ոգիների օգնությամբ աներևակայելի հրաշքներ է գործում: Ոգեշնչում և ներշնչում՝ այսինքն ոգին մտել է մարդու մեջ և գործում է նրա փոխարեն կամ նրա շունչն անմիջապես դիպչում է մարդու շնչին: Դա ոգեղենության պահն է, երբ մարդն ինքը ոգու է վերածված, վերացած մարմնական, երկրային կապանքներից՝ անմիջական կապի մեջ է այն-

կողմնային էակների հետ, որոնցից ստանում է մտքեր, գիտելիքներ, գործություն և այնպիսի բաներ, որ հասու չեն սովորական մարդկանց: Ոգու հետ այդ կապը դառնում է տևական, ոգին հայտնվում է ցանկացած պահի, երբ մարդը զգում է նրա ներկայության կարիքը:

Շնորհի ստացումը ծիսական բնույթ ունի, այն տեղի է ունենում աշխարհի կենտրոն խորհրդանշող սրբազան վայրում, գաղտնիության պայմաններում: «Տվածորիկ» շնորհով մարդը նվիրագործում է անցնում՝ ի տարբերություն չնվիրագործվածների, որոնք զանազան հմտությունների, գիտելիքների փորձում են տիրանալ բացառապես սովորելով, փորձի ձեռք բերմամբ: Առավել հաճախ հմայական գործության ստացման ընթացքն ընդգրկում է այս երկու պահերը միաժամանակ: Բայց որոշ դեպքերում, ինչպես գուշակությունն ու հմայությունը, կախարդությունը առանց շնորհի հնարավոր չէ կիրառել: Միայն շնորհով օժտվածի, նվիրագործվածի բառերը, քրթմնջոցը, առարկաները, ջուրը և բույր այն բաները, ինչ կիրառվում են ծեսի մեջ, ձեռք են բերում հմայական հատկություն: Եթե ամեն ինչ նույնությամբ կրկնի նվիրագործում չանցածը, որևէ ազդեցություն չի ունենա, ջուրը կմնա իբրև սովորական ջուր՝ զերծ հմայական գործությունից, նույնը՝ արտասանված բառերը և մնացյալ ամեն ինչը: Դա է պատճառը, որ ամեն ինչի համար դիմում են գրքացին ու մոմ թափողին և ոգիների հետ շփում ունեցող այլ «մասնագետների», հակառակ դեպքում ամեն մարդ կգբաղվեր դրանով, և չէր լինի այդպիսիների դասը, որոնց քանակը առավել մեծաթիվ է եղել հնում՝ սնահավատության խավար ժամանակներում և ժամանակ առ ժամանակ ակտիվացել:

Շնորհի ստացման մասին ազգագրական վկայությունները բազմաթիվ են, որոնց մի մասը զուտ իրական պատմություններ են՝ տվյալ ժամանակներին ներհատուկ հավատալիքներով պայմանավորված, մի մասը՝ բանահյուսական ծագմամբ գրույցներ, ավանդություններ: Նմանատիպ պատմություններ կան նաև հեքիաթներում, հիմնականում առասպելախառն, հավատալիքների

հնագույն շերտեր պարունակող: Եվ եթե իրական մարդկանց պատումներում շնորհը տրվում է հիմնականում երազի կամ տեսիլքի միջոցով իբրև անիրական զգայախաբություն, պատրանք, ապա հեքիաթներում տրանսի (այնկողմնային վիճակի, հիպնոսի, հափշտակվածության մեջ լինելը) պահը բացակայում է, հեքիաթում այդ ոգիները հանդես են գալիս իբրև սովորական գործող անձինք և ազատորեն շփվում հեքիաթի հերոսների հետ, թեև պարուրված են որոշ խորհրդավորությամբ: Հեքիաթի հերոսը «անձամբ» է մուտք գործում անդրաշխարհ, սավառնում երկինք, քանի որ հեքիաթն ինքնին արդեն տրանս է, հնարանք⁴, որի ժամանակ և՛ պատմողը, և՛ ունկնդիրը մտովի փոխադրվում են այլ աշխարհ, վերանում իրականությունից, ոգևորվում՝ հմայվում: Նույն ազդեցությունն են թողնում նաև արվեստի բնագավառները՝ թատրոնը, երգը, պոեզիան, կերպարվեստը և աշխատանքային գործունեության բոլոր այն տեսակները, որոնցում ստեղծագործական պահ կա, հնարանքի պահ, որը գալիս է ոգեշնչումից: Այդ պահը նման է արարման:

Հեքիաթներում, ինչպես նաև իրականության մեջ, շնորհի ստացման ձևերն ու եղանակները աչքի են ընկնում անչափ մեծ բազմազանությամբ ու տարատեսակներով: Ամենատարբերությամբ պատմություններն են պատմվում մարդկանց՝ ոգիների հետ հանդիպումների, նրանց հետ ունեցած հարաբերությունների մասին:

Հեքիաթներում երբեմն շնորհը տրվում է ծննդյան պահից: Իբրև կանոն, բարեպաշտ, զրկված, ամայի վայրում երկունքի ցավերը բռնած միայնակ, անօգնական կնոջ մոտ են հայտնվում ոգիները (դրանք հավանաբար չորեքմուտ, ուրբաթամուտ, կիրակնամուտ ոգիներն են կամ դրանց հիշեցնող այլ՝ աղավանակերպ, կանացիակերպ բարի ոգիներ), օգնում կնոջը բարեհաջող ծննդա-

⁴ *Jivanyan A.*, Feary tales and goose flights. Story telling as trans //Գիտելիք և խորհրդանիշ, հավատալիք և սովորույթ: Միջազգային 2-րդ գիտաժողովի հոդվ. ժող., Եր., 2007. էջ 217-231:

բերել, ապա բարուրում են, անուն դնում, շնորհներ պարգևում նորածնին:

Մի տարբերակում (ՀԺՀ⁵ XI, 233) թագավորն ու թագուհին արժանանում են որդի ունենալու բերկրանքին միայն այն ժամանակ, երբ հարստությունը, ունեցվածքը բաժանում են աղքատներին իբրև ողորմություն և իրենք էլ տարագրվում երկրից: Եվ ունեզուրկ, թափառական զույգին օգնության են հասնում երեք աղավակերպ ոգիներ, ազատում կնոջը երկունքի ցավերից, նորածին որդուն շնորհներ բաշխում, որով նա դառնում է անխոցելի, հզոր և դիմակայելով դժվարագույն փորձությունների՝ ի վերջո լավ ապագայի արժանանում:

Մի հեքիաթաշարում հերոսուհին օրհասական պահին ս. Մարգարիտ է դիմում աղոթք-խնդրանքով և խոստանում իր թշնամուց (հարամի, դերվիշ, վիշապ) ազատվելու դեպքում փորի մեջ եղող մանկանը մատաղ անել, և սուրբն օգնում է նրան: Մի քանի տարի անց սուրբը հայտնվում է ծերունու կերպարանքով (մի տարբերակում Մարիամ Աստվածածինն է պառավի կերպարանքով՝ ՀԺՀ XIV, 257-258) և հիշեցնում խոստումը: Մայրն իր դստերը հոժարությամբ հանձնում է ծերունուն: Ծերունին տեսնելով մոր երդմնապահությունը և դստեր խոնարհ պահվածքը, զոհաբերությունն ընդունված է համարում, դստերը բաշխում մորը և շնորհներ պարգևում նրան (ՀԺՀ IV, 285, VI, 66-67, X, 96, ՀԱԲ⁶ 20, 36 և այլն): Աստծուն, սրբին արված զոհաբերության (ողորմություն բաժանելն էլ է զոհաբերություն), աղոթքի դիմաց շնորհ ստանալու օրինակները եզակի չեն: Սրբին ուխտի գնացած, խորոզ զոհաբերած և աղքատներին բաժանած ծնողների թույլ ու հիվանդ որդին սրբի շնորհիվ դառնում է հզոր փահիլան և նույնիսկ հաղթում ջրերի դեմը կտրող վիշապին⁷: Երագում աստված «ղվաթ» (զորություն, ուժ) է տալիս տղային, նա բոլորին զարմացնում է իր

⁵ Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. I-XV, Եր., 1959-1999: Այսուհետև՝ ՀԺՀ, հատորի թիվն ու էջը:

⁶ Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 20, Եր., 1999, էջ 36:

⁷ *Մրվանձոյան Գ.*, Երկեր, հ. 1, Եր., 1978, էջ 443:

ուծով, դառնում «փահլևան» (ՀԺՀ IV, 87): Անգավակ ամուսինները երկարատև աղոթքների շնորհիվ զավակի են արժանանում: Երեխայի ծնունդն ընդունում են աղջիկներ դարձած աղավաակերպ ոգիները և շնորհներ պարգևում նորածնին (ԷԱԺ⁸ Բ, 443, ՀԺՀ IV, 434): Շնորհատու գորավոր ուժ ունեն խոնարհված եկեղեցիները: Նրանք հարստություն են պարգևում, նպատակին հասցնում սրտանց աղոթողին, իրենց ավերակները խնամողին⁹:

Ըստ ժողովրդական մտածողության, սրբի տված շնորհ է համարվում նույնիսկ տևական վարժանքներ ու փորձառություն պահանջող այնպիսի արհեստ, ինչպիսին լարախաղացությունն է¹⁰: Երագում ս. Կարապետի հայտնվելուց հետո աղքատ, որք ու հալածված պատանին զարթնում է ձիրքով օժտված, աղոթում է հովանավոր սրբին, ցատկում լարի վրա և զարմացնում բոլորին¹¹: Հավանաբար պարանի վրա, օդում ցատկեր կատարելն ու վայր չընկնելը վերագրվում է սրբի պահպանիչ գործությանը: Այդ շնորհը տարիներ անց ֆիզիկապես տկարանալուց հետո փոխում է իր բնույթը՝ մարդն առնում է տավիղը, երգում ու նվագում՝ որպես աշուղ: Աշուղ դառնում են «աստծու հրամանքով» (ՀԺՀ XI, 469), երագում եկած տեսիլքով: Սայաթ-Նովայի մասին հեքիաթ-ավանդությունը պատմում է, որ նա աստծուց եկած երագով իմանում և գտնում է վանքի բակի մի գերեզմանաքարի տակ գտնվող քյամանչան, որին տիրանալով էլ շնորհ է ձեռք բերում: Այսինքն՝ այդ շնորհը առարկայանում է անդրաշխարհից բերված գործիքի մեջ, խորհրդանշելով ստեղծագործական ակունքների ոչ երկրային բնույթը, ստեղծագործողի անդրաշխարհ կատարած ճամփորդությունը:

⁸ Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Բ, Մոսկուա-Վաղարշապատ, 1915:

⁹ *Նավասարդեան Տ.*, Հայ ժողովրդական հեքիաթներ, գ. 4, Տփղիս, 1888, էջ 90: Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 14, Եր., 1983, էջ 125:

¹⁰ *Անտոնյան Յ.*, Շնորհ ընտրությամբ, չոփչու և լարախաղացի փոխկապակցությունը // Հայ ժողովրդական մշակույթ XIII, Եր., 2001, էջ 27-28:

¹¹ Բիւրակն, Կ-Պոլիս, 1900, էջ 658-660:

Շնորհի ստացման աղբյուր կարող է լինել կախարդական թռչնի սիրտը, քարաճիկը, ջիգյարը, գլուխն ուտելը: Դրանք ուտողը կա՛մ իշխանության է տիրանում, կա՛մ հարստության, կա՛մ ցանկությունների կատարման (ՀԺՀ XIII, 271, ՀԺՀ IX, 376, ՀԺՀ XI, 165-170, ՀԺՀ V, 512-513, ՀԺՀ VI, 41, ՀԺՀ VII, 38 և այլն): Թռչունը հոգու, երկնային ոգիների խորհրդանիշ է, միջնորդ երկնքի և երկրի միջև, նրա միջոցով աստվածային կամքն է փոխանցվում երկրային էակներին:

Անդրաշխարհի կատարած նվիրագործական ճանապարհորդության ընթացքում հեքիաթի հերոսը կամ հերոսուհին շնորհ է ստանում՝ կախարդական տարբեր գործությամբ օժտված տարբեր գույնի ջրերում մազերը օծելով կամ լվանալով (ՀԺՀ XIV, 196, 198, XII, 556, X, 94, 108, VIII, 388-389 և այլն):

Այս բոլոր ձևերը այլ աշխարհների՝ երկնքի ու ստորերկրայքի հետ շփման, դրա միջոցով միասնական հատկությունների ձեռքբերման տարբեր դրսևորումներ են:

Հնադարյան մարդը շատ ավելի սերտ կապերի մեջ է եղել շրջակա բնության հետ, քան զարգացման հետագա առավել բարձր աստիճաններում գտնվելիս: Ոգեպաշտության (անիմիզմ) ժամանակներում նա ընկալել է բնությունը իբրև շնչավոր էակների մի բազմազանություն և իրեն էլ համարել այդ բնության մի մասնիկը: Կենդանական առողջ բնագոյներով օժտված, նա իր զգայարաններով որսացել է բնությունից, երկրի ընդերքից, տիեզերքից եկող ազդակները, որոնց հանդեպ այսօրվա մարդը իսպառ կորցրել է ընկալունակությունը: Շրջապատը նրան թվացել է կենդանի, թրթռուն ու շարժուն, ամեն մի ծառ, ամեն մի թուփ, ծաղիկ ու խոտ թվացել է հոգի ունեցող, որոնք կարող են նաև հաղորդակցվել, խոսել իր հետ իրենց յուրահատուկ շրջյունով ու ձայնով: Նրանց վերագրվել են խորհրդավոր, ծիսական ու բուժական հատկություններ: Սրբազան ծառերի, բույսերի պաշտամունքի արմատները ծնունդ են առնում այդ հնագույն ժամանակներից¹²: Այդ ժամանակներից են գալիս բույսերի բուժիչ հատկութ-

¹² *Ֆրեզեր Զ.Զ.*, Ոսկե ճյուղը, Եր., 1989, էջ 137:

յունների իմացումն ու օգտագործումը: Բույսին վերագրվել է միատիկական զորություն, և մարդն այն օգտագործելով, տիրացել է այդ զորությանը: Ամերիկյան հնդկացիների չերոկե ցեղի մի առասպելի համաձայն, կենդանիները որոշում են պատժել մարդկանց՝ իրենց որսալու համար, և ամեն կենդանու տեսակ մարդկանց մի հիվանդություն է ուղարկում: Բայց ահա բույսերը, լսելով այդ, որոշում են փրկել մարդկանց. ամեն մի բույս որոշում է մի տեսակի հիվանդության դեղ լինել: Եվ այսպես ծագում է բժշկությունը¹³:

Շումերական առասպելում Էնկի աստվածը շրջում է ճահիճներում, նայում խոտերին և մտածում որոշել դրանց ճակատագիրը՝ ինչի համար են ծառայելու դրանք: Դրա համար նա քաղում և ուտում է ութ տեսակի խոտերը, բույսերը և ճանաչում նրանց սրտերը (սիրտը հոգու զետեղարանն է): Իսկ երբ Էնկին հիվանդանում է ութ տեսակ հիվանդությամբ, Նինխուրսագ աստվածը այդ բույսերի ոգիներից ծնունդ է տալիս ութ բուժող աստվածներին¹⁴:

Ըստ աստվածաշնչյան լեգենդի, դրախտային ժամանակներում ամեն ինչ կատարյալ էր, և առաջին մարդիկ պատկերացում չունեին ցավերի ու հիվանդությունների մասին, որոնց ենթակա դարձան կնոջ անհնազանդության, իմացության ծառի պտուղը ճաշակելու պատճառով դրախտից արտաքսվելուց հետո միայն: Եվ այն ժամանակ նրանք աղոթում էին աստծուն, որ նա ցույց տա բույսերի, ծաղիկների, խոտերի, արմատների օգտակար հատկությունները, սովորեցնի բժշկել¹⁵:

Եթե հնում մարդիկ ազատորեն հաղորդակցվում էին շրջակա բնության հետ, նրա մի մասնիկն էին, ապա հետագայում այդ կապը կտրվում է: Եվ հասկանալ բնության լեզուն ի գործու են քչերը: Դա շնորհ է, որ տրվում է ընտրյալներին:

¹³ *Дж. Фр. Бирлайн*, Параллельная мифология, М., 1996, с. 123-124.

¹⁴ *С.Н. Крамер*, История начинается в Шумере, М., 1991, с. 153-154.

¹⁵ *Ղ. Այիշան*, նշվ. աշխ., էջ 45:

Հայկական զանազան ձեռագիր և տպագիր աղբյուրներում վկայություններ են հասել առասպելական համասփյուռ ծաղկի մասին, որն ունի մեկ արմատ և արձակում է տասներկու ոստ, ամեն ոստի վրա՝ մի-մի գույնի ծաղիկ՝ տասներկու գույն: Այն աստվածաշնչյան Կենաց ծառի հայկական տարբերակն է. «Այն քաղաքին հրապարակին մեջ ու այն գետին մեկ կողմէն ու միւս կողմէն կենաց ծառ մը կար, որ տասներկու կերպ պտուղ կը բերէր: Ամէն ամիս իր պտուղը կու տար: Այն ծառին տերեւները հեթանոսներուն բժշկութիւն կ'ըլլային» (Յայտնութիւն Յովհ. 22, 2): Այս հազվագյուտ, հրաշագործ համասփյուռ ծաղկի մասին երգեր են հյուսվել¹⁶: Այն աճել է շատ քիչ վայրերում, որոնց նկարագրությունը տիեզերական կենտրոն է հիշեցնում՝ Բասենում, լեռան կատարին, տաք, բուժիչ ջրերի կողքին, հատուկ նշաններ ունեցող երեք քարերի միջև: Փնտրում են ծաղիկը գիշերը՝ սրբազան խորհրդավորության պայմաններում: Դա պատճառաբանվում է ծաղկի՝ լույս արձակող հատկությամբ: Ծաղիկը հավաքվում է աստղաբաշխական արվեստի հատուկ ցուցումներով՝ տարվա հատուկ ամսին (Յուլ), հատուկ օր ու հատուկ ժամին, երբ լուսինը և տանուտեր համաստեղությունը հեռու կլինեն չար աստղերի բացասական ազդեցություններից, այսինքն բույսը տիեզերական, երկնային միայն դրական լիցքեր կկրի իր մեջ, և հավաքվում է ծաղիկը հատուկ ծիսակարգով՝ չկորցնելու համար իր գորությունը¹⁷: Իսկ այդ գորությունը հրաշագործ է, կախարդական: Ըստ Սրվանձտյանի, այն «կոյր աչքերուն լոյս կու բերե»¹⁸, այսինքն՝ բուժում է կուրությունը, իսկ Մատենադարանի հիշյալ ձեռագրում ասվում է, որ այն խառնում են անուշ յուղի հետ, որը եթե քսեն ականջին՝ կլսեն երկնային ձայներ ու կհասկանան բոլոր լեզուները՝ մարդկանց, թռչունների ու գազանների: Եթե քսեն աչքին, բոլոր արարածներին կտեսնեն աչքի առաջ, եթե քսեն քթին, կզգան երկնային անուշահոտությունները, եթե քսեն լեզ-

¹⁶ *Սրվանձտյան Գ.*, Երկեր, հ. 1, էջ 513:

¹⁷ Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. 8397, էջ 61 ա - 2 բ:

¹⁸ *Գ. Սրվանձտյան*, նույն տեղում:

վին, կխոսեն բոլոր լեզուներով, նաև կենդանիների լեզուներով և ամենայն վարդապետություն կքարոզեն, իսկ եթե մատներին քսեն, կտիրանան ամենայն արհեստի: Հայտնի են շամանական նվիրագործման ծեսերից ինչ-որ մոգական բույսերի քսուկներով բոլոր զգայարանները բացելու, նրանց հոգու տեսողությամբ ու լսողությամբ օժտելու մասին¹⁹, որով մարդը իր երկրային էությունից դուրս գալով, հաղորդվում է աստվածային ուժերին, նրանցից ստանում անտեսանելիին, անհասանելիին հասու լինելու կարողություն, որով բնության ու մարդկության բոլոր գաղտնիքները բացվում են մարդու առջև: Հայկական սույն ավանդության մեջ շնորհը պարգևում է «գորավոր», «հրաշագործ» և «մեծանուն» համասփյուռը՝ տիեզերական խորհուրդներ կրող, երկնային գործությունը մարդուն փոխանցող մոգական ծաղիկը:

Ըստ հայկական հավատալիքների՝ Համբարձման գիշերը ծաղիկներն ու խոտերը լեզու էին առնում և խոսում, ասում, թե որն ինչ ցավի դեղ է²⁰: Բսկ ստանողցիք «համբարձում» են ասում մի դեղին ծաղկի, որը քաղում են վիճակ հանելու համար: Տոնի նախորդ օրը կանայք դաշտում ծաղիկը թելով կապում են, և ով այդ գիշեր կապած ծաղկի վրա պառկի, խոտերը նրան ձայն կտան, թե այսինչ ախտի դեղն էմ²¹: Սրանք ևս շնորհի արժանացման օրինակներ են: Համբարձման գիշերը այն խորհրդավոր պահն է, երբ կեսգիշերին իրար են միանում երկինքն ու երկիրը, տիեզերական ոլորտները, և այդ պահը տիեզերական «հայտնություն» է, որին արժանացողը դառնում է ընտրյալ, և այդ շնորհը հիմնականում բժշկելու, մարդկանց ցավերն ամոքելու ուղղվածություն ունի:

Սրբազան ծառերը ևս ոչ միայն բուժիչ, այլև շնորհատու հատկություն կարող են ունենալ: Հայկական մի հեքիաթում Քաջանց թագավորի «սեհրբագ» երկրում (ընդերկրյա խորհրդավոր գործությունների խորհրդանիշ) «ուխտադրության» (այսինքն՝ սրբազան) ծառ (տիեզերական ծառի փոփոխակ) կա Սպիտակ

¹⁹ *Элиаде М.*, Шаманизм. Киев, 1998, с. 74.

²⁰ *Լալայան Ե.*, Երկեր, հ. 1, Ե. 1983, էջ 290:

²¹ Բիւրակն, Կ-Պոլիս, 1899, էջ 658:

սարի (տիեզերական առանցքի փոփոխակ) վրա, որից «խրատ առնելու» է գնում հեքիաթի հերոսը՝ Շիրին շահը.

«Կէթաս, կայնիս Փրեքաթման կարմնջին.

Խամբարձման էրկուշաքթին

Կտեսնես քո Բահրին» (ՀԺՀ III, 205-207):

Ծառը Շիրին շահին նվիրագործում է՝ նրան հեքիմ դարձնելով, հեքիմության շնորհ տալով: Շիրին շահին ուղարկում է ծաղիկներ ու խոտեր քաղելու, նրան հեքիմական գիտելիքներ տալիս, սովորեցնում այդ բույսերի անուններն ու հատկությունները: Եվ իբրև հեքիմ «գնաց Քաջանց քաղքին մեջ ի՛նչ խիվանդ մարդ իրան ուրթավ (պատահեց), սաղցրեց, քոռ, թոփալ, խուլ, յարալի, գոթեցուկ, հըմենն էլ սաղցրեց» (ՀԺՀ III, 207):

Հնորինները կարող են ծառայել զուտ անձնական նպատակների՝ հարստանալու, իշխանության տիրանալու, սիրած էակին հասնելու և այլն, կարող են նաև հասարակական արժեք դառնալ, ծառայելով մարդկանց: Կենդանիների, հավքերի, բույսերի լեզուն հասկանալու շնորհ ստացողների մի մասը դրա միջոցով հարստության տեր է դառնում (ՀԺՀ V, 219-220, VII, 214, XIII, 188), դառնում իմաստուն (ՀԺՀ IV, 29, VI, 624, III, 336, 347), որոշ դեպքերում էլ դառնում են հայտնի հեքիմ, բուժում մարդկանց (ՀԺՀ X, 80-82): «Զճկուր օր կը դնե Ավջի Ահմադի բերան, աչքեր կը բացվին, ուրիշ ֆամ ու ֆարասաթ գիկա վրեն, հավքերն օր կը ճլվլան՝ զընդոնց լեզուն կը հասկընա, ծաղիկ ու ծաղկունք գելնան լեզու, մեկ կըսե. «Ես իդա հիվընդութենի դեղ իմ», մեկ էլ կըսե. «Ինա հիվընդութենի», հեքիմներ Ավջի Ահմադից կը սորվին յըմեն դեղ ու դարման, ընդըցնե լե հեքիմութեն կը ցրվի աշխարք» (նույն տեղում):

Բազմազան են ոչ միայն շնորհների ստացման եղանակները, այլև դրանք պարգևողները: Կենդանիների, թռչունների լեզուն հասկանալու շնորհ պարգևողը ամենից հաճախ օձն է: Հեքիաթներում օձերն ունեն իրենց ստորերկրյա թագավորությունը, թագավորը, որը մարդկանց հետ խոսում է մարդկային լեզվով: Այդ հեքիաթները հիմնականում պատմում են մի որսորդի մասին,

որն ակամայից օգնում է բացահայտելու օձերի թագավորի հանդեպ կատարված դավաճանությունը: Օձերը ինչպես վրեժխնդիր են իրենց չարիք պատճառողների նկատմամբ, նույնքան էլ երախտագետ՝ լավության դիմաց ու նաև խոստմնապահ: Օձերի թագավորը պատվիրակներ է ուղարկում որսորդի մոտ, որոնք նրան ուղեկցում են թագավորի պալատը և հորդորում հարստության, գանձի փոխարեն ցանկանալ, որ օձերի թագավորը թքի, փչի, ճկույթը կամ լեզուն պտտի որսորդի բերանում, տա լեզվի տակի մատանին (ՀԺՆ V, 219-220, III, 336, IV, 273, VI, 624, VIII, 188): Հայկական հավատալիքներում օձերի թագավորը համարվել է հմայական զորության տեր: Օձը նաև խորհրդանշում է իմաստությունը: Ջորության հիմնական կրողը համարվել են ականատեսի պես փայլող կոտոշները կամ գլխի միջի ուլունքը: Եթե մեկը խելացի է, նախագուշակ, խորագետ, ասում են՝ օձու հլու (ուլունք) կա գլուխը²²: Ձեռք բերել լեզվի տակի մատանին կամ դիպչել նրա լեզվին, նշանակում է ստանալ նրա զորությունը, իմաստությունը, այն փոխանցել իրեն: Որոշ դեպքերում, իբրև երախտագիտություն, նույն շնորհը պարգևում է ձկների թագավորը, որին հերոսը կերակրել էր²³ կամ բռնված մանր ձկներին ետ գցել ծով (ՀԺՆ III, 346-347, 503):

Ձկների ու օձերի թագավորի կողմից շնորհը կարող է փոխանցվել հերոսին նաև ցորենի հատիկի կամ մի պուտ խմորի միջոցով, որը տրվել էր կա՛մ իբրև երախտագիտության նշան օձերի թագավորից (ՀԺՆ IV, 379), կա՛մ իբրև հարկ՝ ձկների կողմից²⁴: Շնորհ պարգևում են ոգիները՝ մարդուն տալով ինչ-որ առարկա, իր, որը նա մշտապես կրում է իր մոտ կամ ուտելիք, որից համտեսում է, դրանով կարծես հաղորդվում ոգուն, նրանից ստանում նրա հմայական հատկանիշները: Ահա այս նվիրված հատիկից կամ խմորից թխված հացով պետք է հաղորդվի թագավորը և ար-

²² Բենսե (Սահակ Մովսիսյան), Հարք // Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 3, Եր., 1972, էջ 54:

²³ Գ. Մրվանձտյան, նշվ. աշխ., էջ 438-439:

²⁴ Ազգագրական հանդես, գ. X, Թիֆլիս, 1903, էջ 307:

Ժանանա շնորհի: Բայց շնորհը, որ աստվածային ծագում ունի, տրվում է արժանավորին: Նույնիսկ մի տարբերակում դա հատուկ շեշտվում է. օձի թագավորի տված հատիկն ուտողը պետք է արժանի լինի դրա գորությանը, մաքրվի մեղքերից, «... սրա ուտողը պըետկ ա պարի մարթ ըլի, վըեր արժանըի լի սըրա գորութիւնին, սըրա ուտողը ըշխարքիս տակին ինչ վըեր հավք ու թոչուն կա, նըհանց լուգուն կըհըսկանա, թե արժանըի ա, թող իրա չարութիւնը բըրախի» (ՀԺՀ VI, 380): Եվ ինչպես սովորաբար լինում է՝ շնորհը հասնում է բարի, անմեղ, զրկված, տառապանքներ կրած մարդուն: Հացթուխի թխած հացն այրվում է, նա, վախեցած թագավորի բարկությունից, մեկ ուրիշն է թխում սովորական ալյուրից, իսկ այրված հացն իբրև ողորմություն՝ տալիս մի թշվառ մուրացկանի կամ նրա որդուն: Քիչ անց այն ուտող աղքատ ծերունին երիտասարդանում է և սկսում հասկանալ թոչունների, ծառերի, ծաղիկների լեզուն և դառնում հայտնի բժիշկ՝ հոչակավոր Լոխմանի:

Հասկանալ թոչունների, կենդանիների, բույսերի լեզուն՝ նշանակում է ոգեղենանալ, վեր բարձրանալ մարդկային էությունից, տեսնել ու լսել հոգու զգայարաններով, ձուլվել բնությանը, կենդանական աշխարհին, դառնալ նրա մի մասը, հասու լինել բնության գաղտնիքներին²⁵: Ըստ հավատալիքների՝ այդպիսի հատկություններ կրում են ոգիները, գերբնական էակները, իսկ մարդը հաղորդակից է լինում այդ ամենին նրանց պարզևած շնորհով, մտքի պայծառացման պահերին ոգու վերածվում կամ ոգուն մարմնավորում իր մեջ: Սիբիրյան շամանը էքստազի մեջ վերածվում է կենդանու կամ թոչունի, այն ոգուն, որով ներշնչված է, խոսում է նրանց լեզվով, նրանց ձայները հանում՝ շրջապատի վրա թողնելով այն տպավորությունը, որ նա իրո՛ք խոսում է այդ կենդանական ոգիների լեզվով:

²⁵ Կենդանիների, թոչունների լեզուն հասկանալով մարդն իմանում է՝ ինչ պետք է լինի, տիրապետում բնության գաղտնիքներին, ինչը մարգարեական շնորհ ստանալու արդյունք է: Տե՛ս՝ *Елиаде М.*, Шаманизм, с. 79.

Շնորհիւ, որը հաճախ տրվում է ինչ-որ մի կախարդական առարկայի միջոցով, երբեմն հաջորդում է նախապէս «մասնագետի» մոտ գիտելիքների ու հմտությունների որոշ պաշար ստանալուն: Բայց այն տրվում է ոչ միայն դիպվածով, այլև կարելի է «նվաճել», ձեռք բերել մեծ ցանկության, համառության, անկոտրում կամքի ցուցաբերման արդյունքում: Ազգագրական աղբյուրները պատկերում են «դավաթ նստելու» դժվարին ընթացքը, որի փորձություններին դիմակայելու դեպքում «դավաթ նստողը» հրմայական հատկություններով է օժտվում, իշխանություն ձեռք բերում զանազան գերբնական արարածների՝ դևերի, սատանաների վրա, որոնք սկսում են ծառայել իրեն, կատարել նրա հանձնարարությունները: Բայց դրան հասնում են եզակի մարդիկ, որոնք մենության մեջ, մութ սենյակում առանց հաց ու ջրի նստում են, 40 օր շարունակ ճրագի լույսի տակ աղոթք կարդում, տեսիլքով անցնում մազե կամրջով, հասնում դրախտ ու դժոխք²⁶: Այս փորձությունները բնորոշ են նվիրագործման ծեսերին, որոնք անցնելով՝ նվիրագործվողը շնորհի է արժանանում: Այդպիսիք են դառնում գրբաց ու կարդացվոր, կախարդություններ անում, համայիւներ պատրաստում: Շնորհի ձեռքբերման նմանատիպ մի նկարագրության հանդիպում ենք «Խարիբն ու դարվեշ» հեքիաթում (ՀՃՀ XIII, թիվ 62, 471-475): Դերվիշներն առհասարակ աչքի են ընկել հմայական հատկություններով, հմուտ եղել կախարդությունների մեջ: Հեքիաթում Խարիբ անունով մշակը սիրահարվում է իր աղայի սիրուն կնոջը, գնում է իրենց քաղաք եկած դերվիշի մոտ, որը «թուղթ կիշքեր, ֆալ կբանար» (ՀՃՀ XIII, 471), խնդրում է, որ դերվիշը թուղթ գրի, որ գրավի տիրուհու սիրտը: Դերվիշը խոստանում է օգնել: Խարիբն իբրև գնում է, բայց գաղտագողի բարձրանում է դերվիշի տան կտուրը և երդիկից տեսնում, որ նա մի գիրք է հանում, կարդում, և նրա առջև բացվում է մի «սուփրա» աշխարհի բոլոր բարիքներով լեցուն: Դերվիշը թուղթը գրելուց առաջ պատմում է Խարիբին իր գլխով անցածը. դեռ պատանի տարիքում մայրը տանում է նրան մի դերվիշի մոտ, որ «թուղթ

²⁶ Փշրանք Շիրակի ամբարներից: Հավաքեց Ա. Միխիթարեանց // Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ա, Մոսկուա, 1901, էջ 233-236:

իշքել» սովորի: Ութ տարի սովորում է: Դրան հաջորդում է փորձությունների ենթարկվելու հերթը, որի ժամանակ նա պետք է մի ամայի դաշտում իր շուրջը մի կլոր շրջան գծի, նստի մեջը, 14 տեսակ «դեղեր» ծխեցնի, 7 գույնի մոմ վառի, «անոթի ու ծարավ» նստի ու կարդա: «Մարդու հառջև չեշիտ-չեշիտ բաներ կիզան կընցնին, բլբլե մարդ պետք չէ վախենա, մարդու բան չըն էնի, կրե-րին մարդու գլխուն ջաղցի քար կկախին, զմարդ կտանեն, մազե կարմրնջից կընցուն, կրե-րին չախու զմարդու աչք կհանին, օր մարդըմ դիմացավ, հըմնուց վերջ կիզա փարիներու մեծ, կնստե վըր աթոռքին, կասե. «Հուզե՛ իտամ»: Դերվիշը ոսկի, արծաթ չի ուզում, այլ կնիք կամ փարու անգին քարը: Փարին տալիս է անգին, լույս տվող քարը, որը շփելիս՝ երկու արաբ են հայտնվում և ուզածն անում: Սակայն նրա քարը գողանում են: Ստիպված նորից գնում է իր ուսուցիչ դերվիշի մոտ: Այդ դերվիշը, որը կարող էր ամեն ինչ թոչել ու վառվող փռի միջից հացեր հանել, համբարձվել երկինք, մի կախարդական գորությամբ գիրք է ունենում, որը միշտ մոտն է պահում: Մի օր, երբ դերվիշը քնած էր, աշակերտը առնում է նրա գիրքն ու փախչում, բայց դերվիշը գետինը ճեղքում, հայտնվում է նրա առջև և ետ վերցնում գիրքը: Չնայած դերվիշի սպառնալիքին, աշակերտը կրկին չի դիմանում գայթակղությանը և այս անգամ 15 թերթ է պոկում, որ դերվիշը չնկատի: Նա նկատում է, բայց որոշում է զիջել այդ 15 թերթը, որով էլ իր աշակերտն է սկսում դերվիշություն անել:

Շնորհի ստացման հանգամանքները հեքիաթներում բազմաթիվ են ու բազմազան, բայց բուժման շնորհի ստացումն առավել ամբողջական ու հարուստ նկարագրություններ է պարունակում: Դրանցում նվիրագործման ծեսն առկա է իր բոլոր փուլերով ու դրսևորման բազմազանությամբ, բոլոր տարբերակներում նվիրագործողը՝ նույն ինքը՝ շնորհը պարգևողը, օձն է՝ բժշկության աներկբայելի ու հավերժական խորհրդանիշը: Սակայն դա արդեն առանձին դիտարկման նյութ է²⁷:

²⁷ Այդ մասին տե՛ս՝ Եվա Զաքարյան, Շնորհի ի վերուստ. բուժման շնորհը հայկական հեքիաթներում // Շնորհի ի վերուստ. առասպել, ծես և պատմություն (Հոդ-

Եւա Զաքարյան – Народные верования о получении божьих даров (по материалам армянских сказок). – По народным представлениям на земле все происходит по божьей воле, творческие навыки, знания, деловые качества идут от бога в качестве дара, награды, которые получает человек при общении с высшими силами, по их желанию и выбору, в видениях или снах. На ряду с этнографическими данными о получении даров существует множество подобных историй в народных сказках, которые содержат слои старинных верований. Дар представляется в результате молитв, добродетельства, подаяния милостыни. Дар присуждается достойным, добрым, невинным, обездоленным, измученным людям. И в результате дара герой сказки приобретает необычные способности, понимание языка животных и птиц, магические, сверхъестественные силы, становится народным певцом, черно книжником, знахарем, приобретает навыки врачевания.

Yeva Zakaryan – People's notion on a gift of God (on the material of Armenian folktales). – According to people's imagination, everything on earth is granted by God. People's creative thinking, skills, abilities knowledge, business skills are granted by God as a gift or reward, which a man gets in the result of special communication with God, in accordance with his choice and desire through a vision or a dream. There are a lot of evidences of getting the gift of God in ethnographic data as well as in folktales, which contain ancient layers of beliefs. The gift of God is acquired through a prayer, charity or mercy. It is granted to one who is honorable, kind, innocent, deprived and suffering. Due to these gifts the hero of a folktale gets unusual abilities, such as a skill to understand animals' and birds' language, magic power, becomes an ashugh and a healer.

Բանալի բառեր: ժողովրդական, շնորհ, Աստծո նվեր, ազգագրական, աշուղ, բուժող, հեթիաթի հերոս:

Ключевые слова: народные, получени, божьих дар, этнографический, ашуг, целитель, герой сказки.

Key words: people's notion, gift, gift of God, ethnographic, ashugh, healer, hero of the tale.

վաճման ժողովածու նվիրված Մարգիս Հարությունյանի 80-ամյակին), Եր., 2008, էջ 63-86:

**«ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ԵՎ «ՇԱՀՆԱՄԵ»
(Էպոսների համեմատական վերլուծություն)**

ՀԱՍՄԻԿ ՎԱՆՅԱՆ
(*ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ*)

«Սասնա ծռեր» էպոսը պատմական ու առասպելաբանական, հայկական ու միջազգային բազմաթիվ սյուժեներով ու մոտիվներով կազմված մեծ վիպասանություն է: Այն, ինչպես հայտնի է, մեզ է հասել ասացողների միջոցով բերանացի պատմվելով՝ հանդես գալով Մշո, Մոկաց, Սասնա տիպաբանական խմբերով, տարատեսակ պատումներով՝ ի տարբերություն այլ ազգերի վիպական ավանդությունների, մասնավորապես իրանական «Շահ-նամե»-ի («Շահ-նամե»-ի), որը, իբրև գեղարվեստական երկ, ամբողջական կերպարանք է առել պարսից խոշոր բանաստեղծ Ֆիրդուսու (10-րդ դար) հմուտ գրչի տակ:

«Շահնամե»-ն վաթսուն հազար բեյթից (երկտող) բաղկացած սովոր դյուցազներգություն է, որը բովանդակության տեսակետից կարելի է բաժանել երեք մասի՝ դիցաբանական, դյուցազնական և պատմական: Այն ընդգրկում է աշխարհի ծագումից մինչև Իրանում արաբական տիրապետության շրջանը (7-րդ դարի առաջին կես), երբ Պարսկաստանը վերջնականապես նվաճվեց արաբների կողմից: Կառուցվածքային դիտանկյունից վիպերգությունում առանձնացված է հիսուն թագավորությունների պատմություն, որոնցից յուրաքանչյուրը, որպես կանոն, հագեցած է հեքիաթների, զրույցների, ավանդությունների տարրերով¹:

Ինչպես հայտնի է, մեզանում փոխառության տեսության ներկայացուցիչ Բագրատ Խալաթյանցը «Իրանի հերոսները հայ ժողովրդի մեջ» (1901) ուսումնասիրությամբ փորձել է ցույց տալ, թե «Սասնա ծռեր» էպոսի մի շարք դրվագներ փոխառություն են

¹ **Է. Աղայան**, Դրվագներ Արևելքի գրականության պատմության, Եր., 1971, էջ 57-77:

պարսից էպոսից, որը և իրավացիորեն հերքվել է: Ըստ այդմ՝ երկու ժողովուրդների էպոսների միջև համեմատություն անցկացնելիս կհենվենք առասպելներում ու դյուցազներգություններում առկա այն ընդհանուր վիպական գծերի վրա, որոնք անհնար է անտեսել ոչ միայն տարածությամբ մոտ և մշակութային հաղորդակցության մեջ գտնվող, այլև առհասարակ տարբեր ազգերի վիպերգությունների մեջ²:

Դիտարկենք այն ընդհանրությունները, որոնք առկա են երկու ժողովուրդների բանահյուսական երկերում՝ հայկական «Սասնա ծռեր»-ում և իրանական «Շահնամե»-ում, որի դյուցազնական մասն են կազմում «Զալ և Ռուդաբե», «Ռոստամ և Սոհրաբ», «Միավուշ» լայնակտավ պոեմները:

Ընդհանրություններից առաջինը կարելի է մատնանշել այն, որ դյուցազունները **արագ աճում, գորանում** և դեռ մանուկ հասակում ցույց են տալիս իրենց գերմարդկային ուժը: Այդպես արագ են մեծանում մեր Սասնա ծռերը՝ Սանասարն ու Բադդասարը, Սասունցի Դավիթը, թշնամի Սյրա Մելիքը և պարսից դյուցազունները, հատկապես Դեստան-Զալի որդին՝ Սոհրաբը: Հիշենք մեր երեքամյա Դավթին ու նրա ութ կամ տասնամյա ընկերներին, երբ վեց խաղալիս կռվում են, Դավիթը ում դիպչում է, նրա կա՛մ ձեռքն է կոտրվում, կա՛մ ոտքը:

...Ճանի վերա կռվըտան.

Վիր թիվ էտու ձեռ, թիվքիր թռան.

Վիր վուտքիր իտու, վուտքիր կուտրան.

Իրիք տղի թիվ թռավ.

Իրիք տղի վուտ կուտրավ³...

Այսպես կարելի է շարունակել «ուժի ձեռքից կրակն ընկած» մանուկ դյուցազնի անմեղ արկածների թվարկումը, որոնց հետևվանքն այնքան էլ անմեղ չէ:

² Մ. Աբեղյան, Երկեր, հ. Ա, Եր., 1966, էջ 400-424:

³ Սասնա ծռեր, հ. Ա, Եր., 1936, էջ 167, խմբագրեց պրոֆ., դր. Մանուկ Աբեղյանը, աշխատակցությամբ Կարապետ Մ. Օհանջանյանի (այս հատորից բերվող մյուս մեջբերումների հղումները կտրվեն տեղում՝ փակագծի մեջ, կնշվի միայն էջը):

Արագ աճն ու զորացումը հատուկ է և իրանական մանուկ
դյուցազնին՝ Սոհրաբին.

Մեկ ամսական հասակում նա կարծես լինե՞ր տարեկան,
Փղի նման վիթխարի էր, Ռոստամ-Չալն էր իսկական:
Երբ լրացավ երեք տարին, նիզակն առավ, որ մրցի,
Հինգ տարեկան հասակում նա նմանվում էր առյուծի:
Երբ լրացավ տասը տարին, Սեմենգանում չկար մարդ,
Որ նրա հետ ասպարեզում գնար մղեր ձիամարտ⁴:

Շատ խմելն ու շատակերությունը ևս դյուցազուններին բնո-
րոշ գիծ է: Այդպիսին են մեր բոլոր ծոերը, նրանցից գլխավորը՝
Դավիթը, որն իր շատակերությունը մի առիթով փորձում է բա-
ցատրել այսպես. «Հալբաթ գութան քաշողը շատ հաց կուտե...»:
Նա դեռ մանուկ հասակում առել-տարել էր ցասման ժամի հարի-
սայով լի պղինձը: Այդպես շատակեր է նաև պատանի Ռոստամը.

Ռոստամ-Չալին խնամում էր տասը ծառա օրնիբուն,
Սակայն քաղցած էր մնում նա, հանց առյուծի ժիր կորյուն:
Նա օրական հինգ-վեց մորթած կենդանի էր ճաշակում,
Բայց տակավին չէր կշտանում, ախորժակը չէր փակվում

(էջ 183):

Տարածված մյուս մոտիվը **ջրից ուժ ստանալը, աճելն ու զո-
րանալն** է: Մեր էպոսում ջուրն անփոխարինելի դեր ունի հատ-
կապես այն պատճառով, որ մեր դյուցազունները նաև ջրեղեն են,
ծովային ծագում ունեն: «Ջրային տարերքի զորությունը,- «Փորձ
մեր էպոսի դիցաբանության մասին» ուսումնասիրության մեջ
գրել է Իսահակյանը,- այնքան գնահատված է եղել ժողովուրդնե-
րի մեջ, որ էպոսների բոլոր դյուցազները, աղբյուրների ջուրը
խմելով կամ ավազաններում լողանալով, մեծանում են, աճում,
հզորանում»⁵: Այսպես՝ Դավիթը ուժ ու զորություն է ստանում՝
Մսրա Մելիքի դեմ կռիվ գնալուց առաջ Կաթնաղբյուրի ջրի մեջ
լողանալով: «Շահնամե»-ում էլ Ռոստամը, իր որդի Սոհրաբից
պարտվելով, հրաշալի աղբյուրից ջուր է խմում, որ վերստանա
իր առաջվա ուժը:

⁴ *Ֆիրդուսի, Շահնամե*, Եր., 1975, էջ 212 («Շահնամե»-ից բերվող մյուս մեջբե-
րումների հղումները կտրվեն տեղում՝ փակագծի մեջ, կնշվի միայն էջը):

⁵ *Ավ. Բասիակյան*, ԵԺ 6 հատորով, հ. 5, Եր., 1977, էջ 159:

Ռոստամ-Ջալը, երբ ազատվեց սուր ճանկերից Սոհրաբի,
...Դանդաղ գնաց, ապա նստեց Ջենգեմ ջրի եզերքին,
Որ գեթ մի պահ հոգնությունից հանգստանա իր հոգին:
Կուշտ ջուր խմեց, ապա մաքրեց դեմքն ու լանջը իր փոշոտ,
Մաղթանք արեց նա Աստըծուն խոսքերով մեղմ ու երկչոտ:
Աստված լսեց նրա ձայնը և ուժ տվեց Ռոստամին,
Այնպես արեց, որ Սոհրաբի դեմ հաղթանակ նա տանի

(էջ 322-323):

Վիպերգերում դյուցազնական պատվախնդրության ու մեծա-
հոգության պահանջով պետք է **իրար դեմ ելնեն հավասար ուժե-
րով**, հսկան հսկայի հետ պիտի մենամարտի: Մեր էպոսում Հա-
լևորը հանդիմանում է Դավթին բանակի մարդկանց մեջ արյու-
նահեղ կոտորած անելու համար՝ ասելով, որ նրա թշնամին Մըս-
րա Մելիքն է, որ Դավթին վայել է նրա դեմ կռվելը, ոչ թե այդ «աղ-
քատ ու խեղճ» մարդկանց.

-Եդ շիվարներու մեղաց տակ մի՛ մըտնը.

Վո՛ր կա՝ թագա փեսայ ի, վո՛ր կա՝ մորեն մեկ ի.

Վո՛ր կա՝ զինք մընակ ի, նա տղա ունի, նա աղջիկ,

Մե կնիկ կա՝ թըղի տուն քաղցած, իկի.

Բիրաղի գոռով, տփելով ի բիրի Մսրամելիք:

...Կի՛նա խատ էնո՛ր կռիվ, ե՛ն ի քու դուշման (199):

Ռոստամն էլ հանդիմանում է Սոհրաբին, որը հարձակվել էր
հասարակ զինվորների վրա ու կոտորում էր.

...Տեսավ գորքի մեջ է մտել սեզ Սոհրաբը կռվասեր:

... -Արյունախո՛ւմ, ո՛վ անգութ թուրք,- ասաց քաջը վշտա-
կեզ,-

Այս նահատակ զինվորներից ո՞վ է կռվի կանչել քեզ:

Ինչո՞ւ ինձ հետ չկռվեցիր, երբ կռչեցիր քեզ քաջայր,

Գաղտնի մտար փարախի մեջ, ինչպես ազահ, սոված գայլ

(էջ 304-305):

Ընդհանրությամբ հանդերձ, ինչպես տեսնում ենք, կա նրբե-
րանգային տարբերություն. մեր էպոսում առկա է հերոսի միամը-
տությունը և դրան համապատասխան՝ ալևորի խորհուրդ-խրա-

տը, իսկ իրանական էպոսում՝ հերոսի դիտավորությունը և համապատասխանաբար՝ սուր հանդիմանանքը:

Վերոնշյալ պահանջի թելադրանքով Իրանի և Թուրանի (Խոսրով շահի և Աֆրասիաբի) միջև պատերազմներից մեկի ժամանակ թուրանցի քաջերից մեկը՝ Փիրանը, առաջարկում է ճակատամարտի ելքը վճռել երկու կողմերի ըմբիշ-դյուցազունների մենամարտով, որի շնորհիվ հազարավոր մարդկանց կյանք է փրկվում:

Դյուցազնական կեցվածքի ու կերպարի անբաժանելի տարրն է նրա ձին, **հրեղեն ձին**, ինչպես մեր Քուռկիկ-Ջալալին և Ռոստամ-Ջալի Ռախշ (Մև) ձին: Հետաքրքրական է, որ ոչ միայն դյուցազնից, այլև նրա ձիուց թշնամին ձգտում է ազնվացեղ սերունդ ունենալ, Մեծ Միերին Մըսր հասցրած Քուռկիկ-Ջալալուց՝ մըսրցիք, իսկ Ռախշ ձիուց՝ սեմենգանցիք՝ թուրանցիները: Բայց, ի պատիվ Քուռկիկ-Ջալալու, պիտի ասել, որ նա իսկապես «իր հող թալեց Միերի գլուխ», այսինքն՝ դարձավ տուն՝ չենթարկվելով թշնամուն՝ ի տարբերություն իր տիրոջ և պարսից Ռախշ ձիու:

Տարբեր ազգերին բնորոշ առանցքային մոտիվներից է **հոր և որդու կռիվը**, որը տարբեր լուծումներ կարող է ունենալ. կա՛մ երկուսն էլ ողջ են մնում, կա՛մ որդին է սպանում հորը, կա՛մ էլ հայրն է սպանում որդուն: Պարսից էպոսում Թուրանի շահի դուստր Թեհմինեն, որին Ռոստամ-Ջալն ամուսնության երկրորդ օրը թողնում է, մեծացնում է որդուն՝ Սոհրաբին, և ուղարկում հորը որոնելու: Իրանն ու Թուրանը թշնամական երկրներ են, և Իրանի հզոր Ռոստամը, կենակցելով Թուրանի արքայադուստր Թեհմինեի հետ, հանցանք է գործում ու պատժվում դրա համար: Վիպական նախնական պատկերացմամբ՝ հոր և որդու կռիվ գլխավոր պատճառն այն էր, որ որդին մեծանալով մոր պատիվն է պաշտպանում՝ հորից վրեժ լուծելով: Սակայն ժամանակի ընթացքում վիպական այդ գիծը համահարթվել է: Այսպես՝ պարսկական էպոսում Թեհմինեն մի գիշերվա մեջ դառնում է Ռոստամի օրինավոր կինը, իսկ մեր էպոսում Միերը Դավթի օրինավոր որդին է, նույնիսկ մի քանի պատումներում հոր ներկայությամբ է

ծնվում, այլ պատումներում՝ կնոջ մոտից Դավթի հեռանալուց հետո, կամ մայրական պապի տանն է ծնվում:

Հեռացող Դավիթը Խանդութին տալիս է, ինչպես Ռոստամը Թեհմինեին, մի ոսկի բագբանդ (ապարանջան), որ որդու թնին կապի: Ծնվում ու մեծանում է Մհերը, նրա հայրը չկա. նրան ապօրինածին են անվանում: Մհերը, ինչպես և Սոհրաբը ելնում են որոնելու իրենց հայրերին: Մհերը պատահում է հորը, որը մի մանկամարդ աղջիկ է բերում և հանդիմանում է նրան այդ աղջկա համար: Սասնա դյուցազնը վախենում է իր որդուց, ինչպես պարսից քաջը՝ իր զավակից: Մհերը հարձակվում է հոր վրա և ուզում է սպանել, այդ ժամանակ Դավիթն ասում է, որ եթե իրեն սպանի, իր կտրիճի ձեռքից ինչպես պիտի պրծնի: Դավիթը թնի ապարանջանից ճանաչում է որդուն, ինչպես Ռոստամը՝ Սոհրաբին: Բայց, ի տարբերություն մեր էպոսի, որտեղ հայրը միայն անիծում է որդուն, թե՛ անմահ լինես, անժառանգ, որը հիշեցնում է մեր հին Վիպասանքից եկող Արտաշես արքայի անեծքն իր որդի Արտավազդին, պարսից էպոսում հայրը միայն մահացու վերք տալուց հետո է ճանաչում որդուն՝ ձեռքին կապած քարը տեսնելով.

Ռոստամ-Զալը երբ որ տեսավ նվեր քարը թանկագին,

Պատառ-պատառ արեց բոլոր հագուստները իր հագի:

Նա ողբալով աղաղակեց. «Սպանեցի՛ քեզ, որդի՛,

Դու փառապա՛նծ, քա ջ գորապետ, դու պարծանքը քո գոր

քի... (էջ 328):

Մյուս ընդհանրությունն այն է, որ ինչպես նորածին Ռոստամ-Զալի, այնպես էլ մեր Փոքր Մհերի **ձեռքի մեջ արյուն** կար, որը դյուցազնական ուժի ու արյուն հեղելու նշան էր: Ռոստամի ծնունդը «Ֆարսի բլբուլի» (Ֆիրդուսի) գրչով այսպես է ներկայացվում.

Այդպես, դժվար աշխարհ եկավ առյուծի ժիր մի կորյուն,

Պարթևական հասակ ուներ իր ծագումով գտարյուն:

Խոպոպները հրաշեկ էր, դեմքը՝ վարդի պես կարմիր,

Շողշողում էր արևի պես, առյուծ էր նա փոքր ու ժիր:

Երկու ձեռքի մեջ արյուն կար, երբ որ եկավ լուսաշխարհ,

Այդպիսի բան դեռ չէր եղել հողաշխարհում դարեդար...

(էջ 178-179):

Իսկ երբ ծնվում է մեր Մեերը, Դավթին աչքալույս բերողներն ասում են. «Տղեն լավ տղա է, բայց իր մեկ ձեռքը սաղաթ է, խփուկ է. մարդ չի կրնա բանա գիր ձեռք»: Եկավ Դավթին ու նստավ ու զմանուկի ձեռք մածեց ու բացեց. տեսավ, որ զուլանք մի արուն իր ձեռի մեջն էր: Ասաց. «Հա՛յ, հա՛յ, զաշխարհք արեր է կաթ մի արուն, դրեր է իր ձեռու մեջ: Թե որ ըղի մնաց, ըղուր մոտեն գար-մանալի բաներ կ'եղնի: Էդա,- գուշակում է Դավթիքը,- ինձնե շատ արունք պիտի էնա»:

Այս երկու հերոսների մյուս նմանությունն այն է, որ **հողը չի դիմանում նրանց ծանրությանը**, գետինը չի պահում, նրանց ոտքերը խրվում են հողի մեջ: Այս մոտիվը տարածված է նաև այլ ազգերի դյուցազներգություններում (այդպիսին է, օրինակ, ռուսաց Սվյատագորը):

Նման է նաև հայոց և պարսից **դյուցազունների սիրահարության դրվագը**, երբ դեռ չտեսած, միայն արված գովքով դյուցազնը սիրահարվում է գովերգվող գեղեցկուհուն: Հիշենք մեր Դավթին, որը սիրահարվում է Խանդութին՝ հափշտակվելով աշուղների այս գովքով.

«Կ'իրիշկիմ Խանդութ խաթուն, ձեռ-ոտ կալամով քաշած ի,
Ա՛խ, հալա տգո՛ կալամով քաշած ի.

Կ'իրիշկիմ՝ ետու եղնգքիր ռնդայով տաշած ի,
Ա՛խ, հալա ռնդայով տաշած ի.

Կ'իրիշկիմ՝ բաժն ու բալեն նման կը տեր Բրջա քաղաք,
Ա՛խ, հալա Բրջա քաղաք:

Կ'իրիշկիմ՝ աչքիր չինու կթխայ եր,
Խանդութ խաթնի աչքիր չինու կթխայ եր...

...Կ'իրիշկիմ՝ իրիսը կարմրութին նռան գինի եր,
Ա՛խ հալա նռան գինի եր...» (205):

Նույն կերպ Դեստան-Ձալը Մեհրաբ շահի ծառայողի արած գովքով սիրահարվում է Մեհրաբի դուստր Ռուդաբեին.

Մինչ լուսաբաց շրջում էր նա, ո՛չ քուն ուներ, ո՛չ հանգիստ,
Ռուդաբեին չէր տեսել դեռ, բայց տանջվում էր դառնավիշտ

(էջ 53):

Արտաքին նմանություն է առկա մեր Ծովինարի և Մեհրաբի դուստր Ռուդաբեի գեղեցկության պատկերման համար **արևն ու լուսինը որպես համեմատության եզր** ընտրելու գեղարվեստական միջոցների միջև:

Ծովինարը արևուն կասեր.

-Դու դուրս մ'էլներ, ես դուրս էլնեմ.

Աղջիկ էնպե՛ս խորոտ, էնպե՛ս խորոտ,

Որ տասնուչորս ավուր լուսնին կը նմաներ,

Որ յոթ սարի ետևեն կ'էլներ:

Ահա՛ և Մեհրաբի դուստրը.

Մեհրաբ շահի ապարանքում կա մի նոճի սիրավետ,

Գեղեցկությամբ արևն է լոկ մրցում նրա դստեր հետ:

Կարմրավարդ այտեր ունի, կակաչի պես շուրթեր ալ,

Նռան նման գեղեցիկ կուրծք, եղնիկի պես թեթև քայլ:

Շրթունքները կարծես լինեն նրբաթերթիկ մանուշակ,

Լուսինն անգամ նրա առջև համարվում է թույլ ճրագ (էջ 53):

Կանանց գեղեցկության հետ երկու էպոսներում էլ մրցում է նրանց խիզախությունը, խրոխտ ոգին: Իր խորոտությամբ ու քաջությամբ Դավթին համապատասխանող Խանդութին տրված ժողովրդի այն հանճարեղ բանաձևումը, թե՛ «Առյուծն առյուծ է, էղնի էգ, թե որձ», այլ ձևակերպումով տեսնում ենք «Շահնամե»-ում: Ռուդաբեին ընտրած դյուցագուն Դեստան-Ջալը՝

...Համոզվեց, որ գտել է մի կին իրեն հավասար,

Կյանքում չկա մի էգ առյուծ, որ արուին չը որսա (էջ 83):

Տղամարդու գենը - զրահի սովոր են մեր դյուցագուհիներ Դեղձուն - Ծամը, Խանդութը, Գոհարը, նման մի կերպար է թուրանական զորքն առաջնորդող Սոհրաբի դեմ մարտնչող իրանուհի Գորդաֆերիդը՝ Գոսթեհեմի դուստրը:

Հայոց և պարսից էպոսների միջև կան **ընդհանրություններ կանանց ոչ միայն դրական, այլև բացասական հատկանիշների** իմաստով: Հետաքրքիր է, որ այդ բացասական գծերով (ցանկասիրություն, նենգություն) օժտված կանայք երկու դեպքում էլ օտար զարմից են: Խոսքը Ձենով Հովանի կնոջ՝ Սառյեի և Քավուս շահի

տիկնանց տիկին Սուդաբեի մասին է: Ինչպես Սառյեն էր տենչում Սասունցի Դավթին և չկարողանալով հասնել իր նպատակին՝ Հովանին փորձում է համոզել, որ նրա եղբորորդի Դավիթը անարգել է իր պատիվը, այնպես էլ Սուդաբեն էր ձգտում շահին հավատացնել, թե Սիավուշը փորձել է իրեն բռնի տիրանալ:

Աստծուն օրհնություն տալը, աղոթք հղելը, նրանից զորություն խնդրելը տարածված վիպական գծեր են որ միայն այս երկու, այլև տարբեր ազգերի վիպերգություններում: Նմանատիպ մոտիվ է **երազի միջոցով ապագան, վտանգը կանխատեսելը, աստղերով ապագան գուշակելը**: Հիշենք Ծովինարի կամ Ձենով Հովանի երազը, Սանասարի՝ Բաղդասարին օգնության հասնելը, երբ տեսնում է, որ նրա աստղը նվաղել է, ինչպես նաև Ձենով Հովանի կողմից Դավթի աստղի խավարումը նշմարելը: Իսկ պարսկական գրեթե բոլոր դյուցազունների ապագան մոբեթները աստղերի միջոցով են կանխորոշում:

«Շահնամե»-ից մեջբերենք աստղագուշակության մի դրվագ.

Ամեն մի մոգ ընտրեց հարմար իր հեշտացույց լուսատուն,

Մեկը լուսին, մեկը արև, երրորդը մի աստղաբույյ:

Այսպես երեք օր ու գիշեր աստղագուշակ ամեն մոգ,

Ցանկանում էր ինքը գտնել Զալի բախտը նախօրոք:

Ամեն մոբեթ ուներ հինդու աստղատախտակ իր ձեռքին:

Այն օգնում էր հասկանալու գաղտնիքները երկնքի (Էջ 149):

Աստղին կարող է փոխարինել մատանի կամ այլ նշան. պարսից էպոսում այդպիսի նշան է Սիմուրդ հավքի փետուրը՝ տրված Դեստան - Զալին:

- Եթե մեկը քեզ չարություն ու նեղություն պատճառի,

Իմ փետուրը մոտեցրու՝ թեժ կրակին ու վառի՝ ր...

Իսկույն քեզ մոտ ես կթռչեմ Էլբորդ սարից ձյունաթափ,

Զէ՞ որ ես եմ մեծացրել, պահպանել քեզ թնիս տակ...

Զալին այսպես է օգնության խոսք տալիս Սիմուրդ հավքը:

Անդրադառնանք նաև **Մհերի** անվան ստուգաբանությանն ու **իրանական Միթրա աստվածության հետ նրա ունեցած աղերսին**: Մհերի՝ արևի աստծո անունը համանման ձևերով հանդիպում է

թե՛ Հին Հնդկաստանում, թե՛ Հին Իրանում, թե՛ Հայաստանում՝ Մհեր, Մեհր ձևով, որ պահպանվել է հայերեն մեհյան բառի մեջ, Միհր ամսանվան մեջ՝ մեհեկան ձևով:

«Մհերի թեոգոնիկ ծագման արմատները,- գրել է Ավ. Իսահակյանը,- թաղված են վեդայական, իրանական-հայկական միֆոլոգիայի մեջ: ... Մհերը հայկական հեթանոսական Միհր աստծու անվան փոխված ձևն է: Վեդայական և զրադաշտական Միթրա աստվածը հայերի մեջ կոչվում էր Միհր: Նա Ահուրամազդայի որդին էր, հոր զինակիցն ընդդեմ չար, խավար, կործանիչ Ահրիմանի (Անգրա-Մայնի): Նա արև-աստվածն էր»⁶:

«Սասնա ծռեր» էպոսում Մհերի կերպարը բաժանված է երկու մասի. առաջինը Մեծ Մհերի՝ պապի կերպարն է, որն արտացոլում է ծագող արևի հատկանիշները, իսկ երկրորդը՝ Փոքր Մհերի՝ թռռան կերպարն է, որն ամփոփում է հոգնած, մայր մտնող արևի հատկանիշները: Շատ պատումներում Մեծ ու Փոքր Մհերները համընկնում են: Պապը որսորդ է, սպանել է սև ցուլ (խավարի խորհրդանիշ), բայց Յլասպան կոչվելու փոխարեն կոչվել է Առյուծաձև, «քանի որ նրա կերպարի մեջ են ներհյուսվել Արևելքում Նեմեական առյուծին հաղթող Միթրայի, Հերակլի, թերևս նաև հին արևելյան Գիլգամեշի կերպարի հատկանիշները»⁷:

Ինչու՞ է Մեծ Մհերը կոչվել Առյուծաձև: Ըստ ժողովրդական պարզ պատկերացման՝ կոչվել է Առյուծաձև, որովհետև առյուծին երկու մասի է բաժանել՝ «ձևել»: Սակայն տարբեր ազգերի մեջ ընդունված է Արևի աստված Միհրին պատկերել առյուծի գլխով և մարդու մարմնով: Այդպես է պատկերվել նաև ուրարտական Խալդ աստվածը, որը կրակի, արևի խորհրդանիշն էր: Այսինքն՝ թե՛ ուրարտական Խալդ, թե՛ հայկական Միհր և թե՛ պարսկական Միթրա աստվածները պատկերվել են առյուծի գլխով ու մարդու մարմնով և կերպավորել են արևը:

Դիտարկելով հայոց և պարսից էպոսների միջև մի շարք ընդհանուր գծեր՝ իբրև ամփոփում նշենք, որ ամեն մի ազգի դու-

⁶ Ավ. Իսահակյան, ԵԺ. հ.5, Եր., 1977, էջ 162:

⁷ Հ. Օրբելի, Հայկական հեթանոսական էպոսը, Եր., 1956, էջ 116:

ցազներգությունն յուրօրինակ է՝ ազգային հոգեկերտվածքին ու կենսակերպին բնորոշ առանձնահատկություններով:

Асмик Ванян – "Сасна црер" и "Шахнаме" (Сравнительный анализ эпосов). – Существуют общие эпические черты, которые невозможно игнорировать не только в эпосах народов, расположенных рядом и имеющих культурные контакты, но и в эпосах различных наций.

В докладе рассматривался ряд общих качеств, наблюдаемых между двумя эпосами соседних народов: армянским эпосом "Сасна црер" и персидским эпосом "Шахнаме" (наличие крови в руке новорожденного героя, его быстрый рост и развитие, употребление большого количества пищи и воды, получение силы от воды, дуэль с равными силами, борьба между отцом и сыном, процесс влюбленности, сочетание красоты и силы женских персонажей, предвидение будущего при помощи звезд и снов и т. д.).

Asmik Vanyan – "Sasna Tsrer" and "Shahname" (comparative analysis of epos). – There are epic general lines, which are not only impossible to ignore nations, who are in near distance of cultural communication, as well in lähiaika songs of commonly different nations.

In our report several commonalities - (the presence of blood in new born child-hero, the quick growing up and strengthening of heroes, overeating and too much drinking, gaining power from water, fighting with equal force, fight between father and son, the process of love, comparison of power and beauty in women images, the predicting of future by the dreams and star) - of Armenian "Sasna Tsrer" and Persian "Shahname" are observed in two epos of neighboring countries.

Բանալի բաներ: Էպոս, համեմատական վերլուծություն, էպիկական գծեր, ազգային, դրուցագուն, ջրից ուժ ստանալը, հավասար ուժերով մենամարտը:

Ключевые слова: Эпос, сравнительный анализ, эпические черты, национальный, герой, получение силы от воды, дуэль с равными силами.

Key words: Epos, comparative analysis, epic lines, national, hero, gaining power from water, fighting with equal force.

**ԽԱՆԴՈՒԹԻ ԿԵՐՊԱՐԻ
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ
«ՍԱՄՆԱ ԾՌԵՐԻ» ՊԱՏՈՒՄՆԵՐԻ**

ԱԼԻՆԱ ՂԱՐԻԲՅԱՆ

(Գավառի պետական համալսարան)

Ինչպես <Սասնա ծռեր> էպոսի յուրաքանչյուր կերպարի, այնպես էլ Խանդութի առումով պատումների քննությունը հանգեցնում է մի շարք իրողությունների բացահայտման, որոնք հնարավորություն են տալիս կատարելու եզրահանգումներ՝ էպոսում առկա հիմնական և ոչ հիմնական մոտիվների կապի, կին և տղամարդ հերոսների փոխհարաբերությունների ճիշտ ընկալման և գնահատման, կանանց կերպարների տիպաբանական քննությունների վերաբերյալ:

Հիմնականում այս տիպի համեմատական քննությունների ենթարկվել են գլխավոր հերոսները /Մ. Աբեղյան, Հ. Օրբելի, Ս. Հարությունյան, Ա. Սահակյան և այլն/, սակայն պարզվում է, որ էպոսի կին հերոսուհիները նույնպես շատ հետաքրքիր առանձնահատկություններ են հանդես բերում էպոսի տարբեր տիպաբանական խմբերում: Դա հնարավորություն է տալիս ճիշտ հասկանալու և գնահատելու կանանց դերակատարումը գլխավոր հերոսների գործողությունների մեջ, կանայք հանդես են գալիս որպես կարևոր, սակայն նրանց լրացնող կերպարներ, նաև, իհարկե, որպես ինքնուրույն հզոր կերպարներ, որոնք զուգահեռներ ունեն համաշխարհային առասպելաբանության մեջ գործող կին դիցուհիների հետ: Ի դեպ, այդ հանգամանքը շատ առումներով օգնում է ավելի ճիշտ գնահատելու և նոր գծեր հայտնաբերելու գլխավոր հերոսների մեջ: Այսինքն՝ շատ դեպքերում կանայք հանդիսանում են այն բանալիները, որոնք հնարավորություն են տալիս էպոսի կերպարներն հասկանալու և գնահատելու ըստ էության:

Մենք նույնպես փորձել ենք մեր աշխատանքներում կանանց կերպարների քննությանը նման մոտեցում հանդես բերել, քննել

նրանց դերակատարումները գլխավոր հերոսների հետ ունեցած փոխհարաբերություններում՝ հիմքում անպայման ունենալով էպոսի տիպաբանական խմբերում նրանց շուրջ առկա մոտիվների հաճախությունն ու կայունությունը, ինչպես օրինակ՝ Դեղձունի կերպարը¹, Իսմիլի², Չմշկիկ Սուլթանի³ և Սառյեի⁴ կերպարները: Այս շարքում բացառություն չէ նաև Խանդութի կերպարը:

Խանդութը էպոսում կնոջ ամենաամբողջական կերպարն է՝ շնորհիվ իր շուրջ հյուսված մոտիվների խտության և կայունության, որոնք ընդհանուր են էպոսի երեք տիպաբանական խմբերում:

Պատումների ուսումնասիրությունները թույլ են տալիս մոտիվները իրենց կայունության և հաճախականության դրսևորումներով բաժանել երեք խմբի:

Առաջին խմբում մոտիվների այն շղթան է, որը առկա է երեք տիպաբանական խմբերում՝ իհարկե ոչ կանոնավոր հաճախականությամբ: Մոտիվների այս շղթան կարելի է հետևյալ կերպ ներկայացնել.

- Խանդութը աշուղներ է ուղարկում Դավթի մոտ, որ գովեն իր գեղեցկությունը:

- Աշուղները հանդիպում են սասունցիներին /Ձենով Հովան, Քեռի Թորոս, Վերգո/:

- Սասունցիները ծեծում են աշուղներին, որոնք փախչում են:

- Աշուղները հանդիպում են Դավթին:

¹ **Ա. Ղարիբյան**, Արևի պաշտամունքի արձագանքները <Սասնա ծռերի> կանանց կերպարներում. Դեղձուն ծամ կամ Քառասուն ճյուղ ծամ, ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Երևան 2013, թիվ 15, էջ 552:

² **Ա. Ղարիբյան**, <Սասնա ծռեր> էպոսի կանանց կերպարները շարքից. Իսմիլի կերպարի քննությունը, ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, թիվ 14, Երևան 2010, էջ 409:

³ **Ա. Ղարիբյան**, <Սասնա ծռեր> էպոսի կանանց կերպարները շարքից. Չմշկիկ Սուլթանի կերպարի քննությունը, ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Երևան 2011, թիվ 13, էջ 451:

⁴ **Ա. Ղարիբյան**, <Սասնա ծռեր> էպոսի կանանց կերպարները շարքից. Սառյեի կերպարը, ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Երևան 2012, թիվ 14, էջ 405:

- Դավիթի առաջ նորից գովում են Խանդութի գեղեցկությունը, Դավիթը նրանց ասում, որ ինքը որոշակի ժամանակից (3 կամ 7 օրից) հետո կգնա Խանդութի մոտ:

- Դավիթը գնում է Խանդութի հետևից:

- Դավթի հանդիպումը գութանավորների հետ և շատակերությունը:

- Դավիթը գութանը կապում է ձիուն և վար է անում, հետո իրեն է կապում և ինքն է վարում:

- Քառասուն փահլևանները ուզնկան են եկել Խանդութին:

- Դավիթը հանդիպում է Խանդութի դռնապանին և վախից բարևում է:

- Քառասուն փահլևանները Դավթի հետ քեֆ են անում:

- Քառասուն փահլևանները ուզում են սպանել Դավթին:

- Դավիթը ջարդում է քառասուն փահլևանների թերերը:

- Դավիթը հանդիպում է Խանդութին Խաս բախչում /գյուլի բաղ/:

- Դավթի համբույրը և Խանդութի ապտակը:

- Դավթի <պնչերուց> արյուն է գալիս:

- Դավիթը խռովում և ցանկանում է մեկնել:

- Դավիթը զայրանում է /Աստծուց խնդրում է, որ թշնամիները հարձակվեն Խանդութի հոր վրա, ցանկանում է ավերել Խանդութի քաղաքը/:

- Դավիթը ճանապարհին կտրում է երկաթե կամ պողպատե սյունը, որը սկզբում չի ընկնում, ինչի պատճառով Դավիթը իրեն անիծում է, սակայն քամին գցում է սյունը, Դավիթը իրեն օրհնում է և նորից վերականգնվում է:

- Դավիթը կովում է Խանդութի հոր թշնամիների դեմ և հաղթում է:

- Դավիթը Խանդութին պատվիրում է, որ երեք կամ յոթ օրից չվերադառնալու դեպքում գա և իրեն գտնի դիակների մեջ՝ թևի խաչը ճանաչելով:

- Դավթի և Խանդութի մենամարտը, Դավթի հաղթանակը:

- Դավիթը և Խանդութը ամուսնանում են:

- Միեռի ծնունդը:
- Դավթի երդումը և երդմնագանցությունը:
- Դավիթը տեսնում է, որ թևի Խաչ պատրագին /մսե խաչը/ սևացել է, Խանդութին զգուշացնում է, որ իր տեսածի մասին չբարձրաձայնի:

• Խանդութը չդիմանալով բարձրաձայնում է, Դավիթը նրան նախատում է:

- Դավիթը մեկնում է Չմշկիկ Սուլթանի հետ կռվելու:
- Դավթի մահը:
- Խանդութի ինքնասպանությունը:

Սակայն ինչպես նշեցինք, Խանդութի շուրջ հյուսված մոտիվները շատ ավելի հարուստ են, ինչի վկայությունը մոտիվների այն պայմանականորեն **երկրորդ շարքն** է, որը գործում է այս կամ այն տիպաբանական խմբում և խոսում է էպոսի՝ տարածքում որոշակիորեն ինքնուրույն գոյության մասին: Այդ առումով հատկապես հետաքրքրություն են առաջացնում Մոկսի և Մշո տիպաբանական խմբերը:

Մոկսի պատումներից մի քանիսում Խանդութը նստում է Թավրիզում. պարսիկ խանում է, (ՄԾ, Ա., 362, 517, 587)⁵, մյուսներում Խանդութը Խոյ քաղաքի խանումն է (Ա., 283, 446), ընդ որում Խոյը նույնպես Իրան է ընկալվում. «Խոյա քաղաք, Իրանա խուղը մեջ»: Երեք պատումներից մեկում Խանդութը Հալաբա թագավորի աղջիկն է (Ա., 917), մյուսում՝ Օղան-Տոդան թագավորի աղջիկն է (Ա., 679), ընդ որում այստեղ Օղան-Տոդանը նույնպես հասկացվում է Հալաբա թագավոր, քանի որ Խանդութին գովաբանում են Հալաբ քաղաքի հետ համեմատելով, «Խանդութ խանըմի ճակտի լենություն սենք, Հալապա գազ թամամ ի,...Ինու հերկնութեն սենք, Քառասուն Հալապա գազ թամամ ի» (Ա., 679), թեկուզ Օղան-Տոդանի երկրի և անվան հետ կապված կան այլ կարծիքներ⁶, երրորդում Հնդու Համանար թագավորի աղջիկն է (Ա., 865), մնացած պատումներում չի նշվում Խանդութի հայրենիքը:

⁵ Սասնա ծռեր, ժողովրդական վեպ, հատոր Ա, Երևան, 1936: Այսուհետ նշ, ՄԾ:

⁶ Մ. Պետրոսյան, «Սասնա ծռերի» Օղան-Տոդանի ծագման շուրջ, Պատմաբանասիրական հանդես, 1996, թիվ 3:

Ինչպես նկատում ենք, մոտ հինգ պատումներում Խանդութը կապվում է Թավրիզի, Իրանի հետ, մնացած երեքում նա նույնպես արևելքի հետ է կապվում, ընդ որում բուն հայկական հողից դուրս երկրների կամ վայրերի հետ: Հավանաբար սա փաստ է, որը մեզ հնարավորություն կտա մտածել Խանդութ անվան ստուգաբանության շուրջ, ինչը առանձին ուսումնասիրության նյութ է:

Մշո պատումներում Խանդութի հայրենիքը հիմնականում կապվում է Կապուտկոդի⁷ կամ Կաղզվանի հետ, որոնք պատմական Հայաստանի սահմաններում են:

Խանդութը Կապուտկոդի խանումը կամ թագավորի աղջիկն է Մշո հետևյալ պատումներում՝ ՄԾ, Բ, Ա մաս⁸, 81, 123, 244, ՄԾ, Բ, Բ մաս⁹, 287, 51, 513, 689, ՄԾ, Գ¹⁰, 536, 425: Մշո պատումների մյուս խմբում Խանդութը Կաղզվանի թագավորի /Վաչո-Մարջոյի աղջիկն է (ՄԾ, Բ, Ա մ., 30, 186, 305, 394, ՄԾ, Գ, 214):

Մոկաց պատումներում Խանդութի գուսաններին ծեծում է միայն Հովանը, իսկ Մշո պատումներում Հովանի հետ միասին հանդես են գալիս Քեռի Թորոսը կամ Վերգոն:

Հաջորդ մոտիվը, որ գործում է և՛ Մոկաց, և՛ Մշո պատումներում, Դավթի հանդիպումն է Խանդութի դռնապանի հետ: Այս մոտիվը բովանդակային առումով առանձնապես տարբերակումներ չունի. բոլոր պատումներում էլ Դավթը հանդիպում է դռնապանին, երկուսն էլ, միմյանց տեսնելով, վախենում են, վախից իրար բարևում են, սակայն Մոկաց պատումներում եթե կա դռնապան, և դռնապանը անուն ունի, ուրեմն նա Համդուն է, Մշո պատումներում դռնապանի անունը Գորգի/Գորգիզ է: Պետք է նկատել մի շատ հետաքրքիր ընդհանրություն. երկուսի դեպքում էլ Դավթը ոչ միայն վախից բարևում է, այլ նաև հարգալից է նրանց հան-

⁷ Պատմական Կապուտկոդը կոչվել է նաև Ընձաքիսար, գտնվում է Վանա լճի հարավային կողմում, հին Ռշտունիքում: Սասնա ծռեր, Ժողովրդական վեպ, հատոր Բ, Բ մաս, Երևան, 1951, էջ 847:

⁸ Սասնա ծռեր, Ժողովրդական վեպ, հատոր Բ, Ա մաս, Երևան, 1944:

⁹ Սասնա ծռեր, Ժողովրդական վեպ, հատոր Բ, Բ մաս, Երևան, 1951:

¹⁰ Սասնա ծռեր, Ժողովրդական վեպ, հատոր Գ, Երևան, 1979:

դեպ՝ նրանց համարելով իր քավորը: Քավոր Գորգիզը նույնիսկ Խանդութի հետ միասին փորձում է զգուշացնել հարքած Դավթին ուզականների դավադրության մասին. «Սանհեր Դավիթ, Հոդի վնաստուն է, Վրաստուն չէ»¹¹:

Իսկ այն պատումներում, որտեղ դոնապանի անունը չկա, Դավիթը կարող է ոչ միայն անհարգալից, այլ նաև դաժան լինել, օրինակ մոկացի Հովանի պատումում Դավիթը Խանդութի դոնապաններին զարկում է պատերին¹², մոկացի Վարդանի պատումում Դավիթը դոնապանին համոզում է, որ մատը ճեղքից հանի, երբ սա մատը ցույց է տալիս Դավթին, Դավիթը մատը այնպես է սեղմում, որ ցավից դոնապանը դուռը բացում է¹³:

Միայն Մոկաց պատումներում առկա է մի գեղեցիկ մոտիվ, որտեղ Խանդութը քառասուն փահլևանների ներկայությամբ սիրո խնձորով հարվածում է Դավթին (ՄԾ, Ա, 34, 96, 683, 1072):

Խանդութ խանըմ իրեք դիր խնձոր կը թալի,

Իրեք դիր էլ կը զարկի Դավթին:

Դավիթ ֆերըզնիրու կըսի.

-Գինացեք Խանդութ խանըմին սեք,

Թուղ գա, ես տիսնամ (ՄԾ, Ա, 683):

Մոկաց պատումներում առկա է ևս մեկ գեղեցիկ մոտիվ. Խանդութը ոտաբոքիկ գնում է Դավթի հետևից՝ խնդրելով և համոզելով ետ բերելու նրան (ՄԾ, Ա, 453, 591, 643):

Դավիթ ձիու վիրիվեն, Սկնա դառնա, կ'ըիրիշկի,

Կը տիսնա՝ Խանդութ խաթուն Բիբիկ հիտեն կը վազնը:

Էսքամ ժամանակ Խանդութ խաթուն Բիբիկ վուտ գետըն չը դիր,

Մկա բիբիկ դաշտը մեջ կը վազնի.

Վոտ հըմեն ելիր ի էրուն (ՄԾ, Ա, 453):

Մոկաց պատումներում Դավիթն ու Խանդութը ամուսնանում են և վերադառնում են Սասուն (ՄԾ, Ա, 40, 99, 217, 292, 369, 644,

¹¹ Մասնա ծռեր, ժողովրդական վեպ, հատոր Բ, Ա մաս, Երևան, 1944, էջ 34:

¹² Մասնա ծռեր, ժողովրդական վեպ, հատոր Ա, Երևան, 1936, էջ 208:

¹³ Նույն տեղում, էջ 362:

690, 752, 928, 1017, 1080): Գրեթե նույն պատումներում էլ Դավթի ու Խանդութի Սասուն վերադարձի մոտիվի հետ հանդիպում է Չմշկիկ Սուլթանի կողմից նրանց ճանապարհը կտրելու և կռվի հրավիրելու մոտիվը, նույն մոտիվը Մշո պատումներում կապվում է խլաթցիների հետ:

Մոկաց պատումներում Մհերը ծնվում է հիմնականում Սասունում: Նույնպես Մոկաց պատումներում ավելի հաճախադեպ գործող մոտիվներից են հոր և որդու կռիվը, Խանդութի միջամրտությունը:

Մշո պատումներում Դավիթն ու Խանդութը ամուսնանում են Կապուտկող/ Կաղզվանում: Մնում են այնտեղ այնքան, մինչև ծնվում է Մհերը (ՄԾ, Բ, Ա մաս, 38, 89, 125, 403): Մի քանի տարուց հետո Մհերին թողնում են մայրական պապի տանը, իրենք վերադառնում են Սասուն:

Միայն Մշո պատումներում է Դավթի մահից հետո Վերգոն ամուսնության առաջարկ անում Խանդութին¹⁴ (ՄԾ, Բ, Ա մաս, 41, 91, 194, 323, Բ մաս, 521), ինչին չենք հանդիպում Մոկաց պատումներում:

-Խանդութ թ խանըմ, բը մըշ, բը մըշ, Դավիթ մըր, սարեմըն խոշ: (ՄԾ, Բ, Ա մաս, 41)

Ընդհանրապես, Վերգոն որպես սասուցի կամ Սասնա ծռերից մեկը, ավելի հաճախ կամ հիմնականում հանդես է գալիս Մշո պատումներում:

Մշո պատումներում հանդիպում է ևս մի մոտիվ, ինչը չի հանդիպում Մոկաց պատումներում. մահացած Խանդութի կրթքերի կաթից սասունցիներն իմանում են Մհերի գոյության մասին, և Դավթի հորեղբայրը կամ քեռին և կամ երկուսը միասին

¹⁴ Վ. *Բոթյան*, Հայ ազգագրություն, Եր. 1974, էջ 159. «Ազգի ներսում արգելված է եղել նաև ամուսնանալ եղբոր այրու հետ: Այդ երևույթը հայտնի է լևիրատ անունով: Լևիրատի առանձին դեպքեր արձանագրված են վաղ միջնադարում: Դրանցից մեկը Գնելի այրու Փառանձեմի հետ Արշակ թագավորի ամուսնությունն է: Եկեղեցական կանոններն ասում են «Անիծեալ որ առնէ զեղբար իւրոյ զկին, վասն զի ընդ եղբարն իւրում պղծի. Զի մի են նորա»:

գնում են Մհերին բերելու Սասուն (ՄԾ, Բ, Ա մաս, 42, 91, Բ մաս 166, 521, Գ, 284, 438, 503, 545,):

Բացի մոտիվների նշված շարքերից, առանձնանում են **երրորդ խմբի** մոտիվները, որոնք ոչ միայն կայուն չեն, այլ նաև բնորոշ չեն որևէ տիպաբանական խմբի: Դրանք այն մոտիվներն են, որ հանդիպում են մեկ կամ ամենաշատը երկու անգամ և երբեմն անգամ բնորոշ չեն կերպարի ընկալման մեր պատկերացումներին: Այդպիսի մոտիվներ կան Էպոսի գրեթե բոլոր կերպարների շուրջ, և Խանդութը նույնպես բացառություն չէ:

Խանդութի հետ կապված այդպիսի մոտիվներից պետք է նշել գավաշեցի Համբարձում-Խապո Գրիգորյանի պատումը, որտեղ (միակ դեպքում) Խանդութը Դևստան քաղաքի տերն է (ՄԾ, Ա, 1011-1012), դոնապանն էլ Սևաեղունգ դին է, որի մատը Դավիթը այնպես է սեղմում, որ <արուն, արնաջուր դիվի մատից եթալ>:

Միայն մոկացի Հովանի պատումում Խանդութն է համբուրում Դավթին, և այդպես նշանում է նրան: Այս մոտիվը՝ համբուրի միջոցով նշանելը կամ իրենը դարձնելը կամ այդ ամենով հանդերձ խաչապաշտ դարձնելը, կապվում է հիմնականում Դավթի հետ, քանի որ համբուրողը միշտ Դավթն է, միակ դեպքն է, որ այս մոտիվը կապվում է Խանդութի հետ, ինչը նույնպես հաստատում է այն միտքը¹⁵, որ համբույրը նաև նշանելու արարողություն է.

Խանդութ խաթուն լսավ ձեն, եկավ, Եկավ, Եսաց.-Դա՛վիթ,

Տու է՛լ Աստված կը պաշտիս:

Եսաց՝ խա՛, Որ Եսաց՝ խա՛, խասավ Դավթի գլոխ պագնից:

.....

-Ա՛յ Դավիթ,-Եսաց, քու նշան ի՞նչ կա, որ աստվածապաշտ իս:

Եսաց,-.....Խաչ Պատրազին վար իմ աջ թիվին:

.....

¹⁵ **Բրդյան**, Ընտրության և ամուսնության ձևերը <Սասունցի Դավիթ> Էպոսում, Պատմաբանասիրական հանդես, 1976, թիվ 1, էջ 84-99. «... խաչաձև համբույրը հնագույն իմաստով տաբույացնում, յուրայնացում նշանակելով, միաժամանակ անհատական ամուսնության հաղթանակի նշան լինելն է մատնանշում»:

Խանդութ խաթուն խասավ, պագնից:

Ելավ երկու նշան, որ Դավիթ առնը (ՄԾ, Ա, 212):

Միայն մոկացի Թումաս Պետրոսյանի պատումում է, որ Խանդութը իր ուզականներին պատուհանից դուրս է շարտում:

Խանդութ էլ դուռ չբանա, խանի դուս:

Փանջարի դուռ կը բանա, Փանջարից կը շփոտի դուս:

Ըզվոր կընկնի գետըն, կը մեռնի (ՄԾ, Ա, 455):

Ընդհանրապես Խանդութի շուրջ հյուսված մոտիվների մեջ շատ կայուն և գեղեցիկ մոտիվ է, եթե չասենք միայն Խանդութին բնորոշող, նրա ինքնասպանության մոտիվը: Սակայն պատումների քննությունը բերում է նրան, որ այստեղ էլ կան <շեղումներ>:

Մոկացի Թումաս Պետրոսյանի պատումում Մհերը սպանում է քեռիներին և Դավթին, ինքն էլ «կուրսվիր ի վերսեն»: Խանդութը ժամով-պատարագով թաղում է Դավթին և եղբայրներին, անիծում է, ասելով՝ «Աստված քակի Սասուն», ինքը վերադառնում է Խոյ քաղաքը, Սասունն էլ ավերվում է (ՄԾ, Ա, 212):

Կաճեսցի Հովան Զոհրաբյանի պատումում Խանդութն է ուզում սպանել Դավթին, քանի որ Դավիթ <գուլում արեց> Սասունում, բայց ինքը չի կարողանում, մի ջաղու պառավի ձեռքով է սպանում, որը տաքացրած գութանի խոփով հարվածում է քնած Դավթին և սպանում է (ՄԾ, Ա, 1126): Իսկ գութանի խոփով Դավթին սպանելու մոտիվը ընդհանրապես բնորոշ է Մոկաց պատումներին¹⁶:

Մոկացի Նախո քեռու պատումում Խանդութը թույն է խմում ու մեռնում (ՄԾ, Ա, 45): Մոկացի Խապոյեց Զատիկի պատումում Խանդութը վշտից է մեռնում (ՄԾ, Ա, 102): Գավաշեցի Եղիազար Հակոբյանի պատումում Դավիթը սպանվում է Մշո Սուլթանի կողմից, Խանդութն էլ թողնում, գնում է Սասուն (ՄԾ, Ա, 868): Այսինքն՝ այստեղ չկա Խանդութի ինքնասպանության մոտիվը:

¹⁶ **Ա. Ղաթիբյան**, «Սասնա ծռեր» էպոսի կանանց կերպարները շարքից. Զմշկիկ Սուլթանի կերպարի քննությունը, ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, Երևան 2011, թիվ 13, էջ 451:

Այսպես է մեզ ներկայանում շրջանակը այն մոտիվների, որոնք հյուսված են Խանդութի շուրջ Մոկսի և Մշո տիպաբանական խմբերում՝ ըստ պայմանականորեն բաժանված այն երեք հիմնական տիպերի, որոնք բնորոշում են էպոսը տարբեր տեսանկյուններից. ա/մոտիվներ, որոնք բնորոշ են ընդհանրապես ամբողջ էպոսին, բ/մոտիվներ, որոնք հանդես են գալիս որոշակի աշխարհագրական տարածքում միայն և վերջապես գ/մոտիվներ, որոնք մտել են էպոս տարբեր պատճառներով պայմանավորված (բանահյուսական ժանրերի /մասնավորապես հեքիաթի/ ազդեցությամբ, ասացողներին բնորոշ մի շարք հատկանիշներով՝ սեռով, կրթությամբ, զբաղմունքով, նաև վարպետ-ասացողով, որից պատմողը լսել է, մոտիվները խառնելու կամ մոռանալու հանգամանքով և այլն):

Վերջում նշենք, որ պատումների քննությունը և մոտիվների տախտակների ստեղծումը շատ աշխատատար է և, բնականաբար, մեկ կամ նույնիսկ մի քանի աշխատանքների շրջանակում անհնար է այս թեման սպառել: Այստեղ մենք չանդրադարձանք նաև Սասնա պատումներին, որոնք առանձին քննության նյութ են:

Алина Карибян – Сравнительный анализ образа Хандут по вариантам “Сасна црер”. – В статье автор анализирует случаи, связанные с образом Хандут согласно вариантам Мокса и Мшо, и приходит к выводу, что образ Хандут в рассматриваемых вариациях эпоса представляется нам в 3 мотивах: а) мотивах, характерных для всех вариантов; б) мотивах, характерных лишь для вариантов определенной географической территории; в) мотивах, вошедших в эпос под разными причинами, и имеющих особые проявления.

Alina Kharibyan – The comparative analysis of the character of Khandut according to the variants of “Daredevils of Sassoun”. – The author has analyzed the incidents which reveal the character of Khandut according to the variants of Moks and Mush. The author came to the conclusion that the character of Khandut is presented with three motives in the variants of the

observed epic poem: a) motives typical to all the variants; b) motives typical to the variants only of certain geographical area; c) motives penetrated into the epic poem by different reasons and having special expressions.

Բանալի բառեր: Մասնա ծոեր, տարբերակ, Խանդութ, մոտիվ, տիպական, էպոս, Մոկս և Մուշ:

Ключевые слова: Сасна црер , вариант, Хандут, мотив, характерный, эпос, Мокс и Муш.

Key words: Daredevils of Sassoun, variant, Khandut , motiv, typical, poem, Moks and Mush.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՈղջՈՒՅՆԻ ԽՈՍՔ.....3

ՀԱՅ ԳԻՏԱԿԱՆ ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

ՄԵԿԴԱՐՅԱ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ.....5

ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ

Խոսվածքային առանձնահատկություններ
Բայազետի բարբառում.....9

ՀԱՍՄԻԿ ԽԱՉԱՏԵՅԱՆ

Դիտարկումներ տուն և տնտեսություն
Խմաստային դաշտն արտացոլող
բառանվանումների շուրջ17

ՋԵՄՄԱ ԲԱՌՆԱՍՅԱՆ

Արարատյան բարբառի Լոռու
խոսվածքում գործառող դերանունները
(*խմաստագործառական քննություն*).....30

ԼՈՒՍԻՆԵ ՂԱՄՈՅԱՆ

Առօրյա խոսքում գործածվող օտար բառերի և
դրանց հայերեն համարժեքների խնդիրը.....37

ՄԵՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Որոշ դիտարկումներ Երևանի
խոսակցական լեզվի հասարակական
տարբերակվածության վերաբերյալ.....47

ԳԱՐԻԿ ՄԿՏՉՅԱՆ

Լեհահայ բարբառի ընդհանուր բնութագիրը
և նրա վերացման պատճառները.....54

**ՀԱՏԿԱՆՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ,
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ,
ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆ, ՈՃԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ

Հայկական բնականությունների կառուցվածքը 69

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ֆրեդերիկ Կորտլանդտի հայերենագիտական
ուսումնասիրությունները 83

ՋԵՆՆԻ ԹԱՄԱՐՅԱՆ

Վրաց բառանյութը Հրաչյա Աճառյանի
«Արմատական բառարանում»-ում 95

ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Փոխառյալ բառերը Ս. Էջմիածնի միաբանական
գերեզմանոցի տապանազրեքում 103

ՎԼԱԴԻՄԻՐ ՊՈՂՈՍՅԱՆ

Մակարավանքի վիմագրերի անձնանունները
և դրանց ծագման հարցը 120

ԱԼԵՏԱ ՀԱԿՈԲՅԱՆ, ՆՈՐԱՅՐ ՊՈՂՈՍՅԱՆ

Տավուշի մարզի Արճիս գյուղի մանրատեղանունները
և դրանց հետ կապված ավանդությունները 130

ՀԱՍՄԻԿ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Բաղադրյալ երկրորդական ներկա ժամանակի
բարբառային կիրառություններ ուշ
միջնադարի բժշկարաններում 146

ԽԱԶԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայկական ձեռագիր հիշատակարանի
պատմությունը. սկզբնավորումը և զարգացումը 155

ՄԵՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Բարբառային բառերի ոճական արժեքը Տերյանի չափաձոյում.....	176
--	-----

ՀԱՅ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

ԷՍԹԵՐ ԽԵՄՉՅԱՆ

Տավուշի ասույթաբանական բանահյուսությունը (ըստ 1970-90-ական թթ. հավաքած նյութերի).....	189
--	-----

ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Համանուն-հարանունային դրսևորումները անեկդոտ-զվարճախոսություններում.....	206
--	-----

ՄԱՐԻՆԵ ԽԵՄՉՅԱՆ

Նվիրատուն և խորհրդատուն Տավուշի հեքիաթներում	223
--	-----

ԵՎԱ ԶԱՔԱՆՅԱՆ

Շնորհի ստացման մասին ժողովրդական պատկերացումները (ըստ հայկական հեքիաթների նյութի)	236
---	-----

ՀԱՍՄԻԿ ՎԱՆՅԱՆ

«Սասնա ծռեր» և «Շահնամե» (Էպոսների համեմատական վերլուծություն)	254
---	-----

ԱԼԻՆԱ ՂԱՐԻԲՅԱՆ

Խանդութի կերպարի համեմատական քննությունը ըստ «Սասնա ծռերի» պատումների	265
--	-----

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՀԱՅ ԳԻՏԱԿԱՆ
ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ
100-ԱՄՅԱԿԻ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ

(25 մայիսի 2014)

Համակարգչային ձևավորումը՝ Նարինե Դավթյանի, Կարինե Չալաբյանի
Շապիկի ձևավորումը՝ Արմեն Պատվականյանի
Տեխ. խմբագրումը՝ Գարիկ Մկրտչյանի

Չափսը՝ $60 \times 84^{1/16}$: Տպ. մամուլը՝ 17.5:
Տպաքանակ՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն

ք. Երևան, 0025 Ալ. Մանուկյան 1